

ՀՀ ՍՓՅՈՒՌԵԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱԱ ՀԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ.ԿԱՏՎԱԼՅԱՆ, Ա.ԱՐԱՅԱՄՅԱՆ
Զ.ԲԱՌՆԱՍՅԱՆ, Հ.ԽԱԶԱՏՐՅԱՆ

**ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ
ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾԱՌՈՂ ԿԸ ՀՅՈՒՂԻ
ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԵՐԵՎԱՆ
2016

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ.ԿԱՏՎԱԼՅԱՆ, Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Զ.ԲԱՌՆԱՍՅԱՆ, Հ.ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ
ԵՎ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾԱՌՈՂ ԿԸ ՃՅՈՒՂԻ
ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ – 2016

ՀՏԴ
ԳՄԴ

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գիրքը հրատարակվել է ՀՀ սփյուռքի նախարարության
դրամաշնորհով

Գիրքը կազմել են Վ.Լ. Կատվալյանը (Նախաբան, Ա. Բ. Զ գլուխներ),
Ա.Ա. Աբրահամյանը (Գ գլուխ), Ջ.Ա. Բառնասյանը (Դ գլուխ),
Հ.Ռ. Խաչատրյանը (Ե գլուխ):

Պատասխանատու խմբագիրներ՝
Վ.Լ. Կատվալյան, Ա.Ա. Աբրահամյան

Գրախոս՝ Հ.Մ. Զովաթյան

Վ. Կատվալյան և ուրիշներ, Գրական արևմտահայերենի և ՀՀ
տարածքում գործառող Կը ճյուղի բարբառների առնչություն-
ները. – Ե., «Աստղիկ» հրատ., 2016. – 240 էջ:

Գրքում գրական արևմտահայերենի և բարբառային հայերենի՝
Հայաստանի Հանրապետությունում գործառող արևմտահայ տարբե-
րակների՝ Մշո, Կարնո, Սասունի և Դիադինի բարբառների զուգա-
դրական քննությամբ դիտարկվում են դրանց փոխհարաբերություն-
ները, ընդհանրություններն ու առանձնահատկությունները, մերձակ-
ցության աստիճանը:

Աշխատանքը կարող է օգտակար լինել բանասերներին, արև-
մտահայերենի և բարբառների ուսումնասիրությամբ զբաղվող մաս-
նագետներին, ուսանողներին:

ՀՏԴ
ԳՄԴ

ISBN

© ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2016

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Պատմաքաղաքական հանգամանքների¹ բերումով հայկական միասնական պետականության երկարատև բացակայությունը պատճառ է դարձել, որ ժամանակի ընթացքում խորանան լեզվական զանազանությունները, և ձևավորվեն հայերենի երկու տարբերակներ՝ արևելահայերեն և արևմտահայերեն: Հայտնի է, որ լեզվական այս տարբերակումը նախ և առաջ դրսևորվել է բարբառային հայերենում՝ արևմտյան և արևելյան բարբառների տարանջատումով: Ինչպես վկայում է Հ.Աճառյանը, «... հայերեն բարբառների խոնարհման նոր ձևը ԺԲ դարում դեռ ընդհանուր է ամեն տեղ և *կը* և *ոււմ* ձևերի երկճյուղությամբ սկսում է հայերեն նոր բարբառների բաժանումը ԺԲ դարից հետո»²: Ըստ Գ.Զահուկյանի՝ 12-14-րդ դարերում, երբ Կիլիկիայի հայկական պետության պաշտոնական լեզուն դառնում է կիլիկյան միջին հայերենը, Կիլիկիայի սահմաններից դուրս գրավոր արտահայտություն են ստանում և միջին հայերենի բարբառային այլ տարբերակները³: Այս շրջանում իրենց առանձնահատուկ գծերն են դրսևորում արևելահայ բարբառները, մասնավորապես՝ Արարատյան բարբառը⁴: Ընդ որում՝ «...արդեն լայնորեն գործածվում էր ներգոյականի *ոււմ* վերջավորությունը, հիմքեր էին ստեղծվում *ոււմ*-ով սահմա-

¹ Նկատի ունենք Հայաստանի բաժանումը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև (387թ.), Բագրատունյաց թագավորության վերացումը (11-րդ դար), Կիլիկիայի հայկական պետականության (11-14-րդ դարեր) գոյությունը բուն Հայաստանի սահմաններից դուրս և դրա կործանումը և այլն:

² Հ.Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, հ.2, Ե., 2013, էջ 433:

³ Տե՛ս Գ.Զահուկյան, *Հայոց լեզվի զարգացման փուլերը*, Ե., 1964, էջ 43:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 47:

նական ներկայի և անկատարի տարածման համար»⁵: 17-րդ դարից սկսած՝ հայերենի զանազան դրսևորումներում աստիճանաբար գերիշխող դիրք են գրավում Արարատյան և Պոլսի բարբառները, «...որոնցից առաջինը արդեն ուներ արևելահայ (ում) բարբառաճյուղի ձևավորված հատկանիշները, երկրորդը՝ արևմտահայ (կու) ճյուղինը՝ ներկայացնելով հին կիլիկյան բարբառին մոտ մի բարբառ և արևմտյան բարբառային հիմքի հետագա զարգացման, փոփոխման ու ճյուղավորման արդյունք, որ գրական նմուշներում ենթարկվել է կիլիկյան միջին գրական հայերենի ազդեցությանը»⁶: Ինչպես նկատում է Յու.Ավետիսյանը, «18-րդ դարում արևմտահայերենը, ինչպես և արևելահայերենը, երկրորդական գրավոր լեզու էր: Առաջնությունը պատկանում էր գրաբարին, թեև հրատարակվում էին նաև աշխարհաբար կամ աշխարհաբարին մոտ լեզվով գործեր»⁷: Սակայն 19-րդ դարի սկզբներից գրական արևմտահայերենի գործածության սահմաններն ընդլայնվում են, և այն ձգտում է դառնալ ընդհանուր գրավոր և բանավոր հաղորդակցման, նաև դպրոցի լեզու»⁸:

⁵ Նույն տեղում, էջ 47-48:

⁶ Նույն տեղում, էջ 50: Մեկ այլ տեղում Գ.Ջահուկյանը արձանագրում է, որ «Արևմտահայ գրական լեզուն, ինչպես և սպասելի էր, երկու անգամ ավելի մոտ է միջին գրական հայերենին, քան արևելահայ գրական լեզուն. առանձնապես աչքի ընկնող են վերջիններիս քերականական տարբերությունները. սա նշանակում է, որ արևմտահայ գրական լեզուն հանդես է գալիս որպես միջին գրական հայերենի ժառանգը՝ ավելի մոտ լինելով սրան, քան գրաբարին. մինչդեռ արևելահայ գրական լեզուն ավելի հեռու է կանգնած (կիլիկյան) միջին գրական հայերենից, քան գրաբարից, որ բացատրվում է նրա և (կիլիկյան) միջին գրական հայերենի բարբառային հիմքերի տարբերությամբ» (Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 199-200):

⁷ Յու.Ավետիսյան, *Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն*, Ե., 2007, էջ 5:

⁸ Տե՛ս նույն տեղում:

19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին հայերենն արդեն ներկայանում էր աշխարհաբարի գրական երկու՝ արևելահայ ու արևմտահայ ճյուղերով և մոտ չորս տասնյակ բարբառներով⁹։ Ընդ որում՝ թե՛ գրական արևմտահայերենը, թե՛ գրական արևելահայերենը արդեն բավականին մշակված և կանոնարկված լեզվավիճակներ էին, որոնցով ստեղծվել և ստեղծվում էր բարձրարժեք գեղարվեստական գրականություն, հրապարակվում էին տարաբնույթ երկեր, պարբերականներ, կազմակերպվում էր կրթական գործ¹⁰։

Գրական լեզվի հարստացման միջոց էին նաև հայերենի բարբառները, թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ իրականություններում ստեղծվում էին նաև բարբառներով գրված գեղարվեստական երկեր¹¹։

Բարբառային հայերենը այդ շրջանում իր գանազան դրսևորումներով լեզվական բազմաբնույթ իրողությունների, զուգաձևությունների և ենթահամակարգերի անսպառ հարստություն էր ներկայացնում, այն գործառում էր ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։ 1911 թվին Հ.Աճառյանը իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ վկայում է. «Հայութեան մեծագոյն մասը դեռ այսօր ալ կը գտնուի իր հայրենիքին մէջ. բայց իր հայրենիքէն դուրս տարածուած է նաև բազմաթիւ ուրիշ երկիրներու մէջ»¹²։

Եղեռնի հարվածներից մեծապես տուժեց նաև հայոց լեզուն։ Նահատակված միլիոնավոր հայերի հետ եղեռնին զոհ գնաց նաև նրանց շուրթերից հնչող տարատեսակ հայերենը, Արևմտյան

⁹ Հ.Աճառյան, նշվ. աշխ., 436։

¹⁰ Գ.Ջահուկյան, Է.Աղայան, Վ.Առաքելյան, Վ.Քոսյան, *Հայոց լեզու*, 1-ին մաս, Ա պրակ, Ե., 1980, էջ 26-35։

¹¹ Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 501-503։

¹² Հ.Աճառյան, *Հայ բարբառագիտություն*, Մոսկվա-Նոր Նախիջևան, 1911, էջ 25։

Հայաստանն ու թուրքական կայսրության հայաբնակ վայրերը ոչ միայն հայաթափվեցին, այլ նաև հայերենագրկվեցին:

Գրական արևմտահայերենը ծվեն-ծվեն եղած սփռվեց աշխարհով մեկ¹³ և արդեն 100 տարի զրկված է միասնական գործառույթյան ու զարգացման, **հետևաբար նաև՝ կանոնարկման** հնարավորություններից, բարձրագույն կրթության, գիտության լեզվի իր դերից, դպրոցական համալիր ուսուցման միջոց լինելու գործառույթից¹⁴: Մյուս կողմից՝ սփյուռքահայ տարբեր համայնքներում արևմտահայերենը իր վրա կրում է բնիկ ժողովուրդների լեզուների ազդեցությունը, որը հատկապես զգալի է հնչյունաբանության և բառապաշարի ոլորտներում¹⁵:

Աշխարհի երեսից իսպառ անհետացան բանավոր զարգացման դարերի ճամփա անցած, ժողովրդական իմաստնություն ու հիշողություն ամբարած, հնչյունաքերականական ու բառապաշարային յուրահատուկ կազմություն ունեցող տասնյակ հայ բարբառներ, բարբառային հայերենի համակարգային դրսևորումներ:

¹³ Ինչպես նկատում է Ռ.Սաքապետոյանը, «Մեծ եղեռնից հետո, երբ ողջ Արևմտյան Հայաստանը հայաթափվեց, բնիկ ժողովուրդը ապաստան գտավ աշխարհի տարբեր անկյուններում՝ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում (Սիրիա, Լիբանան, Հորդանան, Իրաք, Պաղեստին), Եվրոպայում (Ֆրանսիա, Հունաստան), Ամերիկայում (ԱՄՆ, Կանադա, Արգենտինա, Բրազիլիա) և այլուր» (Ռ.Սաքապետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Ե., 2006, էջ 8):

¹⁴ Ճիշտ է, այժմ սփյուռքի տարբեր համայնքներում գործում են մշակութային միություններ և կենտրոններ, հասարակական ու կրոնական կազմակերպություններ, հայոց լեզվով դասավանդում իրականացնող կրթարաններ ու վարժարաններ, կայքէջեր, հեռարձակվում են հեռուստատեսային և ռադիոհաղորդումներ, լույս են տեսնում հայալեզու պարբերականներ, ստեղծվում է գեղարվեստական գրականություն, աշխարհասփյուռ հայությանը իր ինքնությունը պահպանելու գործում աջակցում են հայոց պետականությունն ու հայ եկեղեցին, բայց, միևնույն է, արևմտահայերենի վիճակը մնում է տագնապահարույց:

¹⁵ Տե՛ս Ռ.Սաքապետոյան, նշվ.աշխ., էջ 9:

Հ.Աճառյանը եղեռնից առաջ Օսմանյան կայսրության տարածքում (ներառյալ նաև Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան) առանձնացնում էր հայերենի արևմտյան կամ Կը ճյուղի¹⁶ հետևյալ բարբառները. Կարնո, Խոտրջուրի, Մշո, Վանի, Տիգրանակերտի, Խարբերդի և Երզնկայի, Շապին-Գարահիսարի, Տրապիզոնի, Համշենի, Մալաթիայի, Կիլիկիայի, Սյուրիայի, Արաբկիրի, Ակնա, Սեբաստիայի, Եվդոկիայի, Ամասիայի, Օրդուի, Զմյուռնիայի, Նիկոմեդիայի, Պոլսի և Ռոտոսթոյի¹⁷: Եղեռնի հետևանքով ներկայումս այս բարբառները (թերևս բացառությամբ Պոլսի և Քեսաբի բարբառների, Վագրֆ գյուղի խոսվածքի¹⁸) այլևս իրենց բնօրրանում չեն գործառում: Ավելին, սրանցից միայն փոքր քանակությունն է, որ շարունակում է գործառել որևէ տարածքում իբրև կենդանի հաղորդակցման միջոց:

¹⁶ Ըստ Հ.Աճառյանի՝ Կը ճյուղը ասելով՝ «...հասկանում ենք արևմտյան կամ տաճկահայ կոչված բարբառների ամբողջությունը» (Հ.Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, հ. 2, էջ 328):

¹⁷ Տե՛ս Նույն տեղում, էջ 337-356: Հետագայում ուումնասիրողները կատարել են բարբառային միավորների որոշ ճշգրտումներ: Այսպես, ըստ Գ.Զահուկյանի՝ հայ բարբառների արևմտյան խմբակցության մեջ են նաև Սիվրիհիսարի, Կյուրիսի, Սյուլոգի, Կեսարիայի, Ասլանբեկի, Տավորիկ-Մոտկանի, Մասունի, Դիադինի բարբառները, Կիլիկիայի դիմաց առանձնացված են Հաջրնի և Մարաշ-Զեյթունի բարբառները, Սյուրիայի դիմաց՝ Քեսաբ-Սվեդիայի և Բեյլանի բարբառները, իսկ Զմյուռնիայի, Նիկոմեդիայի, Ռոդոսթոյի, Օրդուի, Տրապիզոնի բարբառները ընդգրկված են Պոլսի միջբարբառի մեջ և այլև: Մակայն բոլոր դեպքերում խոսքը տարածական նույն ընդգրկման բարբառային հայերենի մասին է (Գ.Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, էջ 132-135):

¹⁸ Պոլսի բարբառի ներկա գործառության վերաբերյալ հավաստի տեղեկություններ չունենք: Քեսաբի բարբառը գործառում է Սիրիայի Քեսաբի շրջանում (Յ.Չոլաքեան, *Քեսապի բարբառը*, Ե., 2009, էջ 9): Ինչպես վկայում է Հ.Չոլաքյանը, Վագրֆ գյուղում մուսալեռցիները այժմ էլ պահպանում են իրենց բարբառը (տե՛ս նույն տեղում):

Արևմտյան բարբառների մեծ մասը այլևս չի գործառուում իբրև լեզվական համակարգ, հաղորդակցման միջոց: Բարբառային շատ միավորներ բնաջնջվեցին իրենց կրողների հետ միասին, անհետացան նաև հայության՝ սպանդից փրկված բեկորների բռնի կրոնափոխության և ուժացման հետևանքով: Եղեռնից մազապուրծ եղած հայության զանգվածները իրենց բարբառային խոսքը տարան ինչպես Արևելյան Հայաստան, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Աշխարհի այս կամ այն կետում թերևս դեռ կարելի է հանդիպել տարեցների, ավանդապահ առանձին ընտանիքների, որոնք պահպանել են իրենց նախնիների բնիկ խոսքի հիշողությունը կամ պատառիկներ այդ խոսքից, սակայն բնօրրանից, գործառության կենսական պայմաններից զրկված արևմտյան բարբառային խոսքը, հատվածաբար սփռվելով օտար ավերում, սերնդից սերունդ մոռացության է մատնվել ու մատնվում է այլախոս (նաև՝ հայախոս այլաբարբառ) միջավայրերում¹⁹: Փաստորեն, կորստից հիմնականում փրկվել են արևմտահայ այն բարբառները, որոնք նախքան եղեռնը տեղի ունեցած բռնագաղթերի արդյունքում սկսել էին գործառուել նաև Արևելյան Հայաստանում ու

¹⁹ Արևելյան Հայաստանում հաստատված շատ արևմտահայեր ևս, կտրված լինելով մայրենի բարբառի միջավայրից, աստիճանաբար կորցրին այն, և եթե 1970-80-ական թվականներին դեռ կարելի էր հանդիպել Արևմտյան Հայաստանում ծնված և իրենց մայրենի բարբառով խոսող վանեցիների, խարբերդցիների, արաբկիրցիների, տիգրանակերտցիների, եվդոկիացիների և կորուսյալ հայրենիքի այլ ներկայացուցիչների, որոնց օգնությամբ լեզվի ինստիտուտի աշխատակիցները տարիների ընթացքում կարողացել են գրանցել մոտ 500 բարբառային միավորների վերաբերյալ տվյալներ, ապա այսօր հիշյալ վայրերը ներկայացնող և համապատասխան բարբառներով խոսող մարդկանց չենք կարող գտնել: Հաջորդ սերունդները մայրենի բարբառին այլևս չեն տիրապետում: Միայն գործառուում են այն բարբառներն ու խոսվածքները, որոնց կրողները շարունակում են ապրել ամբողջական համայնքներով՝ պահպանելով բարաբառային միջավայրը:

Կովկասում²⁰: Ցավոք, Հայաստանի Հանրապետության տարածքում ապաստան գտած բարբառային միավորները ներկայացնում են միայն Կարնո, Մշո, Սասունի և Դիաղինի բարբառները:

Արևմտահայ բարբառների բնաջնջումը ոչ միայն հայերենի յուրահատուկ ենթահամակարգերի վերացում, ամբողջական լեզվական օրգանիզմի կենսական նշանակություն ունեցող մասերի խոշտանգում ու անդամատում էր, այլ նաև՝ լեզվական մեծ հարստության ոչնչացում. անդառնալի կորստի են մատնվել անհետացած բարբառների բառապաշարային հարուստ շերտեր, բարբառային հայերենը կորցրել է հնչյունաքերականական շատ հատկանիշներ²¹, ընդհանուր հայերենը զրկվել է սնուցող բազում երակներից: Մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործառնող արևմտյան բարբառները անշուշտ այդ բարբառների ամբողջական նախնական պատկերը չեն ներկայացնում, այլ միայն՝ առանձին խոսվածքներ և նաև դրանց խառնման ճանապարհով ձևավորված բարբառային նոր վիճակներ: Բայց և իբրև համակարգային դրսևորումներ՝ դրանք ներկայացնում են նույն բարբառները և վստահաբար կարող են համարվել իբրև Կարնո, Մշո, Սասունի և Դիաղինի բարբառների դրսևորումներ՝ իրենց զարգացման ներկա փուլում, մանավանդ որ, ինչպես նկատում է Հ.Աճառյանը, «Նույն են մնում միայն այն

²⁰ Դեռևս 19-րդ դարի սկզբներին (1828-1830թթ) ռուս-պարսկական պատերազմից հետո, երբ Արևելյան Հայաստանը անցավ Ռուսաստանի տիրապետության տակ, Արևմտյան Հայաստանից՝ Կարինից, Մուշից, Սասունից, Ալաշկերտից, Դիաղինից, արևմտահայ բնակչության մի զգալի հատված, բնօրրանից գաղթելով, բնակություն հաստատեց Արևելյան Հայաստանի և Կովկասի տարբեր վայրերում: Գաղթականության այդ հոսքը շարունակվեց մինչև 19-րդ դարի վերջերը:

²¹ Նկատի ունենք միայն անհետացած առանձին բարբառներին, բարբառների խմբերին հատուկ բառապաշարային ու հնչյունաքերականական հատկանիշները, որոնք առատորեն ներկայացված են բարբառներին նվիրված մենագրություններում, բարբառագիտական այլ աշխատանքներում:

բարբառները, որոնք անցյալ դարում փոխադրվեցին. այսպես Նոր Բայազետի բարբառը Հին-Բայազետից, Շիրակի, Ախալցխայի և Ախալքալաքի բարբառները Կարինից...»²²: Բնականաբար, խոսքը վերաբերում է նաև Մշո, Սասունի և Դիաղինի բարբառների արդի հայաստանյան դրսևորումներին:

Այսպիսով, առկա է մի իրավիճակ, երբ արևմտահայերենի գրական տարբերակը իբրև հաղորդակցման միջոց գործառուղ է հայրենիքից դուրս, իսկ Հայաստանի Հանրապետությունում կենդանի գործառուղ են արևմտահայերենի բարբառային չորս տարբերակներ:

Թե՛ գրական արևմտահայերենը և՛ թե՛ արևմտահայ բարբառները միշտ էլ եղել են հայ լեզվաբանների ուշադրության կենտրոնում, դարձել բազմաթիվ ուսումնասիրությունների առարկա²³:

²² Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 438-439:

²³ Այնուամենայնիվ, գրական արևմտահայերենի ուսումնասիրության առումով անելիքներ դեռ շատ կան: Ինչպես նկատում է Ռ.Մաքսալետոյանը, արևմտահայերենի «...հնչյունական համակարգը, բառապաշարը և քերականությունը անհրաժեշտ խորությամբ չեն ուսումնասիրվել: Միյուրոքում տեսական-լեզվաբանական անհրաժեշտ միջավայրի բացակայությունը, ինչպես նաև մի շարք արտալեզվական գործոններ, ցավոք, հնարավոր չեն դարձրել արևմտահայերենի համակողմանի ուսումնասիրությունը, իսկ եղած սակավաթիվ փորձերը ծառայել են սոսկ գործնական նպատակների կամ դպրոցական ուսուցմանը: Բացառություն պետք է համարել Արսեն Այտընյանի և Հրաչյա Աճառյանի՝ ժամանակին կատարած ուսումնասիրությունները, որոնք, սակայն, այսօր ամբողջությամբ չեն համապատասխանում լեզվական նոր իրավիճակին և ծագած խնդիրներին: Ահա այդ բացը լրացնելու համար վերջին ժամանակներս Հայաստանում արևմտահայերենի քննությունը սկսեց արժանանալ առավել ուշադրության. ուսումնասիրվել են արևմտահայերենի տարբեր լեզվական իրողությունները, կան նաև համադրական քննության հաջող փորձեր: Դրանք, ինչ խոսք, նորովի են լուսաբանում մի շարք լեզվական երևույթներ և, ամենակարևորը, օգնում են առանձնացնելու և ընդհանրացնելու առավել դրական միտումները, որոնք, ի վերջո, նպատակ ունեն ծառայելու մի հիմնական

Բնականաբար, ժամանակը առաջադրում է հայերենի տարբեր դրսևորումների ուսումնասիրության նոր խնդիրներ ու եղանակներ: Մեր օրերում, երբ առաջնահերթ է դարձել արևմտահայերենի պահպանության խնդիրը, և առավել արդիական են դառնում արևմտահայերենի և արևելահայերենի միասնական զարգացման, փոխհարստացման ու փոխլրացման հարցերը, երբ հայաստանյան իրականության մեջ գիտակցվում է, որ իբրև հայերենի դրսևորում՝ արևմտահայերենը ևս Հայաստանի Հանրապետության պետական լեզվի կարգավիճակ ունի, և զգալի աշխատանքներ են ծավալվել արևմտահայերենի ուսումնասիրության և ուսուցման ուղղություններով, անհրաժեշտ է ընդգծել շատ կարևոր մի իրողություն. Հայաստանի Հանրապետությունում արևմտահայերեն խոսքը շարունակում է գործառել իբրև ամենօրյա կենդանի հաղորդակցման միջոց. երկրի բնակչության մի զգալի հատված Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի մարզերում, այլ վայրերում արևմտահայերենի կրող է, չէ՞ որ ինչպես արևելահայերենը իրենից ներկայացնում է գրական արևելահայերենի և արևելահայ բարբառների ամբողջություն, այնպես էլ արևմտահայերենը իրենից ներկայացնում է գրական արևմտահայերենի և արևմտահայ բարբառների ամբողջություն (իսկ հայերենը այս բոլորի ամբողջությունն է):

Հայ իրականության մեջ գրական արևմտահայերենը սովորաբար քննության է ենթարկվել իր հիմքի՝ Պոլսի բարբառի հետ համեմատության մեջ: Կը ճյուղի մյուս բարբառների և գրական լեզվի փոխհարաբերությունները ամբողջական քննության առարկա չեն դարձել, մինչդեռ այդ առնչությունները գիտական որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հայերենի համակոդմանի ուսումնասիրության տեսանկյունից: Բացի այդ, արևմտահայ բարբառաճյուղի արդի հայաստանյան դրսևորումները կարող են որոշակի նպաստող դեր ունենալ հայրենիքում գրական արևմտա-

գերխնդրի՝ արևելահայերենի և արևմտահայերենի առավել մերձեցմանը և փոխհարստացմանը» (Ռ.Սաքապետոյան, նշվ.աշխ., էջ 7):

հայերենի հետագա ամրապնդման ու տարածման հեռանկարում²⁴: Ինչպես նկատում է Գ.Զահուկյանը, «Գրական լեզուների և բարբառների փոխհարաբերության քննությունը ունի երկու կողմ՝ գրական լեզուների բարբառային հիմքերի հարցը և բարբառների մաքրության աստիճանի հարցը: Առաջին դեպքում գրական լեզուներն առնվում են ըստ բարբառների հետ ունեցած հարաբերության, երկրորդ դեպքում բարբառներն են առնվում ըստ գրական լեզուների հետ ունեցած հարաբերության»²⁵: Դիտարկելով բարբառները ըստ գրական արևմտահայերենի հետ ունեցած հարաբերության՝ մենք այս աշխատանքում նպատակ ունենք ոչ թե պարզելու այդ բարբառների այսպես կոչված «մաքրության» աստիճանը, այլ գրական արևմտահայերենի և բարբառային հայերենի՝ Հայաստանի Հանրապետությունում գործառող արևմտահայ տարբերակների՝ Մշո, Կարնո, Սասունի և Դիադինի բարբառների զուգադրական քննությամբ վեր հանելու դրանց մերձակցության աստիճանը, փոխհարաբերությունների բնույթն ու իրական պատկերը, ընդհանրություններն ու առանձնահատկությունները:

Զուգադրական ուսումնասիրություն կատարելիս առավելաբար նկատի ենք ունեցել համակարգային իրողությունները, իբրև համեմատության եզր դիտարկել ենք գրական արևմտահայերենի ըստ հնարավորին կանոնական վիճակը, որ ներկայացված է լեզվաբանական հետազոտություններում, քերականություններում, արևմտահայերենի և արևելահայերենի զուգադրական ուսումնասիրություններում: Անդրադարձել ենք նաև Պոլսի բարբառի իրո-

²⁴ Հետաքրքրական արդյունք կարող է տալ արևմտահայերենի կրողներով բնակեցված համայնքների դպրոցական ծրագրերում գրական արևմտահայերենի ուսուցման ներառումը: Ի դեպ, Ա.Սարգսյանը նկատել է, որ «իր գոյապայքարում արևմտահայերենը իրավունք ունի ապավինելու իր կենսավից թևին՝ արևելահայերենին» (Ա.Սարգսյան, *Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ*, Ե., 1985, էջ 8): Կարծում ենք՝ նույն կերպ գրական արևմտահայերենը կարող է ապավինել նաև կենդանի գործառող արևմտահայ բարբառներին:

²⁵ Գ.Զահուկյան, նշվ. աշխ., էջ 192:

դություններին: Դիտարկվող բարբառներին վերաբերող տվյալները քաղել ենք բարբառագիտական համապատասխան հետազոտություններից, ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցների՝ Հայերենի բարբառագիտական ատլասի համար հավաքած նյութերից, կատարել ենք նաև բարբառային կենդանի խոսքի դիտարկումներ: Գրական արևմտահայերենի և Կարնո, Մշո, Սասունի ու Դիադինի բարբառների փոխհարաբերությունները դիտարկել ենք ըստ հնչյունական, բառապաշարային, ձևաբանական մակարդակների:

ԳԼՈՒԽ Ա
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊՈԼՍԻ ԲԱՐԲԱՌԻ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾԱՌՈՂ ԿԸ
ՃՅՈՒՂԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Ե՛վ գրական արևմտահայերենը, և՛ դիտարկվող բարբառները բնութագրվում են տարածագործառական առանձնահատկություններով, հայերենի այդ տարբերակներն ունեն հնչյունաքերականական ու բառապաշարային հետաքրքրական յուրահատկություններ, որոնց վերաբերյալ եղել են առանձին դիտարկումներ, կատարվել հետազոտություններ: Ելնելով այդ հանգամանքից՝ նպատակահարմար ենք համարում նախ ներկայացնել այդ միավորների ընդհանուր բնութագրերը, ընդ որում՝ գրական արևմտահայերենի դեպքում կարևորում ենք նաև Պոլսի բարբառի ընդհանուր բնութագիրը և այդ բարբառի հիմքի վրա գրական տարբերակի ձևավորման հանգամանքները:

Հարկ ենք համարում նաև այստեղ հիշատակել լեզվական էական մի շարք հատկանիշներ, որոնք, ըստ ուսումնասիրողների, ընդհանուր և բնորոշ են արևմտահայ կամ Կը ճյուղի բարբառներին: Այդ կարգի ընդհանուր գծերից են.

1. շեշտը վերջնավանկային է.
2. եռավանկ և քառավանկ բառերում պատմական հնչյունափոխությամբ տեղի է ունեցել նախաշեշտ վանկի ձայնավորի անկում.
3. սեռական հոլովը ևս ստանում է որոշիչ հոդ.
4. բացառական հոլովն ունենում է Հ վերջավորություն.
5. ներգոյական հոլովի իմաստը չունի արտահայտության հոլովական համապատասխան ձև.
6. գոյականների հոգնակին ենթարկվում է Ու հոլովման.

7. դերանունների թեք հոլովաձևերում առկա է *ի* (ինձ ~ ինձի)։

8. ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմվում են *կը* մասնիկով (կամ նրա տարբերակներով)։

9. վաղակատար դերբայն ունենում է *ր* վերջավորություն։

10. առկա է *ե* և *ի* լծորդությունների անաժանց բայերի խոնարհման ձևերի տարբերակվածություն և այլն¹։

Նկատենք նաև, որ իրավացի է Ա.Ղարիբյանը, երբ գրում է, որ Կը ճյուղի բարբառների ընդհանրությունների մեջ ամենակարևորը և վճռականը ներկայի կազմությունն է²։

Պոլսի բարբառը և գրական արևմտահայերենի ձևավորումը

Պոլսի բարբառը, ըստ Հ.Աճառյանի, գործառում էր Կոստանդնուպոլիս քաղաքում, որը մինչև առաջին համաշխարհային պատերազմը ամենահայաշատ քաղաքն էր աշխարհում³։

¹ Տե՛ս նաև Հ.Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, հ. 2, էջ 328, Ա.Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն*, էջ 381-382, Ա.Գրիգորյան, *Հայ բարբառագիտության դասընթաց*, Ե., 1957, էջ 297-298, Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 51-119։

² Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 382։

³ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 353, նույնի՝ *Քննություն պոլսահայ բարբառի*, էջ 5։ Ցավոք, ներկայում հավաստի տվյալներ չունենք ինչպես պոլսահայ բնակչության քանակի, այնպես էլ Պոլսի բարբառի գործառության վերաբերյալ։ «Պոլսահայ համայնքի արդի խնդիրների մասին հոդվածում /18.02.2010/ (noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4315&sphrase_id=51045) Ռ.Մելքոնյանը նշում է, որ ...Օսմանյան կայսրության տարբեր վայրերում գոյություն ունեցած հայկական համայնքներից Ցեղասպանությունից հետո գոյատևեց միայն պոլսահայ համայնքը, որն էլ տարբեր տարիներին համալրվեց գավառներից եկած հայերի հաշվին։ Իսկ Թուրքիայի գավառներում հայկական համայնքային կյանք այդպես էլ չվերաձևավորվեց (թերեւս, որոշ բացառություն է միակ հայկական Վաքըֆլը գյուղը)։ ...

Հ.Աճառյանը Պոլսի բարբառը նշանավոր է համարում նրանով, որ «...Պոլսի հայությունը Ջմիտնիայի, Նիկոմեդիայի և Ռոտոսթոյի նման պահել պահպանել է իր մայրենի լեզուն՝ շրջապատող միլիոնավոր թրքության մեջ»⁴: Լեզվաբանը նկատում է, որ Պոլսի բարբառը շատ լավ պահել է հին հայերենի հարազատ գծերը և շատ մոտիկ է գրաբարին: Չնայած բարբառը թուրքերենից կատարել է մոտ 4000 բառային փոխառություն, նրա բառարանը նշանավոր է ձևերի հարազատությամբ, քերականության մեջ երբեմն ներկայացնում է այնպիսի ձևեր, որոնք իրենց հարազատությամբ գերազանցում են բոլորին⁵: Ըստ Հ.Աճառյանի՝ նման լինելով Ջմիտնիայի, Ռոտոսթոյի, Նիկոմեդիայի և Նոր Նախիջևանի բարբառներին՝ Պոլսի բարբառը դրանցից որևէ մեկի հետ չի նույնանում⁶: Հիշատակելով ընդունված տեսակետը, համաձայն որի՝ պոլսահայ բարբառը փոքրասիական բարբառի շարունակությունն է, Հ.Աճառյանը առավել կարևորում է Ղրիմից բռնագաղթված (1475թ.) հայության գործոնը և հանգում եզրակացության, որ «...Պոլսահայ բարբառը էապես դառնում է Խրիմի բարբառը, և դրա համար է որ այնքան խոշոր նմանություն ունի Նոր-Նախիջևանի բարբառի հետ»⁷:

Հայ բարբառագիտության մեջ նկատվել է, որ ինչպես Պոլսի, այնպես էլ Կր ճյուղի որևէ բարբառի ամենավաղ հետազոտություն համարվում է Մխիթար աբբայի կատարած ուսումնասիրությունը, որում հեղինակը նպատակ է ունեցել ներկայացնելու Պոլսի

ներկայումս Թուրքիայում պաշտոնապես կան 55-60 հազար հայեր...: ...Ստամբուլի հայ համայնքի ներկայիս կարեւոր խնդիրներից է հայոց լեզվի վիճակը. Հայախոսությունը շարունակաբար անկում է ապրում...: ...հայերենին տիրապետում է համայնքի ընդամենը 18 տոկոսը, իսկ երիտասարդների շրջանում թուրքախոսության մակարդակը հասնում է 90 տոկոսի»:

⁴ Հ.Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի*, էջ 7:

⁵ Տե՛ս նշվ.աշխ., էջ 7-8:

⁶ Տե՛ս նշվ.աշխ., էջ 8:

⁷ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ.աշխ., էջ 8:

բարբառի քերականությունը: Սակայն թուրքերենով կատարված այդ աշխատանքը, ինչպես փաստում է Ա.Ղարիբյանը, լեզվաբանական ուսումնասիրության բնույթ չի կրում⁸: Դեռևս 1911 թվին հրապարակված «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ Հ.Աճառյանը վկայում է, որ «... անթիւ են այն գրուածքները, որոնց մէջ Պօլսոյ բարբառը քիչ կամ շատ հարազատութեամբ գրի առնուած է: Երբ առաջին անգամ հիմնուեցաւ աշխարհաբար հայ լեզուն, թէ՛ Պօլիս, թէ՛ Վենետիկ և թէ՛ Ջմիւռնիա հրատարակուած թերթերն ու գրքերը կը գրուէին Պօլսոյ ժողովրդական ռամիկ դասին խօսակցական լեզուով. հայ հեղինակները քիչ քիչ զայն մաքրեցին գրաբարի միջոցով և շինեցին նոր գրական լեզուն»⁹: Նույն աշխատանքում լեզվաբանը ներկայացնում է Պոլսի բարբառի ընդհանուր բնութագիրը, որը հանգում է հետևյալին: Պոլսի բարբառը չունի երկբարբառներ և քմայնացած *յ* ձայնավոր: Թուրքերենից կատարված փոխառություններում է գործածվում քմային *ո* հնչյունը, սակայն գրական լեզվում այն հանդես է գալիս հինհայերենյան *h* երկբարբառի դիմաց: Բարբառում գործառում է քմային *օ*, որը բացակայում է գրական լեզվում: Բաղաձայնական համակարգը երկաստիճան է՝ բաղկացած ձայնեղ և շնչեղ խուլ հնչյուններից: Ընդ որում՝ ձայնեղները իրենց որակով նման են գերմաներենի համապատասխան հնչյուններին: Ի տարբերություն Պոլսի բարբառի՝ գրական արևմտահայերենը նախնական ձայնեղների դիմաց ունի շնչեղ խուլեր: Հ.Աճառյանի կարծիքով՝ այստեղ դեր է խաղացել այն հանգամանքը, որ Ռոդոսթյի բարբառում, ինչպես և Տիգրանակերտի և Մալաթիայի բարբառներում, նախնական ձայնեղների դիմաց առկա են շնչեղ խուլեր, և Պոլսի գրական արտասանության եղանակը հետևանք է այդ կողմերից եկած գաղթականության. «Պօլսոյ առաջին գրագէտները կը պատկանէին անշուշտ նոյն գաղթականութեանց և իրենք ալ

⁸ Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 381:

⁹ Հ.Աճառյան, *Հայ բարբառագիտություն*, էջ 249:

ներմուծած են իրենց արտասանութեան եղանակը, ինչպէս որ հիմայ ալ Պօլսեցիք կը տարածեն զայն գաւառները»¹⁰: Հինհայերէնյան ձայնավորները Պոլսի բարբառում չեն փոփոխվել, երկբարբառները մենաբարբառացել են (այ>ա, եա>է, իւ>ու, ոյ>ու): Պահպանվել են նաև ձայնեղ բաղաձայնները՝ միայն ր-ից հետո վերածվելով շնչեղ խուլերի: Նախնական խուլ բաղաձայնները ձայնեղացել են, իսկ շնչեղ խուլերը՝ պահպանվել: Ըստ լեզվաբանի՝ բաղաձայնների «փոփոխութիւնը նոյն է ինչ որ Եւդոկիոյ, Զմիւռնիոյ, Նիկոմեդիոյ բարբառներուն մէջ»¹¹: Բառասկզբի դ-ի դիմաց առկա է խ: Հոլովական համակարգը պարզեցված է և դրսևորվում է չորս հոլովով՝ ուղղական-հայցական, սեռական-տրական, բացառական և գործիական: Ինչպէս նկատում է Հ.Աճառյանը, «...ամենէն կարևորն է ձայնատրներու սղման կամ կրճատման կանոնի բացակայութիւնը հոլովման մէջ և հոլովման չափազանց կանոնաւորութիւնը. սիրդի, գինիի, շունի եւն»¹²: Բայերն ունեն երեք լծորդություն էլ, իլ, ալ: Պոլսի բարբառն աչքի է ընկնում բաղադրյալ ժամանակաձևերի առատությամբ, որոնք ձևավորվում են հարակատար (սիրած) և ապառնի (սիրելու) դերբայներով¹³: Բարբառի հանգամանալի նկարագրություն Հ.Աճառյանը կատարել է իր «Քննություն պոլսահայ բարբառի» աշխատության մէջ¹⁴: Ընդհանուր գծերով ներկայացնելով Պոլսի բարբառը՝ Ա.Ղարիբյանը նշում է, որ այստեղ բառասկզբում բաղաձայնները ենթարկվում են երկրորդ տեղաշարժին, այսինքն՝ խուլերը վերածվում են ձայնեղների, և ստացվում է երկաստիճան իլլագուրկ համակարգ¹⁵: Երբեմն բարբառը ազդվում է գրական լեզվից (որտեղ ձայնեղների դիմաց առկա են շնչեղ խուլեր) և

¹⁰ Նշվ. աշխ., էջ 259:

¹¹ Հ.Աճառյան, *Հայերէն գաւառական բառարան*, էջ 36:

¹² Նույն տեղում:

¹³ Տե՛ս Հ.Աճառյան, *Հայ բարբառագիտություն*, էջ 249-254:

¹⁴ Հ.Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի*, Ե., 1941, 234 էջ:

¹⁵ Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 389:

բառերի սկզբում նույնպես ունենում շնչեղ խուլեր¹⁶: Պոլսի բարբառում գոյականների մեծ մասը եզակիում ենթարկվում է Ի հոլովման (նույնիսկ *տուն, շուն, մուկ* և նման այլ բառեր), իսկ հոգնակիում՝ Ու հոլովման: Բարբառի անորոշ *մը* հոդը էական բայից և *ալ* շաղկապից առաջ դառնում է *մըն*¹⁷: Ցուցական դերանունները աչքի են ընկնում բազմաձևությամբ՝ *աս, սա, ասի, ասիզա, ասիզագ, սավի, սավիզա, սավիզագ, սվի, սվիզա, սվիզագ*¹⁸: Ներկայի և անցյալ անկատարի ձևերը կազմվում են *զը* մասնիկով, շարունակականի ձևերը՝ *գոր* մասնիկով, հարկադրականի ձևերը՝ *բիդի* եղանակիչով¹⁹: Պոլսի բարբառի համառոտ նկարագիր ներկայացրել է նաև Ա.Գրիգորյանը²⁰: Բարբառիս առանձնահատկությունները ներկայացնելիս Գ.Ջահուկյանը նկատում է, որ Պոլսի բարբառում բավական առատ են դիրքային և զուգորդական հնչյունափոխության դեպքերը, սակայն բառափոխության (երբեմն նույնիսկ բառակազմության) մեջ համարյա վերացել է շեշտափոխական հնչյունափոխությունը²¹: Բարբառի նոր բարդությունները կազմվում են անհոդակապ և առանց հնչյունափոխության²²: Գ.Ջահուկյանը, կատարելով բարբառների բազմահատկանիշ դասակարգում, Պոլսի միջբարբառը Կարինի, Մեֆաստիայի, Մարզվան-Ամասիայի, Ղրիմ – Նոր-Նախիջևանի, Կյուրինի, Մալաթիայի, Կեսարիայի, Խարբերդ-Երզնկայի, Ասլանբեկի, Ակնի, Արաբկիրի բարբառների և Շապին-Կարահիսարի, Եվդոկիայի, Սիվրիհիսարի, Սյույոզի միջբարբառների հետ ընդգրկում է Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբում²³: Ըստ լեզվաբանի՝ Պոլսի միջբարբառն ընդգրկում է Պոլիս, Զմյուռնիա,

¹⁶ Տե՛ս նշվ.աշխ., էջ 390:

¹⁷ Տե՛ս նշվ.աշխ., էջ 390-391:

¹⁸ Տե՛ս նշվ.աշխ., էջ 392:

¹⁹ Տե՛ս նշվ.աշխ., էջ 393-394:

²⁰ Տե՛ս Ա.Գրիգորյան, *Հայ բարբառագիտության դասընթաց*, էջ 298-314:

²¹ Տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայոց լեզվի զարգացման փուլերը*, էջ 56-57:

²² Տե՛ս նշվ.աշխ., էջ 58-59:

²³ Տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, էջ 132-133:

Նիկոմեդիա, Պարտիզակ, Ռոդոսթո, Օրդու, Տրապիզոն, Ադափագար բնակավայրերը²⁴:

Հայ լեզվաբանությունը անդրադարձել է նաև Պոլսի բարբառի՝ գրական արևմտահայերենի հիմք դառնալու հանգամանքներին և գրական լեզվի ու բարբառի տարբերություններին: Այսպես, Հ.Աճառյանը գրում է, որ «...Պոլսի բարբառը պիտի հաղթանակեր առանց որևէ պատճառաբանության, լոկ տեղի և հանգամանքների բերմամբ»²⁵, մանավանդ որ զավառների ժողովուրդը և ուսումնասեր անձինք, հաստատվելով Պոլսում կամ Զմյուռնիայում, անցնում էին Պոլսի բարբառին և մասնակցում նրա մշակմանը. «Այսպեսով ուրեմն Պոլսի բարբառի դիրքը՝ իբրև հիմք գրական լեզվի քերականության՝ վճռված էր»²⁶: Անդրադառնալով Պոլսի բարբառի՝ գրական արևմտահայերենի հիմք դառնալու խնդրին՝ Յու.Ավետիսյանը իրողությունը նախ և առաջ իրավացիորեն պայմանավորում է Պոլսի քաղաքական և մշակութային խոշոր կենտրոն դառնալու հանգամանքով, ապա և պոլսահայ բարբառի բուն լեզվական առանձնահատկություններով, ինչպիսիք են բարբառի՝ ավելի վաղ գրավոր լեզու դառնալը և իր բնությամբ հին գրական հայերենի ոգուն ու կանոնին ավելի մոտ լինելը²⁷:

Ա.Ղարիբյանը գրական արևմտահայերենի ձևավորման գործում կարևորում է երկաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգ ունեցող տասը բարբառներ, որոնք մինչև առաջին համաշխարհային պատերազմը դասավորված էին Փոքր Ասիայի հարավում (Տիգրանակերտ, Մալաթիա, Ռոդոսթո, Օրդու, Նիկոմեդիա) և հյուսիսում (Տրապիզոն, Եփրոկիա, Ղրիմ /Նոր Նախիջևան/, Մարաշ, Պոլիս): Ընդ որում՝ «հյուսիսի խումբը ձայնեղները թողնում է անշարժ, խուլերը վերածում ձայնեղների, իսկ հարավի

²⁴ Տե՛ս նույն տեղում:

²⁵ Հ.Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, հ.2, էջ 470-471:

²⁶ Նշվ. աշխ., էջ 471:

²⁷ Տե՛ս Յու.Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 9-11:

խումբը ձայնեղները ենթարկում է առաջին տեղաշարժին, վերածելով նրանց շնչեղ խուլերի, իսկ խուլերը վերածում է ձայնեղների; Այդ երկու խմբի բարբառները քերականությամբ միմյանց բավական նման են»²⁸: Լեզվաբանը համարում է, որ «Իր քերականությունն արևմտյան գրական լեզուն վերցրել է հիմնականում հյուսիսային խմբի բարբառներից, իսկ հարավային խմբի բարբառներից վերցրել է իր արտասանությունը կամ հնչյունական սիստեմը, այդ պատճառով էլ արևմտյան գրական լեզուն պատկանում է երկաստիճան իսլազուրկ բաղաձայնական սիստեմի հարավային խմբին, օրինակ՝ Գադուն փերանը փաց արավ: Գարաբեդը գուզ է իր քիրքը»²⁹:

Գ.Ջահուկյանը, գրական լեզուների և հայերենի բարբառների փոխհարաբերությունները դիտարկելով զուգաբանական - վիճակագրական սկզբունքով, արձանագրում է, որ արևմտահայ գրական լեզվին ավելի մոտ են Պոլսի միջբարբառի, Ղրիմ - Նոր-Նախիջևանի, Կարինի, Մարզվանի, այլև Առդեալի, Եդեսիայի բարբառների խոսվածքները: «Կարելի է ասել, որ արևմտահայ գրական լեզվի հիմքում ընկած են առաջին հերթին Պոլսի միջբարբառի խոսվածքները»³⁰:

Գրական լեզվի ու հիմք բարբառի փոխհարաբերությունների առումով նկատվել է նաև, որ արևմտահայ գրականը ավելի հարազատ է մնացել իր բարբառային հիմքին, ինչը չի կարելի ասել գրական արևելահայերենի մասին³¹: Անդրադառնալով գրական արևմտահայերենի ձևավորման և մշակման ընթացքին՝ Հ.Աճառյանը նախ նշում է *կոր* մասնիկի դուրամդումը, ապա օտար (նախ թուրքերեն, ապա և՛ եվրոպական լեզուների) բառերի փոխարեն հայերեն համապատասխանությունների (այդպիսիք վերցվում էին

²⁸ Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 382:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 217:

³¹ Տե՛ս Յու.Ավետիսյան, նշվ.աշխ., էջ 11. նաև՝ Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտություն*, էջ 215:

գրաբարից ու բարբառներից, ստեղծվում էին բառակերտմամբ ու բառապատճենմամբ) օգտագործումը: Գրական լեզուն մերժում է թուրքերենից բարբառին անցած մասնիկները: Ի դեպ, արևմտահայերենին բնորոշ օտարամերժությունը Հ.Աճառյանը բացատրում է Պոլսի բարբառի՝ փոխառությունների կիրառության չափազանցությամբ: Բարբառի քերականական համակարգն ընդունած գրական լեզվի ձևավորման գործում էական նշանակություն է ունենում բարբառային ձևերից խուսափումը և գրաբարյան ձևերի ընդունումը, որը Հ.Աճառյանը մեծ բարիք է համարում (մեր զանազան բարբառները գոնե գրականության մեջ ի մի են ձուլվում, և ժամանակակից հայը չի կտրվում անցյալից)³²: Ի վերջո, 19-րդ դարի կեսերից մինչև 20-րդ դարի երկրորդ տասնամյակը ներառյալ՝ գրական արևմտահայերենը «...ընթանում է մշակման ու զարգացման որոշակի հունով, ընդ որում ավելի ուժեղ է զգացվում գրաբարի ազդեցությունը: Այստեղ ևս ջնջվում են որոշ նեղ բարբառայնություններ, հատկապես Պոլսի բարբառի շարունակական *կոր* մասնիկը: Արևմտահայ տարբերակը պահպանում է բայերի *իլ* լծորդությունը, նշանակալից տեղ տալիս գրաբարաձև հոլովումներին, սեռական հոլովը կազմում միշտ *ն* հոդով, հատուկ անուններն ուղղականում գործածում առանց հոդի և այլն»³³:

Պատմական հանգամանքների բերումով գրական արևմտահայերենը այնուհետև ունեցել է զարգացման յուրօրինակ ընթացք: Բացի այն, որ գրական աշխարհաբարի այս տարբերակը «կազմավորման առաջին շրջանից սկսած մինչև ձևավորման ավարտը գտնվել է ֆրանսերենի ազդեցության ոլորտում»³⁴, տարագիր գոյատևման հետագա տասնամյակների ընթացքում աշխարհի տարբեր երկրներում այն ենթակա է եղել տարբեր լեզուների ազդեցությունների, և ինչպես նկատում է Ա.Սարգսյանը, «Ազդեցության նմանօրինակ երևույթներ հեշտ է նկատել

³² Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 471-476:

³³ Գ.Զահուկյան, *Հայոց լեզվի զարգացման փուլերը*, էջ 66:

³⁴ Տե՛ս Ռ.Սաքապետոյան, նշվ.աշխ., էջ 21:

բառապաշարի, քերականական առանձին կառուցվածքների մեջ, հատկապես դարձվածաբանության: Անժխտելի է ազդեցությունը նաև հնչյունական կառուցվածքի վրա»³⁵: Այդ ամենի հետևանքով «գրական արևմտահայերենի արդի վիճակը ներկայացնում է հարաբերաբար ավելի բարդ պատկեր, քան կար դարասկզբին, կամ 30-40-ական թվականներին»³⁶: Թերևս կարելի է արձանագրել, որ գրական արևմտահայերենը իր արդի վիճակներով չունի հիմք բարբառի հետ նախնական հարազատության այն աստիճանը, որն ուներ նախապես:

Մշո բարբառ

Մշո բարբառը տարածված էր Վանա լճի հյուսիսային, արևմտյան և հարավարևմտյան սահմաններում³⁷: Լ.Մսերյանցը նշում է, որ Մշո բարբառը Մշո դաշտի բարբառն է, հին Տարոնի գավառի բարբառը³⁸: Ըստ Հ.Աճառյանի՝ «Իր կեդրոնն է Մուշ քաղաքը. ասոր հիւսիսէն կը տարածուի մինչև Խնուս և Ալաշկերտ, հարաւէն Բաղէշ, արևելքէն կը հասնի մէկ կողմէն Մոկս և միւս կողմէն Տիատին, արևմուտքէն Լճէ, Ճապաղջուր նն»³⁹: Ի դեպ, Հ.Աճառյանը Մշո բարբառի մեջ էր ներառում նաև Սասունը⁴⁰: Ըստ Ա.Գրիգորյանի՝ Մշո բարբառով խոսում էին Մուշ քաղաքի և շրջակա 600 գյուղերի հայ բնակիչները⁴¹: Մուշի և Ալաշկերտի բնակչության մի մասը 19-րդ դարի ռուս-թուրքական պատերազմների շրջանում գաղթել ու բնակություն է հաստատել Արևելյան Հայաստանում⁴²: Այդ մասին Հ.Աճառյանը 1911թ. գրում է. «Վերջին

³⁵ Ա.Սարգսյան, *Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ*, էջ 26:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Տե՛ս Ս.Բաղդասարյան-Թափալցյան, *Մշո բարբառը*, էջ 5:

³⁸ Տե՛ս Լ.Мсерианц, *Этюды по армянской диалектологии*, ч. I, с. XI-XII.

³⁹ Հ.Աճառյան, *Հայ բարբառագիտություն*, էջ 116:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ Տե՛ս Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 363:

⁴² Տե՛ս նույն տեղում:

երկու ռուս-տաճկական պատերազմներուն ժամանակ Մուշէն և Ալաշկերտէն երկու մեծ հայ գաղթականութիւն դուրս գալով՝ հաստատուեցաւ Երևանի նահանգը, այն է Ապարան (Ալէքսանդրապօլի մօտ) և Նոր-Բայազիդի հարաւային կողմերը՝ Սևանայ լճին եզերքներուն վրայ: Վերջին շրջանին մէջ այսօր կայ 21 հայկական գիւղ՝ որոնք կը խօսին Մշոյ կամ Ալաշկերտի բարբառով⁴³: Ինչ վերաբերում է բնօրրանում մնացածների սերունդներին, ապա նրանք եղեռնի զոհ են դարձել կամ տարագրվել: Ներկայումս Մշո բարբառը հիմնականում գործառում է ՀՀ Մարտունու և Ապարանի տարածաշրջաններում⁴⁴, այն տարածված է նաև Հայաստանի այլ վայրերում, Վրաստանի հայաբնակ որոշ շրջաններում⁴⁵:

Նկատի ունենալով Մշո բարբառի հնչյունական համակարգը՝ Լ.Մսերյանցը այն դասում է «արևելյան բարբառների» խմբին: Նա նկատում է, որ չնայած Վանի բարբառին Մշո բարբառի թվացյալ մերձավորությանը՝ վերջինս առանձնանում է իր հնչյունական համակարգով⁴⁶: Մսերյանցն արձանագրում է նաև օտար լեզուների ազդեցությունը Մշո բարբառի, հատկապես նրա բառապաշարի վրա, որն արտահայտվում է թուրքերեն և թուրքերենի միջոցով պարսկերեն, արաբերեն և քրդերեն բառերի՝ բարբառներթափանցումով⁴⁷: Մշո բարբառը, ըստ Աճառյանի, ձայնավորների առումով հարուստ չէ և այդպիսով զանազանվում է Վանի բարբառից: Բարբառի հնչյունական համակարգի համար նա բնութագրական է համարում *է,ռ* երկբարբառայինների առկայությունը, որոնք ծագում են հայերենի շեշտյալ *է,ռ* հնչյուններից⁴⁸: Բաղաձայնների առումով, ընդհակառակը, Մշո բարբառը հա-

⁴³ Հ.Աճառյան, նշվ.աշխ., էջ 116:

⁴⁴ Տե՛ս Բ.Մադաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Ե., 1985, էջ 6:

⁴⁵ Տե՛ս Ս.Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., էջ 9-10, Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 363::

⁴⁶ Տե՛ս Լ.Մսերյան, նշվ. աշխ., էջ XII:

⁴⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ XII- XIII:

⁴⁸ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 116:

րուստ է՝ ունենալով քառաստիճան բաղաձայնական համակարգ: Շնչեղ ձայնեղների և բառակզրում ձայնեղ հ-ի առկայությամբ ևս Աճառյանը Մշո բարբառը տարբերակում է Վանից: Բարբառի մի հատվածում՝ Բաղեշում, Խլաթում, Արճեշում և Արծկեում, ինչպես Վանի բարբառում, հ-ի դիմաց հանդես է գալիս *խ*: Նկատի ունենալով այս խմբի նաև որոշ այլ յուրահատկություններ՝ Աճառյանը կարծում է, որ Մշո բարբառի մեջ կարելի է առանձնացնել Բաղեշի ենթաբարբառ՝ դրանում ներառելով նաև Խլաթը, Արճեշը և Արծկեն⁴⁹: Քերականական իրողություններից հիշատակում է *q*, *h* նախդիրների առկայությունը, ստացական ածականներից հետո գոյականի՝ հոդ չստանալը, ստացական ածականների նաև հետադաս և նախադրությունների (կապերի) նախադաս գործածությունը, անկատարի եզակի 1-ին դեմքի փոխարեն հոգնակիի կիրառումը, *qալ*, *լալ*, *տալ* բայերի՝ *h* նախաձայն ստանալը, հարակատարի *ուկ* վերջավորությունը և այլն⁵⁰: Ընդ որում՝ նկատում է, որ ստացական ածականների հետադաս կիրառությունը հատուկ է միայն Մշո բարբառին⁵¹: Ա.Ղարիբյանը նշում է, որ Մշո բարբառը Կը ճյուղի ևս երկու՝ Կարնո և Ոզմիի բարբառների հետ ունի բաղաձայնական քառաստիճան համակարգ, և այս երեք բարբառները այդպիսով նմանվում են Ում ճյուղի երկու հիմնական՝ Արարատյան և Նոր Զուղայի բարբառներին, ապա եզրակացնում է. «Այսպիսով, Կենտրոնական Հայաստանի հիմնական բարբառները պատկանում են բաղաձայնների քառաստիճան խմբին»⁵²: Բարբառի ընդհանուր բնութագիրը, հնչյունական ու քերականական յուրահատկությունները ներկայացրել է Ա.Գրիգորյանը⁵³: Բարբառիս համեմատաբար ամբողջական ուսումնասիրու-

⁴⁹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 117-118:

⁵⁰ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 118-119, Հ.Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, II մաս, էջ 338-339:

⁵¹ Տե՛ս Հ.Աճառյան, *Հայ բարբառագիտություն*, էջ 118:

⁵² Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 383:

⁵³ Տե՛ս Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 363-388:

թյունն է ներկայացնում Ս.Բաղդասարյան-Թափալցյանի «Մշո բարբառը» աշխատությունը⁵⁴, որի հեղինակը, ի տարբերություն նախորդ ուսումնասիրողների, բարբառային իրողությունները դիտարկել է բուն բարբառախոս միջավայրերում՝ արձանագրելով նաև խոսվածքային տարբերությունները⁵⁵: Բարբառի առանձին խոսվածքների ուսումնասիրությանն են նվիրված Ռ.Բաղրամյանի և Ք.Մադաթյանի աշխատանքները⁵⁶: Ավելի վաղ բարբառի ուսումնասիրությամբ զբաղվել են Ք.Պատկանյանը և Լ.Մսերյանցը⁵⁷: Ըստ բազմահատկանիշ դասակարգման՝ Մշո բարբառը Տավորիկ-Մոտկանի, բուն Սասունի և Տիգրանակերտի բարբառների հետ կազմում է արևմտյան խմբակցության Մուշ-Տիգրանակերտի կամ հարավ-կենտրոնական բարբառախումբը⁵⁸: Գ.Ջահուկյանը բարբառի տարածման վայրեր է համարում Բաղեշը, Խլաթը, Արծկեն, Արճեշը, Մանագկերտը, Մուշը, Բուլանդը, Խնուսը և Ալաշկերտը⁵⁹: Մշո բարբառով զգալի քանակության գրվածքներ են հրապարակվել⁶⁰:

Կարնո բարբառ

Կարնո բարբառի կենտրոնը եղել է Կարին քաղաքը: Բարբառային այս միավորը Կը ճյուղի ամենատարածված բարբառներից մեկն էր: Այն, ինչպես վկայում է Հ.Աճառյանը, տարածվում

⁵⁴ Ս.Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., Ե., 1958:

⁵⁵ Տե՛ս նշվ. աշխ., էջ 5-6, 9:

⁵⁶ Ռ.Բաղրամյան, *Հայերենի բարբառներ*, էջ 134-178, Ք.Մադաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Ե., 1985:

⁵⁷ К.Патканов, *Материалы для изучения армянских наречий*, вып. II, Мушский диалект, СПб., 1875, Л.Мсерианц, *Этюды по армянской диалектологии*, I-II, М., 1897-1901:

⁵⁸ Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 134:

⁵⁹ Նույն տեղում:

⁶⁰ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 120-121, Ս.Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 8:

էր մինչև Խնուս, Երզնկա, Գյումուշխանե⁶¹: 19-րդ դարի ռուս-թուրքական պատերազմների հետևանքով հայ գաղթականությունը Կարնո բարբառը հասցնում է մինչև Երևան և Թիֆլիս, և այդպիսով 20-րդ դարի սկզբներին Կովկասի չորս քաղաքների՝ Կարսի, Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի և Ախալցխայի ողջ հայությունը խոսում էր Կարինի հայության նույն բարբառով⁶²: Կարնո բարբառը գործառում էր նաև Բասենում, Նարմանում, Խոտրջուրում և Բաբերդի գյուղերում⁶³: Ա.Ղարիբյանը նշում է, որ Կարնո «բարբառին էին պատկանում Կարսի և իր շրջանի, Կարին քաղաքի և շրջանի և Սպերի շրջանի խոսվածքները»⁶⁴: Նախքան եղեռնը Էրզրումի նահանգի բազմաթիվ բնակավայրերում դեռևս ապրում էին տասնյակ հազարավոր հայեր⁶⁵, Կարնո բարբառի կրողներ, սակայն եղեռնից հետո ինչպես ողջ Արևմտյան Հայաստանը, այնպես էլ հիշյալ նահանգը հայաթափվեց ու հայերենագրվեց: Հայաստանի Հանրապետությունում այս բարբառով ներկայում խոսում են Գյումրու, Արթիկի, Ախուրյանի տարածաշրջաններում, մերձակա այլ բնակավայրերում: Բարբառը գործառում է նաև Վրաստանի Ախալքալաքի, Ախալցխայի և Բոգդանովկայի տարածաշրջաններում: Ժամանակին Ա.Ղարիբյանը նշել է, որ Կարնո բարբառով խոսողների թիվը հասնում է շուրջ 200 000-ի⁶⁶:

Կարնո բարբառի մասին ամենահին վկայությունը համարվում է Ստ.Սյունեցու (8-րդ դար) կողմից «բառք եզերականք»-ի թվում Սպերի խոսվածքի հիշատակումը⁶⁷: Ինչպես վկայում է Հ.Մկրտչյանը, 19-րդ դարում Կարնո բարբառով գրվել են բազում հոդվածներ, գրքեր, պիեսներ, գրի են առնվել բանահյուսական

⁶¹ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 104:

⁶² Տե՛ս նույն տեղում:

⁶³ Տե՛ս Հ.Աճառյան, *Հայերէն գաւառական բառարան*, էջ 2:

⁶⁴ Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 407:

⁶⁵ Տե՛ս Ա.Մելքոնյան, *The demography of the Province of Erzerum: Sixteenth-Twentieth Centuries, Ցեղասպանություն և հայրենագրկում*, էջ 42 – 52:

⁶⁶ Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ.աշխ., էջ 333:

⁶⁷ Տե՛ս նշվ.աշխ., էջ 407:

նյութեր (սակայն՝ ոչ գիտական տառադարձությամբ)⁶⁸: Նույն դարում բարբառի մասնակի ուսումնասիրության փորձ է կատարել ռուս լեզվաբան Ա.Տոմսոնը, սակայն այդ ուսումնասիրությունը հաճախ ճիշտ չի ներկայացնում բարբառի իրողությունները⁶⁹ : Հ.Աճառյանը նկատում է, որ Կարնո բարբառի ձայնավորները հինհայերենյանի համեմատությամբ գրեթե նույնությամբ պահպանված են: Բարբառը զանազանում է *է* և *ե*, *ո* և *օ* հնչյունները (ընդ որում՝ երկբարբառային հնչյունները հանդես են գալիս միայն գյուղական խոսքում), քմայնացած *օ* և *ու* հնչյուններ հանդիպում են միայն թուրքերենից փոխառված բառերում՝ ի տարբերություն այլ (նույնիսկ Պոլսի) բարբառների, որոնցում բնական ձայնավոր-խոսքային առաջացած լինելով՝ այդպիսիք գտնվում են նաև հայերեն բառերում: Կարնո բարբառին օտար է նաև *յ*-ն, որը, հիմնականում դրսևորվելով թուրքերեն բառերում, հանդիպում է նաև առանձին հայերեն բառերում⁷⁰: Բաղաձայնական համակարգում բարբառը բնութագրվում է ու-ից առաջ բառասկզբի *h>ֆ* անցմամբ (դարձյալ միայն գյուղական խոսքում): Մշո բարբառի պես Կարնո բարբառը ևս բնութագրվում է հպական և հպաշփական բաղաձայնական քառաստիճան համակարգով՝ շնչեղ ձայնեղների առկայությամբ, ինչպես նաև ձայնեղ *հ*՝ հնչյուն ունենալով⁷¹: Կը ճյուղի բոլոր (նաև՝ Պոլսի) բարբառների պես Կարնո բարբառում ևս առկա է միջնավանկի ա-ի անկում: Բարբառի քաղաքային ու գյուղական դրսևորումները տարբերվում են նաև *այ* երկբարբառի պատմական զարգացմամբ. քղք. *այ>* *ա*, գյուղ. *այ>* *ե*: Հ.Աճառյանը կարծում է, որ Կարնո բարբառի շեշտը իր յուրահատուկ առոգանությամբ առանձնանում է նրանով, որ մյուս բարբառների համեմատ ալվելի բարձր է⁷²: Քերականական առումով Կարնո

⁶⁸ Տե՛ս Հ.Մկրտչյան, *Կարնո բարբառը*, էջ 8:

⁶⁹ Տե՛ս նույն տեղում:

⁷⁰ Տե՛ս Հ.Աճառյան, *Հայ բարբառագիտություն*, էջ 104:

⁷¹ Տե՛ս նշվ.աշխ., էջ 105 - 106:

⁷² Տե՛ս նշվ.աշխ., էջ 108:

բարբառը *Կը* ճյուղի մյուս բարբառներից տարբերվում է նրանով, որ Ում ճյուղի բարբառների պես հայցականում տարբերակում է անձի և իրի առումները: Հոգնակիի կազմության մեջ դրսևորվում է *էստան* մասնիկը, որին կարող է կցվել նաև *նէր* մասնիկը (*բ'աղ-նէստըննէր*): Սահմանականի ներկա և անկատար ժամանակներում *գը* մասնիկը դրվում է բայից հետո, բայց հետաքրքրական է, որ ձայնավորով սկսվող բայերը սկզբից էլ ստանում են *գ* (*գէնէմ գը*): Չնայած իր գրաված ընդարձակ տարածքին՝ Կարնո բարբառը, ըստ Հ.Աճառյանի, ունի միայն երկու ենթաբարբառ (Բաբերդի և Խոտրջուրի⁷³), և հիմնականում տարբերակվում են բարբառի քաղաքային և գյուղական դրսևորումները⁷⁴: Բարբառի համառոտ նկարագիրը ներկայացրել են նաև Ա.Ղարիբյանը⁷⁵ և Ա.Գրիգորյանը⁷⁶: Կարնո բարբառի հնչունաբանության ու ձևաբանության ամբողջական ուսումնասիրություն է ներկայացնում Հ.Մկրտչյանի «Կարնո բարբառը» աշխատությունը⁷⁷: Ըստ բարբառների բազմահատկանիշ դասակարգման՝ Կարնո բարբառը Մեբաստիայի, Մարզվան-Ամասիայի, Ղրիմ – Նոր-Նախիջևանի, Կյուրինի, Մալաթիայի, Կեսարիայի, Խարբերդ-Երզնկայի, Ասլանբեկի, Ակնի, Արաբկիրի բարբառների և Շապին-Կարահիսարի, Եվդոկիայի, Պոլսի, Սիվրիհիսարի, Սյուլյոզի միջբարբառների հետ կազմում է Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախումբը⁷⁸: Իբրև Կարնո բարբառի տարածման վայրեր նշվում են Կարինը, Լենինականը (Գյումրի), Բաբերդը և Խնդաձորը⁷⁹: Այս բարբառով մի շարք աշխատություններ են հրատարակվել 19-րդ դարի վերջերին⁸⁰:

⁷³ Հետագայում այս միավորը Հ.Աճառյանը համարում է առանձին բարբառ (տե՛ս Հ.Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, հ. 2, էջ 337):

⁷⁴ Տե՛ս նշվ.աշխ., էջ 111:

⁷⁵ Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ.աշխ., էջ 407-413:

⁷⁶ Տե՛ս Ա.Գրիգորյան, նշվ.աշխ., էջ 333 – 349:

⁷⁷ Հ.Մկրտչյան, նշվ.աշխ., Ե., 1952, էջ 191;

⁷⁸ Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ.աշխ., էջ 132-133:

⁷⁹ Նույն տեղում:

⁸⁰ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ.աշխ., էջ 111;

Սասունի բարբառ

Հ.Աճառյանը Սասունի բարբառային միավորն ընդգրկում է Մշո բարբառի կազմում⁸¹ և դրա առանձնահատկություններին չի անդրադառնում: Բարբառին չի անդրադարձել նաև Ա.Ղարիբյանը: Սասունի բարբառային միավորը իբրև առանձին բարբառ առանձնացրել է Վ.Պետոյանը իր «Սասունի բարբառը» աշխատությունում⁸²: Ըստ հեղինակի՝ Սասունի գավառն ուներ 10 շրջան՝ 539 գյուղով, և Սասունի հայ բնակչությունը կազմում էր 35 հազար շունչ: Նրանց մի մասը բնաջնջվում է 1894, 1904 թվերի ազգային - ազատագրական շարժումների ժամանակ, բնակչությունը մեծ կորուստներ է կրում նաև եղեռնի ընթացքում: 1916թ. Սասունի անմատչելի վայրերում, Անդրքում և Գեղիեգուզանում ապաստանած մոտ 10 հազար սասունցիներ ռուսական բանակի հետ տեղափոխվում են Կովկաս և բնակություն հաստատում Աշտարակի և Թալինի գյուղերում⁸³:

Սասունի բարբառն առանձնանում է մի շարք հատկանիշներով: Այսպես, հինհայերենյան ձայնեղ պայթականների ու հպաշփականների դիմաց բոլոր դեպքերում բարբառում առկա են

⁸¹ Տե՛ս Հ.Աճառյան, *Հայ բարբառագիտություն*, էջ 116:

⁸² Վ.Պետոյան, *Սասունի բարբառը*, էջ 27-30:

⁸³ Տե՛ս Վ.Պետոյան, նշվ. աշխ., էջ 7: Փաստեր կան, որ այժմ էլ Սասունում ապրում են ծպտյալ կամ իսլամացած շատ հայեր, որոնք դեռևս պահպանել են Սասունի բարբառը: «Ցեղասպանությունը վերապրած Սասունի հայության արդի խնդիրների շուրջ» հոդվածում Ռ.Մելքոնյանը գրում է. «Ինչպես մեզ հայտնի դարձավ սասունցի հայերի հետ բազմաթիվ զրույցներից, շփումներից, նրանց մեծ մասը ծպտյալ կամ բացահայտ քրիստոնյաներ են. ... Կան նաև տարիքային տարբեր խմբերի պատկանող սասունցիներ, որոնք տարբեր մակարդակով տիրապետում են հայերենին՝ Սասնո բարբառին, և մենք համարյա ազատ հաղորդակցվում էինք» (noravank.am/upload/pdf/383_am.pdf, էջ 7): Չենք բացառում, որ Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում դեռևս այս կամ այն կերպ կարող են պահպանված լինել արևմտահայ այլ բարբառների բեկորներ ևս:

խուլեր, իսկ նախնական խուլերի դիմաց՝ ձայնեղներ: Լայն տարածում ունի քմային *ւ-ն*, գործառում են նաև *օ*, *ո* հնչյուններ: Բարբառը երկբարբառներ չունի: Բազմավանկ բառերի միջին վանկի ձայնավորն ընկել է: Ըստ Վ.Պետոյանի՝ Սասունի բարբառի բազմավանկ բառերում շեշտակիր է նախավերջին վանկը⁸⁴: Դերանունների և օժանդակ բայի *ե-ի* դիմաց բարբառն ունի *ը* (*մընք, չըմ*): Շեշտակիր վանկում ոչ բառասկզբում *ո-ի* դիմաց առկա է *ու*: Տեղի է ունեցել նախնական երկբարբառների մենաբարբառացում՝ *այ>ւ* կամ *է*, *եա>ի*, *իւ>ի* կամ *ը*, *ու*, *ոյ>ու*: Եզակի թվում Ի հոլովման բառերը սեռականում և տրականում ունենում են տարբեր ձևեր (սեռ. *ւնշւնգիրդը*, տրկ. *ւնշւնգերդի/ն/*), հայցականը ձևավորվում է *զ* նախդրով, բացառականը՝ *ինւ* մասնիկով (*ւնշւնգերդը ինւ* կամ *ւնշւնգերդէն*): Անորոշ հոդն է *ըմ*, որ դրվում է գոյականի վերջում: Անձնական դերանուններն են՝ *ըս, տու, ւնը*, ցուցականները՝ *հնյդւն, հնյնւն, ւնը, հնյմնլ, ւնյմնլ* և այլն: Բարբառում բայն ունի *իլ* և *ալ* լծորդություններ: Վաղակատար դերբայի վերջավորությունն է *իյ*, հարակատարինը՝ *ուգ*: Ենթադրական և հարկադրական եղանակներն այս բարբառում արտահայտության յուրահատուկ ձևեր չունեն և նույնանում են սահմանականի ձևերի հետ: Մի շարք ժամանակաձևեր եզակի առաջին դեմքի ձևեր չունեն, փոխարենը գործածվում են հոգնակիի ձևերը: Որոշ խոսվածքներում գործառում է նաև *ի* նախդիրը⁸⁵:

Անդրադառնալով Սասունի բարբառին՝ Ա.Գրիգորյանը նշում է, որ Մշո և Սասունի բարբառները շատ են տարբերվում միմյանցից և տարբեր բարբառներ են⁸⁶: Լեզվաբանը նկատում է, որ այս բարբառում ձայնեղների շնչեղ խլացման երևույթ տեղի չի

⁸⁴ Տե՛ս նշվ.աշխ., էջ 16:

⁸⁵ Բարբառի բնութագիրը տրվում է ըստ Վ.Պետոյանի «Սասունի բարբառը» աշխատության:

⁸⁶ Տե՛ս Ա.Գրիգորյան, նշվ.աշխ., էջ 388:

ունենում⁸⁷: Դասական թվականները կազմվում են *ընջի* մասնիկով⁸⁸: Բայի բոլոր անցյալ ժամանակներն ունենում են եզակիի *էք, էր, էր*, հոգնակիի *էք, էք, էն* վերջավորություններ, ընդ որում՝ եզակի և հոգնակի առաջին, հոգնակի երկրորդ դեմքերում բայն ունենում է նույն ձևը⁸⁹: Ա.Գրիգորյանը Սասունի բարբառում վաղակատար դերբայ չի տեսնում⁹⁰:

Գ.Զահուկյանը դիտարկվող բարբառային միավորը «Բուն Սասունի (Գեղիեգուզանի) բարբառ» անվանումով ընդգրկել է Մուշ-Տիգրանակերտի կամ հարավ-կենտրոնական բարբառախմբի մեջ: Այս բարբառախմբում են ընդգրկված նաև Մուշի, Տալվորիկ-Մոտկանի և Տիգրանակերտի բարբառները: Լեզվաբանը Բուն Սասունի բարբառի համար առանձնացնում է բարբառախոս երկու տարածք՝ Գեղիեգուզանի և Հազգոյի⁹¹:

Դիադինի բարբառ

Դիադինի բարբառի բնօրրանը՝ Դիադինի գավառակը, Բայազետի գավառի կազմում էր: Դիադին քաղաքը գտնվում էր Արածանիի վերին հոսանքի աջ ափին, Բայազետից մոտ 38 կմ դեպի արևմուտք՝ Ծաղկանց լեռների արևելյան փեշերին: 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Դիադինի բնակչությունը գաղթում է Արևելյան Հայաստան և հիմնականում բնակություն հաստատում Սևանի ափին՝ Բասարգեչար գյուղում (այժմ՝ Վարդենիս քաղաք)⁹²:

⁸⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 391:

⁸⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 395:

⁸⁹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 398:

⁹⁰ Տե՛ս նշվ. աշխ., էջ 397, 399:

⁹¹ Տե՛ս Գ.Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, էջ 134:

⁹² Տե՛ս Թ.Հակոբյան, *Պատմական Հայաստանի քաղաքները*, Ե., 1987, էջ 107-108, ինչպես նաև՝ Հ.Աճառյան, *Հայ բարբառագիտություն*, էջ 140, 145-146:

Հ.Աճառյանը Դիադինը համարում է Վանի ենթաբարբառ՝ բերելով մի շարք ընդհանրություններ, ինչպես՝ գ,կ,ք-ի քմայնացում, հ-ի դիմաց *խ*, ե,ռ-ի երկբարբառային արտասանություն, այ-ի դիմաց *է*, բացառականի ից-ով ձև և այլն: Նշում է նաև Դիադինի մի շարք յուրահատկություններ, ինչպես՝ Վանի իւ-ի դիմաց *ու*, ձայնեղ բաղաձայնների առկայություն, էական բայի եզակի երրորդ դեմքի *ա*⁹³: Աճառյանը նկատում է նաև, որ Վանի երեք (Դիադին, Մոկք և Ոզմի) ենթաբարբառներից Դիադինը ավելի մոտիկ է գրական լեզվին⁹⁴: Բարբառային այս միավորը առանձին բարբառ է համարել Ա.Ղարիբյանը, որի կարծիքով՝ Աճառյանի բերած փաստերից իսկ երևում է, որ «այդ խոսվածքն իսկական բարբառ է և ոչ ենթաբարբառ»⁹⁵: Լեզվաբանը բերում է այս խոսվածքը Վանի բարբառից զատող 11 հատկանիշ (եռաստիճան բաղաձայնական համակարգ, օժանդակ բայի 3-րդ դեմքի *ա*, ուկ-ով հարակատար դերբայ, Ու հոլովում հոգնակիում, բացառականի և՛ *էն*, և՛ *ից* վերջավորություններ, տարբերություններ դերանունների հոլովման մեջ և այլն), ինչպես նաև 4 ընդհանրություններ (հ-ի դիմաց *խ*, գ,կ,ք-ի քմայնացում, ո,ե-ի երկբարբառային արտասանություն, օժանդակ բայի անցյալի ձևերի է-ի սդում) և եզրակացնում է, որ ենթաբարբառ համարված այս խոսվածքը սկզբունքային հատկությունների մի ամբողջ խմբով տարբերվում է և՛ Վանի, և՛ մյուս բարբառներից ու «պետք է այդ ենթաբարբառ կոչվածը համարենք միանգամայն *անկախ բարբառ*, անվանելով այն *Դիադինի բարբառ*»⁹⁶: Հետևելով Հ.Աճառյանին՝ Դիադինը Վանի ենթաբարբառ է համարում նաև Ա.Գրիգորյանը⁹⁷, սակայն Գ.Ջահուկյանը այն իբրև առանձին բարբառ Վանի բարբառի հետ ընդգրկում է արևմտյան

⁹³ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 146:

⁹⁴ Տե՛ս Հ.Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, II մաս, էջ 340:

⁹⁵ Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 91:

⁹⁶ Նշվ. աշխ., էջ 91-92:

⁹⁷ Տե՛ս Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 314:

խմբակցության Վանի կամ հարավային միջբարբառախմբում⁹⁸: Դիաղինի բարբառի մասին ընդհանուր տեղեկություններ տալիս է Ռ.Բաղրամյանը իր «Հայերեն բարբառներ (Սևանա լճի ավազանի խոսվածքները)» աշխատանքում⁹⁹: Բարբառի մասին տեղեկություններ կարելի է քաղել Վ.Խաչատրյանի «Վարդենիսի (Դիաղինի) բարբառը» գրքից¹⁰⁰:

⁹⁸ Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 134-135:

⁹⁹ Տե՛ս Ռ.Բաղրամյան, *Հայերեն բարբառներ (Սևանա լճի ավազանի խոսվածքները)*, էջ 116-134:

¹⁰⁰ Վ.Խաչատրյան, *Վարդենիսի (Դիաղինի) բարբառը*, Ե., 2004:

ԳԼՈՒԽ Բ
ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՈՐԾԱՌՈՂ ԿԸ ՃՅՈՒՂԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նպատակահարմար ենք գտնում ուսումնասիրության ոլորտում ընդգրկված լեզվատարբերակների հնչյունական մակարդակի իրողությունները դիտարկել ըստ Գ.Ջահուկյանի ընտրած բարբառային 50 հատկանիշների (25 բաղաձայնական և 25 ձայնավորական)¹: Միաժամանակ կանոնադաշտնաք էական այն իրողություններին, որոնք այդ հատկանիշների մեջ ներառված չեն: Նման մոտեցումը թույլ կտա հստակորեն վեր հանել առկա ընդհանրություններն ու տարբերությունները, հատկանիշների ընդգրկման սահմանները, ինչպես նաև աշխատանքը զերծ կպահի հավելուրդային տեղեկություններից, որոնք, իհարկե, կարևոր են որևէ լեզվատարբերակի առանձնակի քննության դեպքում:

Բաղաձայնական համակարգ

Բաղաձայնական համակարգի առումով նախ և առաջ հետաքրքրություն են ներկայացնում բառասկզբում պայթական-

¹ Նկատվել է, որ Գ.Ջահուկյանի վիճակագրական բազմահատկանիշ դասակարգումը հնարավորություն է տալիս ավելի որոշակիորեն պատկերացնելու գրական լեզուների և բարբառների փոխհարաբերությունը (տե՛ս Ա.Սարգսյան, *Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ*, էջ 15): Նշենք, որ Գ.Ջահուկյանը համապատասխան աղյուսակով ներկայացրել է բարբառախոս 120 վայրերի հնչյունական ու քերականական տարբերությունների քանակը նաև գրական արևմտահայերենից և կատարել էզրահանգումներ (տե՛ս Գ.Ջահուկյան, **նշվ. աշխ.**, էջ 207-210, 217-218):

ների և հպաշփականների տարբեր դրսևորումները հայերենի տարբերակներում: Գրական արևմտահայերենում հինհայերենյան բառասկզբի ձայնեղ պայթականների ու հպաշփականների դիմաց առկա են շնչեղ խուլեր (բարեւ>փարեւ, գիրք>քիրք, ձայն>ցայն, ջուր>չուր, դուռն>թուռ)²: Այս հատկանիշը ՀՀ տարածքում գործառող արևմտյան (նաև՝ արևելյան) որևէ բարբառ չունի: Ավելին, հատկանիշը բնորոշ է նաև Պոլսի բարբառին, որտեղ հինհայերենյան ձայնեղների դիմաց առկա են նույն կարգի հնչյուններ³: Ի տարբերություն գրական արևմտահայերենի, Պոլսի և Սասունի բարբառների՝ Կարնո, Մշո և Դիադինի բարբառների բառասկզբում ձայնեղների դիմաց առկա են բ', գ', դ', ձ', ջ' շնչեղ ձայնեղներ⁴: Բարբառագետները այդպիսի հնչյուններ դիտարկել

² Ա.Ղարիբյանը այս իրողությունը դիտարկում է բաղաձայնական համակարգի տեղաշարժ-տեղափոխության հետևանքով ձևավորված երկաստիճան խլագուրկ բաղաձայնական համակարգում (բ>փ, պ>բ), որը բնորոշ է Կը ճյուղի Տիգրանակերտի, Մալաթիայի, Ռոդոսթոյի, Նիկոմեդիայի և Օրդուի բարբառներին: Լեզվաբանը նկատում է նաև, որ «Այս խմբից է վերցրել իր բաղաձայնական սիստեմը ուղղախոսության (արտասանության) մեջ գրական լեզվի արևմտահայ բարբառը» (Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 61): Մատնանշելով արևմտահայերենի զարգացման յուրահատկությունները՝ Յու.Ավետիսյանը գրում է, որ «...արևմտահայ բանավոր-խոսակցական լեզվում նկատելի կերպով նվազեցրել են ձայնեղ-խուլ հակադրությունը կամ փոխանցումը, և հաճախ դժվար է լինում սփյուռքահայի կենդանի խոսքում այսօր արձանագրել ձայնեղների անպայման և հստակ շնչեղ խլացում և հակառակը՝ խուլերի ձայնեղացում» (տե՛ս Յու.Ավետիսյան, *Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն*, էջ 31):

³ Հ.Աճառյանը նկատում է, որ Պոլսի բարբառի ձայնեղները տատանվում են ձայնեղների և խուլերի միջև, «...օրինակ *բան* բառը մեկ անգամ *բան*, հաջորդ անգամ գրեթե *պան* հնչումն է ստանում միևնույն անձի խոսակցության մեջ» (Հ.Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի*, էջ 11):

⁴ Տե՛ս Հ.Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 11, Ս.Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 13:

են տարբեր ընդգրկում ունեցող տարածքներում⁵: Դիադինի բարբառում շնչեղ ձայնեղներ դիտարկել է Ա.Ղարիբյանը⁶, սակայն Հ.Մուրադյանը, վկայելով և Ռ.Բաղրամյանի տեսակետը⁷, կարծում է, որ «այստեղ ձայնեղները ունեն ձայնեղի և խուլի միջին արտասանություն և փաստորեն ներկայանում են որպես միջին օղակ՝ դեպի Վասպուրականի ձայնեղագուրկ բարբառների բաղաձայնական համակարգը»⁸: Դիադինի բարբառային խոսքի մեր դիտարկումներից ելնելով՝ փաստում ենք, որ այդ բարբառի ձայնեղները ուղղակի մյուս վայրերի շնչեղ ձայնեղներից առանձնանում են շնչեղության ավելի թույլ աստիճանով: Հայերենի դիտարկվող տարբերակներում, բառակցքում ձայնեղների դրսևորումների հետ կապված, յուրահատկություն ունի Սասունի բարբառը: Այստեղ հինհայերենյան ձայնեղների դիմաց առկա են խուլեր (դուռն>տուռ, ջուր>ճուր)⁹: Սասունի բարբառը մյուսներից առանձնանում է նաև նրանով, որ *ը*-ից հետո և միջձայնավորային ու

⁵ Որպես կանոն, նման հնչյուններ արձանագրվել են Արարատյան, Կարնո, Մշո, Ջուղայի, Ակնի, Համշենի, Արաբկիրի և այլ բարբառներում: Ըստ Հ.Մուրադյանի՝ շնչեղ ձայնեղ բաղաձայնները հատուկ են հիմնականում Հայաստանի կենտրոնական գավառների (Արարատյան, Բայազետի, Մշո, Կարնո) բարբառներին (տե՛ս Հ.Մուրադյան, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. 1, Հնչյունաբանություն, էջ 284): Գ.Ջահուկյանի տվյալներով՝ շնչեղ ձայնեղներ ամբողջովին կամ մասամբ ունեն 13 բարբառներ (Համշենի, Մեքաստիայի, Շապին-Կարահիսարի, Արաբկիրի, Ակնի, Հաջրնի, Ջեյթունի, Կարնո, Խարբերդ-Երզնկայի, Մշո, Արարատյան, Բայազետի, Ջուղայի) (տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, էջ 51-62, 132-136):

⁶ А.Гарибян, *Об армянском консонантизме*, ВЯ, 1959, N 5, էջ 83-84.

⁷ Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 121-122:

⁸ Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 283:

⁹ Այս իրողությունը Ա.Ղարիբյանը կոչում է *բաղաձայնական համակարգի առաջին տեղաշարժ* և այն արձանագրում Աստրախանի, Շամախու, Ղարաբաղի, Հաղրուրթի, Քելվան-Շադախի, Մարաղայի, Ուրմիայի, Խոյի, Վանի բարբառներում (տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 58-59):

բառավերջի ձայնավորային դիրքերում ևս ձայնեղ պայթականների և հպաշփականների դիմաց ունի խուլեր (հոգի>հօկի, գորգ>կօրկ, արդար>արտար, օձ>օծ), այդ իրողությունը առկա է նույնիսկ *ն* ռնգայինից հետո (եղունգ>խունկ, քանդել>քանտիլ, թանձր>թանձր, երինջ>երինճ): Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց խուլեր ունի նաև Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքը (խաբել>խապել, կարգ>կարկ, դդում>դ ըտում, բարձր>բ անձրը)¹⁰: Գրական արևմտահայերենում ու Կարնո, Մշո (բացառությամբ Ալաշկերտի խոսվածքի), Դիադինի բարբառներում բառամիջում ու բառավերջում նախնական ձայնեղների դիմաց որպես կանոն առկա են շնչեղ խուլեր (ձգել>ցքել, ուրբաթ>ուրփաթ, սուրբ>սուրփ, բուրդ>բ ուրթ, փորձել>փօրցել, արբենալ>հարփել, ձագ>ձ աք, վարդ>վարթ, դարձաւոր>դ արցըվոր, խուրձ>խուրց, մեջ>մէչ, մըչ և այլն):

Դիտարկվող տարբերակներում տարբեր իրողություններ են առկա նաև հինհայերենյան խուլերի դիմաց: Այսպես, էթե Կարնո, Մշո և Դիադինի բարբառների բառասկզբում նախնական խուլերի դիմաց առկա են նույն կարգի հնչյուններ, ապա գրական արևմտահայերենում, Պոլսի և Մասունի բարբառներում դրանց դիմաց առկա են ձայնեղներ (կաթ>գաթ, ծածուկ>ձաձուգ, պանիր>բանիր, տերև>դերիվ, ճաշ>ջաշ և այլն)¹¹: Խուլերի դիմաց

¹⁰ Այս խոսվածքի բառասկզբում ձայնեղների դիմաց առկա են շնչեղ ձայնեղներ (տե՛ս Բ.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 28-30):

¹¹ Խուլերի դիմաց ձայնեղների դրսևորման երևույթը Ա.Ղարիբյանը կոչում է *բաղաձայնական համակարգի երկրորդ տեղաշարժ*, որի հետևանքով ձևավորված երկաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգ է արձանագրում Պոլսի, Եվդոկիայի, Նոր Նախիջևանի, Տրապիզոնի և Մարաշի բարբառներում (տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ.աշխ., էջ 59-60): Սակայն նման համակարգը արդի գրական արևմտահայերենում, ինչպես նկատվել է, «միանշանակ չի գործում. այս հարցում դեր են խաղում մի շարք հանգամանքներ՝ խոսողի բարբառային պատկանելությունը, տվյալ գաղթօջախում գերակշիռ լեզվի ազդեցությունը, անհատական այլևայլ հատկանիշներ, ինչպես նաև զուտ լեզվական

բառամիջում ու բառավերջում ձայնեղներ են դրսևորվում և՛ գրական արևմտահայերենում, և՛ Պոլսի, Կարնո, Մշո ու Սասունի բարբառներում (ածել>ածել, արծաթ>արծաթ, անիծ>անիծ, երեկոյ>իրիգուն, բարակ > բարագ, կոճակ > զօջագ, կապ>գաբ, շապիկ > շաբիգ, ճակատ > ջագադ, հերկել > հերգել, ապառաժ > աբառաժ, բնակել > բ՛նագրել, գետին > գ՛էդին, պարծենալ > պարձենալ, փայծաղ>փաձիխ, աշակերտ>աշգիրդ, ճնճուղ>ջինջուղ և այլն)¹²: Առանձնանում է Դիաղիսի բարբառը, որտեղ նշված դիրքերում

երևույթներ՝ կախված բառի մեջ հնչյունի ունեցած դիրքից: Կարծիք կա, որ Ժամանակի ընթացքում գերակշիռ (դոմինանտ) լեզուների ազդեցությամբ վերականգնվել է արևմտահայերենի պայթականների եռաստիճան համակարգը» (Ռ.Սաքապետյան, նշվ. աշխ., էջ 10): Ըստ Ա.Սարգսյանի՝ սփյուռքահայ գրական խոսքը ներկայում ձգտում է պահպանել կանոնական այն հնչումը, որ եղել է դարասկզբի արևմտահայ գրական լեզվում, սակայն երկշարք բաղաձայնական համակարգի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ այն արդեն նշմարելի փոփոխությունը, որ կատարվել է պարզ խուլ գրույթների հնչման մեջ. դրանք հնչում են թե՛ իբրև ձայնեղներ, թե՛ իբրև խուլեր: Լեզվաբանի կարծիքով՝ գրական արևմտահայերենի նորմավորումը արդի փուլում որոշ պայմանականություններ ունի, եթե նկատի ունենանք, որ արհեստականորեն «վերստեղծվում է» 20-րդ դարի տասական թվականների նորմավորված գրական արևմտահայերենը (տե՛ս Ա.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 26-27):

¹² Հ.Մուրադյանը նշում է, որ արդի հայերենի բարբառներում կարելի է տեսնել խուլերի ձայնեղացման գործընթացի համարյա բոլոր փուլերը՝ սկզբնական վիճակից (որ ընդգրկում է միայն բառամիջի դիրքը) մինչև բարձրագույն կատարյալ վիճակը (որ ընդգրկում է բոլոր դիրքերը) (տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 303): Գ.Զահուկյանի բազմահատկանիշ դասակարգման աղյուսակները վկայում են, որ ընդհանուր տարածում ունենալով հանդերձ՝ բառամիջում ու բառավերջում խուլերի ձայնեղացման երևույթն ավելի բնորոշ է արևմտյան բարբառներին (տե՛ս Գ.Զահուկյան, նշվ.աշխ., էջ 51-62):

խուլերի դիմաց առկա են նույն կարգի հնչյուններ (շապիկ, շիտակ, կարկուտ, անիծել, խավիծ, կոճ)¹³:

Դիտարկվող բոլոր տարբերակներում նախնական շնչեղ խուլերին բառասկզբում համապատասխանում են նույն կարգի հնչյուններ: Բառամիջում ու բառավերջում շնչեղ խուլերի դիմաց պարզ խուլեր ունի Ալաշկերտի խոսվածքը (եփել>էպել, թեփ>թեպ, մաքի>մակի, թուք>թուկ, երկաթ>երգատ, գրեցի>գ՛ըրեծի): Մասունի բարբառում բառամիջում ու բառավերջում ապաշնչեղացումը թերևս կատարվում է հարևան բաղաձայնների ազդեցությամբ (փակչիլ > փակճիլ, փախչիլ > փախճիլ, ամաչեցի > ամըչճա, փախցնել > փախծունել, աղօթք > աղօթկ, անեծք>անեճկ, խաղք>խախկ): Նման իրողություններ նկատվել են նաև Դիաղինի (միտք > միտկ, պետք > պետկ, գաղթական > գախտական, թուղթ > թուխտ, յաղթել > հ՛ախտել, թթխմոր > թըխտըմոր, խօսք>խօսկ, հրաշք>հըրաշկ, շարժք > ժնշկ, անեծք > անեճկ, աչք > հնշկ, մեղք > մեխկ, քաղցր > ք՛ախճըր) և Կարնո (փաթաթել > փաթտել, յաղթել > էխտել, թուղթ>թուխտ) բարբառներում:

Մի շարք բարբառների բաղաձայնական համակարգի դրսևորման էական հատկանիշ է *գ,կ,ք* հետնալեզվայինների քմայնացումը¹⁴: Դիտարկվող տարբերակներից այս հատկանիշով բնորոշվում է Դիաղինի բարբառը, և այստեղ քմայնացումը հիմնականում պայմանավորված չէ փոխազդեցական գործոններով (ք՛անի, ք՛ընել, խելք)¹⁵: Մշո բարբառի Բաղեշի, Խլաթի, Արճեշի և

¹³ Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով լրացված թիվ 8 տետր:

¹⁴ Ըստ Հ.Մուրադյանի՝ քմային *գ,կ,ք* պայթակները «առավելապես հատուկ են եզրային բարբառներին և խիստ տարածված են Վասպուրական-Սյունիք-Արցախ տարածքի և հարակից բարբառներում» (Հ.Մուրադյան, նշվ.աշխ., էջ 310):

¹⁵ Ինչպես նկատում է Հ.Մուրադյանը, «Բառասկզբի *ք*-ի ուժեղ ու արտահայտված քմայնացում կա Վանի, Մոկսի, Դիաղինի և հարակից այլ վայրերի բարբառներում, որոնց մեջ *ք*-ի քմայնացումը չի

Արծկեի խոսվածքները ևս ունեն այս հատկանիշը¹⁶՝ թերևս Վանի բարբառի ազդեցությամբ: Պոլսի բարբառում այս կարգի հնչյուններ հանդիպում են միայն թուրքերենից փոխառյալ բառերում¹⁷:

Գրական արևմտահայերենում *նզն*, *նկն* հնչյունակապակցությունների դիմաց *յն* հնչյունախումբ է առկա որոշ դեպքերում՝ կանգնել > կանգնիլ/կայնիլ, անկանիլ > իյնալ¹⁸: Երևույթը դիտվել է նաև Պոլսի (կանգնիլ>գայնիլ, անկանիլ>իյնալ, ցնկնել>ցըյնել)¹⁹ և Մշո, Դիադինի (կայնել) ու Կարնո (կայնել) բարբառներում:

Նախաբաղաձայնական դիրքում հետնալեզվային պայթականների շփականության մասնավոր դրսևորում նկատվել է միայն Պոլսի բարբառում՝ մէյ մը /մեկ անգամ/, մէյմէզ /մեկ մեկ, մի առ մի/, մէյ մալ /մեկ էլ/, մէյ մըն ալ /մի անգամ ևս/²⁰:

Միայն Կարնո բարբառում է դիտվել հաջորդող *ռ* հնչյունի առնմանական ազդեցությամբ տ>ռ անցում՝ կտրել > կըռռել, տետրակ > տէռռագ, պատռել > պառռել, կոտրել > կոռռել, Պետրոս > Պէռռոս²¹:

Պոլսի բարբառում գործող օրինաչափություն է բաղաձայնից առաջ հպաշփականների վերածումը շփականների: Այսպես, ձայնեղ բաղաձայնից կամ ձայնորդից առաջ ծ-ն և ճ-ն վերածվում են համապատասխանաբար գ-ի և ժ-ի (խաճանել > խագնել, ծածկել > ձագգել, կոճակել > գոժգել, խղճմտանք > խըժմըղանք)²², իսկ խուլից առաջ ծ-ն վերածվում է ս-ի (նեղուածք>նէղվասկ,

պայմանավորված տվյալ բաղաձայնին հաջորդող ձայնավորի բնույթով»(Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 311-312):

¹⁶ Տե՛ս Գ.Զահուկյան, նշվ. աշխ., էջ 56-57:

¹⁷ Տե՛ս Հ.Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի*, էջ 10:

¹⁸ Տե՛ս նաև Յու.Ավետիսյան, *Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն*, էջ 90:

¹⁹ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 37-38:

²⁰ Նույն տեղում, էջ 53:

²¹ Տե՛ս Հ.Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 29:

²² Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 49, 59:

անէծք>անէսկ)²³: Նախնական ձայնեղ ճ և ջ հպաշփականները բաղաձայնի նախորդող դիրքում վերածվում են ձայնեղ կամ խուլ շփականի՝ պայմանավորված հնչյունափոխական այլ օրինաչափություններով, ինչպես՝ անձրեւ>արգել, թնձկալ>թըզգալ, ինձմէ>իզմէ, վարձք>վարսկ, իջանել>իշնալ, մէջք>մէշկ, ոջլոտ>օշլօդ²⁴: Շնչեղ խուլ ց-ն և չ-ն տվյալ դիրքում վերածվում են խուլ շփականների (անցանիլ > ասնիլ, երիցակիւն > իրիսկիւն, ամաչել > ամըշնալ, ճանաչել > ջաշնալ)²⁵: Նախաբաղաձայնական դիրքում հպաշփականների շփականացման իրողությունը որոշ դրսևորումներ ունի նաև Դիադիինի բարբառում (օշլոտ, էրըժնանկ, օրօծկըտալ, լըպըզտըրալ /լպըծտիլ/, հ'անշկ, ճաշնալ, փըռըշտալ, միշնեկ, մէշկ, փըռըշտալ)²⁶:

Բառամիջի կամ բառավերջի դիրքերում հ-ի դիմաց որոշ դեպքերում յ ունեն Դիադիինի (դահլիճ>դ'այլիճ, թագուհի>թաքույի, շահ>շայ, ջահել>ջայել)²⁷, Կարնո (պահել>պայել, դահիճ>դ'այիճ, Վահրամ>Վայրամ)²⁸, Մշո (տոհմ>տօյմ, սահման>սայման, պահել>պայել, մահ>մայ)²⁹ բարբառները: Պոլսի բարբառում, ինչպես վկայում է Հ.Աճառյանը, հ-ի դիմաց յ է հանդիպում է,է,ի ձայնավորներից առաջ (պահել>բայել, մէկ պահեկէն>մէկ բայեգէն, դահիճ>դայիջ)³⁰:

²³ Խուլ բաղաձայնից առաջ, ինչպես նկատում է Հ.Աճառյանը, ճ-ն պիտի դառնար շ, բայց դրա համար օրինակ չկա (տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 59):

²⁴ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 57, 69:

²⁵ Տե՛ս նշվ. աշխ., էջ 67, 80-81:

²⁶ Տե՛ս Վ.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 44:

²⁷ Տե՛ս Վ.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 147-150, նաև ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրով լրացված թիվ 8 տետր:

²⁸ Տե՛ս Հ.Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 36:

²⁹ Տե՛ս Ս.Բադդասարյան, նշվ. աշխ., էջ 66:

³⁰ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 54:

Բառասկզբում ձայնավորից առաջ հավելական ձայնեղ շնչի առկայություն ունեն Կարնո (ակն>հ'ազ, արծաթ>հ'արձաթ, երդիկ>հ'երթիզ, ուրիշ>հ'ուրիշ)³¹, Մշո (ամեն > հ'ըմմեն, անագան > հ'անքան, արօտ > հ'արօդ, ելանել > հ'ելնալ, երկայն > հ'երգեն, ընկեր > հ'ընգեր, ինքն > հ'ինքնուսումն>հ'ուսում)³² և Դիադինի (հ'անգանձ, հ'անխուր, հ'ըմեն, հ'անշկ) բարբառները³³: Ի դեպ, ուսումնասիրողները նշում են, որ շնչեղ ձայնեղ բաղաձայններ ունեցող բարբառները, որպես կանոն, զուգահեռաբար ունեն նաև ձայնեղ հազագ³⁴, ուստի պատահական չէ, որ հենց նշված երեք բարբառներում է դրսևորվում *հ'* հնչյունը:

Բարբառային հետաքրքրական իրողություն է *հ~խ* համապատասխանությունը: Հինհայերենյան *հ-ի* դիմաց օրինաչափորեն *խ* ունի Դիադինի բարբառը³⁵ (*հայ>խայ*, *հասանել>խասանել*, *հի-*

³¹ Տե՛ս Հ.Մկրտչյան, նշվ.աշխ., էջ 40:

³² Տե՛ս Ս.Բադախյան, նշվ.աշխ. բառացանկը:

³³ Նկատվել է, որ ձայնեղ *հ-ի* հավելումը հատուկ է Արարատյան, Կարնո, Մշո, Բայազետի և այլ բարբառներին (տե՛ս Հ.Մուրադյան, նշվ.աշխ., էջ 315):

³⁴ Տե՛ս Ռ.Якобсон, *Типологические исследования и их вклад в сравнительно-историческое языкознание*, Новое в лингвистике, вып. 3, Москва, 1963, с. 102, Գ.Ղափանցյան, *Ընդհանուր լեզվաբանություն*, հ. 1, էջ 119-120, Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, էջ 266, Ա.Հանեյան, Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում, *Հայերենի բարբառագիտական ատլաս*, պրակ 3, էջ 182-183, Հ.Մուրադյան, նշվ.աշխ., էջ 278:

³⁵ Բարբառային այս հատկանիշը ընդգրկում է խիստ որոշակի տարածք: Ինչպես նշում է Հ.Մուրադյանը, «Նրա սահմանները անցնում են Ոզն, Մոկս, Շատախ, Վան, Ուրմիա, Մարադա, Թավրիզ, Սալմաստ, Խոյ, Մակու, Բայազետ, Դիադին, Մանազկերտ բնակավայրերով և այնուհետև Վանա լճի հյուսիս-արևմտյան ծովեզրով ձգվում դեպի հարավ՝ ներառնելով Արձեշ, Արծկե, Խլաթ, Բադեշ բնակավայրերը (տե՛ս Հ.Մուրադյան, նշվ.աշխ., էջ 264), իսկ Գ.Ջահուկյանը գրում է, որ

ւանդ>խիվանդ, ջրօրհներք>ջ՛րօխներք, պահել>պախել, մահ>մախ, գռեհ>գ՛րռեխ): Ընդհանուր առմամբ՝ Մշո բարբառին հատուկ չէ հ-ի դիմաց խ-ի դրսևորումը. Այն արտահայտվում է այդ բարբառի առանձին բառերում (հետ>խըտ, ահ>ախ, գահ>գախ)³⁶, բայց օրինաչափորեն հանդես է գալիս Արճեշի, Արծկեի, Խլաթի, Բաղեշի խոսվածքներում, արձանագրվել է նաև ՀՀ Մարտունու տարածաշրջանի՝ Մշո բարբառը ներկայացնող մի շարք համայնքներում³⁷: Կարելի է ենթադրել, որ Մշո բարբառում հ~խ համապատասխանությունը կա՛մ արդյունք է Վանի կամ հ~խ համապատասխանությունն ունեցող հարևան որևէ այլ բարբառի ազդեցության, կա՛մ ենթաշերտային երևույթ է: Հ-ի դիմաց առանձին դեպքերում *խ* ունի նաև Պոլսի բարբառը, ինչպես՝ հող>խող, հաղորդ>խավօրթ, պահվտիլ>փախվըտիլ, խահվե>խախվե, Սեպուհ>Սեբուխ, Շապուհ>Շաբուխ³⁸: Այս դեպքերում կարող են դեր խաղացած լինել և՛ հնչյունական շրջապատը, և՛ այլ բարբառների ազդեցությունը:

Բառասկզբում՝ ո-ից առաջ, հ-ի դիմաց *ֆ* ունի Կարնո բարբառը (հող>ֆօղ, հորթ>ֆորթ, հոր>ֆօր, հոտ>ֆօղ)³⁹: Երևույթը

«երևույթը տարածված է հատկապես Վասպուրականում և Պարսկահայքում(տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 267):

³⁶ Տե՛ս Ս.Բաղդասարյան, նշվ.աշխ., էջ 66:

³⁷ Դեռևս Հ.Աճառյանը «Նոր-Բայազիդի շրջանին մեջ Մշոյ ճիւղին պատկանող երևակավայրերը բաժանել է երկու խմբի՝ ա) *հ* ձայնն ունեցող (Երանոս, Ադամխան /ներկ. Վարդաձոր/, Ջորագեղ /ներկ. Ջորագյուղ/, Գյոլ /ներկ. Լիճք/, Ներքին Ադիաման /ներկ. Ներքին Գետաշեն/, Վերին Ադիաման /ներկ. Վերին Գետաշեն/) և բ) *խ* ունեցող (Ծակքար, Ներքին Ղարանլուղ /ներկ. Մարտունի/, Ավդալաղալու /ներկ. Վաղաշեն/, Ալակըղ /ներկ. Աստղաձոր/, Զուլխաչ /ներկ. Զուլքար/, Ներքին Գյոզալդարա /ներկ. Վարդենիկ/, Ներքին Ալուչալու /ներկ. Արծվանիստ/, Գետակբուլաղ /ներկ. Կարճաղբյուր/, Զաղալու /Ախպրաձոր/ և այլն) (տե՛ս Հ.Աճառյան, *Հայ բարբառագիտություն*, էջ 118):

³⁸ Տե՛ս Հ.Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի*, էջ 53-56:

³⁹ Տե՛ս Հ.Մկրտչյան, նշվ.աշխ., էջ 35:

հատուկ համարելով «գիւղացոց» լեզվին՝ Հ.Աճառյանը այն մեկնաբանում է ո-ի երկբարբառային արտասանությամբ. «Ֆ ձայնին ծագման պատճառը ո-ի երկբարբառային *ռռ* արտասանությունն է, քանի որ օ-ի քով այսպիսի փոփոխություն տեղի չունենար: Արդ՝ քանի որ քաղաքացիք զուրկ են *ռ* ձայնեն և գայն *օ* կը հնչեն, բնականաբար զուրկ պիտի ըլլան նաև այս տեսակ ֆ-են»⁴⁰: Հ>ֆ անցման վերաբերյալ հայ լեզվաբանության մեջ արտահայտված տեսակետները դիտարկելով՝ Հ.Մուրադյանը հանգում է այն եզրակացության, որ բառասկզբի հո-ի դիմաց հնչյունական տարբեր իրողություններ առաջացել են երկու հնագույն բարբառային նախաձևերի հիմքի վրա, «...որոնցից մեկում այդ բառերը ունեցել են հ-ով, մյուսում՝ առանց հ-ի բառասկզբ: Առաջինում հետագայում զարգացել են արդի բարբառների մի մասի հ-ով և խ-ով, երկրորդից՝ վ-ով և ֆ-ով բառաձևերը»⁴¹:

Բարբառներում դրսևորման յուրահատկություններ ունեն նաև *խ,ղ* կոկորդային շփականները: Խ-ի դիմաց տարնմանական *հ* մեկ բառում ունի Պոլսի բարբառը՝ խաղող>հավող⁴²: Բառասկզբի դ-ի դիմաց *խ* ունեն Մշո (Ղազար>Խազար, Ղուկաս>Խուզաս) և Պոլսի (ուղարկել>խրգել, ուղևորել>խավրել, Ղազարոս>Խազարոս, Ղուկաս>Խուզաս⁴³) բարբառները: Ինչպես հայտնի է, հին հայերենում բառասկզբը դ-ի համար բացառված դիրք էր⁴⁴: Հ.Մուրադյանը նկատում է, որ այն բարբառներում, որոնց նույնպես խորթ է բառասկզբում դ-ի արտասանությունը, այդ հնչյունի դիմաց հանդես է գալիս *կ* կամ *խ*, ընդ որում՝ այդ իրողությունը նկատվել է նաև միջին հայերենի շրջանի գրավոր հուշարձաններում⁴⁵: Ի դեպ, բառասկզբի դ-ի դիմաց Դիաղինի բարբառն ունի հայերենի

⁴⁰ Հ.Աճառյան, *Հայ բարբառագիտություն*, էջ 105:

⁴¹ Հ.Մուրադյան, նշվ.աշխ., էջ 270:

⁴² Տե՛ս Հ.Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի*, էջ 48:

⁴³ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ.աշխ., էջ 57:

⁴⁴ Տե՛ս նաև Հ.Մուրադյան, նշվ.աշխ., էջ 214:

⁴⁵ Տե՛ս Հ.Մուրադյան, նշվ.աշխ., էջ 215:

համար ոչ սովորական կոկորդային կ' բաղաձայն (դալմադալ > կ'ալմակ'ալ, դայիշ > կ'անիշ, Ղազար > Կանգնր)⁴⁶: Նկատենք, որ կոկորդային *ղ'* կամ *կ'* հնչյուն բարբառագետները դիտարկել են Ուրմիայի, Թբիլիսիի, նաև Լ ճյուղի բարբառներում⁴⁷: Գ.Ջահուկյանի տվյալներով՝ Դիադինի բարբառից բացի՝ այս կարգի բաղաձայն հանդիպում է Համշենի, Բեյլանի, Քեսաբ-Սվեդիայի, Տիգրանակերտի, Եդեսիայի, Աստրախանի, Թբիլիսիի, Խոյ-Մարադայի, Շամախիի բարբառներում, Վանի բարբառի Ոզմի խոսվածքում⁴⁸: Ըստ ամենայնի՝ Մշո բարբառի Արծկեի⁴⁹ և Արճեշի⁵⁰ խոսվածքներում ևս ունենք *կ'* (կամ դրա դիմաց՝ *կ*):

Հայերենի բարբառներում *ր*-ի արտահայտության յուրահատկություններից է քմայնացած արտասանությունը, «որը, նայած փափկության աստիճանին, տարբեր վայրերում հասցնում է տարբեր արդյունքների»⁵¹: Դրանցից մեկն էլ *ր*>*յ* անցումն է, որ նկատվում է Սասնո բարբառի վաղակատար դերբայի վերջավորության մեջ՝ *կրիյ* (գրել), *գարտացիյ* (կարդացել), *մոդսցիյ* (մոտեցել), *հեռսցիյ* (հեռացել)⁵²: Ինչպես նկատում է Հ.Մուրադյանը,

⁴⁶ Վ.Խաչատրյանը իր «Վարդենիսի բարբառը» աշխատանքում (էջ 48) Դիադինի համար արձանագրում է *ղ'*, սակայն մեր դիտարկումները ցույց են տալիս, որ այստեղ առկա է *կ'* հնչյուն:

⁴⁷ Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 133, Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 88:

⁴⁸ Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 51-62:

⁴⁹ Տե՛ս ՀԲԱ նյութեր, տետր թիվ 56:

⁵⁰ Տե՛ս *Էմինեան ազգագրական ժողովածու*, հատոր Բ, Մոսկուա-Վաղարշապատ, 1901, էջ 428-432: Այստեղ Արճեշի խոսվածքով գրառված «Կնիկը ջորիի փոխարկուած» հեքիաթում հանդիպում են *կաթըշի* (ջորեպան), *չէին կլանայ* (չէին գիրանա), *կոնախներ* (հյուրեր), *կսապ* (մսագործ) ձևերը:

⁵¹ Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 223:

⁵² Տե՛ս Վ.Պետոյան, նշվ. աշխ., էջ 43, 54: Հեղինակը նկատում է, որ Տալվորիկում և Փսանքում վաղակատարի «կրիյ ըմ»- ի փոխարեն լինում է *կրիր ըմ* (նշվ.աշխ., էջ 46):

ր>յ անցում արձանագրվում է Համշենի, Հաջրնի, Ջեյթունի և այլ բարբառներում, Ղարաբաղի բարբառի Տումիի խոսվածքում⁵³: Գ.Ջահուկյանի տվյալներով՝ երևույթը, հիշյալ տարածքներից բացի, հիմնականում տարածված է Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբի ընդգրկած տարածքներում (Նոր-Նախիջևան, Չալթըր, Սյուլյոզ, Մարզվան, Մեքաստիա, Բրզնիկ, Արաբկիր, Կյուրին, Դարենդե, Ակն, Սիվրիհիսար)⁵⁴: Այդ անցումը բնորոշ է նաև Կարնո բարբառը ներկայացնող Խնդաձորի տարածքին⁵⁵:

Բարբառային հայերենում սահմանափակ տարածում ունեցող հատկանիշ է նախաձայնավորային դիրքում ւ-ի դրսևորումը: Ըստ Գ.Ջահուկյանի տվյալների՝ այս հատկանիշը իր կողմից դիտարկվող 120 բարբառախոս վայրերից ունեն միայն Տիգրանակերտը, Հազգոն, Գելիեգուզանը, Շատախը, Մոկսը և Մարաղան⁵⁶: Վ.Պետոյանը Մասնո բարբառի բառասկզբում ւ (w) հնչյունի կիրառություն է փաստում *n*, *է* հնչյուններից առաջ՝ որի>տրի, վերան > ւերան⁵⁷: Նկատելով, որ Մասնո բարբառում ւ հնչյունը շատ գործածական է՝ Վ.Պետոյանը գրում է, որ այդ հատկանիշով այն տարբերվում է Մշո բարբառից, որտեղ ւ հնչյուն գոյություն չունի՝ փոխարենը ունենալով վ⁵⁸: Մշո բարբառի՝ Սևանի ավազանում գործառնող խոսվածքների մեր դիտարկումները, սակայն, ցույց են տալիս, որ այս բարբառի մի շարք դրսևորումներում ևս օրինաչափորեն բառասկզբում ւ հնչյունը հանդես գալիս է⁵⁹:

⁵³ Տե՛ս Հ.Մուրադյան, նշվ.աշխ., էջ 224:

⁵⁴ Տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, էջ 51-62:

⁵⁵ Տե՛ս նշվ.աշխ., էջ 55:

⁵⁶ Տե՛ս նշվ. աշխ., էջ 51-62:

⁵⁷ Տե՛ս Վ.Պետոյան, նշվ. աշխ., էջ 15:

⁵⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 30:

⁵⁹ Ավելորդ չենք համարում ւ-ի բարբառային դրսևորումների վերաբերյալ այստեղ բերել Հ.Մուրադյանի հետևյալ դիտարկումը. «Հայերենի այսօրվա բարբառներից մի քանիսում արձանագրվում է երկշրթնային արտասանություն ունեցող w հնչյուն, որը ոմանց կողմից նույնացվում է հին ւ-ի հետ: Բարբառային գրականության մեջ այդ հիմքի վրա էլ այն

Ուսումնասիրողները դիտարկվող որևէ բարբառում չեն արձանագրել *ռ* և *ր* հնչյունների արտասանական տարբերության վերացում: Նման իրողություն դիտվել է Թիֆլիսի բարբառում, նաև Ղարաբաղի բարբառի Տումիի խոսվածքում⁶⁰: Գ.Ջահուկյանի տվյալներով՝ այդ հատկանիշ ամբողջովին կամ մասամբ ունեն Կուտին, Ջմյունիան, Եվդոկիան, Մարզվանը, Ամասիան, Մալաթիան, Հաջընը, Ջեյթունը, Մարաշը, Այգետունը, Նիշը, Թավրիզը, Թբիլիսին, Տումին, Կոզենը, Բուրդուրը և Մարաղան⁶¹: Գրական արևմտահայերենում *ռ* և *ր* հնչյունների շփոթ Հ.Աճառյանը չի փաստել, սակայն այդ երևույթի դրսևորումներ նկատել է Պոլսի բարբառում. «...Պոլսի բարբառում *ռ* և *ր* ձայները արդեն սկսել են շփոթվել. հասարակ գործածության մեջ թեև *ռ* և *ր* իրարից տարբեր հնչումներ ունին, բայց հաճախ *ռ* կարող է հնչվել իբր *ր*. ավելի հաճախ *ռ* գրվում է սաստկություն ցույց տալու համար, իսկ *ր* ավելի տկար պարագաներում է գործածվում ..., բայց կարելի է ասել նաև օր. *ձարք* «ձեռք» կամ *արնել* «առնել» առանց շատ տարօրինակ երևալու: Իսկ թուրքերեն բառերը, որ մտած են ժողովրդական լեզվի մեջ, գրեթե անխտիր կարող են թե *ռ*-ով և թե *ր*-ով հնչվել»⁶²: Գրական արևմտահայերենում *ր*-ռ շփոթ արձանագրվել է հետագայում: Այսպես, Ա.Մարգարյանը գրում է. «Գրական արևմտահայերենում վերատամնայնություն / ոչ վերատամնայնություն հակադրությունը, արևելահայերենի համեմատությամբ, հարաբերաբար թույլ է դրսևորվում: Նշված հակադրության թուլացման պատճառով արևմտահայերենում Բ-Ռ հնչույթ-

ընդունված է տառադարձել *ւ*-ով: Սակայն դա հին *ւ*-ը չէ և ծագումնաբանորեն էլ չի կապվում նրա հետ: Այս ձայնորդը (եթե այն կարելի է ձայնորդ համարել) հանդես է գալիս որոշակի դիրքերում որպես *ռ* ձայնավորի պատմական փոփոխությունից՝ երկբարբառացումից առաջացած շրթնային տարր (հմմտ. ոսկի > ուօսկի, տուօսկի, որ տառադարձվում է՝ տոսկի)»(Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 240):

⁶⁰ Տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 221:

⁶¹ Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 51-62:

⁶² Հ.Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի*, էջ 70:

ների տարբերակումը հաճախ հստակ չի դրսևորվում»⁶³: Ըստ Ռ.Սաքապետոյանի՝ արևմտահայերենում այս հակադրությունը չի գործում, «... և արտասանության պլանում կատարվել է համահարթեցում նույնիսկ *n* հնչույթի համար ավանդական դիրքերում...: Կարելի է միանշանակ պնդել, որ *n* հնչույթը արտասանության մեջ վերացած է»⁶⁴: Լեզվաբանը կարծում է, որ «... այս հարցում գլխավոր դերը շրջակա լեզուներում *n*-ը հակադրության չգոյությունն է, որի հետևանքով արևմտահայերենի բանավոր տարբերակում բացակայում է *n* հնչույթը»⁶⁵: Այնուհետև հավելում է, որ արտասանության մեջ *n*-ը անցումը չի ճանաչում բացառություններ և ունի ընդհանրական բնույթ»⁶⁶: Յու.Ավետիսյանը ևս նկատում է, որ գրական արևմտահայերենում գրեթե վերացած է *n*-ը արտասանական հակադրությունը, որովհետև *n* բաղաձայնը արտասանվում է փոքր-ինչ փափուկ՝ *p*-ի նման⁶⁷:

Գրական արևմտահայերենն ունի նաև իր կարգավիճակով պայմանավորված բաղաձայնական հատկանիշներ, որոնք որևէ բարբառում արտահայտվել չէին կարող: Այսպես, ի տարբերություն արևելահայերենի՝ սպասվող *ֆ*-ի դիմաց *փ* ունեն նաև *դեղփին, սատափ, Ափրիկե, Ռափայել, ամփիթատրոն, Վոսփոր, Սոփոկլես, Քսենոփոն* բառերը⁶⁸, լի դիմաց դ ունեն նաև *Աղեքսանտր, արշիպեղագոս, Գաղղիա, դեղփին, եղուզակ, Պղատոն, Ողիմպոս, ողիմպիական, Եղիսէեան* և այլ բառեր⁶⁹:

⁶³ Ա.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 25:

⁶⁴ Ռ.Սաքապետոյան, նշվ. աշխ., էջ 13:

⁶⁵ Նույն տեղում:

⁶⁶ Նույն տեղում:

⁶⁷ Տե՛ս Յու.Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 45:

⁶⁸ Տե՛ս նաև Ռ.Սաքապետոյան, նշվ. աշխ., էջ 23, Յու.Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 46:

⁶⁹ Տե՛ս նաև Ռ.Սաքապետոյան, նշվ. աշխ., Յու.Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 47: Ռ.Սաքապետոյանը նկատում է, որ նման ձևերի «...զգալի մասը արդի արևմտահայերենում ընկալվում են իբրև հնացած ձևեր և սոսկ

Ձայնավորական համակարգ

Հայերենի աշխարհաբարյան դրսևորումների ձայնավորական համակարգերի համար բնութագրական արժեք ունեն հինհայերենյան երկբարբառների (հատկապես՝ *այ, ոյ, իւ*) դիմաց հանդես եկող տարբերակային ձևերը: Ինչպես հայտնի է, երկբարբառների դիմաց թե՛ գրական արևելահայերենը, թե՛ գրական արևմտահայերենը, որպես կանոն, ունեն երկհնչյուններ, սակայն այդ «... երկհնչյունային արտասանությունը ոչ թե կենդանի բանավոր-խոսակցական լեզվում կատարված փոփոխության արդյունք է, այլ երկբարբառների վերանալուց հետո՝ դրանց գրային արտահայտության հիման վրա գրական լեզվում ձևավորված արտասանություն»⁷⁰: Ինչ վերաբերում է բարբառային հայերենին, ապա այստեղ հին երկբարբառների դիմաց որպես կանոն հանդես են գալիս ձայնավոր հնչյուններ: Այսպես, հայտնի է, որ այ-ի դիմաց արևմտյան բարբառներում սովորաբար հանդես է գալիս *ա*, իսկ արևելյան բարբառների մեծ մասում՝ *է*⁷¹: Հայաստանի Հանրապետության տարածքում գործառող արևմտյան բարբառները, սակայն, այս հատկանիշով հիմնականում հարում են արևելյան բարբառներին՝ հանդես բերելով այ~է համապատասխանություն (Մ. այծ>էձ, հայր>հէր, կայծակ>կէձագ, Դ. այծ>էծ, հայր>խէր, կայծակ>կէծակ, Ս. երկայն>երգէն, ծայր>ձէր, փայտ>փէդ, Կ. հայր>հէր, երկայն>յերգէն, կայծակ>կէծագ): Սակայն Սասնո բարբառում միավանկ բառերի սկզբի այ-ի դիմաց առկա է *ււ* (այդ>ւնդ, այս>ւս, ւնդիկ, ւսիկ, այսօր>ւսօր, այլ>ւլ)⁷², իսկ Կարնո բարբառի Ախալցխայի և Ախալքալաքի խոսվածքներում առկա է այ~ա համապատասխանություն (հայր > հար, երկայն > յերգան, սայլ >

ավանդույթի ուժով են տեղ գտնում բառարաններում»(Ռ, Սաքապե-տոյան, նշվ. աշխ., էջ 23):

⁷⁰ Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 141:

⁷¹ Տե՛ս Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 155:

⁷² Տե՛ս Վ. Պետոյան, նշվ. աշխ., էջ 19:

սալ)⁷³: Գ.Ջահուկյանը ևս այն է համապատասխանություն Կարնո բարբառում արձանագրում է միայն Գյումրիի (Լենինական) դեպքում⁷⁴: Այլ է իրավիճակը Պոլսի բարբառում, որտեղ օրինաչափ է այնա համապատասխանությունը (այդ>ադ, այն>ան, այս>աս, այսօր>ասօր, երկայն>երգան, լայն>լան, հայր>հար, ճայթիլ>ջաթիլ, փայտ>փաղ)՝ մեկ-երկու բացառությամբ (այրիկ>երիգ, այրել>երել)⁷⁵: Պոլսի բարբառի այս հատկանիշն իր արտահայտությունն է գտել արևմտահայ խոսակցական լեզվում (հայր>հար, մայր>մար, ձայն>ձան), այստեղից էլ ներթափանցել է գրական լեզու (այդ>ատ>ատիկա, այս>աս>ասիկա, այլ>ալ, այն>ան>անիկա, քայլել>քալել, փայլփլիլ>փայլփլիլ/փալփլիլ)⁷⁶:

Եթե գրական արևելահայերենում հինհայերենյան *իւ* երկբարբառի դիմաց որպես կանոն առկա է *յու* երկհնչյուն, ապա գրական արևմտահայերենում, ըստ ուսումնասիրողների, գործառում է քմային ու, որի առկայությունը Մ.Աբեղյանը դիտարկել է մի շարք բարբառներում⁷⁷: Ինչպես նկատում է Ռ.Սաքապետոյանը, *իւ*>*ու* հնչյունափոխությունը բարբառներից անցել է գրական արևմտահայերենին, սակայն չի ընդգրկել բառակցքի դիրքը և -ութիւն ածանցը, որոնցում *իւ*-ի դիմաց գործառում է *յու* երկհնչյուն (*իւղ*>*յուղ*, *իւր*>*յուր*, *քաջութիւն*>*քաջութիւն*)⁷⁸: Իրողությունը այլ կերպ է ներկայացնում Յու.Ավետիսյանը, որի մեկնաբանությամբ գրական արևմտահայերենում *իւ* տառակապակցությունը *ու* պարզ ձայնավորի (ֆրանս. *u*) նշանն է (առիւծ, սօսափիւն, հիւսիս), իսկ բառակցքում և -ութիւն ածանցի մեջ *իւ*-ը ունի քմային *u*

⁷³ Տե՛ս Հ.Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 20:

⁷⁴ Տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, էջ 74:

⁷⁵ Տե՛ս Հ.Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի*, էջ 26-27:

⁷⁶ Տե՛ս Յու.Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 78:

⁷⁷ Տե՛ս Մ.Աբեղյան, Երկեր, հ. Զ, էջ 96:

⁷⁸ Տե՛ս Ռ.Սաքապետոյան, նշվ. աշխ., էջ 14-15:

արտասանություն՝ եու>ս, ինչպես *իւղ, ուրախութիւն*⁷⁹: Կարնո բարբառում *իւ* երկբարբառի դիմաց հիմնականում առկա է *ու* (ձիւն > ձ'ուն, ալիւր > ալուր, հարիւր > հարուր), նաև՝ *ի* (իւրեան > հ'իրան, կիւրակի կիրագի), *է* (իւղ>յէղ, մեծութիւն>մէնծութէն): Փոփոխությունների հիմնականում նման պատկեր առկա է և Մշո բարբառում, որտեղ ևս *իւ*-ի դիմաց գործառում է *ու* (իւրեան>ուրին, սիւն>սուն, ձիւն>ձ'ուն, հիւսիս>հուսիս), նաև՝ *ի* (իւրեար>հ'իրար, հ'իրուր), *յէ, է, ե* (իւղ>յէղ, տէրութիւն>տէրութեն, գիւղ>գ'էղ): Այդպես է և Պոլսի բարբառում՝ *իւ*>ու (արիւն>արուն, հարիւր>հարուր, ձիւն>ձուն, հիւսել>հուսել), *իւ*>ի (իւր>իր, մեծութիւն>մէնծութին, կիւրակէ>գիրագի, միւռոն>մէռոն), *իւ*>է (գիւղ>քէղ), ինչպես նաև՝ Դիադինի բարբառում՝ *իւ*>ու (իւր>ուր, ալիւր>ալուր, սիւն>սուն, եղբայրութիւն>ախպըրութուն), *իւ*>ե (իւղ>յէղ, գիւղ>գ'էղ), *իւ*>ի (հարիւր>խանիր, կիւրակի>կիրակի): Առանձնանում է Սասունի բարբառը, որտեղ *իւ*-ի դիմաց առկա են *ու* (ալիւր>ալուր, աղբիւր>աղպուր, ձիւթ>ծութ) և *ի* (իւր>իր, հայութիւն>հայութին, գիւղ>կիղ)⁸⁰:

Երկբարբառային *է,ռ* ձայնավորների առկայությամբ Մշո և Դիադինի բարբառները տարբերվում են նման հնչյուններ չունեցող գրական արևմտահայերենից և Պոլսի ու Սասունի բարբառներից⁸¹: Ինչպես վերևում տեսանք, Հ.Աճառյանը Կարնո բարբառում

⁷⁹ Տե՛ս Յու.Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 25: Նկատենք, որ ֆրանսերենի ս-ն միշտ էլ ունի քմային արտասանություն, եթե չի հաջորդում a-ին (au) կամ o-ին (ou):

⁸⁰ Նկատենք, որ ըստ Հ.Մուրադյանի՝ Սասունի, Դիադինի, Մուշի, Կարինի և հարակից վայրերի խոսվածքներում *իւ*>ու ընդհանուր հնչյունափոխությանը հակադրվում է -ութիւն ածանցի *իւ* > *ե*, *է* փոփոխությունը, ինչպես՝ ալիւր > ալուր, բայց եղբայրութիւն > ախպըրութեն, ախպըրութեն (տե՛ս Հ.Մուրադյան, նշվ.աշխ., էջ 193):

⁸¹ Ըստ Գ.Ջահուկյանի տվյալների՝ նման հնչյուններ ունեն արևմտյան խմբակցության 10 (Եվդոկիայի, Մեբաստիայի, Կեսարիայի, Հաջընի, Մարաշ-Ջեյթունի, Կարնո, Մո, Տալվորիկ-Մոսկանի, Վանի, Դիադինի) և արևելյան խմբակցության 4 (Արարատյան, Ջուղայի, Խոյ-Մարաղայի,

երկբարբառային ձայնավորների առկայություն (*նլօ, իէ* արտասանությամբ) նկատել է միայն գյուղական լեզվում. «...քաղաքացիք ասոնցմէ զուրկ են: Կովկասի գաղթականներէն ալ անոնք որ գիւղական ծագում ունին, նոյնպէս կը հնչեն *ն* և *է* ձայները որոշ արտասանությամբ, իսկ անոնք որ քաղաքացի են՝ զուրկ են նոյն ձայներէն»⁸²: «Կարնո բարբառը՝ ուսումնասիրության հեղինակ Հ.Մկրտչյանը բարբառում երկբարբառներ չի արձանագրել»⁸³, իսկ Գ.Զահուկյանը նման հնչյունների առկայություն փաստել է Լենինականի (Գյումրիի) և Խնդաձորի տարածական միավորներում⁸⁴: Հ.Աճառյանը մշեցիների և Կարինի գյուղացիների *է,ն* հնչյունները Վանի բարբառի նոյն միավորների համեմատությամբ համարում է ծանր ու դանդաղ⁸⁵:

Օրինաչափորեն միավանկ բառերի սկզբնային ե-ից առաջ յ-ի և ո-ից առաջ շրթնային տարրի հավելում է առկա *է,ն* երկբարբառայիններ ունեցող Կարինի, Դիաղինի և Մշո բարբառներում: Սասունի բարբառում այդ իրողությունները բացակայում են⁸⁶: Պոլսի բարբառում դրանք ունեն մասնավոր դրսևորումներ⁸⁷. այստեղ ե>յէ անցում կա *յէփ* (երբ) բառում, գրականից փոխառյալ *յէրք, յէրքարան, Յէրչանիզ* (<Երջանիկ /իզական հատուկ անուն է/) ու մի քանի այլ բառերում, և ո>վօ անցում կա *վօվ* (ով), *վօր* (որը) ձևերում⁸⁸: Ինչ վերաբերում է գրական արևմտահայերենին, ապա այն ընդունում է բառասկզբի ե>յէ, ո>վօ արտասանությունը⁸⁹:

Բայազետի) բարբառներ ներկայացնող մոտ երեք տասնյակ բարբառախոս վայրեր (տե՛ս Գ.Զահուկյան, նշվ. աշխ., էջ 70-81, 132-136):

⁸² Հ.Աճառյան, *Հայ բարբառագիտություն*, էջ 105:

⁸³ Տե՛ս Հ.Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 11, 14, 17:

⁸⁴ Տե՛ս Գ.Զահուկյան, նշվ. աշխ., էջ 74:

⁸⁵ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 140:

⁸⁶ Տե՛ս Վ.Պետոյան, նշվ.աշխ., էջ 17-18:

⁸⁷ Տե՛ս Գ.Զահուկյան, նշվ. աշխ., էջ 70-71, 76:

⁸⁸ Տե՛ս Հ.Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի*, էջ 19,24:

⁸⁹ Տե՛ս Ռ.Սաքապետոյան, նշվ.աշխ., էջ 35, 37:

Դիտարկվող լեզվատարբերակներում քմայնացած ձայնավորներ դրսևորվում են Դիադինի, Սասունի և Պոլսի բարբառներում: Դիադինի բարբառում (թերևս Վանի բարբառի ազդեցությամբ՝ նաև Մշո բարբառի Արծկեի և Արճեշի խոսվածքներում) քմային *ü* հանդես է գալիս օրինաչափորեն՝ համաձայն «Աճառյանի օրենքի»⁹⁰: Սասունի բարբառում, ըստ Վ.Պետոյանի, *ü* ձայնավորը «ոչ միայն կա, այլ իր գործածությամբ գրեթե հավասարվում է ա-ին, իւ և էօ հնչյուններ էլ կան»⁹¹: Պոլսի բարբառում *ö*, *iii* ձայնավորները սովորական են թուրքական փոխառություններում, սակայն բնիկ հայերեն բառերում *iii* - ն բացակայում է, իսկ *ö* - ն հանդիպում է շատ սակավ (գօրեգ, գօրեն, Քօրօփե, Սօրօփե), ընդ որում, ինչպես նկատում է Հ.Աճառյանը, բարբառի զարգացման ընթացքում *görtlq* և *görlén* բառերի դիմաց արդեն գործառում են *gorltq* և *gorlén* ձևերը⁹²: Ինչպես վերևում տեսանք, գրական արևմտահայերենում ուսումնասիրողները *iii* քմային հնչյուն դիտարկում են նախնական *hi* երկբարբառի դիմաց:

Միայն իրեն հատուկ ձայնավորական որոշ հատկանիշներ ունի Պոլսի բարբառը: Այստեղ ձայնավորների ներդաշնակության դրսևորումներ է նկատել Հ.Աճառյանը: Ըստ լեզվաբանի՝ թեև բարբառը կրել է թուրքերենի զգալի ազդեցությունը, սակայն ձայնավորների ներդաշնակության՝ թուրքերենին բնորոշ օրենքը չի վերցրել, միայն թուրքերենից կատարած փոխառություններում պահել է այդ լեզվին հատուկ ներդաշնակության դրսևորումները՝ հաճախ էլ հայերենի պահանջով խախտելով այդ օրենքը⁹³:

⁹⁰ Տե՛ս Հ.Աճառյան, *Քննություն Վանի բարբառի*, էջ 16-26. Մ.Ասատրյան, *Ուրմիայի (Խոյի) բարբառը*, էջ 21-24. Տե՛ս Վ.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 18-25. Ժ.Միքայելյան, *Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները*, էջ 15. ՀԲԱ նյութեր, տետր թիվ 58, 196:

⁹¹ Վ.Պետոյան, նշվ. աշխ., էջ 29:

⁹² Տե՛ս Հ.Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի*, էջ 10:

⁹³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 87:

Այնուամենայնիվ, հայերեն բառերում նկատվում են ներդաշնակության օրենքի որոշ դրսևորումներ, ինչպես՝ պտուղ > բուղուղ, ցուցանել > ցուցնել > ցուցունել, ութը > ութու, Քերովբե > Քօրօփե, ցերեկ>ցորեկ>ցօրեգ, Տիրուհի>Տիրուկ>Դիրուփ և այլն⁹⁴: Պոլսի բարբառում արձանագրվել է նաև «Ը-ի լիաձայնություն» հատկանիշը⁹⁵, երբ ը-ի դիմաց հանդես են գալիս *h* կամ *nz* ձայնավորներ, ինչպես՝ նշխարք > նիշխարք, նշան > նիշան, սպիտակ > իսպիդագ, յստակ > իստագ, կշիռք > գիշառք, կշտանալ > գիշտանալ, սրիկայ > սիրիգա, գգոյշ > ուշկուշ, զրուցել > զուրուցել>զուրցել, ոտնլուայ>օդունվլա, թթու>թուրու և այլն⁹⁶:

Ձայնավորական մի շարք հատկանիշներ էլ հատուկ են միայն Սասունի բարբառին: Այստեղ շեշտակիր վանկում առկա են ե>ի և ո>ու անցումներ (ե-ի և ո-ի դիմաց ավելի փակ ձայնավորների դրսևորում), ինչպես՝ երես>երիս, ասեղ>ասիղ, խեղճ>խիղջ, դեղ>տիղ, մեղր>միղր, մեղք>միխք, մեծ>միձ, ծեծ>ծիձ, բեր>պիր, ոսպ>ուսպ, հող>հուղ, բողկ>պուղգ, գործ>կուրձ, մոմ>մում, բոլր>պոլուր, ալոճ>ալուջ, շլոր>շլուր, թագաւոր>թակավուր և այլն⁹⁷: Այս բարբառում ոչ բնաձայնական բառերում կարող է շեշտակիր լինել նաև ը-ն, ինչպես՝ ես>ըս, մենք>մընք, մեր>մըր, մեզ>մըզը, ձեզ>ծըզը, չեմ>չըմ և այլն⁹⁸: Սասունի բարբառի յուրահատկություններից է նաև այն, որ բազմավանկ բառերում սովորաբար շեշտակիր է նախավերջին վանկը, ինչպես՝ մը՛րգիթ (վայրի ձիթատու պտուղ է), գօ՛վըկ (ձագար), խաբը՛րձիլ (խավարծիլ), դարդա՛րա (անձոռնի մեծ), մադա՛շիգ (ուշ գարնանը ծնված ուլ) և այլն⁹⁹:

⁹⁴ Տե՛ս նշվ. աշխ., էջ 88-89:

⁹⁵ Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 70:

⁹⁶ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., 85:

⁹⁷ Տե՛ս Վ.Պետոյան, նշվ. աշխ., էջ 17-18:

⁹⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 17:

⁹⁹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 16:

Գ.Ջահուկյանի աղյուսակներում ներկայացված հիշյալ իրողություններից բացի՝ դիտարկվող լեզվատարբերակներում նկատելի են ձայնավորական մի շարք այլ երևույթներ ևս: Այսպես, գրական արևմտահայերենում, ինչպես նկատում է Ռ.Սաքապետոյանը, «...գաղտնավանկի ը-ի արտասանությունն առավել զգալի է. այն արտասանվում է առավել թանձր մանավանդ բառասկզբի սպ, սփ, սկ, զբ, զգ, շտ (շփական+պայթական) և նման հնչյունախմբերով սկսվող բառերում, ինչպես՝ ըսպասել, ըսփոփել, ըսկսիլ, ըզբոսնուլ, ըզգալ, ըշտապել»¹⁰⁰: Հ.Աճառյանը Պոլսի բարբառում ը-ի արտասանության նման առանձնահատկություն չի արձանագրում, միայն նշում է, որ «*ըս* հնչումն ունին հետևյալ բառերը. սպանանել>*ըսպաննէլ*, ստակ >*ըստագ*, ստեղծել >*ըստեղձէլ*, սպասաւոր >*ըսպասաւօր*, սպասուհի >*ըսպասույի*, սպասել >*ըսպասէլ*, որոնք բոլոր գրական փոխառություն են. նաև Ստեփան >*Ըստէփան*, *Ըստիգ* հատուկ անունը»¹⁰¹: Մինչդեռ այս առումով գրական արևմտահայերենին զգալի մերձավորություն է հանդես բերում Կարնո բարբառը, որտեղ շփական + պայթական «կապակցություններից առաջ լսվում է այնպիսի զորեղ *ը*, որ անհրաժեշտ է գրությամբ արտահայտել, ինչպես՝ սպանաղ > ըսպանըլի, սկսել > ըսկըսել, շտապել > ըշտաբել, ստեղծել > ըստեղծել, սփոփել > ըսփօփել»¹⁰²: Այդ դիրքում ը-ի առկայությունը փաստվել է նաև Մշո բարբառում՝ սկսանել > ըսկսել, ստանալ > ըստանալ, ստեղծանել > ըստեղձել, ստերջ > ըստերջ, սպանանել > ըսպանել, սպասել > ըսպասել»¹⁰³:

Ինչպես հայտնի է, հայերենի արևմտյան բարբառներին է հատուկ բազմավանկ բառերի նախաշեշտ վանկի ձայնավորի սղման իրողությունը, որ սկիզբ է առել դեռևս միջինհայերենյան շրջանում և բացատրվում է այդ բարբառներին հատուկ

¹⁰⁰ Ռ.Սաքապետոյան, նշվ. աշխ., էջ 15:

¹⁰¹ Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 71:

¹⁰² Հ.Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 15:

¹⁰³ Տե՛ս Ս.Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 26:

վերջնավանկային շեշտադրությամբ¹⁰⁴: Պոլսի բարբառում այդ դիրքում սղման ենթարկվել է հատկապես *ա* ձայնավորը, ինչպես աշակերտ > աշկերդ, ամաչկոտ > ամըշկոդ, բաժանել > փաժնել, երանեակ > էրնէգ, թաթախել > թաթխել, հաւանիլ > հավնիլ, հաւատալ > ավդալ, չարչարել > չարչըրել, պարտակել > բարդըգել, հասկանալ > հասկընալ, գողանալ > գողնալ և այլն: Նման փոփոխության ենթարկվել են նաև *ե* (աւելել>ավլել, աւերել>ավրել, վայելել>վայլել և այլն), *ի* (անիծել>անըձել, հանդիպել>հանդըբիլ, տանտիկին>դանդըգին), *ո* (ժողովել>ժողվել, սովորիլ>սօրվիլ, ոլորել>օլրրել, մոլորիլ>մօլրրիլ), *ու* (գրուցել>գուրուցել>գուրցել, դրուժան> դըռջան) ձայնավորները¹⁰⁵: Իրողությունը գրեթե նույն կերպ է դրսևորվում նաև Կարնո (արածել > արձել, կատաղիլ > կադդել, հայելի > հայլի, մոտենալ > մօդնալ, իրիկուն > հ'իրգուն, հանդիպել > հանդըբել, ոլորել > օլրրել, խորովիլ > խօրվել, առուտուր > ադդուր, գրուցել > գըրցել)¹⁰⁶, Մշո (աւետարան > ավէդրան, բանալի > բ'ալնիք, հայելի > հայլի, աւելել > ավլել, տանտիկին > տանդըգին, բոլորել > բ'օլրրել, ողողել > օղըղել)¹⁰⁷, Սասունի (խավարծիլ > խաբըրձիլ, իմանալ > իմնալ, անիծել > անըձիլ, մխիթարանք > մըխըթրանք, երեկոյ > իրգուն, ակւոր > հալվուր, մոլորած > մօլրուգ)¹⁰⁸ և Դիադինի (ակնանատ > ակնաթ, հարսանիք > խառսընիս, ոսկերիչ > օսկըրիչ, ածելի > առծըլի, թիթեռնիկ > թիթըռնէկ, տանտիկին > տանդըկին, սովորել > սօվրել, ժողովել > ժօղվել)¹⁰⁹ բարբառներում: Ինչպես նշում է Հ.Մուրադյանը, «... միջնավանկի ձայնավորների անկումը դառնում է մի շարք արևմտյան բարբառների առանձնահատկությունը և այդ ճանապարհով էլ հետագայում թափանցում արևմտահայ

¹⁰⁴ Տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 86-87:

¹⁰⁵ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 13-26:

¹⁰⁶ Տե՛ս Հ.Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 12-18:

¹⁰⁷ Տե՛ս Ս.Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 15-33:

¹⁰⁸ Տե՛ս Վ.Պետոյան, նշվ. աշխ., էջ 16-18:

¹⁰⁹ Տե՛ս Վ.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 24-30:

գրական լեզվի սահմանները: Արևմտահայ գրական լեզվում օգտագործվող *ավտալ*, *բաժնել*, *հասկնալ*, *ժողվել* և նման բազմաթիվ այլ բառերի գոյությունը, որոնք միջնավանկում ունեն ձայնավորների կորուստ, պետք է բացատրել հենց այդ օրինաչափությամբ¹¹⁰: Գրական արևմտահայերենում ևս, ինչպես նկատում է Յու.Ավետիսյանը, ա-ի սղումը ավելի տարատեսակ դրսևորումներ ունի, ինչպես՝ հասկանալ > հասկընալ, մոռանալ > մոռնալ, արթնանալ > արթըննալ, տաքանալ > տաքնալ, սպանանել > սպաննել, ելանել > ելլել, ամաչկոտ > ամըչկոտ, հարսանիք > հարսնիք, օրուանել > օրուընել, տասանոց > տասանոց¹¹¹: Միջնավանկում սղման ենթարկվում են նաև այլ ձայնավորներ, ինչպես՝ սովորիլ > սորվիլ, ժողովել > ժողվիլ, թոռումել > թոռմիլ, աւերել > աւրել, գիտենալ > գիտնալ, վախենալ > վախնալ և այլն¹¹²: Գրական արևմտահայերենին հատուկ է նաև ա>ը անցում *անել* (>առնել) և *ասել* բառերում՝ *ընել*, *ըսել*: Ըստ Յու.Ավետիսյանի՝ սա ուշ միջնադարի մատենագրության մեջ արձանագրված իրողություն է, որ փոխանցվել է արևմտահայերենին¹¹³: Գրական արևմտահայերենին այս ձևերն անշուշտ անցել են Պոլսի բարբառից, որտեղ Հ.Աճառյանն արձանագրել է *առնել* > *անել* > *ընել* և *ասել* > *ըսել* անցումները¹¹⁴: Կարևոր բարբառում *ասել* բառի դիմաց գործառում է *ըսել* ձևը, իսկ անել-ի դիմաց՝ *էնել* ձևը: Այդպես է և Մշո բարբառում՝ *ըսել*, *էնել*: Դիադինի բարբառում գործառում են *ասել*, *էնել* ձևերը:

Գրական արևմտահայերենի բնութագրական հատկանիշներից է բառաթեքման ժամանակ շեշտակիի փակ վանկի *ի* և *ու* ձայնավորների պահպանումը, ինչպես՝ գիր > գիրեն, սիրտ > սիրտեր, ծրագիր > ծրագիրներ, շուն > շունի, ջուր > ջուրեր,

¹¹⁰ Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 87:

¹¹¹ Տե՛ս Յու.Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 54-57:

¹¹² Տե՛ս նշվ. աշխ., էջ 58-60:

¹¹³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 57:

¹¹⁴ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 18:

ժողովուրդ > ժողովուրդի, հողաթումբ > հողաթումբի և նույնիսկ՝ առու > առուով, կատու > կատուէն¹¹⁵: Հ.Մուրադյանը կարծում է, որ դեռևս միջինհայերենյան շրջանում *ի*, *ու* (նան՝ մյուս) ձայնավորների՝ շեշտազրկման հետևանքով հնչյունափոխվելու հատկությունը գործուն էր հայերենի ոչ բոլոր տարբերակների համար: Այդ է վկայում այն իրողությունը, որ հայերենի ժամանակակից մի շարք բարբառներ, այդ թվում և Պոլսի բարբառը, բառաթեքման ժամանակ անփոփոխ են պահում ձայնավորները¹¹⁶: Ըստ Հ.Աճառյանի՝ «Ձայնավորների և երկբարբառների սղման և ամփոփման օրենքը, որ այնպես ընդարձակ գործածություն ուներ հին հայերենում և որ այժմ էլ բավական խստությամբ պահվում է Երևանի բարբառում, վերացված է Պոլսի բարբառից»¹¹⁷, ինչպես՝ *ջուրի*, *միսի*, *քիթի*, *ձուգի*, *դունի* և այլն; Ավելին, նույնիսկ բառակազմության մեջ ձայնավորները հաճախ պահպանվում են, ինչպես՝ *դուրսեցի*, *բուրթօղ*, *սիրդօղ*, *սուղնալ* և այլն¹¹⁸: Պարզ է, որ դիտվող հատկանիշը գրական արևմտահայերենին անցել է Պոլսի բարբառից, իսկ մեր կողմից դիտարկվող որևէ այլ բարբառ այդ հատկանիշը չունի:

¹¹⁵ Տե՛ս Զու.Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 70-75:

¹¹⁶ Տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 82:

¹¹⁷ Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 100-101:

¹¹⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 101:

ԳԼՈՒԽ Գ
ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՈՐԾԱՌՈՂ ԿԸ ՃՅՈՒՂԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ
ԲԱՌԱՊԱՇԱՐՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ¹

Արևելահայ և արևմտահայ գրական լեզուների զուգադրական քննություն կատարելիս լեզվաբաններն անդրադարձել են նաև երկու տարբերակների բառապաշարների առնչություններին: Այդ կարգի առնչությունները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև, երբ դիտարկվում են գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործառող Կը ճյուղի բարբառների փոխհարաբերությունները: Հիշյալ լեզվատարբերակների բառապաշարային առնչությունների վերաբերյալ, որքան մեզ հայտնի է, առանձին ուսումնասիրություն չի կատարվել, ուստի սույն աշխատանքում փորձ է արվում ըստ հնարավորին լրացնելու եղած բացը:

Հետազոտության համար հիմք է ծառայել Ա.Սարգսյանի «Արևմտահայերենի բառարանը»², օգտագործվել են նաև Հ.Ա.Ճառյանի, Ա. Սարգսյանի, Ռ.Սաքապետոյանի՝ արևմտահայերենին նվիրված հետազոտությունները³: ՀՀ տարածքում գործառող արևմտյան խմբակցության բարբառների բառապաշարի

¹ Նկատի չունենք ընդհանուրհայերենյան բառաշերտը:

² Տե՛ս Ա.Ե.Սարգսյան, *Արևմտահայերենի բառարան*, Ե., 1991:

³ Տե՛ս Հ.Ա.Ճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, հ. 2, Ե., 1951, Ա.Ե. Սարգսյան, *Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ (զուգադրական և տիպաբանական քննություն)*, Ե., 1985, Ռ.Վ.Սաքապետոյան, *Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները*, Ե., 2004, նույնի՝ *Արևմտահայերենի դասագիրք*, Ե., 2006:

ուսումնասիրության աղբյուր են հանդիսացել Հ.Մկրտչյանի «Կարնո բարբառը», Ս.Հ.Բաղդասարյան-Թափալցյանի «Մշո բարբառը», Վ.Պետոյանի «Սասունի բարբառը» և Վ.Խաչատրյանի «Վարդենիսի (Դիադինի) բարբառը» մենագրությունները⁴, Հ.Աճառյանի «Հայերեն գաւառական բառարանը», Սահակ վրդ. Ամատունու «Հայոց բառ ու բան» երկասիրությունը, ազգագրական հետազոտություններ⁵:

Դիադինի բարբառի և գրական արևմտահայերենի բառապաշարային առնչությունները

Դիադինի բարբառին վերաբերող՝ Վ.Խաչատրյանի ուսումնասիրության մեջ ներկայացված է նաև Դիադինի բարբառի բառապաշարը⁶: Հեղինակը Դիադինի բարբառի բառապաշարը ներկայացնում է հետևյալ բաժիններով՝ «Գրաբար-Դիադինի բարբառ» (էջ 123-146), «Փոխառյալ բառեր» (էջ 147-153) և «Դիադինի (Վարդենիսի) բարբառի բառարան» (էջ 154-231): Վերջում տրված է «Բառակապակցությունների և թևավոր արտահայտությունների բառարան» (էջ 232-249): «Դիադինի (Վարդենիսի) բարբառի բառարան»-ում ընդգրկված է 2839 բառ, «Գրաբար-Դիադինի բարբառ»-ի բառարանում՝ 1798 բառ, «Փոխառյալ բառեր»-ի բառարանում՝ 494 բառ: Համեմատությունից պարզվում է, որ «Գրաբար-Դիադինի բարբառ»-ի բառարանի

⁴ Տե՛ս Հ.Մ.Մկրտչյան, *Կարնո բարբառը*, Ե., 1952, Ս.Հ. Բաղդասարյան-Թափալցյան, *Մշո բարբառը*, Ե., 1958, 1985, Վ.Ա. Պետոյան, *Սասունի բարբառը*, Ե., 1954, Վ.Խաչատրյան, *Վարդենիսի (Դիադինի) բարբառը*, Ե., 2004:

⁵ Տե՛ս Հ.Աճառյան, *Հայերեն գաւառական բառարան* (ՀԳԲ) (= Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ), Թիֆլիս, 1913, *Հայոց բառ ու բան*, աշխատասիրեց Սահակ վրդ. Ամատունի, Վաղարշապատ, 1912, *Փշրանք Շիրակի ամբարներից*, հաւաքեց Աղ.Մխիթարեանց (= Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա), Մոսկուա-Ալեքսանդրապոլ, 1901:

⁶ Տե՛ս Վ.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 123-231:

1798 բառից 669-ը և «Փոխառյալ բառեր»-ի բառարանի 494 բառից 51-ը կրկնվում են «Դիադինի (Վարդենիսի) բարբառի բառարան»-ում: Ուստի, եթե հանենք կրկնությունները, ապա Դիադինի բարբառի բառապաշարը, ըստ Վ.Խաչատրյանի գրքի բառարանների, կկազմի 4411 բառ:

Բարբառի՝ գրական արևմտահայերենի հետ բառապաշարային ընդհանրությունները դիտարկում ենք ըստ հետևյալ խմբերի.

ա. Բառեր, որոնք գրական արևմտահայերենում և բարբառում (բարբառին հատուկ հնչյունափոխությամբ) ունեն միևնույն ձևը և իմաստը⁷.

ակոռա «ժանիք, ատամ» (արևմտ. *ակոռայ* «ատամ, սեղանատամ»)

աղեկ «աղեկ, լավ» (արևմտ. «լավ, ընտիր, պատվական»)

⁷ Այստեղ և այսուհետ կրկնություններից խուսափելու համար բառերը ներկայացվում են հետևյալ սկզբունքով.

ա. Եթե բառը բարբառում և արևմտահայերենում ունի միևնույն ձևը և միևնույն նշանակությունը, ապա նշվում է բառը, իսկ չափերտներում՝ նշանակությունը:

բ. Եթե բառը բարբառում և արևմտահայերենում ունի միևնույն ձևը, բայց առաջինում կամ երկրորդում ունի քիչ իմաստային տարբերություն կամ լրացուցիչ նշանակություն, ապա նշվում է բառը, չափերտներում՝ նշանակությունը բարբառում, իսկ փակագծերի մեջ՝ նշանակությունը արևմտահայերենում:

գ. Եթե բառը բարբառում և արևմտահայերենում չունի միևնույն ձևը, բայց երկուսում էլ ունի միևնույն նշանակությունը, ապա գրվում է բարբառային ձևը, այնուհետև փակագծերում՝ արևմտահայերենը, իսկ փակագծերից հետո չափերտներում՝ նշանակությունը:

դ. Եթե բառը բարբառում և արևմտահայերենում չունի միևնույն ձևը և առաջինում կամ երկրորդում ունի քիչ իմաստային տարբերություն կամ լրացուցիչ նշանակություն, ապա գրվում է բարբառային ձևը, չափերտներում՝ նշանակությունը բարբառում, այնուհետև փակագծերում՝ արևմտահայերեն ձևը, չափերտներում՝ նշանակությունը:

գաճ (արևմտ. *գաճ*) «գաջ»

գամ «մեխ» (արևմտ. *գամ* «մեխ, երկաթե սեպ»)

գողնալ (արևմտ. *գողնալ*) «գողանալ»

դ'ողղղալ (արևմտ. *դողղղալ*) «դողղողալ»

էթալ «գնալ» (արևմտ. *էրթալ* «1. գնալ, հեռանալ 2. հաճախել, 3. վաճառվել»)

ըղէղ (արևմտ. *ըղէղ*) «ուղեղ»

թաթխել (արևմտ. *թաթխել*) «թաթախել»

թէթըվնալ (արևմտ. *թէթէննալ*) «թէթնանալ»

ժողվել «ժողովել» (արևմտ. *ժողվել* «ժողովել, հավաքել»)

իրիկ «ամուսին» (արևմտ. *էրիկ* «1. ամուսին, 2. տղամարդ»)

լէնընալ (արևմտ. *լայննալ* / «լայնանալ»)

լուսընալ (արևմտ. *լուսնալ*) «լուսանալ»

խաշալ (արևմտ. *հաշալ*) «հաշել»

խառսընիս (արևմտ. *հարսնիք*) «հարսանիք»

խառցուցել (արևմտ. *հարցունել*) «հարցնել»

խավնել (արևմտ. *հաւնել*) «հավանել»

խասկընալ (արևմտ. *հասկընալ*) «հասկանալ»

խաքցուցել «ագուցանել» (արևմտ. *ագուցել, ագուցանել* «իրար միացնել»)

խօրօտ «գեղեցիկ» (արևմտ. *խորոտ* «գեղեցիկ, սիրուն»)

խօք «հոգ» (արևմտ. *հոգ* «հոգս»)

կակուղ «փափուկ» / Ռ.Մ.⁸

կանանչ «կանաչ»

կարքուկ (արևմտ. *կարգուկ*) «ամուսնացած»

կարկըտան «կարկատան»

կարօտնալ «կարոտել»

⁸ Եթե նշված է /Ռ.Մ./, հիմք է ընդունվել Ռ.Կ.Սաքապետոյանի «Արևմտահայերենի դասագրքի» բառարանը, մյուս բոլոր դեպքերում հիմք է ընդունվել Ա.Ե.Սարգսյանի «Արևմտահայերենի բառարանը»:

կուշտ «կողք, մոտ» (արևմտ. «կողք») /բարբառում կա նաև՝ *կըշտին* «կողքին»/

հելըլնալ (արևմտ. *աւելնալ*) «ավելանալ»

հեղթիս (արևմտ. *երդիք*) «երդիկ» /*երդիք*-ի հայց. ձևից՝ *երդիս*/

հերկէն «երկար» (արևմտ. *երկայն* «երկար, բարձրահասակ»)

հիստանկ «մաքուր» (արևմտ. *իստակ* «մաքուր, հստակ»)

ճամբանիս «ճանապարհ» (արևմտ. *ճամբա* «ճամփա»)

ճաշնալ (արևմտ. *ճանչնալ*) «ճանաչել»

մատնիկ (արևմտ. *մատնիք*) «մատանի»

մարքըրիդ (արևմտ. *մարգրիտ*) «մարգարիտ»

մընձուր «այրված որևէ բանի ածխացած մնացորդ» (արևմտ.

մնձուր «այրված նյութի մոխրացած՝ ածխացած մնացորդ»)

մինանկ «միայն, միայնակ» (արևմտ. *մինակ* «1. մենակ, միայ-

նակ... 2. միայն, սոսկ»)

մոռնալ (արևմտ. *մոռնալ*) «մոռանալ»

շատընալ (արևմտ. *շատնալ*) «շատանալ»

շըլկէլ (արևմտ. *շալկել*) «շալակել»

շինէլ «պատրաստել, շինել» (արևմտ.՝ *շինէլ* «անել, սարքել»)

շուք (արևմտ. *շուք*) «ստվեր»

չօրընալ (արևմտ. *չորնալ*) «չորանալ»

պաղ «1. սառը, 2. սառույց» (արևմտ.՝ «1. ցուրտ, 2. սառույց»)

պաք (արևմտ. *պագ*) «համբույր»

պաքէլ (արևմտ. *պագնել*) «համբուրել»

ջօջ «մեծ» (արևմտ. *ջոջ* «մեծ, մեծավոր»)

սակառ «սակառ» (արևմտ. «կողով, քթոց»)

սանդըր (արևմտ. *սանտր*) «սանր»

սանդըրէլ (արևմտ. *սանտրել*) «սանրել»

սելընալ (արևմտ. *սելնալ*) «սևանալ»

վեռչընէլ «վերջին ծնունդ» (արևմտ. *վերջինէլ* «վերջնէլ»)

վերցուցէլ (արևմտ. *վերուցել*) «վերցնել»

ցամքէլ (արևմտ. *ցամքել*) «ցամաքել»

ցամքըցուցել (արևմտ. *ցամքացնել*) «ցամաքեցնել»

փսթթել (արևմտ. *փաթթել*) «փաթաթել»

փախցուցել (արևմտ. *փախցունել*) «փախցնել»

փրճանալ (արևմտ. *փճանալ*) «փչանալ»

քառասուն «քառասուն»:

Պետք է նշել, որ Դիադինի բարբառում կան նաև բառեր, որոնց նշանակությունը վերոնշյալ բառարանում ցույց տվող բառը նույնպես բացատրման կարիք ունի: Օրինակ՝ պարզ չէ՝ *հնշկըռել* «աչք առնել» բայը, որը արևմտահայերենում նշանակում է «մտադրվել», արդյո՞ք բարբառում նույն նշանակությունն ունի: Նման դեպքը եզակի չէ. այլ օրինակներ

բսննսլ «?» (արևմտ. *բսոնալ* «1. բարձրացնել, 2. ջնջել»)

գրրավ «?» (արևմտ. *գրաւ* «գրագ, հավաստիք»)

կոկիկ «?» (արևմտ. *կոկիկ* «1. շոշափելի, ոչ քիչ, 2. սահուն, կատարյալ»)

ապրսպրել «?» (արևմտ. *ապսպրել* «պատվիրել, դուրս գրել»):

բ. Բառեր, որոնք, գրական արևմտահայերենում և բարբառում դրսևորվելով միևնույն ձևով, ունեն իմաստային նուրբ տարբերություններ.

ակիշ «1. տաշտքերիչ, 2. թոնրից հաց հանելու ձող» (արևմտ. *ակիշ* «կեռ, կարթ, ճանկ»)

բսնթոթ «աշխատանքի ընդմիջում» (արևմտ. *բսնթոթ* «գործադուլ»)

դ'սիս «մեծահասակ» (արևմտ. *դահ* «թարմությունը կորցրած»)

դ'սիսանալ «մեծանալ» (արևմտ. *դահանալ* «հնանալ, թարմությունը կորցնել»)

խոնչսի «հացի աման» (արևմտ. *խոնջա* «մատուցարան /հացի/»)

խորել «հորի մեջ ծածկել, թաղել» (արևմտ. *խորել* «1. ծածկել, թաքցնել, 2. յուրացնել /ուրիշի կայքը/, 3. նվազեցնել, պակասեցնել»)

կոշկոտ «վերքի չորանալը, շաքարի կտոր, հողի չոր կտոր, մարմնի վրա կոշտացած մաս» (արևմտ. *կոշկոտ* «տարբեր առարկաների խոշոր կտորներ, կոշտեր»)

շէնք-շընորք «արտաքին գեղեցկություն» (արևմտ. *շէնք շնորհք* «տեղը տեղին, կարգին»):

գ. Բառակազմական տարբերակներ՝ կազմված արևմտահայերենին բնորոշ ձևերից, դարձվածքներ և արտահայտություններ, որոնց բաղադրիչներից առնվազն մեկը բնորոշ է միայն արևմտահայերենին.

արևոյ հեռթըվալ (արևմտ. *արևով երդնուլ*) «շատ սիրել»

ակոռն առվել «թթու բան ուտելուց ատամների ցավ զգալը»

ակոռք թսնիել «1. ատամները փչանալ, 2. փխր. ուժը կորցնել, մեծանալ»

գ'նյոյ տարի «եկոդ տարի»

կակուղ հերէս «աներես, խուլիզան»

հիստըկել «մաքրել» (արևմտ. *իստակ* «մաքուր, հստակ» + *ել*)

ջ'ոչավոր «մեծավոր, պաշտոնյա» (արևմտ. *ջոջ + աւոր*)

ջ'ոչընալ «մեծանալ, հասակ առնել» (արևմտ. *ջոջ + անալ*)

պաղ արյուն «սառնարյուն, անգութ»:

ՀԲԱ նյութերում⁹ գրանցվել են որոշ բառեր, որոնք նշված չեն Վ.Խաչատրյանի գրքի բառարանում.

հիստսնկջորրել «պարզաջրել» (արևմտ. *իստակ* «մաքուր, հստակ» + *ջրել*)

պաղել «սառչել» (արևմտ. *պաղ* «1. ցուրտ, 2. սառույց» + *ել*)

պաք առնել «համբուրել»:

⁹ Տե՛ս ՀԲԱ ծրագրով հավաքված նյութեր, տեսր 8ա:

Անհրաժեշտ է նշել, որ գրական արևմտահայերենի և Դիաղինի բարբառի բառապաշարները համեմատելիս արձանագրել ենք համանունների որոշակի քանակություն: Դրանց շարքում կան բառեր, որոնք բառիմաստի ընդլայնմամբ կամ նեղացմամբ լրացուցիչ կամ մասնավոր իմաստներ են ձեռք բերել, և կան բառեր, որոնք ամբողջովին վերաիմաստավորվել են, կամ էլ որոնց բառաձևային նմանությունը պատահական է՝ պայմանավորված բառի բարբառային հնչյունափոխությամբ:

Ստորև ներկայացվում են այն ձևերը, որոնք արևմտահայերենում և Դիաղինի բարբառում ունեն տարբեր իմաստներ.

Բառը	Իմաստը	
	Արևմտահայերենում	Դիաղինի բարբառում
1	2	3
<i>անառակ</i>	«չար, չարաճճի»	«անբարոյական»
<i>անմառթ</i>	(<i>անմարթ</i>) «անկարելի»	«առանց ամուսնու, անամուսին»
<i>անուշ</i>	«1. մուրաբա, 2. լիմոնադ»	«1. դուրեկան, հաճելի, 2. համեղ, 3. արևոտ, առանց քամու օր, 4. կենացի պատասխան, մաղթանք»
<i>բնիլ</i>	(<i>բաիլ</i>) «ընդհարվել»	«նախանձ»
<i>բնրակ</i>	(<i>բարակ</i>) «մանրագնին՝ նրբագնին կերպով»	«բարակ»
<i>գնլ</i>	(<i>գալ</i>) «առաջիկա, եկող»	«գալ». չնայած բարբառում առկա է՝ <i>գնլօղ տարի</i> ՝ «եկող տարի» արտահայտությունը
<i>գեշ</i>	«1. վատ, բացասական, 2. անախորժ, տհաճ, անբարոյական»	«տգեղ»
<i>գետին</i>	(<i>գետին</i>) «փխբ. հիմ, հիմունք, հող»	«հող, գետին»

1	2	3
դիք	(դիք) «հեթանոս աստվածներ»	«1. ուղիղ, 2. թեք»
զատ	«տարբեր, առանձին»	«հեռու», նաև՝ զանա՝ մի ինչ-որ բան»
զըրուցել	(զըրուցել) «հայտնել, ասել»	«խոսել, զրուցել»
ընդոր	(ինդոր) «ինչպես»	«նրա»
թուլնալ	«1. փափկել, մեղմանալ, 2. տկարանալ, 3. ուշադրությունը նվազել»	«թուլանալ»
ծուռ	«պտույտ, շրջան»	«սնունդ (սննդով)»
լննգան	(լազան) «ձյունի վրա քայլելու ոտնաման»	«ամանի տեսակ»
լաթ	«շոր, զգեստ, հագուստ»	«կեղտոտ»
խաքնել	(հագնել) «կարկատել, կցկցել», չնայած հագնիլ՝ «հագնվել»	«հագնել»
խելթ	(խելթ) «հանդարտաբար»	«խելք»
խօտ	(հոտ) «այդտեղ»	«հոտ»
խօլ	(հոլ) «քամի, հողմ»	«հոլ»
ծանօթ	«հոչակված, համբավով՝ անունով հայտնի, ճանաչված»	«ծանոթ»
կորիզ	(կորիզ) «ատոմի միջուկ»	«կորիզ»
կուզ	«խաղողի ողկույզ»	«սապատավոր»
կուռ	«կուշտ» «օրինակ՝ կուշտ ծիծաղել»	«ոտք»
կուտ	«ժղվրդ. մանր դրամ»	«կորիզ»
ձըքել	(ձգել) «զգել, թողնել»	«ձգել»
ճաշ	«1. կերակուր, 2. կեսօր»	«կեր /անասունների/»
մաճառ	«աղած և արևով չորացված ձուկ»	«քաղցր գինի»
մէշ	(մէջ) «տակ»	«մեջ»
շիտակ	(շիտակ) «ճիշտ, ուղիղ ճիշտն ասած, իսկապես»	«պարզ սիրտ, ուղղամիտ»

1	2	3
<i>պապուկ</i>	«1. մուրացկան, 2. խեղճ ծերուկ»	«միջատ»
<i>պըլիկ</i>	(<i>պլիկ</i>) «երեխա, մանուկ»	«1. ոսկյա դրամ, 2. փող»
<i>պըճեղ</i>	(<i>պճեղ</i>) «փխր. մաս, մասունք»	«կճղակ»
<i>ցանցառ</i>	«1. սակավ, քիչ, փոքրաթիվ, 2. ոչ հաճախակի»	«1. նոսր գործած, 2. խելքից պակաս»
<i>փախուկ</i>	«խելքը թոցրած, խենթ, ցնդած, հիմար»	«փախած»
<i>փակել</i>	(<i>փակել</i>) «ծածկել, գոցել»	«փակել»
<i>փոխան</i>	(<i>փոխան</i>) «փոխարեն»	«վարտիք»

Դիադինի բարբառում գործառում են բազմաթիվ դարձվածքներ, որոնք առկա են նաև գրական արևմտահայերենում: Ներկայացնենք որոշ օրինակներ¹⁰.

Դիադինի բարբառ	Արևմտահայերեն
1	2
<i>ակոռեք հանշվել</i> «մեկի թուլությունը իմանալու դեպքում իր ուժը ցուցադրել»	<i>ակոռները համրել</i> «թույլ կողմերը տեսնելով՝ դրանից օգտվել» (էջ 175)
<i>աշխար մըտուկ</i> «ամուսնացած»	<i>աշխարհի մէջ մտնել</i> «ամուսնանալ»
<i>լեզու թանփել</i> «համոզել, խնդրել»	<i>լեզու վաթել</i> «համոզիչ խոսքեր խոսիլ»
<i>խելք գըլօխ</i> «խելքը, գիտակից»	<i>խելքը գլուխը</i> «խելացի, հասկացող» (էջ 579)

¹⁰ Դիադինի բարբառից և գրական արևմտահայերենից օրինակները բաղված են համապատասխանաբար՝ Վ.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 232, 233, 238, 239, 243, 245, 246, 248, Պ.Ս.Բեդիրյան, *Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան*, Ե., 2011, էջ 76, 175, 429, 536, 579, 949, 1172, 1175, 1249, 1359, Ռ.Կ.Սաքապետոյան, Արևմտահայերենի դասագիրք, էջ 407:

1	2
ձ էո պաքել «խնդրել, աղաչել»	<i>ձեռքդ պագնեմ</i> «խնդրում, աղաչում եմ» (Էջ 824)
մատ խախցուցել «խառնել, գրգռել»	<i>մատ խաղցնել</i> «գրգռել, խառնակել»
<i>միսըն ծամել</i> «բամբասել»	<i>միսէն ծամել</i> «բամբասել», «կտոր-կտոր անել (փխբ.)»
պինդ հերես «անամոթ»	<i>պինդ երես</i> // <i>երեսը պինդ</i> «ամոթը կորցրած, պնդերես»
սիրտ խօվնալ «հանգստանալ»	<i>սիրտը զովանալ</i> «հոգեկան հանգստություն ձեռք բերել», «բավարարություն ստանալ»
սիրտ կօղրել «տրամադրությունը գցել»	<i>սիրտը կոտրիլ</i> «վշտանալ, վշտահար լինել»
տակնըվըրն էնել «քանդել, փշրել, ավերել»	<i>տակնուվրայ ընել</i> «իրար խառնել», «քանդել, քարուքանդ անել», «ցնցել»
քիթ մըռուք էնել «խռովել, դժգոհել»	<i>քիթ փինչ ընել</i> «դժգոհել, արհամարհել»

Կարնո բարբառի և գրական արևմտահայերենի բառապաշարային առնչությունները

Հ.Մկրտչյանի «Կարնո բարբառը» աշխատության վերջում զետեղված բառարանը պարունակում է 3826 բառային միավոր:

Բարբառի՝ գրական արևմտահայերենի հետ ընդհանուր բառաշերտը.

ա. Բառեր, որոնք գրական արևմտահայերենում և բարբառում (բարբառին հատուկ հնչյունափոխությամբ) ունեն միևնույն ձևը և իմաստը.

ադ (Ախգ., Ախք.) **էդ** (Լեն.)¹¹ «այդ» (արևմտ. «դա, այդ»)
ախել «փակել, կողպել» (արևմտ. **ադխել** «փակել, գոցել, աղիւր
 /շղթան/ գցել»¹²)
աժան (Ախգ.) «էժան» (արևմտ. «ոչ թանկ, էժան, մատչելի»)
ալ (Ախգ., Ախք.), **էլ** (Լեն.) «այլևս» (արևմտ. «1. այլևս, 2. նաև»)
ախպար (Ախգ., Ախք.), **ախպէր** (Լեն.) (արևմտ. **ախպար**, **ադ-
 բար**, /բրբ. խսկց./) «եղբայր»
ադցան «բանջարեղենով կերակուր» (արևմտ. «համեմված
 բանջարեղեն, սալաթ» /Ռ.Ս./)
ամբզոլ «ամպզոլ» (արևմտ. **ամպզոլ** «ամպոտ օրվա ջերմու-
 թյուն»)
ամօլ «գութանի առաջին լուծ եզները» (արևմտ. **ամոլ** «1. ամուս-
 նական գույգ, 2. եզների գույգ»)
ան (Ախգ., Ախք.) **էն** (Լեն.) «այն» (արևմտ. «նա»)
անցընել «անցկացնել»
աշխադիլ (արևմտ. **աշխատիլ**) «աշխատել»
առավօդուն (արևմտ. **առաւոտուն**, **առաւօտուն**) «առավոտյան»
աս (Ախգ., Ախք.) **էս** (Լեն.) «այս» (արևմտ. «սա»)
ավէնալ / էվէնալ (արևմտ. **աւելնալ**) «ավելանալ»
ավէլցընել (արևմտ. **աւելցնել**) «ավելացնել»
բ'անիք // բ'անիք «բանալի» (արևմտ. **բանիք** «բանալի/ներ/»)
բ'անիլ «բանել, աշխատել» (արևմտ. **բանիլ** «աշխատել»)
բ'երօղէք (արևմտ. **բերողէք**) «փոխադրավարձ»

¹¹ Ախալցխայի և Ախալքալաքի խոսվածքներում որոշ արևմտահայե-
 րեն ձևեր նույն կերպ պահպանվել են, իսկ Լենինականի (այժմ՝
 Գյումրի) խոսվածքում չեն պահպանվել: Դա, անշուշտ, պայմանա-
 վորված է այն հանգամանքով, որ հայերենի արևելյան խմբակցու-
 թյան բարբառակիրների հետ Ախալցխայի և Ախալքալաքի բնակիչ-
 ների շփումն ավելի քիչ է եղել, քան գյումրեցիների:

¹² Կարևոր բարբառում բառամիջի **խդ**-ն դառնում է խ, ինչպես **բդխել** –
բխել (տե՛ս Հ.Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 33):

բ'ուխերիզ «պատի մեջ շինված վառարան» (արևմտ. *բուխերիկ* «պատի մեջ շինված վառարան, բուխարի, կրակարան, ծխան»)

բ'ուսնիլ (արևմտ. *բուսնիլ*) «բուսնել»

գ'ամբբռ «գամբի» (արևմտ. *գամբռ* «գամբի, խոշոր շուն»)

գ'անիլ «զգվել» (արևմտ. *գանիլ* «խորշել, զգվել, նողկալ»)

գ'էշ «վատ» (արևմտ. *գէշ* «1. վատ, բացասական, 2. անախորժ, տհաճ, 3. անբարոյական»)

գ'էշնալ «գեշանալ (վատանալ, տգեղանալ)» (արևմտ. *գէշանալ* «1. վատանալ, 2. տգեղանալ»)

գ'էշութեն «գեշություն»¹³ (արևմտ. *գէշութին* «1. գեշի հատկություն, գեշ լինելը, 2. չարություն, վատ արարք»)

գ'էրեզմանոց «գերեզմանոց» (արևմտ. *գերեզմաննոց* «գերեզմանոց, գերեզմանատուն»)

գ'ըննողչէք «գտնելու վարձը» (արևմտ. *գտնողչէք* «կորցրածը գտնելու համար տրվող վարձատրություն»)

գ'իդնալ «գիտենալ» (արևմտ. *գիտնալ* «իմանալ, ճանաչել»)

գ'ոդնալ (արևմտ. *գոդնալ*) «գողանալ»

գ'օդդուզ // **գ'օդդուց** «գաղտնի կերպով» (արևմտ. *գոդտուկ* «գաղտնի, գաղտուկ» /Ռ.Ս./)

գ'օրծողչէք «գործելու՝ հյուսելու վարձը» (արևմտ. *գործողչէք* «գործավորին տրվող վճար, աշխատավարձ»)

դ'ի (արևմտ. *դի*) «կողմ»

դ'օդդդալ (արևմտ. *դոդդալ*) «դողդողալ»

զարնըվիլ «սիրահարվել» (արևմտ. *զարնուիլ* «զարկվել» /Ա.Ս./, «1. ծեծվել, խփվել, հարվել, 2. վիրավորվել, սպանվել, 3. որսացվել, 4. ընդհատվել, 5. (փխբ.) սիրահարվել» /Ռ.Ս./)

զրզվիլ (արևմտ. *զզուիլ*) «զգվել»

էրեկցնել «երևացնել» (արևմտ. *երեկցնել* «երևալ»)

¹³ Ըստ ՀԼԲԲ՝ Մշո, Կարնո և մի քանի այլ բարբառներում բառն ունի «տգեղություն», «վատություն» իմաստները (տե՛ս ՀԼԲԲ, հ. 1, էջ 237)

- էրիզ** (Աից, Աիք.) «այրիկ, ամուսին» /արևմտ. *էրիկ* «ամուսին, տղամարդ»)
- էրթալ** «երթալ» (արևմտ. *էրթալ* 1« գնալ, հեռանալ, 2. հաճախել, 3. վաճառվել»)
- էփոշէք** «էփելու վարձը» (արևմտ. *էփոշէք* «հաց, կերակուր եփելու համար տրված վճար»)
- ըսել** (արևմտ. *ըսել*) «ասել»
- թաթխել** (արևմտ. *թաթխել*) «թաթախել»
- թէթէկնալ** (արևմտ. *թէթէկնալ*) «թէթևանալ»
- թընջուզ** «թնջուկ»¹⁴ (արևմտ. *թնճուկ* «1. խճճված՝ դժվար բաժանելի թել, մազեր, 2. փխբ. խճճված գործ»)
- թուլնալ** «թուլանալ» (արևմտ. «1. փափկել, մեղմանալ, 2. տկարանալ, 3. ուշադրությունը նվազել»)
- թօշմիլ, թօսմէլ, թօսմըշէլ** «թառամել» (արևմտ. *թօշմիլ* «թառամել, թորշոմել»)
- ժողվել** «ժողովել /1. հավաքել, 2. մուրալ» (արևմտ. *ժողվել* «ժողովել, հավաքել»)
- ժոււ** «անգամ» (արևմտ. «1. անգամ, 2. ժամ»)
- ինչկան** (արևմտ. *ինչուան* /հնգ./) «մինչև»
- խստազ** «մաքուր» (արևմտ. *խստակ* «մաքուր, հստակ»)
- լէննալ** (արևմտ. *լայննալ*) «լայնանալ»
- լօղնալ** (արևմտ. *լօզնալ*) «լողանալ»
- լօղընէլ** (արևմտ. *լօզցնէլ*) «լողացնել»
- խածան, խածլան** (արևմտ. *խածան*) «կծան»
- խաղցընէլ** (արևմտ. *խաղցնէլ*) «խաղացնել»
- խաղք** «խայտառակ» (արևմտ. *խաղք* «խայտառակ, ամոթահար, նշավակ» /Ռ.Ս./)

¹⁴ Իմաստը նշված չէ, բայց նկատի ունենալով այն, որ «Փշրանք Շիրակի ամբարներից» գրքում բառը գործածված է «գործի խառն ու անաջող գնալը. ևս թելի ու մազի խառնուել-խճճուելը» նշանակությամբ (տե՛ս էջ 314), պետք է ենթադրել, որ Հ.Մկրտչյանի կազմած բառարանում նույնպես բառը գործածված է այդ նշանակությամբ:

խամճուգ «խամճուկ, տիկնիկ» (արևմտ. *խամաճիկ* «1. տիկնիկ, 2. խրտվիլակ»)

խարջ (արևմտ. *խարճ*) «ծախս»

խելօքնալ «խելոքանալ» (արևմտ. *խելօքնալ* «խելոքանալ»)

խոնարութէն (արևմտ. *խոնարհութիւն*) «խոնարհություն»

կադդիլ (արևմտ. *կատդիլ*) «կատաղել»

կադընդէլ «կադանդել, նվիրել» (արևմտ. *կադանդէլ* «1. Նոր տարին նշել, 2. Կադանդի առթիվ քաղցրավենիք բաժանել»)

կայնիլ «կանգնել»¹⁵

կանանչ «կանաչ»

կարգըդան (արևմտ. *կարկտան, կարկըտան*) «կարկատան»

կարգըդէլ (արևմտ. *կարկտել*) «կարկատել»

կարքէլ (արևմտ. *կարգել*) «ամուսնացնել»¹⁶

կենալ «մնալ, սպասել» (արևմտ. *կենալ* «մնալ, կանգնել»)

կընիգ «կնիկ, կին» (արևմտ. *կնիկ* «կին»)

կըրնալ «կարենալ» (արևմտ. *կրնալ* «կարողանալ, կարենալ»)

կուշտ «կողք»

հայեվար (արևմտ. *հայեվար*) «հայերեն»

հանդըբիլ (արևմտ. *հանդիպիլ*) «հանդիպել»

հասկընալ «հասկանալ»

հավնիլ (արևմտ. *հաւնիլ*) «հավանել»

հավտալ (արևմտ. *հաւտալ*) «հավատալ»

հարսնիք «հարսանիք»

հաքնիլ «հագնել» (արևմտ. *հագնիլ* «հագնվել»)

հէղ (արևմտ. *հեղ*) «անգամ»

¹⁵ Հ.Աճառյանը արձանագրել է 20-րդ դարասկզբին Ախալցխայում *կանգնիլ* «1. ոտքի վրայ կայնիլ. կենալ, 2. կանգ առնել, դադարիլ (քալելէ, գործելէ, բանելէ)...» (ՀԳԲ, էջ 547) (արևմտ. *կանգնիլ* «1. ոտքի ելնել. կանգնել, 2. ուղղվել, տնկվել, 3. շինվել, կառուցվել, հիմնվել» /Ռ.Ս./) ձևի գործածությունը:

¹⁶ ՀԳԲ-ում արձանագրված է նաև Կարնո բարբառում արևմտ. *կար-գուիլ* «ամուսնանալ» ձևի գործածությունը (էջ 556):

հօքնիլ (արևմտ. *յոզնիլ*) «հոգնել»

ղըրգել (արևմտ. *ղրկել*) «ուղարկել»

ճամբա, ճամփա (Ախք., Ախց.) (արևմտ. *ճամբա*) «ճամփա»

ճամբորթ, ճամփորթ «ճամփորդ» (արևմտ. *ճամբորդ* «ճանապարհորդ»)

ձերմրգիլ (արևմտ. *ձերմկիլ // ձերմկել*) «ձերմակել»

ձեփ-ձերմազ «բոլորովին սպիտակ» (արևմտ. *ձեփ-ձերմակ* «բոլորովին ձերմակ») ¹⁷

ճիդ (արևմտ. *ճիտ*) «վիզ, պարանոց»

մադնիք (արևմտ. *մատնիք*) «մատանի»

մանչ «տղա» (արևմտ. «1. արական սեռի երեխա, տղա, 2. փոքրահասակ ծառ») ¹⁸

մեզեն (արևմտ. *մեկեն*) «միանգամից»

մեմալ (արևմտ. *մեյ մըն ալ*) «մեկ էլ»

մեծձրնալ (արևմտ. *մեծնալ*) «մեծանալ»

մօռնալ (արևմտ. *մոռնալ*) «մոռանալ»

հ'առգա «առկա, ատամ» (արևմտ. *ակոալ* «ատամ, սեղանատամ») ¹⁹

հ'առդուն «առավոտուն» (արևմտ. *առտու* «1.առավոտյան, 2. առավոտ»)

հ'երթիզ «երդիկ» (արևմտ. *երդիք* «երդիկ»)

յերզան «երկար» (արևմտ. *երկայն* «երկար, բարձրահասակ»)

նեղնալ (արևմտ. *նեղնալ*) «նեղանալ [նեղ դառնալ]»

¹⁷ Հ.Աճառյանը արձանագրել է 20-րդ դարասկզբին Ախալքալաքում *ձեր-ձերմակ* «բոլորովին սպիտակ» բարդության գործածությունը (տե՛ս նույն տեղում, էջ 712):

¹⁸ Ջավախքի խոսվածքներում գործածվում է նաև *մանչ տղա* բառակապակցությունը (տե՛ս Հ.Խաչատրյան, *Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում*, Ե., 2009, էջ 71):

¹⁹ Ատամը Կարնո բարբառում 2 անվանում ունի՝ *աղամ* և *հ'առգա*, վերջինը արևմտահայերեն *ակոա* ձևն է, որի բաղաձայնները բարբառում դրափոխվել են (տե՛ս Հ.Մ.Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 42):

- շըվարիլ** «շվարել» /մոլորվել/ (արևմտ. *շուարիլ* «շփոթվել, այլայլվել, ապշել»)
- շեննալ** «շենանալ» /Ռ.Ս./
- շիփ-շիդագ** «բոլորովին շիտակ, ուղիղ» (արևմտ. *շիփշիտակ* «բոլորովին շիտակ») ²⁰
- շուք** (արևմտ. *շուք*) «ստվեր»
- ջորնալ** (արևմտ. *յորնալ*) «չորանալ»
- պարբնձիլ** «պապանձել» (արևմտ. *պապանձիլ* «պապանձվել»)
- պագսիլ** (արևմտ. *պակսիլ*) «պակասել»
- պաղ** «սառն» (արևմտ. *պաղ* «ցուրտ, սառույց»)
- պարբել** «պարպել» (արևմտ. *պարպել* «դատարկել, էվակուացնել»)
- պաքել** «պագ(ան)ել» (արևմտ. *պագնել* «համբուրել»)
- պըզըզնալ** (արևմտ. *պզտիկնալ*) «փոքրանալ»
- պըզըիզուց** // **պըզըզուց** «մանկուց» (արևմտ. *պզտիկուց* «փոքրուց, փոքր հասակից»)
- պըղըղիլ** (արևմտ. *պտըտիլ*) «պտտել»
- պիճիլիզ** «փոքրիկ» (արևմտ. *պիճիլիկ* «փոքրիկ, պստիկ» /Ռ.Ս./, *պճիլիկ* «փոքրիկ»), բարբառում գործառում է նաև *պիճի* «փոքր» ձևը ²¹
- ջ'աղջրպան** (արևմտ. *ջաղջպան*) «ջրաղացպան»
- սանդըռ** (արևմտ. *սանտր*) «սանր»
- սեվնալ** (արևմտ. *սեննալ*) «սևանալ»
- սըքվօր** (արևմտ. *սզուոր* /Ռ.Ս./) «սզավոր»
- վայլել** (արևմտ. *վայլել*) «վայելել»
- վերնատուն** «խելք, ուղեղ» (արևմտ. *վերնատուն* փխբ. «գլուխ, խելք, ուղեղ»)

²⁰ Ախալքալաքում 20-րդ դարասկզբին գործածվել է *շիմ-շիտակ* «բոլորովին ուղիղ» բարդությունը (տե՛ս ՀԳԲ, էջ 830):

²¹ Հ.Աճառյանը վկայել է Կարնո բարբառում 20-րդ դարասկզբին *պճիլիկ* և *պիճի* ձևերի՝ նշված իմաստներով գործածությունը (տե՛ս ՀԳԲ, էջ 925):

տաքնալ «տաքանալ»

տաքցնել (արևմտ. *տաքցնել* /Ռ.Ս./) «տաքացնել»

ցածրնալ «ցածանալ» (արևմտ. *ցածնալ* «ցածրանալ»)

ցամքել (արևմտ. *ցամքել*) «ցամաքել»

ցորեզ (արևմտ. *ցորեկ*) «ցերեկ»

փաթալ (արևմտ. *փաթթել*) «փաթաթել»²²

քազել «քակել» (Ախց.) (արևմտ. *քակել* «1. քանդել, արձակել, առանձնացնել, 2. քայքայել, կազմալուծել»)

օջախ (արևմտ. *օճախ*) «օջախ»

ֆօդ (արևմտ. *հոդ*) «այդտեղ»²³

ֆօն (արևմտ. *հոն*) «այնտեղ»

ֆօս (արևմտ. *հոս*) «այստեղ»

Հ.Մկրտչյանի «Կարնո բարբառը» գրքի բառարանում նշված չեն որոշ բառեր, որոնք ներկայացված են գրքի այլ բաժիններում: Չնշվածներից հետևյալները արևմտահայերենում և բարբառում (բարբառին հատուկ հնչյունափոխությամբ) ունեն միևնույն ձևը և իմաստը.

անթին, էնթին (արևմտ. *անդին*) «այն կողմը»

ասթին, էսթին «այս կողմը» (արևմտ. *ասդին* «այս կողմին»

/ասդին-անդին «այս կողմ, այն կողմ»/)

անթիէն, էնթիէն «այն կողմից»

ասթիէն, էսթիէն «այս կողմից» (արևմտ. *ասդիէն-անդիէն* «տակից-գլխից»)²⁴

²² 20-րդ դարասկզբին Կարնո բարբառում բառը գործածվել է նաև «պաշարել» իմաստով («Քաղաքը փաթտեցին») (տե՛ս նույն տեղում, էջ 1060):

²³ Կարնո բարբառում միավանկ բառերի սկզբի *հ* հնչյունը *ռ*-ից առաջ դառնում է *ֆ*, ինչպես *հոդ* – *ֆօդ*, *հոն* – *ֆօն*, *հոս* – *ֆօս*, *հոդ* – *ֆօդ* և այլն (տե՛ս Հ.Մ.Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 35):

²⁴ Նշված 4 զույգ բառերը կազմված են արևմտահայերենին բնորոշ *դի* «կողմ» բառից: Կարնո բարբառում *դ* հնչյունի դիմաց այդ բառերում արտասանվում է *թ* (տե՛ս նույն տեղում, էջ 26):

ասչափ «այսչափ» (արևմտ. «այսքան, այս չափով»)

աստեղ «այստեղ»

անօնք (արևմտ. *անոնք*) «նրանք» /խոնարհված՝ *անօնց* (արևմտ. *անոնց*) «նրանց»

դ'արդրզէլ «դատարկել» (արևմտ. *դարտրկել* «դատարկել, պարպել»)

ըսէլիք (արևմտ. *ըսելիք*) «ասելիք»

խօղնօց (արևմտ. *խոտնոց*) «մարագ, խոտ պահելու տեղ»²⁵

խօշըրնալ «շխոշորանալ» (արևմտ. *խոշորնալ* «խոշորանալ, մեծանալ»)

կանուխ «վաղ» (արևմտ. «վաղ, վաղ առավոտյան»)

կարօղչէք (արևմտ. *կարողչէք*) «կարելավարձ»²⁶

հիմիգուց (արևմտ. *հիմակուց*) «այժմվանից»

նօրէն «դարձյալ» (արևմտ. *նորէն* «նորից, վերստին»)

շադնալ «շատանալ» (արևմտ. *շատնալ* «շատանալ, բազմանալ, ավելանալ»)

հ'առօինէկ «առաջինեակ» (արևմտ. *առօինէկ* «Ժամանակով, տեղով, կարգավ առաջինը, սկզբնականը, առաջնեկ»)

պաք (արևմտ. *պագ*) «համբույր»

պըզդի, պըզդիգ «փոքր» (արևմտ. *պզտիկ* «փոքրիկ»)

քօլը «մոտը» (արևմտ. *քով* «մոտ»)

քուզըդ «քոնը» (արևմտ. *քուկդ* «1. քո, քեզ պատկանած, 2. իբրև գ. քոնը»):

²⁵ Հ.Մկրտչյանի «Կարնո բարբառը» գրքում բառի նշանակությունը ներկայացված չէ: Ըստ ՀԼԲԲ՝ բառը Կարնո բարբառում գործածվել է «մարագ, խոտ պահելու տեղ», նաև «գյուղից դուրս ցանկապատված տեղ՝ խոտի դեզեր դնելու համար» իմաստներով (տե՛ս ՀԼԲԲ, հ. 2, էջ 359):

²⁶ Այս բառի նշանակությունը նույնպես Հ.Մկրտչյանի «Կարնո բարբառը» գրքում տրված չէ: ՀԼԲԲ-ում արձանագրված է Կարնո բարբառում բառի գործածությունը՝ «կարելավարձ» նշանակությամբ (տե՛ս նույն տեղում, հ. 3, էջ 67):

բ. Բառեր, որոնք, գրական արևմտահայերենում և բարբառում դրսևորվելով միևնույն ձևով, ունեն իմաստային նուրբ տարբերություններ.

ազիշ «ակիշ» (արևմտ. *ակիշ* «կեռ, կարթ, ճանկ»)

ալբել «ավերել» (արևմտ. *ալբել* «կարգը խանգարել, հետք չթողնել»)

անգնլ «անդամալույծ» (արևմտ. *անկեալ* «1. տնանկ, 2. վատուժ, 3. բարոյազրկված»)

դ'աթռիլ «հոգնել» (արևմտ. *դադրիլ* «դադարել, հանգստանալ, խզվել»)

խընթիրք «խնդրանք» (արևմտ. *խնդիրք* «դիմում, խնդրագիր»)

հ առաջվանէ «նախօրոք» (արևմտ. *առաջուընէ* «սկզբից, առաջուց»)

հ առջի «առաջի» (արևմտ. *առջի* «1. նախորդ, նախկին, 2. առաջին»)

բ'անթող «աշխատանքի դադար» (արևմտ. *բանթող* «գործադուլ»):

Պետք է նշել, որ «Փշրանք Շիրակի ամբարներից» ժողովածուի (հրատարակվել է մինչև Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելը՝ 1901 թ.) վերջում գետեղված բառարանում վկայված է Կարնո բարբառի Շիրակի տարածաշրջանի խոսվածքներում առկա *բանթող* բառի՝ «գործադուլ, մշակների հանգստանալը, գործելուց դադարելը» իմաստներով գործածությունը²⁷: Հավանաբար հետագայում խորհրդային իշխանության տարիներին, տեղի է ունեցել բառիմաստի նեղացում. բառը կորցրել է «գործադուլ» իմաստով գործածվելու անհրաժեշտությունը, քանի որ բողոքի նման ձևը ընդունված չէր խորհրդային հասարակարգում:

²⁷ Տե՛ս *Փշրանք Շիրակի ամբարներից*, էջ 307:

գ. Բառակազմական տարբերակներ՝ կազմված արևմտահայերենին բնորոշ ձևերից, դարձվածքների, արտահայտությունների, որոնց բաղադրիչներից առնվազն մեկը բնորոշ է միայն արևմտահայերենին.

Չնայած *աղամ* «ատամ» ձևի առկայությանը՝ բարբառում որոշ բաղադրություններում գործածվում է արևմտահայերենին հատուկ *ակոա* բառը: Ներքոբերյալ օրինակները առկա են Հ.Մկրտչյանի «Կարնո բարբառը» գրքի բառարանում.

ազոագոգոշ «շատ բրդած (ճաշ), այնքան բրդած, որ գդալը կանգնի մեջը»

ազոածածիկ «1. առաջին օրը հարսի տանից փեսային և ազաբներին ուղարկած նվերը, 2. հարսին խոսեցնելու համար տրված նվերը, 3. կաշառք»

հ'առգահաղիգ (առկահատիկ [*ակոահատիկ*])

«ատամնահատիկ», ***ազոոշ*** «խոշոր և դուրս գցված ատամներ»:

Ազոածածիկ և *հ'առգահաղիգ* բառերը (Շիրակի տարածաշրջանի խոսվածքներում ու ենթախոսվածքներում՝ *ակոածածիկ* «բերանբացեքի ընծայ, խոստում-կաշառք» և *ակոահատիկ* «երեխեն նոր ատամներ հանելիս հատիկ են անում ու բաժանում բարեկամներին և դրացիներին» ձևերով) արձանագրված են դեռևս 20-րդ դարասկզբին²⁸: Ս.Ամատունին նշում է, որ *ակոածածիկը* Շիրակի հարսանեկան ծեսում այն պարզն է, «որ տալիս են խօսող հարսին: Գիւղերում հարսը չէ խօսում տան անդամների հետ. Նա խոսում է միայն փոքրիկ երեխայոց և իւր փոքր տալի հետ»²⁹: Ս.Ամատունին փաստում է նաև բառի մի այլ հնչատարբերակի գործառությունը Բասենում և Շիրակում՝ *առկածածուն* (*ակոածածուն*) «նորահարսի հօր տանից ուղարկած կերակուրներ, որ ուտում է թագաւորը [փեսան] իւր

²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 305:

²⁹ Ս.Ամատունի, նշվ. աշխ., էջ 14-15:

ընկերների հետ...»³⁰: Հարսանեկան ծեսի այդ բաղադրիչը նկարագրված է 1901 թ. «Ազգագրական հանդես»-ում. «Բասենում և Շիրակում ասում է «առկաժածուն» և լինում է այն երեկոյին, երբ «որսից» կամ նորանց բարբառով «հալթռունքից» մնացած հաւերը ուտում են ազափները և այլ մօտիկ բարեկամները: Այս ընթրիքի ժամանակ թագաւորը չէ կամենում ատամները շարժել, մինչև որ հարսնեղբայրը փող է նուիրում նորան»³¹: Դժվար է ասել՝ այս երկրորդ սովորությունը հետագայում Շիրակում պահպանվել է, թե ոչ, համենայն դեպս Հ.Մկրտչյանի «Կարնո բարբառը» գրքում ներկայացված բառաբանում *ակռաժածուն* բառը բացակայում է:

Պետք է նշել, որ այս բառաձևերը առկա են նաև այլ բարբառներում: Հ.Աճառյանը փաստել է *ակռաժածիկ* բառի գործածությունը Մշո և Վանի բարբառներում, Բուրանիայի խոսվածքում: Մուշում և Վանում բառը գործածվել է «քիչ քանակութեամբ ուտելիք, որ ուտելու համար մարդ հազիւ թէ ակռաները կը շարժէ», Բուրանիայի խոսվածքում՝ «այն նուէրը որ կետուրը կուտայ հարսին՝ առաջին անգամ ճաշի նստելու ժամանակ, որպէսզի հաճեցնէ զայն ճաշին մասնակցելու, առանց անոր հարսը հաց չուտէր (ակռան չի շարժէր)» նշանակություններով, Վանի բարբառում այն ունեցել է նաև «կաշառք, կոծոն» իմաստները («Ակռաժածիկ մը տուր, թող կորչի անպիտանը: «Մինչեւ ակռաժածիկ չտաս չերթար»)³²: Հ.Աճառյանը արձանագրել է նաև Մշո բարբառում *ակռաժածալէ* («այն նուէրը որ հարսին հայրը հարսանիքին օրը կուտայ ազապներու խումբին») բառի գործածությունը: Հ.Աճառյանը գրում է, որ «նախապաշարմունք մը կայ որ եթէ այս նուէրը չտրուի հարսին ու փեսին, ակռաները շուտ կը շարժին /կը ժածան/ ու կը թա-

³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 14:

³¹ Քաջբերունի [Գ.Տէր-Յովհաննիսեան], Ընտանեկան կեանք և սովորություններ. – *Ազգագրական հանդես*, 7-8 (1901), էջ 198:

³² Տե՛ս ՀԳԲ, էջ 65:

փին»³³: Սասունի բարբառում գործածվել է *ազըռժաժ* «կաշառք» ձևը³⁴:

Բայագետի բարբառում գործածվում է *ակըաժաժա* ձևը՝ «յատուկ պատրաստուած կաթաներ, որ պսակին յաջորդ առաւոտը հարսին տունէն նուէր կը դրկուի փեսին» նշանակությամբ, իսկ Համշենի բարբառում և Մշո բարբառի Բաղեշի խոսվածքում՝ *ակըաժաժէք* ձևը՝ «դրամական նուէր... որ հին ժամանակները բոնակալութեան ձեռքը նեղուող ժողովուրդները կուտային բոնակալ այլազգի աղաներուն կամ փաշաներուն, երբ բարեհաճէին ասոնք մէկուն տունը իջնելու և անոր հացն ու հիւրասիրութիւնը վայելելու» իմաստով³⁵:

Նշված բոլոր ձևերը կազմված են արևմտահայերենին հատուկ *ակըայ* «ատամ» և *շարժ* «երերալ» (որ Կարնո, Մշո բարբառներում ձևավորվել է «*ր* ձայնի անկումով... նաև նախաձայնը վերածուելով վերջաձայնի աստիճանին՝ Ալշ. Մշ. *ժաժէլ...* Կր. ... *ժաժ...*») արմատներից³⁶:

Ինչ վերաբերում է *ակըագոզոշ* և *ագոշ* բառերին, ապա դրանք փաստված չեն «Փշրանք Շիրակի ամբարներից» ժողովածուում: Ս.Ամատունին արձանագրել է *ակըակոկոշ* (բնագրում՝ *ակըակոկոշ*³⁷) «լիուլի, գլխուն բրդած կերակուր» բառի գործածությունը Երևանի կամ Արարատյան բարբառի էջմիածնի խոսվածքում, Փարպիի և Օշականի ենթախոսվածքներում («Հլա մի յաղաքիդ ակըակոկոշը կեր պրծիր, յետոյ կերակուր ուզա»)՝³⁸: Նկատի ունենալով, որ նշված խոսվածքները գործառում են Կարնո բարբառի Շիրակի խոսվածքների ու ենթա-

³³ Նույն տեղում:

³⁴ Տե՛ս Վ.Ա.Պետոյան, նշվ. աշխ., էջ 99:

³⁵ ՀԳԲ, էջ 65:

³⁶ ՀԱԲ, հ.3, էջ 503:

³⁷ 20-րդ դարասկզբի գրականությունում արձանագրված բարբառային բառերը ներկայացվում են ինչպես այսօրվա տառադարձամբ, այնպես էլ բնագրային տարբերակով:

³⁸ Տե՛ս Հայոց բառ ու բան, էջ 15:

խոսվածքների հարևանությամբ, ենթադրում ենք, որ խորհրդային տարիներին է այդ բառը թափանցել և ամրագրվել Կարնո բարբառի բառապաշարում: Նույնը պետք է ասել նաև *ազոռ* բառի մասին, որը, ըստ Ս.Ամատունու, 20-րդ դարասկզբին «դուրս ցցուած ատամ» նշանակությամբ գործածվել է Արարատյան գավառում, Մուշում, Բուլանըխում, Կոփում³⁹:

Հ.Մկրտչյանի «Կարնո բարբառը» գրքի բառարանում նշված են նաև գրական արևմտահայերենին բնորոշ բառերով կազմված այլ բառաձևեր.

խսրզէլ «խստակել, մաքրել» (արևմտ. *խստակ* «մաքուր, հստակ» + *ել*)⁴⁰

խսրզջըրէլ «(խստակաջրել) մաքրաջրել» (արևմտ. *խստակ* «մաքուր, հստակ» + *ջուր* + *ել*)

խարջէլ «ծախսել» (արևմտ. *խարճ* «ծախս» + *ել*)

խըծայէլ «վրակար անել, կտորի եզրը ներս դարձրած կարել» (արևմտ. *խծիպ* «կտավի եզրի կարվածք, վրակար» + *ել*)

մենձավոր «մեծավոր» (արևմտ. *մենձ* «մեծ» + *ավոր*)

մենձութեն «մեծություն» (արևմտ. *մենձ* «մեծ» + *ություն*)

միածում «օրվա մեջ միայն մեկ անգամ ուտել» (*մի* + *ա* + արևմտ. *ծում* «անգամ»)

կըշտին հ'ընգնէլ «կողին ընկնել (համառել)»:

Պետք է արձանագրել, որ մեր կողմից դիտարկվող բարբառներից միայն Կարնո բարբառում է, որ կան արևմտահայերենին հատուկ -*շէք* վերջածանցով կազմված բառեր, որոնցից մի քանիսը բերվեցին վերը: Նման բառերից երկուսը արձանագրված չեն Ա.Սարգսյանի և Ռ.Սաքապետոյանի կազմած բառարաններում.

³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 16:

⁴⁰ Հ.Աճառյանը արձանագրել է նաև Կարնո բարբառում *ստրկէլ* (բնագրում՝ *ստկէլ*) «մաքրել, սրբել» ձևի գործածությունը (տե՛ս ՀԳԲ, էջ 401):

ամսողչէք «ամսավճար»

տանսողչէք «բեռը տանելու վարձ»⁴¹:

Այլ բառարաններում փաստված ձևեր՝ կազմված արևմտահայերենին հատուկ բաղադրիչով.

ՀԳԲ.

ջոջիպառալ (բնագրում՝ *ջոջիպառալ*) (Ախց.) «կախարդ պառալ կին»

սանտրեզըլուխ (բնագրում՝ *սանտրեզըլուխ*) «յուպոպ թռչունը»:

«Փշրանք Շիրակի ամբարներից» ժողովածուի բառարան.

ամուանկեալ «ծոյլ, թոյլ, անդամալոյծ, անհոգ», (*ամու* + արևմտ. *անկեալ* «1. տնանկ, 2. վատուծ, 3. բարոյագրկված»)

եապանի մանիշակ «ընտիր վարդագոյն վայրի փոքրիկ ծաղիկ»,

էրկէն ականջ «էշ, աւանակ. ևս յիմար, տգէտ»:

Նույն ժողովածուի «Ազգային առածներ» բաժին.

հարսնիքտուն «հարսանքատուն» (արևմտ. *հարսնիք* «հարսանիք» + *տուն*)⁴²:

⁴¹ Բառը նշված է Հ.Մկրտչյանի «Կարնո բարբառը» աշխատության ոչ թե վերջում գետեղված բառարանում, այլ բառակազմության բաժնում՝ որպես *-չէք* վերջածանց ունեցող կազմություն (տե՛ս Հ.Մ. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 99)՝ առանց բառի նշանակությունը ներկայացնելու: ՀԼԲԲ-ում փաստված է բառի՝ Կարնո բարբառում գործածությունը «բեռը տանելու վարձ» նշանակությամբ (տե՛ս ՀԼԲԲ, հ. 6, էջ 129):

⁴² «Հարսնիքտունը չիտէ, ամանը կը կրէ» (*Փշրանք Շիրակի ամբարներից*, էջ 111):

Անշուշտ, արևմտահայերենին բնորոշ մի շարք բառեր ժամանակի ընթացքում դուրս են եկել Արևելահայաստանում գործառող Կարնո բարբառի բառապաշարից, որը պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ Արևելահայաստանում խորհրդային իշխանության հաստատում, արդյունաբերության, մշակույթի զարգացում, գրական արևելահայերենի ազդեցություն, բառաբարդման նոր ձևեր և այլն: Նկատի ունենալով, որ Արևելահայաստանի խորհրդայնացումից առաջ հրատարակվել են Շիրակի խոսվածքի բառարան, բանահյուսական, ազգագրական նյութեր (խոսքը «Փշրանք Շիրակի ամբարներից» ժողովածուի մասին է), նաև ՀԳԲ-ն և Սահակ վրդ. Ամատունու բառարանը, հնարավոր է վերականգնել բարբառում այժմ չգործառվող արևմտահայերեն որոշ բառեր, ցույց տալ կրած իմաստային փոփոխությունները:

Օրինակ՝ Ս.Ամատունին փաստել է Կարնո բարբառում, մասնավորապես՝ Շիրակի. Ախալցխայի և Ախալքալակի խոսվածքներում *հարկինք* «խնջոյք, պատիւ» բառի գործածությունը⁴³ (նույն ձևով գործառվում է գրական արևմտահայերենում «խնջոյք, մեծարանք» նշանակությամբ⁴⁴): «Փշրանք Շիրակի ամբարներից» ժողովածուի «Ընտանեկան բարք ու սովորոյթք» բաժնի վերջում նշվում է. «Երբ և իցէ, թէ տանը – թէ *հարկինքների* մէջ, ծնողքը գտնուած ժամանակ, «հրաման Աստու չէ», որ նրանց որդիքն ու հարսները իրանց մօտ համարձակ նստեն ու խօսեն. այլ պէտք է ձեռները կոյրծքին դրած միշտ բարև բռնեն և լուռ ու անխօս սպասեն նրանց հրամանը

⁴³ Տե՛ս Ս.Ամատունի, նշվ. աշխ., էջ 388-389:

⁴⁴ Տե՛ս Ա.Սարգսյան, *Արևմտահայերենի բառարան*, էջ 200:

հնագանդութեամբ կատարելու»⁴⁵: Չնայած 20-րդ դարասկզբին բառի գործածությանը՝ Հ.Մկրտչյանի՝ 20-րդ դարակեսին հրատարակված «Կարնո բարբառը» աշխատության բառարանում այն ընդգրկված չէ, որը հիմք է տալիս ենթադրելու, որ բառը այդ ժամանակ արդեն դուրս էր եկել Կարնո բարբառի բառապաշարից: Նույնը կարելի է ասել 20-րդ դարասկզբին Շիրակի (և ոչ միայն Շիրակի) խոսվածքներում գործառող մի այլ բառի մասին՝ *ճաշակ* «օրէնք, հաղորդ, սուրբ հաղորդություն»⁴⁶ (արևմտ. «1. գաղափար, նմուշներ, 2. /եկեղեց./ հաղորդություն»), որը նույնպես ընդգրկված չէ Հ.Մկրտչյանի «Կարնո բարբառը» աշխատության բառարանում: Վերջին հանգամանքը թերևս բացատրվում է նրանով, որ խորհրդային շրջանում ինչպես Կարնո բարբառում, այնպես էլ Խորհրդային Հայաստանի տարածքում գործառող բարբառներում գործածությունից աստիճանաբար դուրս մղվեցին կրոնական բազմաթիվ տերմիններ: Կարնո բարբառում *ճաշակ* բառը այնքան տարածված է եղել, որ օգտագործվել է նույնիսկ անեծքներում: Ահա մի օրինակ Շիրակում 20-րդ դարասկզբին գործածվող անեծքներից. «Մահի հօր շալակը նստես. *ճաշակի* չարժանանաս»⁴⁷:

Ստորև ներկայացվում են Կարնո բարբառում գործածված որոշ բառերի հնչյունական, իմաստային փոփոխությունները, շատ դեպքերում՝ գործառության դադարումը.

⁴⁵ *Փշրանք Շիրակի ամբարներից*, էջ 253:

⁴⁶ Տե՛ս Ս.Ամատունի, նշվ. աշխ., էջ 425:

⁴⁷ *Փշրանք Շիրակի ամբարներից*, էջ 137:

Բառը արևմտահայերենում	Բառը բարբառում	
	Մինչխորհրդային շրջան	Խորհրդային շրջան
1	2	3
անսպեռ «անզգամ, չարաձճի»	<i>անսպեռ</i> (բնագրում՝ <i>անսպեռ</i>) «վիրք, լկտի, անզգամ, անամօթ» ⁴⁸	–
առնուիլ «վշտանալ, առնվել»	<i>առնըվիլ</i> (բնագրում՝ <i>առնուիլ</i>) «նեղանալ, վշտանալ, ցալիլ, վի- րատրիլ»	<i>առնըվել</i> «վիրա- վորվել, վշտանալ»
բանթող «գործադուլ»	<i>բանթող</i> (բնագրում՝ <i>բանթող</i>) «գործադուլ, մշակների հանգստա- նալը, գործելուց դադա- րելը»	<i>բ'անթող</i> «աշխա- տանքի դադար»
գինով	<i>գինով</i> «հարբած»	–
դահ «թարմությունը կորցրած»	<i>դահ</i> «մեծ, մեծահա- սակ, պառուած, հա- սունացած»	–
էրիկ «1. ամուսին, 2. տղամարդ»	<i>իրիկ</i> «էրիկ մարդ, այր, ամուսին, գլխատր»	<i>էրիգ</i> (Ախց, Ախք.) «այրիկ, ամուսին»
ծուռ գալ՝ ածել տալ «շուռ գալ, ածել տալ, շրջագայել»	<i>ծուռ գալ</i> «ման գալ, որոնել, պատել, փնտռել»	–
լկիլ «1. կակղել, 2. հալել, սառույցի ջուր դառնալ»	<i>լրկիլ</i> «ձինին կամ սա- ռույցներուն և կամ սա- ռած կերակուրին տաք- նալով ուշիկ-ուշիկ հա- լիլը (արևէն կամ կրա- կէն). սառած մարմնին տաքնալը»	–

⁴⁸ *Անսպեռ* բառի գործածությունը Շիրակում (նաև Մուշում) փաստել է նաև Ս.Ամատունին (տե՛ս *Հայոց բառ ու բան*, էջ 39):

1	2	3
խածան «կծան»	<i>խածան</i> «կծող, վիրաւորող. ևս ազդեցիկ կամ դիրք ունեցող»	<i>խածան, խածլան</i> «կծան»
խխմիլ «կակդել, թուլանալ /թրջվելով/»	<i>խըխմիլ</i> (բնագրում՝ <i>խխմիլ</i>) «կակդնալ, փխրիլ, ցրուիլ, թմրիլ, ոչնչանալ»	<i>խըխմել</i> «խխմել» (ըստ ՀԼԲԲ՝ Շիրակում՝ «1. Ջրի կամ այլ հեղուկի մեջ երկար մնալուց փափկել, 2. փափկել, ...»)
կուտ «մանր դրամ»	«1. (Կր., Պլ. ...) կորիզ, ... 6. (Ախց., Կր., Պլ. ...) մէկ փարա կամ ընդհանուր առմամբ ստակ, դրամ»	«կորիզ...» ⁴⁹
կամակ «ցանկալի, հաճելի, կամքի համաձայն»	<i>կամակ</i> «սրտուզելիք, հիւանդի ցանկացած ուտելիքը»	—
կնիկմարդ «կինարմատ, կին»	<i>կընիկմարդ</i> (Ախց., Ախք.) «կին էակ»	—
հարկինք «խնջոյք, մեծարանք»	«խնջոյք, պատիւ»	—
ճաշակ «օրէնք, հաղորդ, սուրբ հաղորդութիւն»	<i>ճաշակ</i> «1. գաղափար, նմուշներ, 2. /եկեղեց./ հաղորդություն»	—
ճետ «1. սերունդ, զավակ, 2. աքաղաղ, ճուտ»	<i>ճէտ</i> (բնագրում՝ <i>ճետ</i>) «աքաղաղ, աքլոր, խօրօզ. ևս սերունդ-ժառանգ»	—

⁴⁹ Թեև Հ.Մ.Մկրտչյանի աշխատության բառարանում *կուտ* բառն ընդգրկված չէ, բայց ըստ ՀԲԱ նյութերի՝ բարբառի Լենինականի (այժմ՝ Գյումրի) խոսվածքում և Գետքի ենթախոսվածքում բառը շարունակել է գործառել «կորիզ» իմաստով։ Մեզ որևէ վկայություն հայտնի չէ խորհրդային շրջանում Կարնո բարբառում նշված բառի՝ «մանր դրամ» նշանակությամբ գործածության վերաբերյալ։

1	2	3
յետինք «երեկոյան ժ. 3-4-ի կողմերը, իրիկնադեմ»	հէդինք (բնագրում՝ <i>յետինք</i>) (Ախց.) «կէսօրէն յետոյ եւրոպական 3-4-ին և տաճկական 9-ին ատենները»	–
շիտակ «ճիշտ, ուղիղ, ճիշտն ասած, իսկապես»	շիդակ (բնագրում՝ <i>շիտակ</i>) «ճշմարիտ» ⁵⁰	–
որդնիկ «որդնել, որդնոտել» /Ռ.Ս./	վորթնիկ (բնագրում՝ <i>որդնիկ</i>) «որդերով լցուիլ»	որթընել «որդնել»
պճըլիկ «փոքրիկ»	պըճըլիկ (բնագրում՝ <i>պճլիկ</i>) Կր. <i>պիճի</i> (Ախք.) «փոքր, փոքրիկ, մանրիկ»	պիճիլիզ «փոքրիկ», <i>պիճի</i> «փոքր»
ջոջ «մեծ, մեծավոր»	ջօջ (բնագրում՝ <i>ջոջ</i>) «հաստ, մեծ, մեծահասակ» /գործածական է նաև՝ <i>ջօջօ</i> (բնագրում՝ <i>ջոջո</i>) «պառավ կին, տատ-մամ»	–
ջրտուք «ջուր տալը, ջրելը»	ջըրտուկ (բնագրում՝ <i>ջրտուկ</i>) «ջրելը, մի բանի ջուր տալը, ոռոգումն»	–

⁵⁰ Թեև բառի նշանակությունը ներկայացված չէ, բայց համատեքստից երևում է, որ բառը գործածված է «ճշմարիտ» իմաստով. «*Շիտակ* խօսքը՝ հանաքի միջով կասեն» (*Փշրանք Շիրակի ամբարներից*, էջ 119): ՀԳԲ-ում փաստված է 20-րդ դարասկզբին *շիտակ* բառի գործածությունը Կարնո բարբառում «1. ուղիղ, 2. ճիշտ» իմաստներով (ՀԳԲ, էջ 829):

1	2	3
ստակ «փող, դրամ»	<i>ստագ</i> (բնագրում՝ <i>ստակ</i>) «փող, դրամ» ⁵¹	–
քերել «քորել»	<i>քերել</i> (բնագրում՝ <i>քերել</i>) «քորել» ⁵²	–
քովընտի, քովնտի «թեք, մի կողքի վրա»	<i>քովընտի</i> (բնագրում՝ <i>քովնտի</i>) «ծուռ-թեքուած, մի կողմի ընկած, հարևանցի»	–

Գրական արևմտահայերենի և Կարնո բարբառի բառապաշարներում նույնպես առկա է համանունների որոշակի քանակություն: Ստորև ներկայացվում են այն բառաձևերը, որոնք գրական արևմտահայերենում և Կարնո բարբառում ունեն տարբեր իմաստներ.

Բառը	Իմաստը	
	Արևմտահայերենում	Կարնո բարբառում
1	2	3
ալաֆրանգի	(<i>ալաֆրանգա</i> , <i>ալաֆրանկա</i>) «1. ըստ ֆրանսիականի, եվրոպական տարազով ու ճաշակով, 2. (հեգ.) անվայել կերպով ազատ»	«հակառակ, այլակերպ, տարօրինակ»
ալի	«ալիք»	(Ախց.) «էլի»

⁵¹ «Բեր *ստակ*, որ բանն անէ *խտակ*» (*Փշրանք Շիրակի ամբարներից*, էջ 96):

⁵² Բառը գործածված է «Փշրանք Շիրակի ամբարներից» ժողովածուում զետեղված առածներից մեկում. «Ծոծրակս *քերել*, տեղը կ'բերեմ» (Նույն տեղում, էջ 108): Թեև նույն ժողովածուի բառարանում *քերել* բառի դիմաց նշված է «սրբել-մաքրել, կոկել, հարթել, իստակել» իմաստները (նույն տեղում, էջ 337), բայց առածի համատեքստում բառը, անկասկած, օգտագործված է «քորել» նշանակությամբ:

1	2	3
<i>աղու</i>	«քաղցր, անուշ, լավ»	«թույն»
<i>ամսագան</i>	(<i>ամսական</i>) գ. «ոռճիկ, աշխատավարձ»	աժ. «ամսական»
<i>անդի</i>	«այն կողմը»	(Ախց., Ախք.՝ <i>անդի</i> , Լենինական՝ <i>էնդի</i>) «դրա համար, այդ պատճառով»
<i>անսրվաղ</i>	(<i>անսուաղ</i>) «անոթի, սոված, քաղցած»	«առանց սվաղելու»
<i>ասօր</i>	(<i>ասոր</i>) «սրան»	(Ախք.) «այսօր»
<i>բ'ախալ</i>	(<i>բախալ</i>) «նպարավաճառ»	«մրգավաճառ»
<i>բւնորւն</i>	(<i>բարբառ</i>) «գրական լեզու»	«վարսավիր»
<i>բ'արագ</i>	(<i>բարակ</i>) «մանրագնին՝ նրբագնին կերպով»	«բարակ»
<i>բ'էրան</i>	«օրգան»	«բերան»
<i>գ ալ</i>	(<i>գալ</i>) «առաջիկա, եկող»	«վայրի բույս»
<i>գ էդին</i>	«հիմք, հիմունք, հող»	«գետին»
<i>դ'աթոիլ</i>	(<i>դադրիլ</i>) «հանգստանալ, դադարել, խզվել»	«հոգնել»
<i>դ'արմըննօց</i>	(դարմանոց) «հիվանդանոց, բուժարան»	«հարդանոց»
<i>դ ըողըռալ</i>	(<i>դրդրալ</i>) «դողդալ, աղմկել»	«մրթմրթալ»
<i>դ ըսեցի</i> ⁵³	(<i>դրսեցի</i>) «գավառացի, ոչ Պոլսի բնակիչ»	ըստ երևույթին՝ «ոչ համագյուղացի» ⁵⁴

⁵³ Կարնո բարբառում *ը* հնչյունը *ս*-ից առաջ տվում է, ինչպես *դուրս* – *դ'ուս*, *դրսեցի* – *դ ըսեցի* և այլն (տե՛ս Հ.Մ.Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 39):

⁵⁴ Հ.Մկրտչյանը այդ բառը նշել է ոչ թե բառարանում, այլ բառակազմության բաժնում՝ որպես *-եցի* վերջածանց ունեցող կազմություն (տե՛ս նույն տեղում, էջ 98)՝ առանց բառի նշանակությունը ներկայացնելու: ՀԳԲ-ում բառի՝ Կարնո բարբառում գործածության մասին վկայություն չկա. նշվում է Նոր Նախիջևանում և Համշենում

1	2	3
<i>դ իք</i>	(<i>դիք</i>) «հեթանոս աստվածներ, աստվածներ»	«գառիվեր»
<i>զընդան</i>	(<i>զնտան</i>) «զնդան, բանտ»	«մեծ կարաս» (այս իմաստը վկայված է միայն Կարնո բարբառում)
<i>զով</i>	(<i>զով</i>) «ով»-ի հայց. հոլով	«հով»
<i>զօր</i>	(<i>զոր</i>) «որ» դերանվան հայց. հոլով	«ցերեկ»
<i>զուքել</i>	(<i>զուզել</i>) «միացնել, զուգավորել, ամուսնացնել»	«զարդարել, պճնել» ⁵⁵
<i>թեզ</i>	(<i>թեզ</i>) «գիտական աշխատանք»	«շուտ»
<i>լնգան</i>	(<i>լագան</i>) «ձյունի վրա քայլելու ոտնաման»	«լվացքի աման»
<i>լըման</i>	(<i>լման</i>) «1. լրիվ, լի, 2. անթերի, 3. ճիշտ»	«նման»
<i>խըմխըմ</i>	(<i>խմխըմ</i>) «ապուշ, հիմար»	«ոնգային ձայնով խոսող»
<i>խօլօք</i>	(<i>խեղօք</i>) «հանդարտաբար»	«խելոք?»

համապատասխանաբար «բոլոր անոնք որ նախիջևանցի չեն» և «ոչ համագիւղացի» իմաստներով գործածության մասին (տե՛ս ՀԳԲ, էջ 288): ՀԼԲԲ-ում նույնպես վկայություն չկա Կարնո բարբառում բառի գործածության մասին. այստեղ փաստված է մի քանի այլ բարբառներում բառի՝ «ոչ տեղացի, դրսից՝ ուրիշ տեղից եկած, օտարական» իմաստներով գործածությունը (տե՛ս ՀԼԲԲ, հ. 1, էջ 352): Ենթադրում ենք, որ Կարնո բարբառում բառը գործածվել է «ոչ տեղացի» իմաստով:

⁵⁵ Հ.Մկրտչյանը *զուքել* բառի դիմաց նշել է միայն գրական ձևը՝ «զուգել»: Կարնո բարբառում բառի՝ «զարդարել, պճնել» իմաստով գործածությունը արձանագրել է Հ.Աճառյանը (տե՛ս ՀԳԲ, էջ 324):

1	2	3
խօնջա	(խոնջա) «մատուցարան»	«շրջանաձև ցածր սեղան» ⁵⁶
կառափ	«գլուխ»	«մեծ տախտակ՝ ծեծած կալը հավաքելու համար»
կառափել	«գլխատել»	«կառափով կալը հավաքել»
կրճել	(կճել) «կծել»	«տանիլ, կրել, փոխադրել» ⁵⁷
կուզ	«խաղողի ողկույզ»	«սապատ»
կօշկօռ	(կոշկոռ) «տարբեր առարկաների խոշոր կտորներ, կոշտեր»	«չորացած ցեխ»
հալալ	«ձեռքի ապարանջան՝ կեղծ քարերով»	«հալալ»
մաճառ	«աղով և արևով չորացված ձուկ»	«մաճառ» /ըստ ՀԼԲԲ՝ Կարնո բարբառում՝ «թթու դրած կարմիր ձակնդեղ»
շրդգել	«զարդարել»	«շիտակել»
պրճեղ	«մաս, մասունք, կտոր»	«սմբակ» ⁵⁸
ջ աղբ	(ջաղբ) «տեղատարափ կարճատև անձրև»	«դագաղ»
ջանըմ	(եղանակավորող բառ) անտարբերության, անվստահության արտահայտություն	(դիմելածն) «հոգիս, բարեկամս»

⁵⁶ Հ.Աճառյանը արձանագրել է Կարնո բարբառում *խոնջայ* բառի՝ «տախտակի կոճղ՝ որուն վրայ միս կը ծեծեն» նշանակությամբ գործածությունը (տե՛ս նույն տեղում, էջ 482):

⁵⁷ Նույն տեղում, էջ 579:

⁵⁸ Հ.Աճառյանը արձանագրել է նաև Կարնո բարբառում *պրճեղ* բառի՝ «սխտորի, ընկուզի մէկ բաժանմունքը» իմաստով գործածությունը (տե՛ս նույն տեղում, էջ 916):

1	2	3
<i>փոստալ</i>	«վատ վարքի տեր, անբարոյական (կին)»	«հասարակ կաշուց կարած ոտնաման»

Կարնո բարբառում գործառել կամ գործառում են դարձ-վածքներ, որոնք առկա են նաև գրական արևմտահայերենում: Օրինակներ⁵⁹,

Կարնո բարբառ	Արևմտահայերեն
1	2
<i>անունը կօտրել</i> (Ախց., ՊԼ.) «մէկուն վարկը ձգել»	<i>անունը կոտրել</i> «անվանարկել, հեղինակագրկել»
<i>բերանը մազ բուսնիլ</i> (Ախք.) «շատ ու շատ ըսել»	(բան մը ընելլեն) <i>բերանը մազ բուսնել</i> (ասում են, երբ բազմիցս խրատել են, հորդորել և այլն) <i>բերանը մազ բուսավ</i> [<i>ասելով...</i>] (ասում են մի բան շատ կրկնելու, մեկին շատ հորդորելու առիթով)
<i>բերնի ծամոց ընել, բերնի ծամօն շինել</i> «միևնոյն բանը միշտ ըսել, նիւթի մը վրայ շարունակ խօսիլ»	<i>բերանի ծամոն՝ ծամոց ըլլալ</i> «տևական չարախոսությունների, խոսակցությունների առարկա լինել. խայտառակվել»
<i>դանակ մը զարնես՝ պուտ մը արիւնը չելլեր</i> (Ախք., ՊԼ.) «շատ բարկացած կամ շատ տխուր էր»	<i>դանակ զերնես՝ արին չ'ելլեր</i> «շատ կծծի է, չի տար»
<i>երդում-պատառ ըլլալ</i> (Ախք.) «մեծամեծ երդումներ ընել»	<i>երդում-պատառ ըլլալ</i> «իրեն կոտորելով երդվել, պնդել»
<i>լեզուն բերնին մեջ կապ ընկնել</i> (Ախք.) «պապանձիլ, չկրնալ պատասխան տալ»	<i>լեզուն կապվիլ (շղթայվիլ)</i> «չկարողանալ խոսել՝ արտա- հայտվել, կարկամել»

⁵⁹ Կարնո բարբառից և գրական արևմտահայերենից օրինակները քաղված են համապատասխանաբար՝ ՀԳԲ, էջ 107, 185, 186, 265, 300, 416, 461, 554, 685, 686, 768, 795, 860, 966, 967, 970, 1101, Պ.Ս.Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 65, 246, 894, 621, 372, 427, 540, 586, 656, 835, 840, 932, 970, 1055, 1155, 1159, 1162, 1345:

1	2
խելքը տանիլ (Ախբ.) «խելացնոր դարձնել, խենթեցնել(նաև սիրով, գեղեցկութեամբ նն)»	խելքը տանիլ «հիացնել, հրապուրել, խելագարեցնել»
կատու դառնալ (Ախբ., Պլ.) «սաստիկ վախեն բոլորովին հպատակիլ, խոնարհիլ»	կատու դառնալ «տկարանալ»
ձեռքը ծոցը մնալ (Կր.) «խեղճ, աղքատ ու կարոտ մնալ»	ձեռքը ծոցը թողուլ «խեղճ վիճակի հասցնել»
ձեռքը վրայեն քաշել (Ախց.) «աչքե ձգել, այլ ևս հոգ չտանիլ, չը խնամարկել»	վրայեն ձեռքը քաշել «հովանավորությունից կամ համակրանքից զրկել»
մեղայ գալ (Ախց.) «գոջալ ըրած մեղքը կամ յանցանքը, դարձի գալ»	մեղայի գալ «արածի կամ ասածի համար գոջալ (և ներողություն խնդրել)»
մուխը քիթիս ծակերէն դուրս կուգայ (Ախբ.) «ցաւը սիրտս կը մորմոքէ»	քթեն մուխ ելլել «սաստիկ կսկծալ. խիստ տանջվել, խոր ցաւ զգալ, մորմոքալ»
ոտքեն գլուխ (Ախց.) «շատ, խիստ շատ, 2. ամբողջապէս»	ոտքեն մինչև գլուխ «ամբողջովին», գլուխէն մինչև ոտքի ծայրը «լրիվ»
սիրտ ընել (Ախց., Պլ.) «քաջութիւն ունենալ»	սիրտ ընել «խիզախել, քաջություն ունենալ»
սիրտը արիւն կտրիլ (Ախբ.) «սաստիկ վախենալ»	սիրտը արյունիլ «հոգեկան խոր ցաւ զգալ», «սարսափով բռնվել»
սիրտը փլիլ (Պլ. Ախբ.) «սրտին յուզմունքը դուրս թափելով՝ առատօրէն լալ»	սիրտը փլիլ «փղձկալ» սիրտը պլիլ «հուզվել, սիրտը փուլ գալ»
քար կըտրիլ (Ախց.) «քարանալ, սաստիկ ամբանալ»	քար կտրիլ «քարանալ, ապշած մնալ, ... անշարժանալ»

Կարնո բարբառում արևմտահայերեն դարձվածքների կիրառման մի հետաքրքիր օրինակ ենք գտել Ախալցխայի հայկական թատրոնում խորհրդային տարիներին (1940-ական թթ.) բեմադրված «Անթասիբը» կատակերգությունում, որի հեղինակ-

կը նույն թատրոնի նկարիչ Ա.Զիֆլիկյանն է. «- ... Ախչի օղուլ, շադ ա թէ մանչըս է, հըլը թարսն ու շիդագը չէս ճանչէ, յէս ի՞նչ գիդնամ թէ Թիֆլիսին մէջը բ՛ան-ման ձեռք ցըգած չունի օր նըշանէմ, վերջնա յաշխըրքօվ մեզ խաղք ըլլիմ, էլլարան դ՛անստան դ՛առնամ ինչի՞ օսկի անունըս փուլ էնէմ»⁶⁰: Բերված օրինակում արևմտահայերենին բնորոշ դարձվածքներ են.

խաղք ըլլիմ (արևմտ. *խաղք ըլլալ* «խայտառակվել»⁶¹),
ձեռք ցըգած (արևմտ. *ձեռք ձգել* «մի բանի հասնել», «ձեռք բերել», «վաստակել», «հափշտակել» և այլն⁶²):

Գրական արևմտահայերենի հետ ընդհանուր շերտը զգալի տեղ է գրավում Շիրակի բանահյուսության մեջ: Ստորև բերվում են Շիրակի հարուստ բանահյուսությունից և ազգագրությունից մեր քաղած այն օրինակները, որոնք ներկայացնում են այդ շերտը:

«Փշրանք Շիրակի ամբարներից»

Ազգային առածանի

Թէզ *ճամբայ* ելնողն ու թէզ *կարգվողը* չեն փոշմանի:

Աղջիկը *մենծնայ*, *մենծ* փառքի տիրանայ:

Այսօրուան գործդ վաղուան մի՛ *ձգիր*:

Աչքս քեզի համար *կ'սպաղէր*:

Ապրիլ կայ էրկաթ է, *սպրիլ* կայ արծաթ:

Բարձր *կակուղ* է, ընտուր է տազ արել:

Բեր *ստակ*, որ բանն անէ *խտակ*:

Գէշ դրկիցը մարդի հաջաթի տեր կանէ:

Գէշ խապարը թէզ տեղ կըհասնի:

⁶⁰ Մեջբերվում է ըստ՝ Հ.Մ.Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 116: Տե՛ս նաև՝ Ա.Զիֆլիկյան, *Ընտրանի*, Ե., 2009, էջ 259:

⁶¹ Տե՛ս Պ.Ս.Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 571:

⁶² Տե՛ս նույն տեղում, էջ 821:

Գէշ լեզուն ածելուց սուր է:

Երկու շահուն *չըհանողը* աբասի պտի հանէ:

Երկու շուն կռուելիս *ճամբորդի* բանը կաջողի:

Եփած կերակրի վրա՝ *պաղ* ջուր չեն ածի:

Բնձի համար կրակ, ուրիշի համար ճըրագ:

Բնձնէն ելեր, ինձի լող խըրատ կուտայ:

Կանանչ հաւի *հաւկիթ* խօս չէ՞, որ չճարուի:

Կանանչումն ու կարմրումը կենաս, օխտը պորտէս հեռու մնաս:

Կերան պապերը, թոռների *ակռէքը* հարվաւ:

Կարգուածի աչքով աղջիկ առ, ազապի աչքով ձի:

Խօսքը *մենծիկն* է, ջուրը պստկինը:

Կուժը ջրի *ճամբէն* կը կոտրի:

Ծովից մի գդալ ջուր վերցնես, ի՞նչը *կը պակսի*:

Ծոծրակս *քերեմ*, տեղը կ'բերեմ:

Հարևանիս ընտուր կ'սիրեմ, որ *հաւկթիս* աղ ցանէ:

Հարսնիքն աղբօրս պէտք է, հոգու հացը հօրս:

Հարսնիքտունը չիտէ, ամանը կը կրէ:

Ճամբորդի գնալն իր ձեռն է, դառնալն Աստծու:

Ձի նստաւ՝ Աստուած *մոռցաւ*, ձիուց իջաւ՝ ձին *մոռցաւ*:

Ձու չէր, որ *ակռէքիս* զարկէի:

Մազմանի աշկերտի պէս հետն ու հետը յետ *կերթայ*:

Մահն ընկերով *հարսնիք* է:

Մարդա չ'լման, մարդա չ'հաւան:

Մենծ տուն, *մենծ* ցաւի բուն:

Մենծ մենծ դոներ, սոված շներ:

Հարուստ տներ, *մենծ մենծ* շներ:

Մենծի ասած, պստկի լսած:

Շատ լաւին ման եկողը *գէշին* ռաստ կուգայ:

Շիտակ խօսքը՝ հանաքի միջով կասեն:

Շունը սատկել չունի, *գէշ* մարդը՝ մեռնիլ:

Շուն *խաղցնողի* ձեռը փէտ կըլնի:

Ոչ էնքան *կակուղ* եղիր որ կուլ տան, ոչ էլ չոր՝ որ կուլ *չերթաս*:

Սև ու *ճերմակը*՝ ջուրն անցնելիս բալլու կանէ:

Սրբի խունկ ու մոմն էլ *կ'պակսի*:

Յան փռելը հեշտ է, *ժողվելն* է դժուար:

Յորեն հաց չենք կերել, համա ցորենի արտի *կշտով* անցել ենք:

Փարէմ տուինք խոսեցուցինք, էրկուս կուտանք՝ ձենը չի կտրէ:

Քիչ էին մտել դոնից, մէկն էլ ընկաւ *երդկից*:

Օձի ձագը՝ առաջ պահողը-*մենծացնողին* կը խածէ:

Օրինանքներ

Աստուած դուշմանիս *անառակ տղայ* չտայ:

Աստուած ձէնդ լսէ, *խնդիրքդ* կատարէ:

Աստծու *մենծ* ողորմութիւնով *ապրիս*:

Զօրդ զօրանայ, արևդ *կանանչի*:

Բարով *կանանչ* ու կարմիրդ կապենք:

Ծառդ դալար մնայ, արևդ *կանանչ*:

Հօրդ *օճաղին* հաստատ մնաս:

Հօրդ *օճաղին* ոսկէ սուն դառնաս:

Ճամբիդ փունջ փունջ *մանիշակ* դուրս գայ:

Որ կողմը դառնաս՝ *կանանչի*:

Ուզուրով ու զադամով *հարսնիք* ըլնի:

Զորն էրթաս *կանանչի*, *կանանչդ* ծլի ծաղկի:

Անեծքներ

Խակ ու *ժուռ* մեռնես, ժահրակալես ու խուլխուլա ըլնես:

Ճամբեքիդ փուշ ու տատասկ բուսնի:

Ճիտդ տակդ պրծնի, դարախապարդ գայ:

Ոտներդ *պաղ* ջրով տախտակին լուանամ:

Ոտներդ կոտրի - *անկեալ* մնաս, դուս չգաս:

Երդումներ

Խաչը վկայ, որ ցորենը դու *գողցար* տարար:

Կանանչ մեռոնը գիտենայ, որ դու կոտրեցիր լուծը:

Կանանչ արևդ վկայ, չեմ թողնի *էրթաս*:
 Հալալ *օճադիդ* բարաքեաթը վկայ:

Հանելուկներ

Գլուխս կտրեցին,
 Սրտիկս հանեցին,
 Գինի *խսցուցին*,
 Լեզուս բացուեցաւ: (Փետուրէ գրիչ)

Պապըմ ունիմ, փոր ունի,
 Ոտ չունի, *սկոսայ* ունի,
 Բերան չունի, շատ սուտ է,
 Ինչ որ տաս իրան՝ կուտե: (Սանդերք)

Ճերմակ քոլօգով քուրտը,
 Մէկ սուրու ոչխար *կուշտը*,
 Զօր գիշեր աշխրբին կաշէ: (Լուսին ու աստղեր)

Տասը վըր չորսին, չորսը վըր ծովին,
 Ծովը վըր ծընկան. ով որ չը հաւնի
 Ղուրպան էղնի *ուր կընկան*: (Կովն ու կթողը)

Պզտիկ-պզտիկ մարդիկ,
 Հագել են կաշէ վարտիք: (Փշատ)

Իմ *կոնակ*, քու *կոնակ*,
 Իմ սուլուլիկ, քու դոնակ: (Էրկանք)

Քանի տաշեմ *կը լեննայ*,
 Քանի կտրեմ՝ *կերկննայ*: (Ջրհոր)

Պառաւը *կայնել* է առուին,
Քառսուն կարկտան դօշին: (Կաղամբ)

Աւլեմ *խստկեմ*, կօնսոլ բեգը նստի: (Ջահրայ /Ճախարակ/)

Պզտիկ պատրիան, շեղջով լիքը: (Բերան, ատամներ)

Պզդի երդիք, փչեմ խեղդիք: (Քթախտ)

Սասունի բարբառի և գրական արևմտահայերենի բառապաշարային առնչությունները

Վ.Պետոյանը նշում է, որ իր «Սասունի բարբառը» ուսումնասիրության համար հիմք են ծառայել Բուն Սասունի (Գեղեգուզան, Շենիկ, Սեմալ) և Տալվորիկի բնակիչների խոսվածքները⁶³: Ըստ երևույթին, այդ բնակիչները 1915-1916 թթ. Հայաստան ներգաղթած այն բարբառախոսներն են (Սասունի Գեղեգուզան գյուղից Հայաստան ներգաղթած և Թալինի շրջանի Ահագչի գյուղում հաստատված Գրիգոր Մարգարյան, Սասունի Արխտոնք գյուղից Հայաստան ներգաղթած և Աշտարակի շրջանի Սասունիկ գյուղում հաստատված Հակոբ Մովսիսյան, Տալվորիկից Հայաստան ներգաղթած և Թալինի Շղարշիկ գյուղում հաստատված Թաթար Թագոյան), որոնց մասին գրքում տրված հակիրճ տեղեկությունները ցույց են տալիս, որ հետազոտության շրջանում՝ 1946 թ., նրանք արդեն ավելի քան 30 տարի բնակվելիս են եղել այժմյան Հայաստանի տարածքում: Ըստ այդմ, գրքի վերջում տրված Սասունի բարբառի բառարանի բառապաշարը մենք կարող ենք համարել Հայաստանի Հանրապետության տարածքում գործառող Սասունի բարբառի բառապաշար:

Գրքի առաջաբանից տեղեկանում ենք, որ աշխատության բառարանն ընդգրկում է այբբենական կարգով դասավորված շուրջ 4000 բառ⁶⁴, բայց աշխատության վերջում զետեղված «Սասունի բարբառի բառարանում» ընդգրկված է 2824 բառ: Ըստ երևույթին, աշխատության «Հնչյունաբանություն» և «Ձևա-

⁶³ Տե՛ս Վ.Ս.Պետոյան, նշվ. աշխ., էջ 14:

⁶⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 6:

բանություն» բաժիններում որպես օրինակներ բերելով ոչ թե զուտ բարբառային ձևերը, այլ գրական ձևերի բարբառային հնչաձևերը, հեղինակը դրանք չի ներառել գրքի վերջում զետեղված բառարանում:

Բարբառի՝ գրական արևմտահայերենի հետ ընդհանուր բառաշերտը.

ա. Բառեր, որոնք գրական արևմտահայերենում և բարբառում (բարբառին հատուկ հնչյունափոխությամբ) ունեն միևնույն ձևը և իմաստը.

աբբըջան (արևմտ. *ապրանջան*) «ապարանջան»

ագոս «ատամ» (արևմտ. *ակոսայ* «ատամ, սեղանատամ»)

անդ «այդ» (արևմտ. *անդ* «դա, այդ», նաև՝ *ատ* «այդ»)

անդին «ժամանակ» (արևմտ. *ատեն* «ժամանակ, միջոց, պահ»)

ախլանք «փակ, կողպեք»

անդեզ «1. գեղեցիկ, սիրուն, 2. շատ լավ» (արևմտ. *անդեզ* «լավ, ընտիր, պատվական»)

անդան «սալաթ՝ ադով, պղպեղով, քացախով համեմված բանջարեղեն» (արևմտ. «համեմված բանջարեղեն, սալաթ» /Ռ.Ս./)

ամբկուլ «ամպշոգ, ամպոտ և տաք եղանակ» (արևմտ. *ամպգուլ* «ամպոտ օրվա ջերմություն»)

ամուլ «լծակից, լուծ քաշող զույգ» (արևմտ. *ամուլ* «1. ամուսնական զույգ, 2. եզների զույգ»)

ամբհովանի «հովանոց, ամպհովանոց, զոնտիկ» (արևմտ. *ամպհովանի* «գարդարուն հովանոց»)

անշուշ «աղջամուղջ»

անջինեզ «անդրանիկ /որդի/» (արևմտ. *անջինեզ* «ժամանակով, տեղով, կարգով առաջինը, սկզբնականը, առաջնեկ»)

արբիլ «հարբել» (արևմտ. «գինովնալ, հարբել»)

զանաչիլ «1. կանաչել (բույսի), 2. որդի, սերունդ ունենալ»
(արևմտ. *կանաչիլ* «կանաչել» /Ռ.Ս./)

զառափ «1. գլուխ, 2. ծեծված քուլաշը հավաքող փայտյա երկար
գործիք» (արևմտ. *կառափ* «գլուխ»)

զուշտ «1. կուշտը, մոտը, 2. կուշտ կերած» (արևմտ. *կուշտ*
«կողք»)

էդիջ (արևմտ. *էդիճ*) «էդինջ՝ ծակող, ցավեցնող բույս»

էրան «մեղմ քամի» (արևմտ. *էրան* «սյուք» /Ռ.Ս./)

էրզէն «երկար» (արևմտ. *էրկայն* «երկար, բարձրահասակ»)

ըմբագ «ջուր խմելու աման, գինի խմելու անոթ» (արևմտ.
ըմբան «ըմպան» /Ռ.Ս./)

զարգուզ «զարնված, դիվահար եղած» (արևմտ. *զարկուկ* «դի-
վահար»)

թանալ «թրջել, թացացնել»

ժոււ «1. անգամ, 2. հաց ուտելու ժամանակը» (արևմտ. «1. ան-
գամ, 2. ժամ»)

իռք «եռալ, քոր գալ» (արևմտ. *էռ* «քոր» /Ռ.Ս./)⁶⁵

իս «ես» (արևմտ. «հայց. հոլ. *ես*-ի»)

լաթ «շոր, հագուստ» (արևմտ. «շոր, զգեստ, հագուստ, շորի
ծվեն»)

լական «ուրաձև մի շրջագիծ տախտակ..., որը հագնում են
տրեխի տակից և ազատ քայլում ձյունի վրա՝ առանց
խրվելու» (արևմտ. *լազան* «ձյունի վրա քայլելու ոտնա-
ման»)

լաջ «տղա, զավակ» (արևմտ. *լաճ* «երեխա»)

լիստակ «մաքուր, հստակ» (արևմտ. *լիստակ* «մաքուր, հստակ»)

խըխմիլ «կակղել, փափկանալ» (արևմտ. *խիսմիլ* «կակղել, թու-
լանալ»)

խըման (արևմտ. *խման*) «խմող, գինեմոլ, հարբող»

⁶⁵ ՀԳԲ-ում վկայված է *էռք* «քերվտուք, մարմնի կեռալը, ուժեղ մար-
մաջ» բառի գործածությունը Պոլսի բարբառում /«Մարմինս *էռք*
էլաւ»/ (էջ 296):

խրձիբ «1. կարի մի ձև՝ կտորի մի մասը ներս են ծալում, ապա կարում, 2. ճյուղերից գործված դուռ կամ ցանկապատ» (արևմտ. *խծիպ* «կտավի եզրի կարվածք, վրակար»)

խըպնիլ (արևմտ. *խպնիլ*) «ամաչել»

հյանազ // **հայանազ** «1. հայերեն, 2. հայի պես, հայնակ» (արևմտ. *հայնակ* «1. հայերեն, 2. հայավարի»)

հայիլ «նայել, դիտել»

հիդ (արևմտ. *հեդ*) «անգամ»

ճիդ «աքլոր (փոքր)» (արևմտ. *ճետ* «աքաղաղ, ճուտ»)

չորնալ «1. չորանալ, 2. առանց կնունքի մեռնել» (արևմտ. «չորանալ»)

պանիլ «աշխատել, գործ տեսնել» (արևմտ. *բանիլ* «աշխատել»)

պըլօլել «փաթաթել, հավաքել» (արևմտ. *պլուլել* «փաթաթել, բարուրել» /Ռ.Ս./)

սանդերք «բուրդ և մազ գգելու գործիք» (արևմտ. *սանտերք* «սանդերք, բուրդ և բամբակ գգելու սանդ» /Ռ.Ս./)

ցըվիբ (արևմտ. *ցվիբ*) «քիվ՝ կտուրի այն մասը, որ պատից դուրս է գալիս»

փըռընտալ (արևմտ. *փռնգտալ*) «փռշտալ»:

Վ.Պետոյանի «Սասունի բարբառը» գրքի վերջում գետեղված բառարանում նշված չեն որոշ բառեր, որոնք, որպես օրինակներ, ներկայացված են գրքի այլ՝ «Հնչյունաբանություն» և «Ձևաբանություն» բաժիններում: Դրանցից հետևյալները գրական արևմտահայերենում և բարբառում (բարբառին հատուկ հնչյունափոխությամբ) ունեն միևնույն ձևը և իմաստը.

անդիզ (արևմտ. *ադիկա*) «այդ»

անդտին «այդ կողմը» (արևմտ. *ադդի* «այդ կողմ»)

ան «այն» (արևմտ. *ան* «նա»)

անիկ (արևմտ. *անիկա*) «այն»

անտին (արևմտ. *անդին*) «այն կողմը»

աս «այս» (արևմտ. *աս* «սա»)

ալ «այլևս» (արևմտ. *ալ* «1. այլևս, 2. նաև»)

ասիկ (արևմտ. *ասիկա*) «այս»

աստին «այս կողմը» (արևմտ. *ասդին* «այս կողմը, այստեղ»)

գանանչիլ (արևմտ. *կանանչել*) «կանաչել»

գարգըդիլ (արևմտ. *կարկտել*) «կարկատել»

գորնիլ (արևմտ. *կորնչիլ*) «կորչել»

դարվանդարը (արևմտ. *տարուետարի*) «տարեցտարի»

զիրար «իրար» /հայց. հոլով *իրար*-ի/

էրիլ «[այրվել]» (արևմտ. *այրիլ* «այրվել, բռնկվել»), [*էրուզ* «այրած, այրված»]

էրտիք (արևմտ. *երդիք*) «երդիկ»

էփիլ «[եփվել]» (արևմտ. *եփիլ* «եփվել»), [*էփուզ*, *էփուզ* «եփած, թխած»]

թըռնիլ (արևմտ. *թռիլ*) «թռչել»

թուլնալ «թուլանալ» (արևմտ. «1. փափկել, մեղմանալ, 2. տկարանալ, 3. ուշադրությունը նվազել»)

թոռմիլ (արևմտ. *թոռմիլ*) «թառամել»

իճնալ (արևմտ. *իջնալ*) «իջնել»

լէննալ (արևմտ. *լայննալ*) «լայնանալ»

հանդըֆիլ (արևմտ. *հանդիպիլ*) «հանդիպել»

հանճալ (արևմտ. *հաջալ*) «հաչել»

հարսնիք «հարսանիք»

հավնիլ (արևմտ. *հաւնել* // *հաւնիլ*) «հավանել»

հունսի «այնտեղ, հոն» (արևմտ. *հունսա* «այնտեղ»)

հոս (արևմտ. *հոս*) «այստեղ»

հոդ (արևմտ. *հոդ*) «այդտեղ»

հոն (արևմտ. *հոն*) «այնտեղ»

մէզըզմէզու (արևմտ. *մէկզմէկ* // *մէկզմէկու*) «մեկմեկու»

մէռնիլ (արևմտ. *մէռնիլ*) «մեռնել»

մինազ «միայնակ» (արևմտ. *մինակ* «1. մենակ, առանձին, 2. միայն, սուսկ»)
շադնալ «շատանալ» (արևմտ. *շատնալ* «շատանալ, բազմանալ, ավելանալ»
ջանչրնալ (արևմտ. *ճանչնալ*) «ճանաչել»
վայլիլ (արևմտ. *վայլիլ*) «վայելել»
տաքնալ «տաքանալ»
տեղնիլ (արևմտ. *դեղնիլ*) «դեղնել»
փաթթիլ (արևմտ. *փաթթել*) «փաթաթել»
փախնիլ (արևմտ. *փախչիլ*) «փախչել»
քառսուն «քառասուն»
քիչնալ «քչանալ»
օրավուր (արևմտ. *օրեօր*) «օրեօր»:

Գրքում Սասունի բարբառով ներկայացված բանահյուսական որոշ նյութերում և գրական գործերում («Նմուշներ Սասունի բարբառից») նույնպես գործածված են գրքի բառարանում չարձանագրված բառեր, որոնք գրական արևմտահայերենում և բարբառում (բարբառին հատուկ հնչյունափոխությամբ) ունեն միևնույն ձևը և իմաստը.

բրզդիզ (արևմտ. *պզտիկ*) «փոքրիկ»
ժողվել (արևմտ. *ժողվել*) «հավաքել»,
խաձնիլ «կծել» (արևմտ. *խաձնել* «1. կծել, 2. ատամներով կտրել, պոկել, 3. խայթել»)
խօրոզ, խօրոշիզ (արևմտ. *խորոտ, խորոտիկ*) «գեղեցիկ, սիրուն»⁶⁶

⁶⁶ Թեև բառի նշանակությունը գրքում ներկայացված չէ, բայց համատեքստից երևում է, որ բառը գործածված է «գեղեցիկ, սիրուն» իմաստով, ինչպես գրական արևմտահայերենում. օրինակ՝ «Դէսնէք վ՞իր յարն էր *խօրոշիզ*, /Ըմ յար կըց քումն էլ *խօրոշիզ*» (Վ.Ա.Պետոյան, նշվ. աշխ., էջ 71). Մեկ օրինակ ևս.

շընութին «[շնանալը]» (արևմտ. *շնութին* «1. շան հատկություն, բնություն, 2. նենգություն, խարդախություն, 3. խորամանկություն, 4. շնանալը, անառակություն, 5. /գրբ./ կռապաշտություն» /Ռ.Ս./)⁶⁷

շինել «սարքել» (արևմտ. *շինել* «անել, սարքել»)

պամբազ (արևմտ. *բամպակ*) «բամբակ»

ջամբա (արևմտ. *ճամբա*) «ճամփա»

փարա «դրամ»

բով (արևմտ. *բով*) «մոտ»

բ. Բառեր, որոնք, գրական արևմտահայերենում և բարբառում դրսևորվելով միևնույն ձևով, ունեն իմաստային նուրբ տարբերություններ.

ազիշ «երկաթե թաթավոր գործիք՝ կրակը խառնելու համար» (արևմտ. *ակիշ* «կեռ, կարթ, ճանկ»)

ասղընզիլ «ասեղով ծակծկել, ծակծկել» (արևմտ. *ասղնտիլ* «ասեղի ծակծկոցներ զգալ» /ասղնտուք «ասեղի ծակծկոց»/)

« ...

Այ դղա, դղա, շան տղա,

Կնա վերի թաղն արը,

Սիրե զ/*խօրոյն* ու արը:

So դղա, դղա, լանգարի,

Շլվար, շարիգ ժանգանի,

Կնա ցածր թաղն արը,

Սիրե զ/*խօրոյիզն* արը»

(նույն տեղում, էջ 73):

⁶⁷ Այստեղ նույնպես բառի նշանակությունը ներկայացված չէ, բայց համատեքստից պարզ է, որ բառը գործածված է «անառակություն» իմաստով.

«Յորին ըմ ցանը էլի յն բառը,

Բզդիզըմ սիրը չըմ գնոնն թարգը,

Շնութին գանէ չըմ խիմշը գնրգը»

(նույն տեղում, էջ 65):

գըթխսի «1. նվեր տրված մի բաժակ գինին, 2. նոր հարսին տրվող որևէ նվեր» (արևմտ. *կթղայ* «փոքրիկ գավաթ» /Ռ.Ս./)

տսնհ «թարմությունը կորցրած» (արևմտ. *դահ* «հնացած, տարիքն առած»)

տսնհսնալ «հնանալ, թարմությունը կորցնել» (արևմտ. *դահա-նալ* «հնանալ, ծերանալ, տարիքն առնել»)

սանտրր «ջուլիակի գործիք, որի ամեն մի ճեղքից մի-մի թել է անցնում գործվելու համար» (արևմտ. *սանտր* «սանր»):

գ. Բաղադրություններ՝ կազմված արևմտահայերենին հատուկ բառերից, դարձվածքների, որոնք բնորոշ են արևմտահայերենին, և արտահայտություններ, որոնց բաղադրիչներից առնվազն մեկը միայն արևմտահայերենին բնորոշ բառ է: Ներքոբերյալ օրինակները առկա են Վ.Պետոյանի «Սասունի բարբառը» գրքի բառարանում.

ագոսի-բըշխիկ «ատամ փորելիք, ատամ մաքրելու շյուղ» (արևմտ. *ակոա* «ատամ» + *բշխիկ*)⁶⁸

ագոսստրիկ «նոր՝ առաջին ատամը հանող երեխայի գլխին չամիչ, խաշած ցորենի հատիկ թափելը» (արևմտ. *ակոա* «ատամ» + *տրիկ*)

ագըռժաժ «կաշառք» (արևմտ. *ակոա* «ատամ» + ժաժ «շարժ»)

ագըռմէճ «ատամների միջև» (արևմտ. *ակոա* «ատամ» + *մէջ*)

անագոա «անատամ. ատամնագուրկ (մարդ)» (*ան* + արևմտ. *ակոա* «ատամ»)

անժում «անժամանակ» (*ան* + արևմտ. *ժում* «ժամ»)

⁶⁸ Ռ.Սաքապետոյանը բառը (*ակոափոշխիտ* «ատամ մաքրելու փայտիկ» հնչաձևով) ներառել է իր կազմած արևմտահայերենի բառարանում (տե՛ս Ռ.Կ.Սաքապետոյան, Արևմտահայերենի դասագիրք, էջ 318)

աշմշիլ «մթնշաղել, մթնաժամել» (արևմտ. *աշմուշ* «աղջամուղջ» + *ել*)

արբուզ «հարբած, խմած»

գըշտանուց «1. կողակից, 2. կողքին ամրացված փայտ» (արևմտ. *կուշտ* «կողք» + *անոց*)

գըշտնցավ «կողացավ» (արևմտ. *կուշտ* «կողք» + *ա* + *ցավ*):

Որոշ բաղադրություններ, որպես օրինակներ, նշված են Վ.Պետոյանի «Սասունի բարբառը» գրքի այլ բաժիններում.

հաղ-հաղ «ժամանակ առ ժամանակ, մերթ ընդ մերթ» (արևմտ. *հեղ* «անգամ»)

հուսկուհիդ «այսուհետև» (արևմտ. *հուսկ* «վերջին, վերջում» + *հիդ*)

շաղհաղ «շատ անգամ» (*շատ* + արևմտ. *հեղ* «անգամ»)

քանը հաղ «քանիցս» (*քանի* + արևմտ. *հեղ* «անգամ»)

խաձախաձ անել «կծոտել» (արևմտ. *խաձխձել* «կծոտել» ձևի *խաձխաձ* բայարմատով կազմված հարադրություն).

«Էլա հեռուն մեզացը

Սասուն գէլնէր պարագ ձուխ,

Կացը գուգէք թաժա հաց,

Շնիր *զանեն խաձախաձ*»⁶⁹

աշվընիր (արևմտ. *աշուըներ*) «աչքեր».

«...

Փէշդմալ կօտէն փրցիր ըմ,

Սիվ *աշվընիր* սրալիր ըմ»⁷⁰:

Գրական արևմտահայերենի և Սասունի բարբառի բառապաշարներում նույնպես առկա է համանունների որոշակի քանակություն: Ստորև ներկայացվում են ձևեր, որոնք գրական

⁶⁹ Նույն տեղում, էջ 76:

⁷⁰ Նույն տեղում, էջ 77:

արևմտահայերենում և Սասունի բարբառում ունեն տարբեր իմաստներ.

Բառը	Իմաստը	
	Արևմտահայերենում	Սասունի բարբառում
1	2	3
<i>անք</i>	(ալք) «խորք»	«չար ոգի՝ առասպելական կնոջ կերպարանքով»
<i>անառագ</i>	«լիրբ, անամոթ /մարդ/»	«չար, չարաճճի»
<i>անատակ</i>	«անկարող, անճարակ»	«անդունդ, դժոխք»
<i>անդ</i>	«այնտեղ, նույն տեղում»	«երդում»
<i>անսօր</i>	(ասոր) «սրան»	«այսօր»
<i>թալթըլիլ</i>	«թալթլվել» (թալթլում «թալլտալ»)	«թուլանալ, երերալ, թալկել»
<i>թացան</i>	«1. երկրորդ ճաշատեսակի /մսեղենի ու ձկնեղենի/ վրա լցվող թանձրուկ, 2. անարգ խոսքեր, հայհոյանք»	«կաթնեղենի բոլոր տեսակները»
<i>թեզ</i>	«գիտական աշխատանք»	«1. բարկ, կծու, 2. սապոն եփելու ջուր»
<i>լոլիզ</i>	(լոլիկ) «պոմիդոր»	«փոքրիկ կլոր թխված հաց»
<i>խանձիլ</i>	«1. սաստիկ փափագել, 2. վատ սովորության տեր դառնալ»	«?» (խանձ «այրված, այրվել»)
<i>խըլխըլուզ</i>	(խլխլուկ) «թեթևամիտ»	«կիսաքանդ, փլվող, քանդվող»
<i>խըձքիլ</i>	(խձպիլ) «ամփոփվել, ինին իր մեջ կծկվել»	«1. կարել, 2. ճյուղերով գործել»
<i>խըշքիլ</i>	«չորանալ /տերևների/»	«մանրանալ, փշրվել»
<i>ծորիլ</i>	«ծորել»	«խոտ հնձել և գետնի վրա տարածել չորանալու համար»

1	2	3
<i>կուզ</i>	«խաղողի ողկույզ»	«1. սապատ, 2. մեզ»
<i>կուռ</i>	«կուշտ»	«1. ջրթափ խողովակ, 2. գուն»
<i>ծըռիլ</i>	«ծովել»	«1. գժվել, 2. սիրահարվել, 3. ըմբոստանալ»
<i>շիք</i>	«շքեղ, պերճ»	«1. շեք, քայլ, 2. երկարություն չափ՝ մի քայլ»
<i>փակիլ</i>	(<i>փակիլ</i> // <i>փակշիլ</i>) «փակչել, կառչել»	«փակել»

Մշո բարբառի և գրական արևմտահայերենի բառապաշարային առնչությունները

Մշո բարբառին վերաբերող՝ Ս.Հ.Բաղդասարյան-Թափալցյանի ուսումնասիրության մեջ երկու բաժնով՝ «Գրաբար-Մշո բարբառ» (էջ 244-274), «Բառարան Հավելվածի նյութերում հանդիպող բարբառային բառերի» (էջ 237-243), ներկայացված է նաև Մշո բարբառի բառապաշարը⁷¹, որը, անշուշտ, ընդգրկում է Մշո բարբառային բառերի մի փոքր մասը (290 միավոր): Երկու բաժիններում ընդգրկված բառերի քանակը միասին կազմում է 2110 միավոր:

Բարբառի՝ գրական արևմտահայերենի հետ ընդհանուր բառաշերտը.

ա. Բառեր, որոնք գրական արևմտահայերենում և բարբառում (բարբառին հատուկ հնչյունափոխությամբ) ունեն միևնույն ձևը և իմաստը.

աբբասպրեղ «ապսպրել, հանձնարարել» (արևմտ. *ապսպրել* «պատվիրել, դուրս գրել»)

⁷¹ Տե՛ս Ս.Հ.Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., էջ 237-274:

աբրըջան «ապարանջան» (արևմտ. *ապրանջան* «ապարանջան»)

աղըխել «փակել, կողպել, ախը գցել» (արևմտ. *աղիսել* «փակել, գոցել, աղիսը /շղթան/ գցել»)

ամօլ[ք] «լուծ քաշող երկրորդ եզր» (արևմտ. *ամոլ* «1. ամուսնական գույգ, 2. եզների գույգ»)

արժան «արժանի» (արևմտ. «1. արժանի, 2. վայել, պատշաճ»)

բալնիք // **բալնիս** «բանալի» (արևմտ. *բանլիք* «բանալի(ներ)»)

բառնալ «բարձրացնել» (արևմտ. *բառնալ* 1.«բարձրացնել, 2. ջնջել»)

բըրագ «բարակ, ոչ հաստ, նուրբ» (արևմտ. *բարակ* «մանրագնին՝ նրբագնին կերպով»)

բուշտ «միզափամփուշտ, միզապարկ» (արևմտ. *բուշտ* «միզափամփուշտ»)

գըղօրեկ «գլորել» (արևմտ. *գլտորել* «գլորել»)

գըղնալ «գտնել» (արևմտ. *գտնալ* «գտնել»)

գինալ «գիտենալ, իմանալ» (արևմտ. *գիտնալ* «իմանալ, ճանաչել»)

գօղնալ «գողանալ» (արևմտ. *գողնալ* «գողանալ»)

գօղտուզ «գաղտուկ» (արևմտ. *գողտուկ* «գաղտնի, գաղտուկ» /Ռ.Ս./)

դախ (արևմտ. *դահ*) «թարմությունը կորցրած»

դըրագի (արևմտ. *դրագի*) «հարևան»

ընդ են // **ինադ են** «այնտեղ, հենց այնտեղ, նույն տեղը» (արևմտ. *անդեն* «իսկույն, նույն տեղը»)

թըրթըվնալ (արևմտ. *թեթենալ*) «թեթևանալ»

թուլնալ «թուլանալ» (արևմտ. «1. փափկել, մեղմանալ, 2. տկարանալ, 3. ուշադրությունը նվազել»)

ժողվել «ժողովել» (արևմտ. *ժողվել* «ժողովել, հավաքել»)

ժուս «անգամ, ժամանակ» (արևմտ. *ժուս* «1. անգամ, 2. ժամ»)

իրիգ «ամուսին» (նաև՝ *իրգաթող* «ամուսնալուծ») (արևմտ. *էրիկ* «1. ամուսին, 2. տղամարդ»)

լօղնալ // **լօղընալ** «լողանալ» (արևմտ. *լոզնալ* «լողանալ»)

խախք «խայտառակություն» (արևմտ. *խաղք* «խայտառակ, ամոթահար, նշավակ» /Ռ.Մ./)

խէո «նախանձ» (արևմտ. *խէո* «1. անհնազանդ, 2. ըմբոստ, 3. նախանձ»)

կանանչ «կանաչ»

կարգըդան (արևմտ. *կարկըտան*) «կարկատան»

կարգըդէլ (արևմտ. *կարկտէլ*) «կարկատել»

կարօդնալ (արևմտ. *կարօտնալ*) «կարոտել»

կարքէլ (արևմտ. *կարգէլ*) «ամուսնացնել»

կըծծի // **քըցիք** «ժլատ» (արևմտ. *կծծի* «ժլատ, գծուծ»)

կընիգ (արևմտ. *կնիկ*) «կին»

կուշտ «կողքին» (արևմտ. «կողք»)

հայէվար (արևմտ. *հայէվար*) «հայերեն»

հաչալ (արևմտ. *հաջալ*) «հաչել»

հասուկ «1. հասած, 2. հասունացած, արբունքի հասած (տղա կամ աղջիկ)» (արևմտ. «հասուն»)

հասկընալ «հասկանալ»

հարսնիք // **հարսնիս** «հարսանիք»

հիմ «հիմք»

հոք/կ (արևմտ. *հոգ*) «հոգս»

ճանչընալ (արևմտ. *ճանչնալ*) «ճանաչել»

ճէդ «աքաղաղ» (արևմտ. *ճէտ* «1. սերունդ, զավակ, 2. աքաղաղ, ճուտ»)

մանիշագ (արևմտ. *մանիշակ*) «մանուշակ»

մինազ // **միջագ** «1. մենակ, առանձին, 2. միայն, լոկ, սոսկ» (արևմտ. *մինակ* «1. մենակ, առանձին, 2. միայն, սոսկ»)

մօռնալ (արևմտ. *մոռնալ*) «մոռանալ»

հ'անքան «ուշ» /նաև՝ *հ'անքընալ* «ուշանալ»/ (արևմտ. *անագան* /հնց. գրք./ «ուշ, տարաժամ»)

հ'երթիգ // **հ'երթիս** (արևմտ. *երդիկ*) «երդիկ»

հ'երգէն «երկար» (արևմտ. *երկայն* «երկար, բարձրահասակ»)

հ'երգընցուցել (արևմտ. *երկարցնել, երկարցուցել*) «երկարացնել»

հ' էրզրննալ «երկարանալ» (արևմտ. *երկննալ* 1. «երկարանալ»,
2. «ամբողջ հասակով պառկել»)
նեղնալ // **նեղենել** (արևմտ. *նեղնալ*) «նեղանալ»
շալգել (արևմտ. *շալկել*) «շալակել»
շաղնալ «շատանալ» (արևմտ. *շատնալ* «շատանալ, բազմանալ,
ավելանալ»)
շիդագ «շիտակ, ուղիղ, ճիշտ» (արևմտ. *շիտակ* «ճիշտ, ուղիղ,
ճիշտն ասած, իսկապես»)
չորնալ (արևմտ. *չորնալ*) «չորանալ»
պրդոդ «պտույտ» (արևմտ. *պտոյտ* «զբոսանք, էքսկուրսիա»)
ջախչրբան (արևմտ. *ջաղջպան*) «ջրաղացպան»
ջոջ «մեծ» (արևմտ. *ջոջ* «մեծ, մեծավոր»)
սանդրը (արևմտ. *սանտր*) «սանր»
սանդրըրել (արևմտ. *սանտրել*) «սանրել»
փափաք (արևմտ. *փափագ*) «փափագ»
փոխպաղ (արևմտ. *փողպատ*) «փողկապ»
քառսուն «քառասուն»:

բ. Բառեր, որոնք, գրական արևմտահայերենում և բարբառում դրսևորվելով միևնույն ձևով, ունեն իմաստային նուրբ տարբերություններ.

բերողչէք «բերելավարձ» (արևմտ. *բերողչէք* «փոխադրավարձ»)
խընթիրք «խնդիր» (*խնդիրք* «դիմում, խնդրագիր»)

գ. Բառակազմական տարբերակներ՝ կազմված արևմտահայերենին բնորոշ ձևերից, դարձվածքներ և արտահայտություններ, որոնց բաղադրիչներից առնվազն մեկը բնորոշ է միայն արևմտահայերենին.

ագոնք առվել «թթու բան ուտելուց ատամները ազդվել»
աղէնահաս «շուտ հասնող, նեղ վիճակում հասնող» (արևմտ.
ատէն «ժամանակ» + *ա* + *հաս*)
ժուռ հ'իքալ «զբոսնել, որոնել»

հ'անթէտակ «թնատակ» (արևմտ. *անութ* «թնի տակ, շապիկի թնի տակը» + *ա* + *տակ*):

Գրական արևմտահայերենի և Մշո բարբառի բառապաշարներում նույնպես առկա է համանունների որոշակի քանակություն: Ստորև ներկայացվում են այն բառաձևերը, որոնք գրական արևմտահայերենում և Մշո բարբառում ունեն տարբեր իմաստներ.

Բառը	Իմաստը	
	Արևմտահայերենում	Մշո բարբառում
<i>անառագ</i>	(<i>անառակ</i>) «չար, չարաճճի»	«անառակ»
<i>անուշ</i>	(<i>անոյշ</i>) «1. մուրաբա, 2. լիմոնադ»	«անուշ»
<i>բերել</i>	(<i>բերել</i>) «աճեցնել»	«բերել»
<i>ծագ</i>	«ծայր, եզր, սահման»	«ծակ»
<i>լազան</i>	«ձյան վրա քայլելու ոտնաման»	«կոնք, տաշտ»
<i>ուխտ</i>	«պետությունների միություն, դաշինք»	«նպատակադրում, երդումով տված խոսք, անխախտ խոստում»

Մշո բարբառում նույնպես գործառել կամ գործառում են դարձվածքներ, որոնք առկա են նաև գրական արևմտահայերենում: Ահա մեկ օրինակ⁷².

Մշո բարբառ	Արևմտահայերեն
արհունը վրան եռ գալ «սիրել, սիրահարուիլ»	<i>արյունը մեկի վրա տաքնալ</i> «մեկին սիրահարվել»

⁷² Կարևոր բարբառից և գրական արևմտահայերենից օրինակները քաղված են համապատասխանաբար՝ ՀԳԲ, էջ 150, Պ.Ս.Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 195:

Մեր ունեցած նյութի սահմաններում ներկայացնենք գրական արևմտահայերենում և ՀՀ տարածքի արևմտահայ բարբառային խոսքում գործառոդ ընդհանուր բառաշերտը.

Բառը	Դիադիկի բարբառ	Կարնո բարբառ	Սասունի բարբառ	Մշո բարբառ	Հնդա-մենը
1	2	3	4	5	6
ասյրանջան	–	–	աբրրջան	աբրրջան	2
ագուցել ագուցանել	խաբցուցել	–	–	–	1
ադ	–	ադ	անդ	–	2
ադդի	–	–	անդտին	–	1
ադիկա	–	–	անդիգ	–	1
ատեն	–	–	ադին	–	1
ադխել	–	ախել	–	ադրխել	2
աժան	–	աժան	–	–	1
ալ	–	ալ	անլ	–	2
ախլանք	–	–	ախլանք	–	1
ախպար ադբար	–	ախպար	–	–	1
ակոռայ	ակոռա	հ' առգա	ագոն	–	3
ակիշ	ակիշ	ագիշ	ագիշ	–	3
ադէկ	ադէկ	–	ադէգ	–	2
ադցան	–	ադցան	ադցան	–	2
ամոլ	–	ամօլ	ամոլ	ամօլ[ք]	3
ամպգոլ	–	ամբգոլ	ամբկոլ	–	2
ամպհովանի	–	–	ամբհովանի	–	1
ան	–	ան	ան	–	2
անազան	–	–	–	հ' անքան	1
անդէն	–	–	–	ընդ էն, ինադ էն	1
անդին	–	անթին	–	–	1
անկեալ	–	անգանլ	–	–	1
անոնք	–	անօնք	–	–	1
անցընէլ	–	անցընէլ	–	–	1
աշխատիլ	–	աշխադիլ	–	–	1

1	2	3	4	5	6
աշմուշ	–	–	աշմուշ	–	1
ապսպրել	–	–	–	աբրսպրել	1
առաջուրնէ	–	հ' առաջւանէ	–	–	1
առաւտտուն, առաւօտուն	–	առաւօդուն	–	–	1
առջի	–	հ' առջի	–	–	1
առջինէկ	–	հ' առջինէկ	առջինէգ	–	2
առտու	–	հ' առդուն	–	–	1
աս	–	աս	անս	–	2
ասդին	–	ասթին	անստին	–	2
ասիկա	–	–	անսիկ	–	1
ասդնտիլ	–	–	ասդրնգիլ	–	1
ասչափ	–	ասչափ	–	–	1
աստէղ	–	աստէղ	–	–	1
աւելնալ	հէվըլնալ	ավէլնալ / էվէլնալ	–	–	2
աւելցնել	–	ավէլցրնէլ	–	–	1
արբիլ	–	–	արբիլ	–	1
արժան	–	–	–	արժան	1
արել	–	ավրել	–	–	1
բամպակ	–	–	պամբագ	–	1
բանթող	բանթող	բ' անթող	–	–	2
բանիլ	–	–	պանիլ	–	1
բանլիք	–	բ' անլիք, բ' անլիք	–	բ' անլիք, բ' անլիք	2
բանիլ	–	բ' անիլ	–	–	1
բառնալ	–	–	–	բ' աննալ	1
բարակ	–	–	–	բ' րրագ	1
բերողչէք	–	բ' էրողչէք	–	բ' էրողչէք	2
բուխերիկ	–	բ' ուխերիգ	–	–	1
բուշտ	–	–	–	բ' րուշտ	1
բուսնիլ	–	բ' ուսնիլ	–	–	1
գաղտուկ	–	գ' օղդուկ // գ' օղդուց	–	գ' օխտուկ	2
գաճ	գ' անճ	–	–	–	1
գամ	գ' անմ	–	–	–	1

1	2	3	4	5	6
զամբռ	–	զ'ամբբռ	–	–	1
զանիլ	–	զ'անիլ	–	–	1
զէշ	–	զ'էշ	–	–	1
զէշանալ	–	զ'էշընալ	–	–	1
զէշութիւն	–	զ'էշութէն	–	–	1
զերեզմաննոց	–	զ'երեզմընոց	–	–	1
զիտնայ	–	զ'իդնայ	–	զ'ինայ	2
զլտորել	–	–	–	զ'ըլթորէլ	1
զոդնայ	զ'օդնայ	զ'օդնայ	–	զ'օդնայ	3
զործողչէք	–	զ'օրծօղչէք	–	–	1
զտնայ	–	–	–	զ'րդնայ	1
զտնողչէք	–	զ'րդնօղչէք	–	–	1
դադրիլ	–	դ'աթռիլ	–	–	1
դահ	դ'անիս	–	տանհ	դ'աիս	3
դահանալ	դ'անիսանալ	–	տանհանալ	–	2
դարտրկել	–	դ'արդրգէլ	–	–	1
դէդնիլ	–	–	տէդնիլ	–	1
դի	–	դ'ի	–	–	1
դողդղալ	դ'օղղղալ	դ'օղղղալ	–	–	2
դրացի	–	–	–	դ'րրացի	1
էդիճ	–	–	էդիջ	–	1
էռ	–	–	իռք	–	1
էրան	–	–	էրան	–	1
էրդիք	հէթթիս	հ'էրթիգ	–	հ'էրթիգ // հ'էրթիս	3
էրթալ	էթալ	էրթալ	–	–	2
էրկայն	հէրկէն	յէրգան	էրգէն	հ'էրգէն	4
էրկարցնել, էրկարցուցել	–	–	–	հ'էրգընցու- ցել	1
էրկննալ	–	–	–	հ'էրգըննալ	1
էրեւցնել	–	էրէվցընել	–	–	1
էփողչէք	–	էփօղչէք	–	–	1
գարգուզ	–	–	գարկուկ	–	1
գարնուիլ	–	գարնըվիլ	–	–	1
գգուիլ	–	գրգվիլ	–	–	1
գիբար	–	–	գիբար	–	1
էրիկ	իբիկ	էրիգ	–	իբիգ	3

1	2	3	4	5	6
ըղեղ	ըղեղ	–	–	–	1
ըմբան	–	–	ըմբագ	–	1
ըսել	–	ըսել	–	–	1
ըսելիք	–	ըսելիք	–	–	1
թաթխել	թաթխել	թաթխել	–	–	2
թանալ	–	–	թանալ	–	1
թեթեւնալ	թէթրվնալ	թէթէվնալ	–	թրթրվնալ	3
թնճուկ	–	թընջուգ	–	–	1
թռիլ	–	–	թրռնիլ	–	1
թուլնալ	–	թուլնալ	թուլնալ	թուլնալ	3
թօշնիլ	–	թօշմիլ, թօումէլ, թօումրշէլ	թօումիլ	–	2
ժողվել	ժողվել	ժողվել	ժողվել	ժողվել	4
ժոււմ	–	ժոււմ	ժոււմ	ժոււմ	3
ինչուան	–	ինչվան	–	–	1
իջնալ	–	–	իճնալ	–	1
իս	–	–	իս	–	1
իստակ	հիստսնկ	իստագ	լիստակ	–	3
լաթ	–	–	լաթ	–	1
լագան	–	–	լական	–	1
լաճ	–	–	լաջ	–	1
լայննալ	լէնրնալ	լէննալ	լէննալ	–	3
լօզնալ	–	լօղնալ	–	լօղնալ // լօղըրնալ	2
լօզցնել	–	լօղցնել	–	–	1
լուսնալ	լուսընալ	–	–	–	1
խաճան	–	խաճան	–	–	1
խաճնել	–	–	խաճնիլ	–	1
խաղցնել	–	խաղցընել	–	–	1
խաղք	–	խաղք	–	խախք	2
խամաճիկ	–	խսնճուգ	–	–	1
խարճ	–	խարջ	–	–	1
խելօքնալ	–	խէլօքնալ	–	–	1
խէռ	–	–	–	խէռ	1
խծիպ	–	–	խըծիք	–	1
խման	–	–	խըման	–	1

1	2	3	4	5	6
խխմիլ	–	–	խըխմիլ	–	1
խնդիրք	–	խընթիրք	–	խընթիրք	2
խոնջա	խօնջս	–	–	–	1
խոշորնալ	–	խօշորնալ	–	–	1
խոտնոց	–	խօղնօց	–	–	1
խորել	խօրել	–	–	–	1
խորոտ	խօրօտ	–	խօրօղ	–	2
խորոտիկ	–	–	խօրօղիկ	–	1
խպնիլ	–	–	խըպնիլ	–	1
կակուղ	կակուղ	–	–	–	1
կաղանդել	–	կաղընդել	–	–	1
կայնիլ	–	կայնիլ	–	–	1
կանանչ	կանանչ	կանանչ	–	կանանչ	3
կանաչիլ	–	–	գանաչիլ	–	1
կանանչել	–	–	գանանչիլ	–	1
կանուխ	–	կանուխ	–	–	1
կառափ	–	–	գառափ	–	1
կատղիլ	–	կաղղիլ	–	–	1
կարգել	–	կարքել	–	կարքել	2
կարգուկ	կարքուկ	–	–	–	1
կարկըտան	կարկըտան	կարգըդան	–	կարգըդան	3
կարկտել	–	կարգըդել	գարգըդիլ	կարգըդել	3
կարողչեք	–	կարօղչեք	–	–	1
կարօտնալ	կարօտնալ	–	–	կարօղնալ	2
կենալ	–	կէնալ	–	–	1
կըդայ	–	–	գըթխս	–	1
կծծի	–	–	–	կըծծի // քըցիբ	1
կնիկ	–	կընիկ	–	կընիկ	2
կոշկոռ	կօշկօռ	կօշկօռ	–	–	2
կրնալ	–	կըրնալ	–	–	1
կուշտ	կուշտ	կուշտ	գուշտ	կուշտ	4
հագնիլ	–	հաքնիլ	–	–	1
հայեվար	–	հայէվար	–	հայէվար	2
հայիլ	–	–	հայիլ	–	1
հայնակ	–	–	հ՞յանագ // հայանագ	–	1

1	2	3	4	5	6
հանդիպիլ	–	հանդրբիլ	հանդրբիլ	–	2
հաջալ	խաչալ		հսճալ	հաչալ	3
հասկրնալ	խասկրնալ	հասկրնալ	–	հասկրնալ	3
հասուկ	–	–	–	հասուկ	1
հաւնել // հաւնիլ	խաւնել	հաւլնիլ	հաւլնիլ	–	3
հաւտալ	–	հաւտալ	–	–	1
հարսնիք	խառսնիս	հարսնիք	հարսնիք	հարսնիք // հարսնիս	4
հարցունել	խառցունցել	–	–	–	1
հէղ	–	հէղ	հիղ	–	1
հիմ	–	–	–	հիմ	1
հիմակուց	–	հիմիգուց	–	–	1
հոգ	խօք	–	–	հոք/կ	2
հոդ	–	ֆօդ	հօդ	–	2
հոն	–	ֆօն	հօն	–	2
հոս	–	ֆօս	հօս	–	2
հունա	–	–	հունս	–	1
դրկել	–	դրրգել		–	1
ճամբա	ճսմբսիս	ճամբա, ճամփա	ջամբա	–	3
ճամբորդ		ճամբօրթ, ճամփորթ	–	–	1
ճանչնալ	ճաշնալ	–	ջանչրնալ	ճանչրնալ	3
ճետ	–	–	ճիղ	ճէղ	2
Ճերմկիլ // ճերմկել	–	ճերմրգիլ	–	–	1
ճէփ-ճերմակ	–	ճէփ-ճերմագ	–	–	1
ճիտ	–	ճիղ	–	–	1
մանչ	–	մանչ	–	–	1
մանիշակ	–	–	–	մանիշագ	1
մատնիք	մատնիկ	մաղնիք	–	–	2
մարգրիտ	մարքըրիդ	–	–	–	1
մեծնալ	–	մէնձրնալ	–	–	1
մեկզմեկ // մեկզմեկու	–	–	մէզրզմէզու	–	1

1	2	3	4	5	6
մեկէն	–	մէգէն	–	–	1
մէյ մըն ալ	–	մէմալ	–	–	1
մեննիլ	–	–	մէռնիլ	–	1
մինակ	մինակ	–	մինագ	մինագ //միջագ	3
մնծուր	մրնծուր	–	–	–	1
մոռնալ	մօռնալ	մօռնալ	–	մօռնալ	3
յոզնիլ	–	հօքնիլ	–	–	1
նեղնալ	–	–	–	նեղնալ // նեղէնեյ	1
նորէն	–	նօրէն	–	–	1
շատնալ	շատրնալ	շաղնալ	շաղնալ	շաղնալ	4
շալկել	շրլկել	–	–	շալգել	2
շէննալ	–	շէննալ	–	–	1
շէնք շնորհք	շէնք-շրնօրք	–	–	–	1
շինել	շինել	–	շինել	–	2
շիտակ	–	–	–	շիդագ	1
շիփշիտակ	–	շիփ-շիդագ	–	–	1
շնութիւն	–	–	շնութիւն	–	1
շուարիլ	–	շրվարիլ	–	–	1
շուք	շուք	շուք	–	–	2
չորնալ	չօրրնալ	չօրնալ	չօրնալ	չօրնալ	4
պագ	պաք	պաք	–	–	2
պագնել	պաք'ել	պաքել	–	–	2
պակսիլ	–	պագսիլ	–	–	1
պաղ	պաղ	պաղ	–	–	2
պապանծիլ	–	պաբրնծիլ	–	–	1
պարպել	–	պարբել	–	–	1
պգտիկ	–	պրգդի, պրգդիգ	բրգդիգ	–	2
պգտիկնալ	–	պրգդրգնալ	–	–	1
պգտիկուց	–	պրգդիգուց / պրգդրգուց	–	–	1
պիճիլիկ // պճրլիկ	–	պիճիլիգ	–		1
պլուլէլ	–	–	պլօլէլ		1
պտրտիլ	–	պրդրդիլ	–		1

1	2	3	4	5	6
պտոյտ	–		–	պրդոյ	1
ջաղջպան	–	ջ'աղջրպան	–	ջ'ախյրբան	2
ջոջ	ջ'օջ	–	–	ջօջ	2
սակառ	սակառ	–	–	–	1
սանտերք	–	–	սանդերք	–	1
սանտր	սանդր	սանդրո	սանտրր	սանդրր	4
սանտրել	սանդրրել	–	–	սանդրրել	2
սգուռր	–	սըքվօր	–	–	1
սեննալ	սէվրնալ	սէվնալ	–	–	2
վայիլ	–	–	վայիլի	–	1
վայլել	–	վայլել	–	–	1
վերնատուն	–	վերնատուն	–	–	1
վերջինեկ	վէռչրնեկ	–	–	–	1
վերուցել	վէրգուցել	–	–	–	1
տարուէտարի	–	–	դարվնդարը	–	1
տաքնալ		տաքնալ	տաքնալ	–	2
ցամքել	ցամքել	ցամքել	–	–	2
ցամքացնել	ցամքրցուցել	–	–	–	1
ցորեկ	–	ցորեկ	–	–	1
ցվիք	–	–	ցըվիք	–	1
փաթթել	փնթթել	փաթթել	փաթթիլ	–	3
փախչիլ	–	–	փախնիլ	–	1
փախցունել	փախցուցել	–	–	–	1
փարա	–	–	փարա	–	1
փափագ	–	–	–	փափաք	1
փճանալ	փրճանալ	–	–		1
փողպատ	–	–	–	փօխպաղ	1
փռնգտալ	–	–	փրռնտալ		1
քառսուն	քառսուն	–	քառսուն	քառսուն	3
քակել	–	քագել	–	–	1
քիչնալ	–	–	քիչնալ	–	1
քով	–	քովը	քով	–	2
քուկդ	–	քուգըդ	–	–	1
օճախ	–	օջախ	–	–	1
օրէօռ	–		օրավուր	–	1

Հասկանալի է, որ գրական արևմտահայերենի և դիտարկվող բարբառների բառապաշարային ընդհանրությունները բերված բառաքանակով չեն սահմանափակվում: Հետաքրքրական է, որ բերված շերտի հիմնական մասը կազմում են ընդհանուր հայերենյան բառերի ձևային տարբերակներ, գավառաբառեր:

ԳԼՈՒԽ Դ
ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՈՐԾԱՌՈՂ ԿԸ ՃՅՈՒՂԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսումնասիրության նպատակներից ելնելով՝ գրական արևմտահայերենի անվանական համակարգին բնորոշ իրողությունների նկարագրությունը յուրաքանչյուր դեպքում զուգորդում ենք Մշո, Սասունի, Կարնո, Դիաղինի բարբառների համարժեք ձևերի ներկայացմամբ՝ այդպիսով վեր հանելով համեմատվող լեզվատարբերակների ընդհանրություններն ու տարբերությունները: Անհրաժեշտության դեպքում անդրադառնում ենք նաև Պոլսի բարբառի իրողություններին:

Գրական արևմտահայերենի իրողությունները ներկայացնում ենք ըստ Ռ.Սաքապետոյանի հեղինակած բուհական դասագրքի¹, որտեղ արևմտահայերենի լեզվական փաստերը դիտարկված են արևելահայ գրական լեզվի հետ համեմատությամբ, և հանգամանորեն ներկայացված են գրական լեզվի երկու ճյուղերի համար բնութագրական տարբերությունները: Արևմտահայերենի անվանական համակարգի և մասնավորապես՝ գոյականի թվակարգին վերաբերող հարցերը քննելիս օգտվել ենք նաև Հ.Պետրոսյանի «Գոյականի թվի կարգը հայերենում» մենագրությունից², քաղելով արժեքավոր տեղեկություններ արևմտահայերենի, ինչպես նաև մեզ հետաքրքրող բարբառների վերաբերյալ:

¹ Տե՛ս Ռ.Սաքապետոյան, *Արևմտահայերենի դասագիրք*, Ե., 2006:

² Հ.Պետրոսյան, *Գոյականի թվի կարգը հայերենում*, Ե., 1972:

Հետազոտության ընթացքում համապատասխան նյութեր ենք քաղել նաև մեզ հետաքրքրող բարբառների քննությանը նվիրված մենագրություններից և բանահյուսական նյութերից : Բացի այդ՝ օգտվել ենք ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցների կողմից ծրագիր-հարցարանի³ միջոցով ժամանակին գրանցված նյութերից, որոնք բարբառային միավորների վերաբերյալ բավարար քանակությամբ տեղեկություններ են պարունակում և խիստ օգտակար են նմանատիպ քննություն կատարելու համար⁴:

Արդի գրական արհմտահայերենը կամ ուղղակի արևմտահայերենը, ձևավորված լինելով Պոլսի բարբառի հենքի վրա, բնականաբար ընդհանրություններ ունի Կը ճյուղի մյուս բարբառների հետ ևս: Իհարկե, կան նաև զգալի տարբերություններ: Այդ իրողությունները ներկայացնում ենք որոշակի կարգով՝ համադրելով ու մեկնաբանելով անվանական համակարգում (գոյական, ածական, թվական, դերանուն) առկա հետաքրքրական իրողությունները:

³ Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Ե., 1977:

⁴ Ի դեպ, Մշո բարբառը ներկայացնող Մկրագոմ, Քրդագոմ, Հացիկ, Կոպ, Բոստաքյանդ, Փիջունք (Խուր) գյուղերի խոսվածքների տվյալները մենք ենք ժամանակին գրանցել Մշո դաշտի 25 տարբեր գյուղերից գաղթած և Շիրակի մարզի Ոսկեհասկ գյուղում վերաբնակություն հաստատած բարբառախոսների առաջին և երկրորդ սերունդը ներկայացնող մշեցիներից: Կարնո բարբառի վերաբերյալ տեղեկություններ անձամբ գրառել ենք Շիրակի մարզի Գետք, Ագատան և Մարմաշեն բնակավայրերի բարբառախոսներից: Օգտվել ենք նաև Սասունի Կոշակ, Փըշուտ, Հավկօնք, Հոսներ, Հազգո, Իրցանք, Իշխընձոր, Մըշկեղ, Սպաղանք, Խաբըլջօզ, Փիրշեն գյուղերի խոսվածքների գրանցումներից, որոնք ըստ վերոհիշյալ Ծրագրի կատարվել են Արագածոտնի մարզում և Արարատյան դաշտի գյուղերում:

**Գոյականի թվի կարգը գրական արևմտահայերենում
և ՀՀ-ում գործառող Մշո, Մասունի, Կարնո,
Դիադինի բարբառներում**

Ինչպես հայերենի բոլոր դրսևորումներում, այնպես էլ գրական արևմտահայերենում և մեր կողմից քննվող բարբառներում հոգնակի թվի քերականական իմաստն արտահայտվում է հոգնակերտ մի շարք մասնիկներով: Գրական արևմտահայերենի հիմնական հոգնակերտներն են՝ *եք, նեք*, ընդ որում՝ միավանկ բառերն ստանում են *եք*, բազմավանկ բառերը՝ *նեք* (քարեր, անուրջներ): Գրաբարյան *ն* վերջնահնչյունը կորցրած բառերը հոգնակիի կազմության ժամանակ վերականգնում են այն՝ *գառներ, թոռներ*: Որոշ դեպքերում գրական արևմտահայերենը այդ կանոնից շեղվում է. *ն* -ն չի վերականգնվում, ինչպես՝ *հարսեր, նուռեր, ձուկեր, մուկեր, ծունկեր*, սակայն բառակազմության ժամանակ վերականգնվում է, ինչպես՝ *մկնիկ, մկնդեղ, ձկնորս*: Անդրադառնալով այս հարցին՝ Ա. Սարգսյանը գրում է. «Դա խոսում է այն մասին, որ արևմտահայերենը բառակազմության մեջ ավանդապահ է, ձևաբանության մեջ՝ ավանդախախտ և միօրինակության կոդմնակից»⁵:

Գրական արևմտահայերենում շեշտակիի փակ վանկում *ի* և *ու* ունեցող բառերի հոգնակին կազմվում է անհնչյունափոխ հիմքից, ինչպես՝ *գիրքեր, սիրտեր, երկիրներ, տուներ, ջուներ, ջուրեր, փունջեր* և այլն՝ ի տարբերություն արևելահայերենի և մեր կողմից քննվող բարբառների: Այսինքն՝ *Կը* ճյուղի վերոհիշյալ բարբառներում համապատասխանաբար կունենանք՝ *շըներ, տըներ, մըզներ*:

Կին, մարդ բառերի հոգնակին գրական արևմտահայերենում լինում է՝ *կիներ, մարդեր*: Այդ կանոնական կազմությանը զուգահեռ՝ գործածական են նաև *կանայք, մարդիկ* ձևերը:

⁵ Ա.Սարգսյան, *Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ*, Ե., 1985, էջ 174:

Մշո, Սասունի, Դիադինի և Կարնո բարբառներում *կին* բառը հանդես է գալիս միայն ածանցումով՝ *կընիգ*, ուստի և որպես երկվանկ բառ՝ ստանում է *դիք* հոգնակերտը: Որոշ դեպքերում բառը կարող է մեկից ավելի հոգնակերտ մասնիկներ ստանալ, ինչպես՝ *կընգըդիկներով* (Ա.):

Կարնո բարբառում *մարդ* բառը *իկ* հոգնակերտն է ստանում, իսկ Մշո, Սասունի և Դիադինի բարբառներում այդ ձևից բացի գործառնում է նաև *էք* հոգնակերտ մասնիկով՝ *մառտէք* (Ըդ *մառտէք էգա՞ն*):

Ալաշկերտի խոսվածքին (Ապարան-Արագածի տարածք) նվիրված մենագրության մեջ միավանկ բառերի հոգնակին կազմելու համար շատ գործածական էր մասնիկի մասին խոսելիս նշվում է, որ միայն *մառտ* (մարդ) միավանկ բառը էր չի ստանում. «Նրա հոգնակին ունի միայն *մառտիկ* ձևը»⁶: Մարդ բառը Դիադինի բարբառում նույնպես էր հոգնակերտն է ստանում՝ *մառթէք* (ինչպես Մշո, Սասունի բարբառներում): Դիադինի բարբառում *կընիկ* (կին) բառը հոգնակին կազմում է գրեթե Վանի բարբառի նման՝ *կընթեր* կամ *կընթըներ*:

Գրական արևմտահայերենում *ք* հոգնակերտով են կազմվում *տղա*, *ծնող* բառերի հոգնակիները՝ *տըղաք*, *ծնողք*:

Կարնո բարբառի *տըղէք*, *տըղօնք* և *ծընօղներ*, *ծընօղանք* հոգնակի ձևերին համարժեք են Մշո բարբառի *տըղէզներ*, *ծընօղներ* հոգնակիները:

Ընդհանրապես, մեր կողմից քննվող բարբառները հանդես են բերում գոյականների հոգնակի թիվը կազմող մասնիկների հարուստ բազմազանություն: Օրինակ՝ Մշո բարբառում գործածական են *ք*, *էք*, *էր*, *ներ*, *էնք*, *անք*, *դանք*, *դիք*, *վըդիք*, *վըդանք*, *վանք*, *րանք* և նմանատիպ պարզ ու բաղադրյալ հոգնակերտ թեքություններ, սակայն գործառնական մեծ հաճախակիություն են դրսևորում *էք*, *ներ* թեքությունները:

⁶ Ք.Մադաթյան, *Ալաշկերտի խոսվածքը*, Ե., 1985, էջ 72:

Գրաբարյան *ն* վերջնահնչյունը հիշյալ բարբառներում հոգնակի թվում վերականգնվում է. օրինակներ Մշո բարբառից՝ **եզներ, ճ՛ռներ, օղներ** :

Խնդրո առարկա բարբառների խոսվածքների գրանցումներում բազմաձևակ բառերի հոգնակի թվի կազմությունն արտացոլող կետի (560) պահանջով բերված օրինակներում փաստված է **ներ** հոգնակերտի լայն կիրառություն՝ **անուն-անըններ, դ՛անագ-դ՛անգըներ, ծաղիգ-ծաղգըներ, շաբիգ-շաբգըներ, պառավ-պառվըներ, տախտագ-տախտըգներ** և այլն: Հետաքրքրական է, սակայն, որ գրանցված են նաև **էր** հոգնակերտ ստացող բազմաձևակ բառեր, ինչպես՝ **աման-ամներ, բ՛երան- բ՛էրներ** և այլն: Պատճառը, հավանաբար, առաջացող կրկնակ բաղաձայնից (նն) խուսափելու ու արտասանությունը հեշտացնելու մղումն է:

Սասունի բարբառում, ուր հոգնակին կազմվում է եզակիի վրա ավելացնելով *իր, նին, անք, ք, դիք, վնի, ստան, դանք, դօնք, վըդանք* մասնիկները, միավանկ բառերի հոգնակին կազմելիս հոգնակերտ թեքությունը կարող են հանդես գալ կրկնահավելումով, այսպես՝ *կիդ* (գյուղ) > *կիդրանք* (իր+անք), նաև՝ նույն իմաստով շատ գործածական *կիդրանիր* (իր+ան+իր):

Միավանկ վերջնաբաղադրիչով բարդ բառերի հոգնակիի կազմությունը հիշյալ բարբառներում որոշակի օրինաչափություն չի դրսևորում. դրանք կարող են ստանալ **էր, նէր**, բայց նաև **դան, դիկ** հոգնանիշ թեքություններ:

Ձայնավորով ավարտվող բազմաձևակ բառերի համար հիշյալ բարբառներում սովորական է **էկ** հոգնակերտ ընդունելը, ինչպես, ասենք, Կարնո բարբառում՝ *կաշի-կաշէկ, հայլի-հայլէկ, փեսա-փեսէկ*: Այդպես է նաև Մշո բարբառում՝ *ագոէկ, ճամպէկ, սըդընէկ*: Նույնը կարելի է ասել Սասունի բարբառի մասին, ուր օրինաչափ հնչյունափոխությամբ կիրառվում են համապատասխան ձևեր՝ *ագոր* > *ագոէք, ջամպը* > *ջամպէք, սըդընը* > *սըդընէք* և այլն:

Կարնո բարբառի խոսվածքների գրանցումներում բազմավանկ բառերի հոգնակիի կազմությունն արտացոլող կետի դիմաց (560) հիմնականում փաստված է **նէր** հոգնակերտի գործածություն (*անուն - անըններ, շաքիգ-շաքըներ, պառավ-պառվըներ, տախտագ-տախտըգներ*), նաև գործառական մեծ հաճախականությամբ հանդես եկող **դիկ** հոգնակերտ՝ *ախպըրդիկ, կընգըրդիկ* և այլն: Բանահյուսական նյութերում առկա են **ան** (գ էլ-գ իլան, ձի-ձիյան), **վան** (եշ-իշվան, տեր-տիրվան) հոգնակերտ թեքություններ: Կարնո բարբառի խոսվածքների գրանցումներում առկա հոգնակերտ թեքություններ են՝ *եր, ներ, ք, վի, դիք, վըներ, ստան* և այլն:

Սասունի և Մշո բարբառներում ազգակցություն ցույց տվող բառերի հոգնակին կազմելիս **դիք** և **դանք** մասնիկները հոմանշային արժեքով են գործառում, ինչպես՝ **քուր** > **քուրվըրդիք** և **քուրվըրդանք**, **ախպեր** > **ախպըրդիք** և **ախպըրդանք**, **քեռի** > **քեռվըրդիք** և **քեռվըրդանք** և այլն: Սովորական են նաև **վան** (տիրվան), **դան** (հ ընգերդան) հոգնակերտ թեքություններ:

Մշո բարբառում կենդանիների անունների հոգնակին կազմելիս հիմնականում գործառում են **դան** (գըմշըդան), նաև **ան** (իձան, ձիյան), **վան** (իշվան) հոգնակերտ թեքություններ:

Մեկուկես վանկանի բառերը Մշո բարբառում **նէր** հոգնակերտ թեքությոն են ստանում, ինչպես՝ **օսկըռներ, մանդըռներ** և այլն: Այդպես է նաև Կարնո բարբառում: Նույնը կարելի է ասել Դիադինի բարբառի մասին, որի վերաբերյալ հիշյալ Ծրագրով կատարված գրանցումների տետրում համապատասխան բառահոդվածի դիմաց գրանցված են **օսկըռներ, մանդըռներ, գ'օմշըռներ, աղքըռներ, օխշըռներ** և նմանօրինակ այլ ձևեր:

Սասունի բարբառում **ակ** -ով վերջացող բազմավանկ բառերի հոգնակիները հիմնականում **նին** հոգնակերտն ունեն, ինչպես՝ *գավագ* > *գավգընին*, *փեթագ* > *փեթգընին*, *դախտագ* > *դախտըգնին*, *գօջագ* > *գօջգընին* և այլն: Բերենք օրինակ Սասունի բանահյուսական պատառիկներից.

Բըզդիզն էր նըստը վըր օսկի քուռսուն,

Գօջգընին համբըրցըք՝ հինգ հըրիր իթսուն...⁷:

Մշո և Սասունի բարբառներում, հատկապես՝ բանահյուսական նյութերում, հաճախ է հանդիպում **ստան** հոգնակերտ մասնիկը, ինչպես՝ **քեռի > քեռեստան, օսկի > օսկեստան, ճօրի > ճօրեստան** և այլն: Կարնո բարբառում այդ մասնիկի հետ միասին միանգամայն ընդունելի է նաև բաղադրյալ՝ **ստան+ներ** կազմությամբ հոգնակերտը, ինչպես՝ **բ'ալնեստաններ, բ'աղնեստաններ**: Տարեց գյումրեցիների վկայությամբ՝ նախկինում այս հոգնակերտն ավելի գործածական էր:

Մարմնի գույգ անդամների անվանումների հոգնակին կազմելու համար Սասունի բարբառում գործառում է **վընի** մասնիկը, ինչպես՝ **աչ(ք) > աչվընի, օդ (ք) > օդվընի, ունք > ընքվընի** այլն: Մասամբ այդ երևույթն առկա է Կը ճյուղի մի շարք այլ բարբառներում: Մշո բարբառում այդ իրողությունը հանդիպում է բանահյուսական նյութերում, իսկ գրանցումներում արտացոլված չէ: Բերենք մի օրինակ Տարոնի ազգագրական գոտու պարերգերից՝

Քամին զարգեր էր, դօշվին բացեր էր:

Հոգնակերտ **վի** մասնիկն առկա է նաև վերոհիշյալ բարբառների բաղադրյալ հոգնակերտների կազմում, ինչպես՝ **վըդիք** (Կարին, Պոլիս, Մուշ, Սասուն), **վըդան** և **վըդանք** (Մուշ, Սասուն): Ինչպես նկատում է Յու.Ավետիսյանը, «Բարբառ-միջին հայերեն ճանապարհով արևմտահայերենին փոխանցվել է **ուի (վի)** հոգնակերտը, որը, հաճախ միանալով **ներ** վերջավորությանը, մարմնի գույգ և ավելի անդամներ ցույց տվող գոյականների համար կազմում է կրկնակ ձև՝ **աչուրներ, մատուրներ, ձեռուրներ, ոտուրներ** ևն: Դեռ 20-րդ դարասկզբի քերականագիտությունը այդ կազմությունը համարում է բար-

⁷ Տե՛ս Վ.Պետոյան, *Սասունի բարբառը*, Ե., 1954, էջ 65:

բառայնություն, որ արդեն դուրս է եկել արդի գրական լեզվի գործածությունից»⁸:

Արևմտահայերենում հոգնակի թվի կազմության հետաքրքիր օրինակ է *ռուսեր* ձևը: Ինչպես գիտենք, արևելահայերենում գործառում է *ռուսներ* հոգնակի (կանոնից շեղվող) ձևը: Այսինքն՝ արևմտահայերենում այդ բառի հոգնակին կանոնական է⁹:

Դիտարկվող բարբառներում *ռուս* բառը *ներ* հոգնակերտ է ստանում՝ պայմանավորված այդ բառի բարբառային երկվանկ արտասանությամբ՝ *ռուռուս* (Մուշ, Սասուն, Դիաղին) կամ *հ ըռուս* (Կարին): Այդ բառի հոգնակին Մշո բարբառում լինում է՝ *ռուռուսներ*, Սասունի բարբառում՝ *ըռըսներ*, Կարնո բարբառի Գյումրու խոսվածքում՝ *հ ըռըսներ*:

Վերոհիշյալ բոլոր բարբառների համար հատկանշական է այն, որ նույն բառը զանազան հոգնակերտ մասնիկներ կարող է ընդունել: Այսպես, Սասունի բարբառում *ախճիզ* բառի հոգնակիի կազմության համար հավասարապես ընդունելի են *ախճըզդան*, *ախճըզդանք*, *ախճըզդիք*, *ախճըզդոնք* ձևերը:

Տոհմի, գերդաստանի ճանաչված անդամներից մեկի անվանը կցվելով՝ *ներ* ձևույթը հավաքական իմաստ, ազգանվան արժեք է հաղորդում անձնանվանը, ինչպես ընդունված է Մշո բարբառում՝ *էղօներու Վալօղ* (Եղիազարյան Վալող), *Մըռնէներու Խարիք* (Մուրադյան Ղարիք) և այլն: Կարնո բարբառում այդ նույն դերն է կատարում *անկ* ձևույթը՝ հավաքական իմաստ հաղորդելով հատուկ անվանը, ինչպես՝ Բաղդասարանկ:

Գրական արևմտահայերենին բնորոշ է այսպես կոչված ստացական հոգնակին, որը գոյականի հոգնակի թվի ուրույն դրսևորում է, երբ հոգնակի գոյականը ունի ստացական հոդ և

⁸ Յու. Ավետիսյան, *Արևելահայերենի և արևմտահայերենի գուգադրական քերականություն*, էջ 44:

⁹ Տե՛ս Ռ. Սաքապետոյան, նշվ. աշխ., էջ 121:

միասնաբար արտահայտում է պատկանող-պատկանյալի իմաստ, որոնք երկուսն էլ հոգնակի են: Արևմտահայերենում միավանկ բառերի ստացական հոգնակին կազմվում է՝ սովորական հոգնակիին հավելելով *նի* հատուկ հոգնակերտը, ապա՝ հոդը: Օրինակ՝ *հաց-հացերնիս, տուն-տուններնիդ* և այլն: Մրանք կարող են հանդես գալ նաև թեքված ձևերով, ինչպես, ասենք՝ *տուններնուդ*¹⁰:

Բարբառագետ Ա.Հանեյանը Տիգրանակերտի բարբառին նվիրված մենագրության մեջ *նի* հոգնակերտի առկայությունը Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբում և հատկապես Տիգրանակերտի բարբառում քննելիս նշում է, որ «Այս հատկանիշով բարբառը խիստ հարուստ է Պոլսի բարբառին և արևմտահայ գրական լեզվին»¹¹:

**Գոյականի հոլովական համակարգը գրական
արևմտահայերենում և Մշո, Մասունի, Կարնո,
Դիաղինի բարբառներում**

Նախ ներկայացնենք արևմտահայերենի հոլովական համակարգի առանձնահատկությունները, ապա անդրադառնանք մեր կողմից դիտարկվող բարբառներին:

Արևմտահայերենում անվանապես ընդունվում է 6 հոլով՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական, բայց գործնականում առկա են ուղղական-հայցական, սեռական-տրական, բացառական և գործիական հոլովները:

Ուղղական-հայցական հոլով

Արևմտահայերենի կարևորագույն հատկանիշներից է այն, որ ուղղական և հայցական հոլովները ձևով միշտ նույնական են, և շարահյուսական ոլորտում էլ ենթական և ուղիղ խնդիրը ձևով նույնանում են: Այլ կերպ ասած՝ ուղիղ խնդիրը

¹⁰ Տե՛ս Ռ.Սաքապետոյան, նշվ.աշխ., էջ 121:

¹¹ Ա.Հանեյան, *Տիգրանակերտի բարբառը*, Ե., 1978, էջ 85:

միշտ ուղղականաձև է: Այդ երևույթի պատճառը արևմտահայերենում անձի առման քերականական կարգի բացակայությունն է: Հին հայերենի որոշյալ հայցականի *զ* նախդիրը գրական արևմտահայերենում գրաբարաբանության արժեքով մնացել է միմիայն դերանվանական որոշ ձևերում, ինչպես՝ *զինք*, *զայս* և այլն:

Սեռական-տրական հոլով

Արևմտահայերենում ձևով նույնական են նաև սեռական ու տրական հոլովաձևերը: Հատկանշական է, որ երկուսն էլ ստանում են որոշիչ հոդ, այսինքն՝ չունեն տարբերակիչ հատկանիշ: Տարբերություն առկա է միայն իմաստային դաշտում: Պատկանելություն, վերաբերություն, սերում արտահայտող սեռականին իմաստով հակադրվում է տրականը՝ արտահայտելով գործողության հանգում, վերջնակետ:

Բացառական հոլով

Այս հոլովն ունի 2 հոլովակազմիչ՝ *է* և *մէ*: Վերջինս գործածվում է հիմնականում դերանվանական հոլովման ժամանակ, նաև սակավաթիվ գոյականների դեպքում՝ *ինձմէ*, *քեզմէ*, *աստուծմէ*, *քրոջմէ* և այլն:

Գործիական հոլով

Հիմնականում կազմվում է *ով* հոլովակազմիչով: *Հորմով*, *մորմով* ձևերին զուգահեռ՝ որոշ կայուն բառակապակցություններում հանդիպում են արևելահայերենին հատուկ ձևեր, ինչպես՝ *հորով-մորով* մեծնալ:

Գրական արևմտահայերենում ներգոյական հոլովը բացակայում է, հոլովական այդ իմաստն արտահայտվում է վերլուծական ձևով՝ սեռական հոլովաձևի և *մէջ* կապի միջոցով, ինչպես՝ *ջուրին մէջ*, *տունին մէջ*:

Իբրև արևմտահայերենի և ՀՀ-ում գործառող Կը ճյուղի բարբառների հոլովական համակարգերի միջև հիմնական

ընդհանրություն՝ մատնանշենք ներգոյական հոլովի բացակայությունը: Այդ հոլովական իմաստն արտահայտելու համար հիշյալ բարբառներում (նաև Կը ճյուղի մյուս բոլոր բարբառներում) նույնպես ընդունված է *մեջ* կապի կիրառությունը: Նշենք, որ Մշո և Սասունի բարբառներում այդ կապն ունի նաև նախադաս կիրառություն՝ *մըճ հորուն, մըճ հածին*: Այս պարագայում գոյականը որոշիչ հոդ է ստանում:

Մշո, Սասունի, Դիաղինի և Կարնո բարբառներում ներգոյականի իմաստը կարելի է արտահայտել նաև գոյականի հայցական հոլովաձևով: Բերենք օրինակներ.

*Ախշըրի մալ ախշարն է մանծի*¹²: (Մ.)

Սաղ հ'աշխարկը պըղըղա, քեզեն լավին չըգըղա: (Կ.)

Որոշյալ հայցականում *զ* նախդրի կիրառությունը (ինչպես գրաբարում էր) շատ բնորոշ է Մշո, Սասունի բարբառներին: Բերենք օրինակներ Մշո բարբառով գրառված բանահյուսական պատառիկներից.

Թորգեց զավեղրան առավ ըզ տամբուրեն:

*Էձ զարեվ գ'իլա խասար ըզ ճըրակուն*¹³:

Մեր կողմից քննվող բոլոր բարբառներին բնորոշ է բացառական հոլովում *են* վերջավորություն ստանալը: Բերենք օրինակ Մշո բարբառով՝ *Գ'օղտընեն էղնի, յեզ հ'էրտըզեն գ'էնա*¹⁴:

Հոլովումներ

Գրական արևմտահայերենում գոյականի եզակի թվի հոլովման մեջ ընդհանրական է Ի հոլովումը, և անգամ այլ հոլովման պատկանող բառերը կարող են ենթարկվել նաև Ի հոլովման, ինչպես՝ *օրվան-օրի, ընկերոջ-ընկերի, շան-շունի* և այլն:

¹² Տե՛ս Ս.Բաղդասարյան-Թափալցյան, *Մշո բարբառը*, Ե., 1958, էջ 211:

¹³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 218:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 214:

Կարնո բարբառում ամենատարածվածն ու գործունը նույնպես Ի հոլովումն է: Շատ դեպքերում այլ հոլովման պատկանող բառերը կարող են նաև Ի հոլովմամբ հանդես գալ՝ իբրև զուգաձևություն, ինչպես՝ *թօռան* և *թօռի, իշու*, բայց նաև՝ *էշի (էշի հարսնիկըմ էրինկ)*, *շապատ-շապատվա*, բայց նաև՝ *շապտի*: Համարժեք ձևեր են՝ *ձ ըգան փուշ* և *ձ ըգի փուշ*:

Դիտարկվող բարբառներում գործում է ի-ով վերջացող բառերը Ու հոլովման ենթարկելու (գինի-գինու) կանոնը, որն առկա է արևելահայերենում և հայերենի բարբառների գերակշիռ մասում:

Գրական արևմտահայերենն այդ կանոնին ենթակա չէ: Նմանատիպ բառերը, սեռական-տրականում Ի հոլովիչը ստանալով, կրկնակ ի են ունենում՝ *գինիին, այգիին*: Հարկ է նշել, որ որոշ դեպքերում հոլովակազմիչն ունենում է իմաստագատիչ դեր: Օրինակ՝ *շահ* բառը ստանում է Ու հոլովիչը՝ *շահու*, իսկ *արքա* իմաստով՝ *շահի*: Այդպես նաև *գլուխ* բառը Ու հոլովմամբ (գլխու) ունի *մարմնամաս* իմաստը, իսկ Ի հոլովմամբ (գլխի)՝ *գրքի գլուխ* իմաստը:

Կարնո բարբառում Ու հոլովման են պատկանում հիմնականում ի-ով վերջացող բառերը՝ *գինի, խընամի, պարբաշի*, բայց նաև մի շարք այլ բառեր՝ *մարտ, կընիզմարտ, ճամպա, գըլօխ, էշ, սեք, աստված*:

Մշո և Սասունի բարբառներում Ու հոլովումն ամենատարածվածն է: Այն գործում է ոչ միայն ի-ով վերջացող բառերը հոլովելիս: Այդ հոլովիչն այսօր էլ տարբեր բառերի դեպքում կենսունակ է բարբառակիրների խոսքում (*սարու* տագ, *ճըծու* հ'երես, *ախկըդու* օղներ, *ջըրու* ճամպախ և այլն):

Մշո և Դիադինի բարբառներում կենդանիների, թռչունների անունները հիմնականում Ու հոլովման են ենթարկվում՝ *հավու, կակվու, ճիդու, ձիու, կօվու* (նաև՝ Ս. *գակվու, ջիդու, գօվու, ծիու*):

Աստված բառը ևս Ու հոլովման է ենթարկվում՝ *Ասու* և *Աստըձու* զուգաձևությամբ: Այդպես է Մշո, Սասունի, Կարնո

բարբառներում: Իբրև զուգաձևություն՝ գործառում է նաև *Ասպած* բառը, որը միայն ուղղական հոլովով է հանդես գալիս: Օրինակ՝

*Ասպած ազադ էնէ իշու քուֆտից, լաբըստըրըգու չուֆտից*¹⁵ :

Աստըձու խաճիգ վըր քըզի էղնի, լա՛օ (Մուշ)

Էլի՛ կախվար Աստըձու փեշէրէն (Կարին):

Ի տարբերություն արևելահայերենի, որտեղ հոգնակի թվում բառերը, որոշ բացառություններով, ենթարկվում են Ի հոլովման, արևմտահայերենում հոգնակի գոյականի ընդհանրական հոլովումը Ու-ն է *քարեր > քարերու, տուն > տուներու, քաղաքներ > քաղաքներու* և այլն: Այդ իրողությունն առկա է դիտարկվող բոլոր բարբառներում:

Բերենք օրինակ Սասնո պարերգի՝

*Էղիվ սարէրուն, տիմաց ջըրակնուն, առճիվ աստղէրուն...*¹⁶:

Գրական արևմտահայերենը գրաբարյան *ն* վերջնահնչյունը կորցրած բառերի հոլովման ժամանակ հետաքրքիր երկձևություն է ի հայտ բերում՝ մի դեպքում (առավել հաճախ) Ի հոլովման ենթարկելով այդ կարգի բառերը (դուռ>*դուռի*, ձուկ>*ձուկի*, մուկ>*մուկի*, թոռ>*թոռի*), սակավ դեպքերում էլ՝ Ան հոլովման (*թոռան, ձկան, մկան* և այլն):

Դիտարկվող բարբառներին բնորոշ են Ան հոլովմամբ ձևերը, սակայն կան որոշակի բացառություններ: Օրինակ, Մշո բարբառում *ձըզան փուշ* և *ձ՛ըզի փուշ* ձևերը համարժեք են, իսկ այդ շարքին պատկանող *դաղձ(ն)* և *ասեղ(ն)* բառերը միայն Ի հոլովման են ենթարկվում՝ *դ՛ախձի, ախիսի*:

Հ.Մուրադյանը, անդրադառնալով արդի բարբառներում հինհայերենյան բառավերջի *ն* - ն կորցրած բառերի հոլովմանը, գրում է. « Այն բարբառներում, որոնց մեջ *ձուկն, մուկն* և նման

¹⁵ Տե՛ս նույն տեղում. էջ 210:

¹⁶ Տե՛ս Վ.Պետոյան, նշվ. աշխ., էջ 78:

բառերը հանդես են գալիս առանց բառավերջի **ն-ի** (*ձուկ, մուկ*) , սեռական-տրական հոլովներում ունեն այնպիսի վերջավորություն, որն անմիջապես կապվում է այդ նույն բառերի գրաբարյան **ա** ներդրական հոլովման հետ: Այլ կերպ ասած, այսօրվա բարբառների *գառ-գառան, եզ-եզան, ձուկ-ձկան, մուկ-մկան* հոլովումը ուղղագծորեն գալիս է հին հայերենի *գառն-գառին, եզն-եզին, ձուկն-ձկան, մուկն-մկան* հոլովումից, միայն այն տարբերությամբ, որ այդ բառերը հին հայերենում պատկանում էին երկու տարբեր ներդրական հոլովումների (**ա** պարզ և **ի-ա** խառն), իսկ արդի բարբառներում այդ երկուսը միավորվել են մի հոլովման մեջ, և այդ բառերի վերջնահանգ **ն-ի** կորստով՝ հին հերթագայության դիմաց առկա է հոլովական վերջավորություն»¹⁷ :

Դիտարկվող բարբառներին բնորոշ է այն, որ վերոհիշյալ միավանկ բառերի հոգնակին կազմելիս ունենում են *նէր* (ն-ն վերականգնվում է), ինչպես *մըզնէր, հարսնէր, թօննէր, մաղնէր* (Մուշ, Կարին, Դիաղին): Սակայն այդ բառախմբում կան նաև *էր* ստացող բառեր՝ *ուլէր, կատէր*: Հանդիպում են նաև համաբանությամբ *նէր* հոգնակերտ ստացող միավանկ բառեր, ինչպես *ծառ-ծառնէր*:

Ան հոլովման են ենթարկվում մի շարք բազմավանկ բառեր՝ մանուկ> *մանկան*, աղջիկ> *աղջկան*, ինչպես նաև երիկ>*էրկան*, կընիկ >*կընկան*:

Տարվա եղանակների անուններն արևմտահայերենում Ան հոլովումից բացի (գարնան, աշնան, ամռան, ձմռան) կարող են ենթարկվել նաև Ի հոլովման (գարունի, աշունի) կամ Էլ՝ Վան հոլովման (ձմեռուան ամառուան)¹⁸:

Ժամանականիշ բառերը հայերենում սովորաբար Վա հոլովման են ենթարկվում: Գրական արևմտահայերենում,

¹⁷ Հ.Մուրադյան, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, Ե., 1982, էջ 331:

¹⁸ Տե՛ս Ռ.Սաքալետոյան, նշվ. աշխ., էջ 127:

սակայն, այս կարգի բառերը ենթարկվում են Ի հոլովման՝ *օրի, ժամանակի, ամիսի, ձմեռի* և այլն: Բայց գործածական է նաև Ուան (Վան) հոլովումը: Հետաքրքիր է, որ գոյականի անհնչյունափոխ հիմքի վրա ավելացող *ուայ(վա)* և *ուան(վան)* մասնիկները տարբեր իմաստներով են գործառուում. առաջին դեպքում արտահայտում են ածականական իմաստ (օրուայ հաց = օրական հաց), իսկ երկրորդին հատուկ է գոյականի սեռական հոլովի իմաստը (օրուան հաց = օրվա հաց):

Իմաստային տարբերությամբ են ներկայանում նաև *շաբաթ* բառի համար առկա *շաբաթի* և *շաբաթուայ* հոլովական հոմանշային ձևերը, ինչպես՝ *կսպասեմ շաբաթին* (կիրակիին նախորդող օրվան) և *շաբթուայ ծախսը* (շաբաթվա ծախսը):

Գրական արևմտահայերենում գոյականների հոլովման համակարգում իմաստային ուրույն խումբ կազմող և ազգակցական կապեր ցույց տվող *կին, քոյր, տալ, անեք, ընկեր*, ինչպես նաև *տագը* (տեգը), *կեսուր* (սկեսուր) բառերը Ոջ հոլովման են ենթարկվում: Նշենք նաև միայն արևմտահայերենում գործածվող *ներ* (տեգորկին) բառը: Որպես բարդության վերջնաբաղադրիչ հանդես գալիս ևս պահպանում են այդ հոլովական հատկությունը՝ *մօրաքրոջ, գործընկերոջ* և այլն: Իմաստային այս խմբի բառերից միայն *տալ* և *կեսուր* բառերը կարող են նաև Ի հոլովման ենթարկվել:

Ինչպես դիտարկվող մյուս բարբառներում, Կարնո բարբառում ևս ազգակցություն ցույց տվող բառերը հիմնականում Ոջ (օձ) հոլովման են պատկանում՝ քուր-*քուրօձ*, տալ-*տալօձ*, կիսուր-*կիսրօձ* և այլն: Սրանց կողքին պետք է նշել նաև *տեղ* և *հ'ընգեր* բառերը: Այս հարցում գրական արևմտահայերենը այլ ճանապարհով է գնացել՝ նախապատվությունը տալով Ի հոլովմանը:

Ց հոլովման են ենթարկվում անք, ոնք, ենք մասնիկներով հավաքականություն (անձը իր շրջապատով) արտահայտող բառերը, ինչպես՝ *Վարդանանք-Վարդանանց, Սուրիկենք-Սու-*

րիկենց: Սրանց բացառականը և գործիականը կազմվում են *մէ, մով* կազմիչներով՝ **Սուրիկենցմէ, Սուրիկենցմով:**

Գրական արևմտահայերենում հատուկ տեղանունների հոլովումը նույնպես որոշակի օրինաչափությամբ է առանձնանում՝ կատարվելով *ոյ* հոլովիչով, օրինակ՝ **Մշոյ, Կարնոյ, Պոլսոյ,** այդպես նաև *խա*-ով վերջացող տեղանունների դեպքում՝ **Կիլիկիոյ, Անգլիոյ** և այլն:

Մշո բարբառում տեղանունների հոլովման ժամանակ նկատելի է Ա հոլովման գերակայությունը՝ **Մասնա, Վանա, Խարսա** և այլն: Մինչդեռ Մուշ տեղանունը Ու հոլովման է ենթարկվում, ինչպես՝ *Մըշու սարեր մըշուշ է:* Այդպես նաև՝ **Մասնու, Հալբու, Թիլփիզու** և այլն:

Գրական արևմտահայերենում կան նաև գրաբարաձև և այլաձև հոլովումներ, ինչպես՝ **թշնամի-թշնամոյ, մարդիկ-մարդոց:**

Կարնո բարբառում հետաքրքրական է *դիք, վրդիք* մասնիկներով կազմված հոգնակի ձևերի հոլովումը. այդպիսիք սեռական հոլովում լինում են՝ **քուրվրդոց, տէրվրդոց, հ ընգերդոց:** Կարելի է ասել, որ գրաբարախառն հոլովման հատկանիշներ են հանդես բերում: Ի դեպ, Կարնո բարբառի հոլովական համակարգի մասին Հ.Աճառյանը գրում է. «Բարբառս չունի այլաձև կամ արտոուղի հոլովումներ, եթե նկատի չունենանք ք-ով վերջացող բառերը, որոնք ենթարկվում են գրաբարախառն հոլովման, և մի քանի դարձվածքներում ու ասույթներում գործածվող գրաբարյան հոլովաձևերը (խըմօղաց, հիշօղաց, լըսօղաց, մօրուց, հիմիզուց), որոնք մասնակի բնույթ են կրում»¹⁹:

Առկայացման կարգ

Հոդային կարգն իր էությամբ կապված է առկայացման գաղափարի հետ և առաջին հերթին աղերսվում է գոյականի քերականական կարգերի հետ: Հայերենի պատմական ձևաբա-

¹⁹ Հ.Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 3, էջ 653:

նության խնդիրներին առնչվող մենագրության մեջ Հ.Պետրոսյանը նկատում է, որ լուրջ հիմնավորում չունի այն մոտեցումը, երբ *հողը* դիտարկվում է մասամբ գոյականի, մասամբ էլ դերանվանական համակարգի քննության կապակցությամբ: «Միայն այն հանգամանքը, որ հայերենի հոդերի մեծ մասը նաև դիմային հարաբերության արտահայտիչ է, դերանվանական ծագում ունի, բավական չէ նրա ուսումնասիրությունը կապելու դերանունների հետ: Հողային կարգն ամենից առաջ գոյականական կարգ է և պետք է ուսումնասիրվի որպես այդպիսին»²⁰:

Առկայացման քերականական կարգի ամենաբնորոշ դրսևորումներն են որոշյալ և անորոշ առումները: Գրական արևմտահայերենի առկայացման կարգին բնորոշ են մի շարք հետաքրքրական իրողություններ: Այսպես, որոշյալ *և* հոդն օգտագործելը պարտադիր է, եթե հաջորդում է *ալ* շաղկապը, ինչպես՝ *երկուքն ալ, ուսուցիչն ալ*: Նույնը կարելի է ասել օժանդակ բային նախորդելու պարագայում, ինչպես՝ *գիրքն է, քաղաքն էր*: Պարտադիր է դառնումը հոդի կիրառությունը, եթե գոյականին հաջորդող *ալ* բառը շաղկապ չէ, այլ մակբայ է, ուստի և հոդառու բառը կապվում է ոչ թե հաջորդ բառի, այլ ստորոգյալի հետ, ինչպես՝ *Գետինը ալ ձյուն չմնաց: Փողոցը ալ մարդ չկա*: Հետաքրքրական է, որ անորոշ առումով է դրվում ստորոգյալին նախորդող անձնանուն ենթական, որը հատուկ անուն է: Օրինակ՝ *Հայկ մեկնեցալ*: Այդպես նաև եթե նախադասության մեջ կա անձնանուն ուղիղ խնդիր, որ դրված է որոշյալ առումով, ենթական դրվում է անորոշ առումով, ինչպես՝ *Յակոբ շատ կը սիրէ Անահիտը*: Բայց եթե անձնանուն ենթական ձայնավորով է ավարտվում, ապա միշտ ստանում է *և* որոշիչ հոդ՝ *Մարին ինկաւ, Սազոն եկաւ*: Երբ որպես ենթակա հանդես է գալիս լրացում ունեցող հատուկ անունը, ենթական դրվում է որոշյալ առումով: Օր.՝ *Անկախ Հայաստանը պիտի*

²⁰ Տե՛ս Հ.Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 3:

գարգանայ: Հայցական հոլովով դրված՝ հատուկ անունով արտահայտված տեղի պարագան որոշիչ հոդ չի ընդունում, ինչպես՝ *Ան Երևան կը բնակի*: Իսկ հասարակ անվան դեպքում այդ անդամը հոդառու է, օրինակ՝ *Ան տունն էր, Աշոտ փողոցն էր*: Գրական արևմտահայերենում հատկացուցիչը միշտ դրվում է որոշյալ առումով՝ *Աշոտին մայրը, աշակերտին տետրը* և այլն: Անորոշ սեռականով ձևը հաջորդող գոյականի համար որոշչի արժեք ունի, ինչպես՝ *աշակերտի տետր = աշակերտական տետր*: Հավելենք նաև, որ արևմտահայերենում ցուցական դերանունների հետ գոյականը միշտ դրվում է որոշյալ առումով:

Անորոշ առման մասին նշենք հետևյալը. գրական արևմտահայերենում այն հիմնականում արտահայտվում է *մը* անորոշ հոդի միջոցով, որը միշտ վերջադաս է և հաջորդում է գոյականին՝ *տուն մը, կեանք մը* և այլն: Այդ *մը* հոդը խոսքում նաև ոճական արժեքով է կիրառվում: Թվական որոշիչ ունեցող գոյականին այն մոտավորության իմաստ է հաղորդում, ինչպես՝

Սեղանին շուրջ հիսուն հոգի մը նստած էին: Օրիորդը քսան տարեկան մը կար²¹:

Դիտարկվող բոլոր բարբառներին բնորոշ է ձայնավորահանգ բառերում որոշյալության իմաստը *և* հոդով արտահայտելը: Եթե անձնանուն ենթական ձայնավորով է ավարտվում, ապա միշտ ստանում է *և* որոշիչ հոդը՝ *Մայրոն էլ էր գերտեր էկին, Հայրոն* դէսըվ, մօլրավ հօկին (Սասունի Փշուտ գյուղի խոսվածքով): Մնացած դեպքերում ենթական անհոդ է Մշո և Սասունի բարբառներում: Այսպես՝

Գէշ կընիգ նազ կէնէ, գ'ինա իրիգ հազ կէնէ (Մշո բարբառով):

Մեր կողմից քննվող բարբառներից միայն Կարնո բարբառն ունի *ը* հոդ: Ավելացնենք, որ այս բարբառում դիտարկվել

²¹Տե՛ս Ռ.Սաքապետոյան, նշվ. աշխ., էջ 134:

է բոլոր հոլովներում որոշիչ հոդ ստանալու իրողությունը, այդպես է մասնավորապես Ջավախքի գյուղերի խոսվածքներում:

Հայտնի է, որ գրաբարում որոշյալ առման ցուցիչ էր նաև **զ** նախդիրը, որն այդ իմաստով գործառում էր հայցական հոլովաձևի հետ: Մշո և Սասունի բարբառներն այդ առումով գրեթե անխաթար են պահել որոշյալության այդ ցուցիչը: Այդ մասին են վկայում բանահյուսական առատ նյութերը: Բերենք օրինակներ այդ բարբառների քննությանը նվիրված մենագրություններից: Այսպես՝

*Քուն ըզքուն գը բ'երէ, արցունք՝ զարցունք*²²:

*Ըս ի նճ գանըմ ըզքերէգան, իմ յարն է դաս դարէգան*²³:

Մշո և Սասունի բարբառներում սեռական հոլովաձը հոդառու չէ, բայց *մըճ*, *վըր* և այլ կապական բառերից հետո հայտնված գոյականը **ն** հոդ է ստանում, ինչպես՝

Էշ օր հ'ընգնա մըճ տըլուն, տէր գը ժըրգընա (Մշո Մկրագում գյուղի խոսվածքով):

Մշո բարբառում որոշիչ հոդը կարող է արտահայտել *այս* և *այն* դերանունների (Մշո բարբառում դրանք ձևով նույնանում են՝ **իդա**) իմաստ: Օրինակ՝ *Գիրկըն հ'օրի՞ իս պադոի*:

Անորոշ հոդը մեր քննության առարկա բարբառներում կարող է լինել և՛ նախահար անշեշտ տարր, և՛ վերջահար: Խոսողության ընթացքում ոճական որոշ արժեք է ձեռք բերում՝ շատ դեպքերում կրկնաբանությունից խուսափելու համար: Մակայն հիշյալ բարբառներն խորթ չէ նաև երկու ձևերն էլ միաժամանակ գործածելը: Բերենք օրինակներ. *Մէ մառտ ու կընհզըմ կէղնին. Ըդօնկ մէ տըղէմ կունէնան* (Կ.): Կարևոր բարբառում վերջահար **մ** հոդն ուղղակի միանում է գոյականին, ինչպես՝ *Գ'օրձիմ օր կըբավ, էլ չի թարգէ. Ունիմ-չունիմ, ձ'իմ ու էձըմ ունիմ* (Շիրակի Մարմաշեն գյուղի խոսվածքով):

²² Տե՛ս Ս.Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., էջ 235:

²³ Տե՛ս Վ.Պետոյան, նշվ. աշխ., էջ 72:

Մշո բարբառում **մէ** (նույնը Սասունի բարբառով՝ **մը**) անորոշ հոդը ձայնավորահանգ բառերում հենց այդ ձևով էլ հանդես է գալիս՝ **ձ'ի մէ, տըղէմէ** և այլն: Օրինակ՝ **Կօղ մէ օսկի**:

Ստացական **ս** և **դ** հոդերի գործառույթը (այդ մասին նշել ենք արևմտահայերենում հոգնակիի կազմության հարցը քննելիս) կա նաև Մշո բարբառում: Դրանց հաջորդող **ի** հենարանի առկայությունը հայերենի մի շարք բարբառներում Հ.Աճառյանը համարում է բաղաձայնների կուտակումից և խճողումից խուսափելու միջոց: Այդ նկատառումը նա ներկայացրել է Վանի բարբառի քննության առիթով²⁴: Մշո բարբառում այդ իրողության առկայությունը փաստենք՝ բերելով օրինակ Մշո ասացվածքներից. **Բերանսի մէնձ, քիթսի ազուգա, ինչ օր ըսին՝ վըրէսի գիքա**²⁵: Ինչպես երևում է, Մշո բարբառում **ի** հենարանն ավելանում է ոչ միայն բաղաձայնահանգ, այլ նաև ձայնավորահանգ բառերին, ինչպես, ասենք՝ **հօկիսի, վըրէսի** և այլն: Մշո բարբառում կա նաև հետաքրքրական մի կառույց, որի միջոցով ևս կարելի է գրեթե նույն իմաստը հաղորդել՝ առանց ստացական հոդի: Օրինակ, **տուն մըզի** (մեր տունը կամ՝ տուններս):

Միրդ մըզի գը ցավա վըր քըզի (սիրտներս ցավում է քեզ համար):

Ածական և թվական անունները արևմտահայերենում և ՀՀ-ում գործառող Մշո, Սասունի, Կարնո, Դիաղինի բարբառներում

Ածական անուն

Հայտնի է, որ ածականի գերադրական աստիճանը արևելահայերենում կազմվում է՝ դրական աստիճանին ավելացնելով *ամենա* նախածանցը կամ *գույն* վերջածանցը: Համարժեք

²⁴ Տե՛ս Հ.Աճառյան, *Քննություն Վանի բարբառի*, Ե., 1953, էջ 154:

²⁵ Տե՛ս Մ.Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., էջ 213:

կառույց է նաև *ամեն* բառի բացառական հոլովով կազմությունը՝ *ամենից մեծ*, իսկ արևմտահայերենում՝ *ամենէն* մեծ:

Արևմտահայերենի ժողովրդախոսակցական տարբերակում իբրև ածականի գերադրական աստիճան գործում է նաև *էն +* ածական կառույցը, որ կրկնում է թուրքերենի ածականի գերադրականի կազմությունը (էն մեծ- *en boyuk*): Այս կազմությունը ուշագրավ է նրանով, որ բավական տարածված լինելով գեղարվեստական գրականության մեջ և մամուլում՝ այնուամենայնիվ կանոնական քերականություններում չի հիշատակվում իբրև քերականական ձև: Սա նաև այն հազվագյուտ դեպքերից է, երբ օտար լեզուն ազդել է ոչ թե հայերենի բառապաշարի, այլ քերականության վրա²⁶:

Ամեն բառով որակական ածականի գերադրական աստիճանի կազմությունը բնորոշ է նաև Կը ճյուղի դիտարկվող բարբառներին: Մշո բարբառում հավասարապես ընդունելի է *հ'ըմէն* բառի և՛ սեռական հոլովաձևով (հ'ըմբնու ջ'օձ), և՛ բացառականով (հ'ըմբընուձ ջ'օձ) գերադրական աստիճան կազմելը: Շատ հաճախ այդ բառին սաստկական իմաստ հաղորդելու համար *հ'ըմէն* բառն արտաբերվում է կրկնակ բաղաձայնով՝ *հ'ըմբընուձ ջ'օձ*:

Ճիշտ նույնատիպ ձևեր են գործառում Դիադինի բարբառում՝ *հըմնու(g) բանցըր*, *հըմնու(g) ծանդըր* և այլն: Մասունի բարբառում *ըմբնու* ձևին համարժեք է *թավդընու* բառը՝ *թավդընու միծ*, *թավդընու խեղօկ* և այլն:

Ածականի բաղդատական աստիճանը դիտարկվող լեզվատարբերակներում բազմազանություններ չի դրսևորում, թերևս կարելի է նշել Մշո բարբառում սաստկական իմաստ հաղորդող և շեշտով արտաբերվող *էլ* բառաձևը՝ *էլ պըզդիզ* (ավելի փոքր):

²⁶ Տե՛ս Ռ.Սաքապետոյան, նշվ. աշխ., էջ 135:

Թվական անուն

Արևմտահայ քերականները թվականը չեն դիտարկում իբրև առանձին խոսքի մաս, որ բացատրվում է այս խոսքի մասի յուրահատկությունների և քերականական կարգերի սակավությամբ: Ավանդաբար այն դիտարկվել է իբրև ածականի մի տեսակ: Գրական արևմտահայերենում տարբերակում են քանակական (իբր ենթատեսակերով՝ բախշական և կոտորակային) և դասական թվականներ:

Ռ.Սաքապետոյանի դասագրքում նշվում են դասական թվականների կազմության մեջ արձանագրվող բառակազմական կաղապարների տարբերությունները՝ արևելահայերենի համեմատությամբ. «Հանրահայտ է, որ երկու տարբերակերում էլ **երկու, երեք, չորս** թվականների դասականը կազմվում է - **րորդ** ածանցով, որը արևելահայերենում փոխարինվում է - **երրորդ** ածանցով, եթե հիշյալ թվականները դառնում են բարդության վերջին բաղադրիչ՝ տասներկուերորդ, քսաներեքերորդ, երեսունչորսերորդ, հարյուրերկուերորդ, հազարերեքերորդ և այլն: Արևմտահայերենը նման դեպքերում պահում է - **րորդ** ածանցը՝ **տասներկրորդ, քսանչորրորդ, հազարերրորդ** և այլն: Տարբերության պատճառն այն է, որ արևելահայերենը կազմում է տասներկու և մյուս բառերի դասականը, մինչդեռ արևմտահայերենը կազմում է երկու բառի դասականը՝ այն կցելով տասը, քսան և այլ թվականներին»²⁷:

Դիտարկվող բարբառներում դասական թվական կազմելու հատուկ ձև չկա: Մշո բարբառի խոսվածքներում դասական թվականն արտահայտվում է քանակական թվականով, ինչպես՝ *հինգ դասարան, չորս խումպ* (չորրորդ դասարան) և այլն: Բհարկե, բարբառախոսներից առավել տարեցները այդ երևույթի մասին տեղեկություն հաղորդելիս անպատճառ նշում են, որ իրենք էլ են արդեն օգտագործում *երգրորտ կընիգ, չորորտ դասարան* և նմանատիպ ձևեր, բայց իրենց նախնիները

²⁷ Նույն տեղում, էջ 136:

չէին օգտագործում: Հաջորդականության իմաստ արտահայտելիս Մշո բարբառում օգտվում են նկարագրական եղանակներից, օրինակ, որոշչային այսպիսի կառույցներով. *Ուր հ'առճի կընիգ խօրօղ էր, քընց վէռճի կընիգ*: Նկարագրական արժեք ունի նաև հաջորդականության նրբիմաստը *վըրա* կապի և քանակական թվականի հոլովված ձևի միջոցով արտահայտելը՝ *վըրա երգըսին*: Այլ կերպ ասած՝ դասական թվականն արտահայտվում է քանակական թվականով:

Հետաքրքրական է, որ 19-րդ դարի առաջին կեսին Արևելյան Հայաստան գաղթածների սերունդները ներկայացնող բարբառախոսները պնդում են, որ իրենց համար սովորական է դասական թվական կազմելը: Դա նկատելի է նաև խոսվածքային միավորների գրանցումներում (Ապարանի տարածաշրջանում գրանցված՝ Ալաշկերտի գյուղերի խոսվածքներում, Կարնո բարբառի որոշ խոսվածքներում): Դիադինի բարբառի գրանցման տեսքում քերականական զուգաբանությունների բաժնի 589-րդ կետի դիմաց առկա են *յերգըրօթ, չօրօթ, տաայերօթ* և նմանօրինակ ձևեր, բերված են օրինակներ՝ *յերգըրօթ կընիկըն, յերօթ ճիժըն, չօրօթ դասարան*: Մենք հակված ենք այդ ամենը գրական արևելահայերենի ազդեցությամբ բացատրելու: Կարելի է վկայաբերել նաև ազգագրական այդ գոտիների բանահյուսության մեջ դասական թվականների բացակայության հանգամանքը:

Բաշխական թվականների կազմության երկու հայտնի կադապարներից (*սկան* վերջածանցով և արմատի կրկնությամբ) գրական արևմտահայերենում առկա է միայն *սկան* վերջածանցով բաշխական թվական կազմելու իրողությունը, մինչդեռ Կը ճյուղի հիշյալ բարբառներում թվականի բաշխականությունը դրսևորվում է կրկնությամբ, ինչպես՝ *Էրգու-էրգու խընձօր* :

Դերանունը արևմտահայերենում և ՀՀ –ում գործառող Մշո, Սասունի, Կարնո, Դիադինի բարբառներում

Գրական արևմտահայերենում և նշված բարբառներում գործառող դերանունները քննության ենք առնում ըստ ընդունված դասդասման:

Անձնական դերանուններ

Գրական արևմտահայերենի և արևելահայերենի, ինչպես նաև հայերենի բարբառների համար ընդհանրական է այն, որ անձնական դերանուններն ունեն դեմքի և թվի կարգեր, հոլովման ժամանակ ի հայտ է գալիս տարարմատություն, սեռականը և տրականն ունեն առանձին ձևեր:

Գրական արևմտահայերենի անձնական դերանուններն են *ես, դու, ան, ինք*, որոնց հոգնակիներն են՝ *մենք, դուք, անոնք, իրենք*: Դրանք հոլովվում են հետևյալ կերպ.

Եզակի

Ու.	ես	դու	ան	ինք
Հ.	զիս	քեզ	զայն	զինք
Ս.	իմ	քու	անոր	իր
Տ.	ինծի	քեզի	անոր	իրեն
Բ.	ինձմէ	քեզմէ	անկէ	իրմէ
Գ.	ինձմով	քեզմով	անով	իրմով

Հոգնակի

Ու.	մենք	դուք	անոնք	իրենք
Հ.	մեզ	ձեզ	զանոնք	զիրենք
Ս.	մեր	ձեր	անոնց	իրենց
Տ.	մեզի	ձեզի	անոնց	իրենց
Բ.	մեզմէ	ձեզմէ	անոնցմէ	իրենցմէ
Գ.	մեզմով	ձեզմով	անոնցմով	իրենցմով ²⁸

²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 137:

Մեզ հետաքրքրող՝ Մշո, Սասունի, Կարնո և Դիադինի բարբառների և արևմտահայերենի անձնական դերանունները համեմատելիս կարելի է անել մի շարք դիտարկումներ:

Գրական արևմտահայերենում երկրորդ դեմքի անձնական դերանվան եզակի թիվն ունի *դուն* ձևը: Այս իրողությունն առկա է Կարնո բարբառի խոսվածքներից շատերում: Սակայն Մշո, Սասունի և Դիադինի բարբառներին դա բնորոշ չէ:

Տրական հոլովի *ինծի, քեզի, մեզի, ձեզի* հոլովաձևերը օրինաչափ հնչյունափոխությամբ գործառուում են նաև հիշյալ բարբառներում: Օրինակ, Մշո բարբառում՝ *ընձի, քրզի, մըզի, ձըզի*:

Գրական արևմտահայերենում բացակայում են անձնական դերանունների երկրորդական՝ *ինքս, ինքդ, ինքներս, ինքներդ* ձևերը, սակայն գործածական են եզակի և հոգնակի երրորդ դեմքի ձևերը՝ *ինք* (առանց հոդի) և *իրենք*: Մեզ հետաքրքրող բարբառներում նույնպես բացակայում են անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերի երկրորդական ձևերը՝ դրսևորելով որոշակի գործառույթ միայն երրորդ դեմքի պարագայում: Գրական տարբերակի *ինք* ձևին համապատասխանում է Սասունի բարբառի *ինկ* ձևը, Մշո և Կարնո բարբառներում համապատասխանաբար գործառուում են *հ'ինկ* և *հ'ինկը* ձևերը, օրինակ՝

Հ'ինկ ի'նձ գ'ինէր՝ ինձ է գ'ուզիմ (Մշո Հացիկ գ.):

Հ'ինկը չալէծ, մէնկ խաղցանկ (Կ.):

Հայտնի է, որ գրաբարյան *մեք*-ը հետգրաբարյան հայերենում *ն*-ի հավելումով դարձել է *մենք*: Հինհայերենյան *մեք* ձևին Սասունի բարբառի տարբեր խոսվածքներում համապատասխանում է *ի* մասնիկով ձև՝ *մըկի* (*մըկի կացինկ, մըկի պէրինկ*): Խոսքի շղթայում դերանվանական ինքնատիպ ձև կարելի է համարել *ես* դերանվան արժեքով գործածվող *յէ* (առանց *ս*-ի) բառաձևը (հավանաբար, արագախոսությամբ առաջացած), որը հանդիպում է Մշո բարբառում, ինչպես

Յէ լէ գ'իկամ: Յէ լէ գ'ուզիմ:

Մշո բարբառի անձնական դերանուններին (*յէս, դ'ու, ընի, մէնկ, դ ուկ, ընդօկ*) առնչվող իրողություններից հետաքրքրական է նաև հոգնակի երրորդ դեմքի արտահայտությունը՝ *ընդօկ*, ինչպես՝ *Ընդօկ զածին, մէնկ մանծինկ*:

Գրական արևմտահայերենի անվանական համակարգի հոլովների առիթով արդեն նշել ենք, որ գոյականի հոլովման ժամանակ որոշյալ հայցականի *զ* նախդիրը կիրառելի չէ: Իսկ ահա ձայնավորով սկսվող դերանունները հայցական հոլովում ունեն *զ* նախդիրը՝ *զիս, զինք, զանոնք, զիրենք*: Որոշյալ հայցականի *զ* նախդիրը կենսունակ է Մշո և Սասունի բարբառներում, որոնցում ինչպես գոյականների, այնպես էլ դերանունների հայցական հոլովաձևերը շարունակում են հանդես գալ այդ նախդրով: Օրինակ՝ *Բաթօ, մամօ, զարկըք* զիս...(Ս.): Կարնո և Դիադինի բարբառներին *զ* նախդրի կիրառությունը բնորոշ չէ: Այդ իմաստն արտահայտվում է տրականաձև հայցականով՝ *Մէրքս ընծի բօլըմ պակէծ*:

Գրական արևմտահայերենում անձնական դերանունների որոշ ձևեր սեռական, տրական և հայցական հոլովներում ունենում են առանձին ձևեր (իմ-ինծի-զիս, քու-քեզի-քեզ, մեր-մեզի-մեզ, ձեր-ձեզի-ձեզ), մինչդեռ արևելահայերենում նույն դերանունների տրականը և հայցականը նույնական են (իմ-ինձ-ինձ, քո-քեզ-քեզ, մեր-մեզ-մեզ, ձեր-ձեզ-ձեզ): Արևմտահայերենի անձնական դերանունների եզակի և հոգնակի թվերի առաջին և երկրորդ դեմքերը տրական հոլովում ունենում են *ինծի, քեզի, մեզի, ձեզի* ձևերը:

Եզակի սեռականում արևելահայերենի *քո* ձևի փոխարեն արևմտահայերենն ունի *քու*, իսկ *նրա*-ի փոխարեն՝ *անոր*: Հոգնակիում տարբերությունն առկա է միայն երրորդ դեմքում՝ *նրանց-անոնց*²⁹:

²⁹ Տե՛ս Ռ.Սաքապետոյան, նշվ. աշխ. էջ 138:

Անձնական դերանունների տրականի ձևերին հիշյալ բարբառներում նույնպես բնորոշ է *ի* հավելված ընդունելը, ինչպես, օրինակ, Մշո բարբառում՝ *ընձի, քրզի, մրզի, ձ՛րզի*:

Գրական արևմտահայերենի անձնական դերանվան եզակի երրորդ դեմքի *ան* ձևը (հոգն.՝ *անոնք*) Ռ.Սաքապետյանը ներկայացնում է որպես *նա* դերանվան դրափոխության արդյունք³⁰: Սակայն նկատենք, որ անձնական դերանվան եզակի երրորդ դեմքի համար շատ բարբառներում գործառում են *այն* ցուցական դերանվան օրինաչափորեն հնչյունափոխված (*ան, էն*) ձևերը: Մեր կողմից քննվող բարբառներում անձնական դերանվան եզակի երրորդ դեմքի արժեքով նույնպես գործառում են *այն* ցուցական դերանվան ձևերը, ինչպես՝ *էն* կամ *ընի* (Մուշ, Մասուն), *էնի* կամ *էնիզ* (Կարին): Այդ բարբառներում երկու ձևերն էլ լայնորեն գործառում են, ասենք, Մշո բարբառում՝ *ընի* կամ *հ՛իսնկ* (ընի գ՛րնած կամ հ՛ինկ գրնած):

Անձնական դերանունների բացառական և գործիական հոլովաձևերը հիշյալ բարբառներում կազմվում են տրականից՝ *ընձի - ընձնէ - ընձնօվ, քքրզի - քրզնէ - քրզնօվ, մրզի- մրզնէ- մրզնօվ, ձ՛րզի - ձրզնէ - ձրզնօվ*: Հետաքրքրական իրողություն է հայցական հոլովի համար սովորական *զ* նախդրի գործածությունը նաև բացառականի ձևերում, որ գրանցել ենք Մասունի Փշուտ և Կոշակ գյուղերի խոսվածքները գրառելիս, ինչպես՝

Ըզքրզնը քրզդի՞ գ՛ լը գը ծըր դուն (ձեր տանը քեզանից փոքր է՛լ կա):

Նախդրավոր բացառականի ձևեր Կարնո և Դիադինի բարբառներում վկայված չեն, սակայն Մշո բարբառում եզակի առաջին դեմքի համար գործառող *հ՛իսնէ* բացառական հոլովաձևի *հ՛* ձայնը հնչյունը հակված ենք համարելու ենթադրյալ ի+իս+ն+է կազմության մեջ *ի* նախդրի արտահայտության ձև, ինչպես՝ *հ՛իսնէ աղէզ*:

³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 137:

Ցուցական դերանուններ

Արևմտահայ քերականները սովորաբար այս դերանունները բաշխում են տարբեր խոսքի մասերի մեջ՝ ելնելով տարբերակման շարահյուսական սկզբունքից: Ըստ արտահայտած իմաստի՝ գրական արևմտահայերենի ցուցական դերանունները լինում են.

ա) առարկայանիշ՝ *այս, այդ, այն, աս, ատ, ան, ասիկա, ատիկա, անիկա*.

բ) ածականանիշ՝ *այս, այդ, այն, աս, ատ, սա, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի*.

գ) թվականանիշ՝ *այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, այսքան, այդքան, այնքան, նույնքան* (ծողովրդախոսակցական տարբերակում գործածական են նաև *ասչափ, ատչափ, սաչափ* ձևերը).

դ) մակբայանիշ՝ *այսպէս, այդպէս, այնպէս, նույնպէս*:

Այս, այդ, այն ցուցական դերանունները հոլովվում են հետևյալ կերպ.

Ու. Ն.	եգ. այս (ասիկա)	այդ (ատ, ատիկա)	այն (ան, անիկա)
	հոգն. ասոնք	ատոնք	անոնք
Ս.Տ.	եգ. ասոր	ատոր	անոր
	հոգն. ասոնց	ատոնց	անոնց
Բ.	եգ. ասկէ	ատկէ	անկէ
	հոգն. ասոնցմէ	ատոնցմէ	անոնցմէ
Գ.	եգ. ասով	ատով	անով
	հոգն. ասոնցմով	ատոնցմով	անոնցմով

Մշո և Մասունի բարբառներում ցուցական դերանունների *այս, այդ, այն* շարքի եռանդամության դիմաց առկա է երկանդամություն՝ *իդա, իդա, ինա* (առաջին և երկրորդ դեմքերի նույնանշությամբ):

Կարնո բարբառի ցուցական դերանուններն են՝ *էս, էդ, էն, իսի, իդի, ինի, իսիկ, իդիկ, ինիկ, էսիկ, էդիկ, էնիկ* (*Գյումրի*),

նան՝ *աս, ադ, ան* (*Ջավախք*): Օրինակներ առարկայանիշ և անականանիշ ցուցականներով՝

Էսիգ մերս է բ՛էրէ քախկէն: Բսիգ ընձի պէտկ չէ:

Ադ մարթը հիվընդնա կը (*Ջավախքի խոսվ.*):

Հարցահարաբերական դերանուններ

Մշո և Սասունի բարբառները *ռվ* հարցական դերանվան ղիմաց *վօր* դերանունն են գործածում, որի եզակի սեռականը լինում է *վիր*: Օրինակ՝ *Բդա վի՞ր տուն է:*

Սասունի բարբառում օրինաչափ հնչյունափոխությամբ առկա է *վրը* ձևը: Այսպես՝ *Վը՞ր գինա՝ ըդի վը՞ր դըդէն ը:*

Տվյալ օրինակում առկա են ձևով նույնական և՛ ուղղական (վը՞ր), և՛ սեռական (վը՞ր) հոլովաձևերը:

Գրական արևմտահայերենում նույնպես առկա է այս վերջին իրողությունը. այստեղ և Պոլսի բարբառում ունենք *վօրու՞ն* ձևը:

Մեր կողմից քննության առնված լեզվատարբերակներում Կարնո բարբառն առանձնանում է *օ՞վ> հ՛ու՞մ* դերանվանական հոլովմամբ, ինչպես՝ *Էսիգ հու՞մ տըդէն է:*

Հետաքրքրական է, որ *ռ՞վ* դերանվան արժեքով գործառող *վօ՞ր* հարցական դերանունը Մշո բարբառի տարբեր խոսվածքներում թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվի համար է գործածական, իսկ հոգնակիության իմաստն արտացոլվում է նախադասության ստորոգյալի միջոցով, ինչպես՝ *Վօ՞ր էգավ: Վօ՞ր էգան:*

Անորոշ, որոշյալ և ժխտական դերանուններ

Անորոշ *մի* դերանվան *մը, ըմ, մ* ձևերի մասին որոշ մեկնաբանություններ տվել ենք գոյականների առկայացման կարգի մասին խոսելիս: Դիտարկվող բարբառներում այդ դերանունը լայնորեն գործառում է խոսքի առարկային անորոշություն հաղորդելու միտումով: Անորոշության ընդգծված երանգ ունի *մէգէլ* բաղադրությունը՝ *մէկ+ այլ* կազմությամբ: Բառն առավել հաճախ *մյուս* ցուցականի արժեքով է գործառում:

Հայերենի բարբառներում համատարած է *մարթ* բառի՝ անորոշ դերանվան իմաստով գործածությունը: Այդ իրողությունն առկա է նաև դիտարկվող բարբառներում: Օրինակ՝ Կարնո բարբառով՝ *Մարտ չիդէ, թէ հ'ու՞ր փախնի* (Գյումրիի խոսվ.):

Նկատենք, որ որոշյալ և անորոշ դերանունների արժեքով դիտարկվող բարբառներում բնիկ հայերեն բառանվանումների կողքին, այդ հասկացությունների վերացականությունը հաղթահարելու նպատակով, լայնորեն գործառում են պատմական շփումների ընթացքում այլ ժողովուրդների բառամթերքից վերցված հոմանիշային համապատասխանություններ: Այսպես, իրանական լեզուներից փոխառյալ *ֆըլան*, *ֆըլանքյաս* ձևերին հատուկ է անորոշությունը, որը լրացուցիչ արտահայտչականություն է հաղորդում խոսքին: Կարնո բարբառի խոսվածքներում կիրառվում է նաև *ֆըլան-ֆըստան* հարադրությունը:

Փոխառության գործածականությունը թերևս օտար բառի իմաստային և կիրառական նրբերանգներով է պայմանավորված: Արաբերենից փոխառյալ *թամամ* բառին, օրինակ, հատուկ է բազմիմաստությունը՝ լրիվ, ավարտված, ամբողջ, կատարյալ, վերջ, ավարտ: Իր արտահայտած այդ նրբիմաստներով բառը լայն գործառույթ է ձեռք բերել բարբառներում: Բերենք մեկ օրինակ. *Իդը գընիգ թամամ ձուռը* (Մասունի Սպաղանք գ.):

Ժխտական դերանվան արժեքով *հէջ* բառի գործածությունը բնորոշ է մեզ հետաքրքրող բոլոր բարբառներին: Այսպես՝ *հէճ մարտ*, *հէճ մէզ* (Մուշ), *հէճ պան* (Մասուն): Ոճարտահայտչական հնարքներից մեկով՝ խոսքի գեղջումով, վերոհիշյալ բարբառներում շատ ընդունված է *հէջ* (ոչինչ) պատասխանական բառի գործառույթը, ինչպես, ասենք, Մշո բարբառով՝

-*Ի՞նձ կա ձ՞քր տուն:*

-*Հէճ ք՛ան:*

Փոխադարձ դերանուններ

Փոխադարձ դերանունները, բնականաբար, ունեն միայն հոգնակիի իմաստ, անեզական են, չունեն ուղղական հոլով, իսկ սեռական տրական և հայցական հոլովներում ձևով համընկնում են: Հայերենի բարբառներում համատարած գործառույթ է դրսևորում *իրար* փոխադարձ դերանունը: Կարնո բարբառով՝ հիրար, Սասունի և Մշո բարբառներում հայցական հոլովաձևում կստանա նաև *զ* նախդիրը: Բերենք օրինակ Սասունի բանահյուսությունից՝ *Առան զիրար մըղան սընդուգ...*

Մշո բարբառում այդ փոխադարձ դերանունը շատ գործածական է *հէդ* կապով, ինչպես՝ *հիրարու հէդ*: Ընդ որում՝ Մշո բարբառով գրառված բանահյուսական նյութերում հաճախադեպ է նաև ոչ օրինաչափ հնչյունափոխությամբ հանդես եկող *խըղրաց* բառաբաղադրությունը: Միանգամայն համարժեք ձևեր են *հիրարու հէդ* և *խըղհիրուր՝ միասին* բառիմաստով: Այսպես՝ *Վերու զըդ օսկէստան, խըղհիրուր էրտանկ*³¹: Ինչպես նշեցինք, *հ>խ* հնչյունափոխությունն օրինաչափ չէ Մշո բարբառի համար: Մշո բարբառում՝ *հիրարու* փոխադարձ դերանվան համար գործածական է նաև հոմանշային *մէզմէգու* բառաձևը:

Ներկայացնենք նաև հիշյալ բարբառներում գործառող դերանվանական ձևերի կազմությանն առնչվող իրողություններից մի քանիսը:

Ածականներին հարաբերակից դերանունների (*այսպիսի, այդպիսի, այնպիսի*) համապատասխանությունները բարբառներից յուրաքանչյուրում հանդես են գալիս բարդ կազմությամբ: Դրանց առաջին բաղադրիչը օրինաչափ հնչյունափոխություն կրած տարբերակն է (էս, էդ, էն կամ աս, ադ, ան), իսկ երկրորդը՝ *պէս* կապին համարժեք ձևերը, ինչպես՝ *էսման* կամ *ըսման* (Կարնո բարբառ), *իդաման*, *ըդմալ* և այլն:

³¹ Տե՛ս Ս.Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., էջ 199:

Մշո բարբառում գործառնում են *իդամալ* (*այսպես* և *այդպես* նշանակություններով) և *հըմալ* (*այնպես* նշանակությամբ) ցուցականները: Շատ գործածական է նաև վերջին ձևի դրափոխությամբ առաջացած *հըմլա* ցուցականը՝ *այսպես* և *այդպես* ձևերի արժեքով:

Ինչպես հասկացության դիմաց Մշո և Մասունի բարբառներում գործառնում է *ի՞մալ* հարցականը, որի առաջին բաղադրիչը, մեր կարծիքով, ուղղակի *ինչ* հարցական դերանվան *ի* արմատական ձևն է: Մշո բարբառում *իմալ* ձևին զուգահեռ կիրառվում են նաև *ինչ* և փոխառյալ *չէշիդ* (կերպ), նաև *իըղըըր* (չափ, քանակ) բառերի համադրությամբ կապակցություններ՝ հայաբանության արժեքով, ինչպես՝ *ի՞նչիըղըր* (ինչքա՞ն), *ի՞նչ չէշիդ* (ի՞նչ կերպ):

Կարնո բարբառում կան ցուցական դերանունների արժեքով գործառնող քարացած բարդություններ, որոնք բաղադրիչների ձուլմամբ վերածվել են պարզ բառերի կամ արդի լեզվագագացողությամբ գիտակցվում են իբրև այդպիսին: Օրինակ՝ *դէն* (ընդ+այն), *դէս*, *դէդ*: Նմանատիպ քարացած կազմություններ են նաև Մշո բարբառում առկա *դ՛իդա*, *դինա* ձևերը: Օրինակ՝ *Բ՛ի՛ դ՛իդա* (այստե՛ղ բեր):

Կարնո բարբառում *ինչպե՞ս* հարցական դերանվան իմաստն արտահայտվում է *ինչ* և *ցեդ* բաղադրիչներով կազմված *ի՞նցըդ*, *ի՞նչըդ* բառաձևերով (<*ի՞նչցեդ*): Նման կազմություններ առկա են նաև *այսպես*, *այդպես*, *այնպես* ցուցական դերանունների իմաստն արտահայտելու համար:

ԳԼՈՒԽ Ե
ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՈՐԾԱՌՈՂ ԿԸ ՃՅՈՒՂԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԲԱՅԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրական արևմտահայերենում բայն ունի երեք խոնարհում՝ *ա, է, ի*: Սակավաթիվ բայեր ունեն *ալ* խոնարհիչ:

Մշո բարբառում բայն ունի չորս խոնարհում՝ *ա, է, ի, ալ*, սակայն անորոշ դերբայը հանդես է գալիս միայն *ել, ալ* վերջավորություններով: Այս բարբառում *է, ի, ալ* խոնարհումները դրսևորվում են անորոշի *ել* վերջավորությամբ և տարբերվում են իրարից միայն խոնարհման ձևերում, հատկապես ներկա ժամանակաձևում:

Մշո բարբառում խոնարհումը, ըստ բայերի խոնարհման արտաքին ձևերի, լինում է ներգործաձև և կրավորաձև, ընդ որում՝ այդ իրողությունը սովորաբար բայի սեռով պայմանավորված չէ: Օրինակ՝ չեզոք սեռի *քելել* բայը կարող է խոնարհվել և՛ կրավորաձև՝ *յես կըքելիմ*, և՛ ներգործաձև՝ *յես կըքելեմ*: Երբեմն էլ ներգործական սեռի բայը խոնարհվում է և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև, սակայն երկու դեպքում էլ արտահայտում է ներգործաձև սեռի իմաստ: Օրինակ՝ *ես կուղիմ, յես կուղես*: Սակայն կան բայեր էլ, որ եթե խոնարհվում են կրավորաձև, ապա կրավորական իմաստ են արտահայտում: Օրինակ՝ *կիրիցիմ*՝ այրվում եմ, *կիրիցես*՝ այրում եմ:

Ե լծորդության բայերը խոնարհվելիս ունենում են *ի* խոնարհիչ՝ *կըզ'ըրիմ, կըզ'ըրիս*, թեև երբեմն առկա են նաև *է* խոնարհիչով ձևեր՝ *կըզ'ըրես, կըզ'ըրես* և այլն:

Ինչպես նշում է Ս.Բաղդասարյանը. «Բարբառում տարածված երևույթ է անորոշ դերբայի վերջավորությունների մեկը

մյուսով փոխարինելը»¹, օրինակ՝ *փայլել-փիլալ, փրփրել-փրփրալ, աղերսել-աղերսալ* և այլն: Մշո բարբառում նկատելի են նաև *ու* խոնարհման հետքեր պատճառական բայերում՝ *վերուցել, վերցուցել, մրդուցել, ցուցուցել, դ'արցուցել*, այդպես նաև *թըքել, խըփել, բըլել, ծըռել* բայերի դեպքում (*թըքուցի, թըքուցիր, թըքուց, թըքում, թըքումս, թըքու*):

Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքում բայն ունի *ե, ա* լծորդություններ: Օրինակ՝ *վերծել, բ'ըռնել, ջ'ատտել, հ'իճնել, վազնել* և *հեռենալ, էրտալ, բ'անծըրնալ, ցածըրնալ* և այլն: Գրաբարյան *ի* լծորդության բայերը հիմնականում անցել են *ե* լծորդության, և միայն սահմանափակ թվով բայեր են, որ անցել են *ա* լծորդության, օրինակ՝ *ծիծաղիլ-ծիծղալ, ցավիլ-ցավալ, զգուիլ-զըզվալ, ծարավիլ-ծառվընալ* և այլն: Ու լծորդության բայերի մի մասը անցել է *ե*, մյուս մասն էլ՝ *ա* լծորդության, ինչպես՝ *առնուլ>առնել, թողուլ>թողել, երդնուլ>հ'էտտըվալ, լնուլ>լընալ* և այլն:

Խոսվածքում բայեր էլ կան, որ *ե* լծորդությունից անցել են *ա*-ին. *ամաչել>ամճընալ, ճանաչել>ճանճընալ, արածել>առճալ* և այլն:

Ինչպես նշում է Վ.Պետոյանը, Մասունի բարբառում հին հայերենի չորս լծորդություններից կենսունակ են միայն երկուսը՝ *ի* և *ա*: *Ի* խոնարհման բայերի դիմաց կա՛մ *ի*, կա՛մ *ե* լծորդությունների բայեր են՝ *գրել>կըրիլ, բերել>պերիլ, տանել>դանիլ, նստել>նըստիլ* և այլն: Իսկ գրաբարյան *ա* և *ու* լծորդություններին համապատասխանում է *ա*-ն՝ *լնուլ>ըլալ, թողուլ>թողալ*²: Սակայն «Մասունի բարբառը» աշխատանքում բերված բանահյուսական նմուշներում կան *ու* խոնարհման դրսևորման օրինակներ, ինչպես՝ *լաթ ըմ փրցուց³. գոսկին, գար-*

¹ Ս.Բաղդասարյան-Թափալցյան, *Մշո բարբառը*, էջ 105:

² Տե՛ս Վ.Ս.Պետոյան, *Մասունի բարբառը*, էջ 43:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 93:

ձաթ, զանկին քարիք պարծուց⁴ . կըց զաչքրտ խփուս, պանասս գհասներ⁵:

Կարնո բարբառում անորոշ դերբայը ունի *ել* և *ալ* վերջավորություններ: Եվ ինչպես Մշո բարբառում, այնպես էլ Կարնո բարբառում *ի* խոնարհման բայերն անորոշ դերբայում հանդես են գալիս *ել* վերջավորությամբ, սակայն խոնարհման համակարգում վերականգնվում է *ի* խոնարհիչը՝ *խօսիւմ գը, փախնիւմ գը, սօրվիւմ գը, մեռնիւմ գը* և այլն: Կարնո բարբառի Մեծ Մանթաշի խոսվածքում նկատելի են նաև *ու* խոնարհման հետքեր: *Ու* խոնարհման են ենթարկվում պատճառական և պատճառակերպ բայերը՝ *վերում գը, կըբում գը, դառում գը, բըղի մըսոցում, հարցում գը* և այլն:

Դիադինի բարբառի Վարդենիսի խոսվածքում, ինչպես Ալաշկերտի խոսվածքում, անորոշ դերբայն ունի *ել, ալ* վերջավորություններ՝ *բ'երել, դ'աննալ, հ'եթըրվալ, հ'ընցընել* և այլն: *Ու* լծորդությունը բարբառում դրսևորվում է միայն պատճառականում (*կընըստըցում, նըստըցուց*):

Այսպիսով, գրական արևմտահայերենի երեք լծորդությունների (*ա, ե, ի*, մասամբ նաև՝ *ու*) դիմաց՝ ՀՀ տարածքում գործառնող արևմտյան բարբառներում անորոշ դերբայը հիմնականում հանդես է գալիս *ել, ալ* վերջավորություններով, չնայած Մշո և Կարնո բարբառներն ունեն չորս խոնարհիչ՝ *ա, ե, ի, ու: Ի, ու* խոնարհիչները դրսևորվում են խոնարհման համակարգում: Մասունի բարբառում էլ չորս լծորդություններից կենսունակ են միայն *ի*-ն և *ա*-ն:

Ածանցավոր բայեր և բայածանցներ

Ինչպես ընդհանրապես հայերենում, այնպես էլ արևմտահայերենում և նրա բարբառներում ու խոսվածքներում

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 94:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 95:

բայերն ըստ կազմության բաժանվում են երկու խմբի՝ պարզ և ածանցավոր (ըստ Յու.Ավետիսյանի՝ աններածանց և ներածանցավոր բայեր⁶):

Բայական ածանցները արևմտահայերենում հետևյալներն են՝ *ան, են, ն, չ, ցն, ատ, ոտ, կոտ, տ, կոտ, ու (վ)*:

Սոսկածանցներից գրական արևմտահայերենում առավել կենսունակ է *ն*-ն, քանի որ *ան, են* ածանցներն ունեցած առանձին բայեր պատմական հնչյունափոխության հետևանքով արևմտահայերենում անցել են *ն* ածանց ունեցող բայերի շարքը: Օրինակ՝ *գողանալ>գողնալ, վախենալ>վախնալ, մոռանալ>մոռնալ, հասկանալ>հասկընալ*: Սակայն *ա* խոնարհման բայերի *ն* ածանցը, ի տարբերություն բուն *ն* սոսկածանցի, անցյալի հիմքում հերթագայվում է *ց*-ով, ինչպես *ան* և *են* սոսկածանցների դեպքում է լինում՝ *գիտնալ>գիտց, մոռնալ>մոռց, ամչնալ>ամչց* և այլն:

Գրական արևմտահայերենում *չ* սոսկածանց ունեն միայն երեք բայ՝ *փախչիլ, թռչիլ, դաչիլ*, որոնց զուգահեռ գործածվում են նաև *փախիլ, թռիլ, դալնալ, դալիլ* բայաձևերը: *Հանգչիլ* բայի մեջ *չ*-ն չի գիտակցվում որպես սոսկածանց, իսկ *սառչիլ, ուռչիլ, կորչիլ* հին ձևերի փոխարեն գործածվում են առանց *չ* սոսկածանցի ձևերը՝ *սառիլ, ուռիլ, կորիլ*:

Մշո, Դիաղինի բարբառներում, ինչպես նաև Ալաշկերտի խոսվածքում ընդհանրապես բացակայում է *չ* սոսկածանցը, որը կա՛մ փոխարինված է *ն*-ով, կա՛մ ընկել է՝ *կորչել>կորել, կուրիսել, դիպչել>դիբնալ, դիբնել, ուռչել>ուռել, թռչել>թռոնալ, թռոնել, փլչել>փրլել, բ'ըլել, փախչել>փախնել* և այլն:

Մշո բարբառում, ինչպես նաև Ալաշկերտի խոսվածքում ու Դիաղինի բարբառում գրական արևմտահայերենի նման գրաբարի *ան* ածանց ունեցող բայերի մեծ մասը հանդես է գալիս *ն* սոսկածանցով՝ *ա*-ի անկմամբ՝ *ախքըղնալ, գ'էշնալ*,

⁶ Յու.Ավետիսյան, *Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն*, Ե., 2007, էջ 126:

հ'երզըննալ, գ'օղնալ, ծարըվնալ, ուժօվնալ, չօրնալ, հիվընդնալ և այլն, բայց նաև՝ *մէնձընալ (ան>ըն), նէդէնալ(ան>էն)*: Սակայն բարբառներում առկա գրական և կրոնական փոխառություններում *ան* սոսկածանցը պահպանվել է (*գ'օհանամ* քրզնէ, ասված):

Գրական արևմտահայերենում առավել կենսունակ համարվող *ն* սոսկածանցը Մշո և Դիադինի բարբառներում, ինչպես նաև Ալաշկերտի խոսվածքում նույնպես մեծ ընդգրկում ունի: Նույնիսկ որոշ պարզ բայերի դիմաց բարբառներում հանդես են գալիս *ն* սոսկածանցով ձևեր (*ճանաչել>ճանչընալ, երդվել>հերթըվնալ, կանաչել>կանչընալ, ամաչել>ամչընալ, ճանչընալ, իշխել>հ'իշխընալ*) և այլն: Են սոսկածանցը պահպանվել է մի քանի բայերում՝ *կամէնալ, պարձէնալ, մօդէնալ, մօտկընալ, ունէնալ, աժէնալ*, որոնք դարձյալ գրական փոխառություններ են:

Սոսկածանցավոր բայերը գրեթե նույն կարգի փոփոխություններ են կրել նաև Կարինի բարբառում՝ *չ* սոսկածանցի բացակայություն, *ան>ն, են>ն (թըռնէլ, մօռնալ, ք'աժնէլ, լօղնալ, վախնալ)* անցումներ:

Սասունի բարբառը վերոնշյալ բարբառներից առանձնանում է միայն նրանով, որ *ան* և *են* սոսկածանցավոր բայերը դրսևորվում են միայն ան սոսկածանցով: Օրինակ՝ *մոտենալ>մօդանամ, հեռանալ>հէռանամ* և այլն:

Գրական արևմտահայերենում *ա* խոնարհման պարզ բայերը պատճառական են կազմում *ա* հիմքակազմիչ տարրով և *ցն* ածանցով (*ացն*), *է, ի* խոնարհման պարզ և *-են* սոսկածանց ունեցող բայերը պատճառական են կազմում *է* հիմքակազմիչ տարրով և *ցն* ածանցով (*եցն*): *Ն, չ* սոսկածանց ունեցող բայերը պատճառական են կազմում *ցն* ածանցով՝ *հազցնէլ, թոցնէլ, դպցնէլ, հասցնէլ*, այդպես նաև *է* խոնարհման պարզ բայերից մի քանիսը՝ *խմցնէլ, աշխատցնէլ* և այլն: Գրական հայերենի այս տարբերակում *սառիլ, ուռիլ, կորսուիլ* բայերը *ի* խոնարհման պարզ բայեր են, որոնցից *սառիլ* և *ուռիլ* բայերը պատ-

ճառական են կազմում –*եցն* մասնիկով՝ *սառեցնել, ուռեցնել*, իսկ *կորսուիլ*-ը՝ *ցն* ածանցով՝ *կորսնցնել*: *Իջնել* սոսկաժանցավոր բայի պատճառականը ևս անկանոն ձևով է կազմվում՝ *իջեցնել*: *Լեցնել* և *հարցնել, վերցնել* բայերը խոնարհվում են պատճառական բայերի նման (*լեցուցի, հարցուցի, վերցուցի*):

Ըստ Յու. Ավետիսյանի՝ *ուցան* ածանցով գրաբարյան մի խումբ բայեր՝ *մատուցանել, հատուցանել, յարուցանել* և այլն, որոնք ակտիվ գործածություն ունեին 19- 20-րդ դարերում, արդի արևմտահայերենում ընկալվում են իբրև հնացած ձևեր: Լեզվաբանը փաստում է նաև, որ արևմտահայերենում որոշ բայեր պատճառական իմաստ են արտահայտում սկզբնաձևով՝ առանց պատճառական ածանցի, ինչպես՝ «Հորթեր *արածեց* (արածեցրեց), հունձքի գնաց, գոմէշ լոգցուց...»⁷:

Պատճառականի իմաստը գրական արևմտահայերենում կարող է արտահայտվել նաև անորոշ դերբայի և *տալ* բայի հարադրությամբ, ինչպես՝ *խօսիլ տալ, ըսել տալ* և այլն:

Մշո և Դիադինի բարբառներում, ինչպես և Ալաշկերտի խոսվածքում պատճառական բայերը կազմվում են *ուց* (*ուծ*) ածանցի միջոցով: Ընդ որում, Մշո բարբառում *ուց* ածանցը մի դեպքում ավելանում է կատարյալի, մի այլ դեպքում՝ ներկայի հիմքի վրա, որի հետևանքով բայը բարբառում դրսևորվում է գուգաձևությամբ՝ *քընցուցել//քընուցել, քեղցուցել//քեղուցել, խըմցուցել//խըմուցել*:

Ինչպես հայտնի է, գրաբարում և միջին հայերենում պատճառական բայերը բաղադրվում էին *ուցանել* կազմիչով, այսինքն՝ պատճառականի կազմությունը Մշո բարբառում գրաբարաձև է: Հետաքրքրական է, որ անցյալ կատարյալում *կորուսել* «կորցնել» բայը *ց*-ի փոխարեն, բացի առաջին դեմքից, ունի *ս*, որը *ց*-ի պարզեցմամբ է պայմանավորված (*կորուցի, կորուսիք, կորուսեց, կորուսինք, կորուսիք, կորուսին*): Ներկա

⁷ Յու.Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 132-133:

ժամանակում պատճառական բայերը Մշո բարբառում խոնարհվում են երկու ձևով՝ *կըխըմում, կըխըմցում*:

Այս բարբառում պատճառական բայերը չնայած անորոշ դերբայում ունեն *ել* վերջավորություն, սակայն խոնարհվում են *ու* խոնարհիչով՝ *մըդուց, թըռցուց, նըստըցուց, խաղցուց* և այլն:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Մշո բարբառի *ի* խոնարհման ներգործական սեռի բայերի պատճառականի կազմությունը, այն բացառապես նկարագրական եղանակով է ձևավորվում՝ անորոշ դերբայի և *իդալ* բայի հարադրությամբ՝ *բ'աժնել իդալ, բ'ալուլել իդալ, բարիշել իդալ, ջօգել իդալ, քաշել իդալ* և այլն:

Ալաշկերտի խոսվածքում պատճառական ածանցը դրվում է անցյալի հիմքի վրա և այդ հիմքից կազմված ձևերում գործառում է անփոփոխ՝ *վախեծուծել>վախծուծի, լօղցուցել>լօղցուցի*, իսկ ներկայի հիմքից կազմված ձևերում *ծ*-ն (*ց*-ն) ընկնում է՝ *կըվախեծում, կըվախեծուս, կըվախեծու, կըխըմցում, կըխըմցուս, կըխըմցու* և այլն:

Սասունի բարբառում պատճառական բայեր են կազմվում *(ե)ցն>(ե)ցըն// (ե)ծըն, (ա)ցն>(ա)ցըն* և *ցն//ծըն* պատճառական ածանցներով՝ *հասկըծընիլ, քընծընիլ, հեռըծընիլ, թըռծընիլ* և այլն:

Կարինի բարբառում պատճառական բայերը կազմվում են երկու ձևով՝ *ցըն* ածանցով և անորոշ դերբայի ու *տալ* բայի հարադրությամբ: *Ցըն* ածանցը ավելանում է անցյալի հիմքին: Օրինակ՝ *խօսիմ>խօսեցնել, ճանչընամ>ճանչըցընել, մօռնամ>մօռցընել, տեսնիմ>տեսցընել* և այլն:

Եթե Մշո, Դիադինի բարբառներում, ինչպես նաև Ալաշկերտի խոսվածքում պատճառականը ամբողջությամբ ձևավորվում է *ցուց* կազմիչով, ապա Կարնո բարբառում միայն անցյալ կատարյալում է այդ կազմիչը գործառում:

Կարնո բարբառում պատճառական բայերի խոնարհման համակարգը ունի հետևյալ պատկերը.

Ապառնի
խըմցընէմ

Ներկա
խըմցընէմ գը

Վաղակատար
խըմցըրէր էմ

Անցյալ կատարյալ
խըմցուցի
խըմցուցիք
խըմցուց

Հրամայական եղանակ
խըմցու (ր), խըմցուցէ՛ք

Պատճառականի իմաստը ինչպես արևմտահայերենում ընդհանրապես, այնպես էլ Կարնո բարբառում արտահայտվում է նաև վերլուծական եղանակով, որը բնորոշ էր նաև գրաբարին (Զուղիսս փափկութեան քոյ ետուր ըմպել... Ագաթ., էջ 59, Տայ հեղուկ ի բաց չարութիւնսն, Եզնիկ, Ի էջ 124)⁸: Այն կազմված է անորոշ դերբայի և **տալ** բայի հարադրությամբ՝ **ըսէլ տալ**:

Կրավորական **վ** ածանցը գրական արևմտահայերենում (դասական ուղղագրությամբ) արտահայտվում է **ու** տառով: Այստեղ կրավորական բոլոր բայերը **ի** խոնարհման են՝ **ըսել>ըսուիլ, կարդալ>կարդացուիլ** և այլն: **Ե** և **ի** լծորդության պարզ բայերի կրավորականը կազմվում է ներկայի հիմքից՝ **գրել>գրուիլ, խօսիլ>խօսուիլ, հագնել>հագնուիլ** և այլն, իսկ **ա** լծորդության և սոսկածանցավոր բայերինը՝ անցյալի հիմքից՝ **մոռնալ>մոռցրուիլ, իմանալ>իմացուիլ** և այլն: Պատճառական բայերի դեպքում **ու**-ն ավելանում է **ցն** ածանցի **ն**-ի փոխարեն, օրինակ՝ **հարստացնել>հարստացուիլ, հասկացնել>հասկացուիլ** և այլն:

Մշո, Դիադինի բարբառներում, նաև Ալաշկերտի խոսվածքում **ե** լծորդության ներգործական սեռի պարզ բայերի կրավորականը կազմվում է ներկայի հիմքի վրա **վ** ածանցի հավելումով: Օրինակ՝ **գ՛ըրէլ>գ՛ըրվէլ, կարէլ>կարվէլ, խըմէլ>խըմվէլ** և այլն: **Ե** լծորդության չեզոք սեռի բայերի, ինչպես և **ա** լծորդության բայերից կազմված պատճառական-

⁸Օրինակները բերված են Ա.Աբրահամյանի գրաբարի ձեռնարկից:

ների կրավորականը ձևավորվում է այդ բայերի պատճառական ձևերից՝ անցյալ կատարյալի հիմքի և վերջավորության միջև *վ* ավելացնելով՝ *կայնել>կայնըցվել, նըստել>նըստըցվել, քընել>քընըցվել, կառթալ>կառթացվել* և այլն:

Մշո բարբառում կրավորական *վ* ածանց ունեցող բայերը անորոշ դերբայում միշտ ունեն *ել* վերջավորություն և խոնարհվում են *ի* խոնարհիչով (գ'ըրվել>*կըգ'ըրվիմ, կըգ'ըրվիս, կըգ'ըրվի*):

Կարնո բարբառում նույնպես *ե* և *ի* խոնարհումների բայերը *վ* - ն ընդունում են անորոշի հիմքի և վերջավորության միջև, իսկ *ա* խոնարհմանը՝ կատարյալի հիմքի և վերջավորության միջև, երբեմն *ել*, որպեսզի բաղաձայնների խճողում չառաջանա, ստանում են *ըվ*: Օրինակ՝ *բ'երել>բ'երվիլ, խօսիլ>խօսվիլ, թալնել>թալնրվիլ, հասկանալ>հասկըցվիլ* և այլն:

Կարնո բարբառում պատճառական բայերը կրավորական են դառնում *ցընել>ցըրվիլ* ձևով (*հաքցընել>հաքցըրվիլ, հասկըցնել>հասկըցվիլ*): Չեզոք սեռի բայերից կրավորական հնարավոր է ստանալ՝ նախ դրանք վերածելով պատճառականի, ինչպես՝ *կայնել>կայնըցընել>կայնըցվիլ*, սակայն մի քանի չեզոք սեռի բայերի կրավորականը կազմվում է ներգործական սեռի բայերի նման՝ *նըստել>նըստըրվիլ, մըրցել>մըրցըրվիլ*:

Սասունի բարբառում կրավորական սեռի բայերի կազմությունը էական առանձնահատկություններ չի դրսևորում, այն նման է գրական արևմտահայերենի կրավորական ձևին, օրինակ՝ *կըրիլ>կըրվիլ, սիրիլ>սիրվիլ, չափիլ>չափվիլ* և այլն:

Գրական արևմտահայերենում բազմապատկական բայերը գործածական են և կազմվում են բազմաթիվ ածանցներով, ինչպես՝ *ատ, ոտ, կոտ, կտ, կոտ, ոտկ, րտ, ուրըտ (վըրտ), ուրտ (վըտ)* և այլն: Օրինակ՝ *աւրշտկել* (ավերել), *ժողվվըտտել, խածատել* (կրծոտել), *ծեծկոտուիլ, կանչուրտտել* (շարունակ կանչել), *մորթատել, շտկոտել, վագուրտել, տապլտկիլ* և այլն:

Մշո բարբառում բազմապատկական բայերը կազմվում են *ըրդ* ածանցով, որը դրվում է անորոշ դերբայի հիմքի վրա՝

*փըշրել>փըշրողել, կողրել>կողրողել, ձ'վել> ձ'վըրողել, քա-
մել>քամըրողել, փեքալ (հեալ)>փեքըրողալ* և այլն: Բարբառում
բազմապատկական բայերի իմաստը արտահայտվում է նաև
բայարմատի կրկնությամբ՝ *քաշքըշել, գ'ըզզըզել, ձ'վձըվել* և
այլն: Այստեղ որոշ դեպքերում բային բազմապատկական
իմաստ է տրվում նաև այլ մասնիկների միջոցով, ինչպես՝
*կոխել>կոխըջել, խեխտել>խեխտըլզել, ծեծել>ծեծզել, հա-
զալ>հազվըրողալ, խըփել>խըփըրնել* (փակել) և այլն:

Ալաշկերտի խոսվածքում բազմապատկական բայերը
կազմվում են *դ, ոռ, կ, կռ, կդ, շտ* ածանցների միջոցով: *Կ, կռ, զդ, շտ* ածանցներով շատ քիչ բայեր կան՝ *ծեծել>ծեծկել, ծեծկըռողել, կոխկըռողել, թալզըռողել, կեձզըռողալ, խառնըշտել*: Ավելի գործածական են *դ* և *ռ* ածանցները՝ *թօպըլդալ, քեպըլդալ, ճանգըռողել, դրխկըռողալ, զընզըռողալ* և այլն:

Սասունի բարբառում բազմապատկական ածանցներն են
տ, գըռ, ըռ՝ *կօտըրիլ, սադգըռըիլ, մօրթըռըիլ* և այլն:

Կարնո բարբառում բազմապատկական բայերը կազմվում
են *դ, ոռ, նդ, շտ* ածանցներով: Օրինակ՝ *փընդըռողել, օլըրողել, կողըռողել, թաբըլդել, ժողվըռողել, խօսվըռողալ, հըրըռնդել, կըռվըռողել, հըրմըռողել* և այլն:

Բայի սեռը

Ե՛վ արևմտահայ գրական լեզվում, և՛ արևմտահայ բար-
բառներում բայի սեռի քերականական կարգն ունի դրսևորման
յուրահատկություններ:

Ներգործական սեռի բայերի արտահայտած գործողու-
թյան համար պահանջվող կրող առարկան (այսինքն՝ ուղիղ
խնդիրը) գրական արևմտահայերենում դրվում է միայն ուղղա-
կան կամ բուն հայցական հոլովով: Չնայած, ինչպես վկայում են
որոշ հետազոտողներ, արևելահայերենի ազդեցությամբ՝ արև-

մտահայերենում էլ որոշ բայեր սկսել են անձի առումով ուղիղ խնդիր ստանալ (օր.՝ Աշոտը մարդուն զարկավ)՝:

Գրական արևմտահայերենում ներգործական սեռի որոշ բայեր չեզոքի իմաստ են արտահայտում լծորդության փոփոխությամբ՝ *ել>իլ*: Ըստ Հ.Աճառյանի՝ «Պոլսի բարբառը ընդունակություն ունի *իլ* վերջացող չեզոք բայերից ստանալ ներգործական՝ *իլ* հանգը վերածելով *ել* (փոխանակ- *ցնել*): Այսպես են՝ *ազադիլ-ազադել, էրիլ-էրել, արունիլ-արունել, էփիլ-էփել* և այլն»¹⁰:

Փոխադարձ, անդրադարձ և կրավորակերպ չեզոքները արևմտահայերենում *ի* խոնարհման բայեր են՝ *բարոքրուիլ, գունատուիլ, սուզուիլ, լուսցուիլ* և այլն: Կրավորակերպ չեզոքների մեծ մասը ունի ոչ թե *ուիլ*, այլ *իլ* ձևը՝ *բռնկիլ, վհատիլ, նմանիլ* և այլն:

Եթե գրաբարում ներգործական և կրավորական սեռերը բնորոշվում են խոնարհիչների, վերջավորությունների տարբերությամբ, իսկ գրական արևմտահայերենում կրավորական սեռը արտահայտվում է *վ* ածանցի առկայությամբ, ապա Մշո բարբառում ձևային տարբերությունները ներգործական և կրավորական սեռերի միջև հաճախ որոշակի ընդգծված չեն: Միննույն բայը նույն ձևով կարող է արտահայտել և՛ ներգործական, և՛ կրավորական սեռերի իմաստ, երբեմն էլ միայն ներգործական կամ միայն կրավորական սեռի իմաստ¹¹:

Այսպես, այս բարբառում *ե* լծորդության ներգործական սեռի շատ բայեր և՛ *ի*, և՛ *ե* խոնարհիչներով խոնարհվելու դեպքում արտահայտում են միայն ներգործական իմաստ (օրինակ՝

⁹ Յու.Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 139:

¹⁰ Հ.Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի*, Ե., 1941, էջ 142:

¹¹ Տ՛ես Ս.Բաղդասարյան-Թափալցյան, նշվ.աշխ., էջ 116, նաև՝ Ա.Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, Ե., 1953, էջ 201-203:

անթեղել-կանթեղիմ, կանթեղեն, աղունել-կաղունիմ, կաղունեն, ք'ածնել-կըք'ածնիմ, կըք'ածնեն և այլն), մինչդեռ այդ կարգի այլ բայեր *է* խոնարհիչով խոնարհվելիս արտահայտում են ներգործական, իսկ *ի* խոնարհիչով խոնարհվելիս՝ կրավորական իմաստ: Օրինակ՝ *կիրիցեն, կըջարթեն, կարնօղեն* ձևերը ներգործական իմաստ ունեն, իսկ *կիրիցիմ, կըջարթիմ, կարնօղիմ* ձևերը արտահայտում են կրավորական իմաստ:

Այս կարգի բայերը սահմանական եղանակի ներկա ժամանակի երրորդ դեմքում կարող են ունենալ *է, ի*, երբեմն էլ *ա* վերջավորությունները: *Ի* - ով վերջանալու դեպքում նրանք միայն կրավորական իմաստ են արտահայտում: Այսպես՝ *կիրիցի, կազաղի, կըջ'արթի* նշանակում է՝ այրվում է, ազատվում է, ջարդվում է: Այսինքն *ի* խոնարհիչով խոնարհվելու դեպքում երրորդ դեմքի վերջավորությունը միանգամայն համապատասխանում է բայի սեռին: Իսկ *է*-ով վերջանալու դեպքում այդ ձևը բացառապես ներգործական իմաստ է արտահայտում, օրինակ՝ *կազաղէ, կերիցէ, կըջ'արթէ* նշանակում են՝ ազատում է, այրում է, ջարդում է:

Այս կարգի բայերը, ինչպես նշեցինք, եզակի երրորդ դեմքում ունեն նաև *ա* վերջավորություն, որը ևս միայն ներգործական իմաստ է արտահայտում՝ *կազաղա, կերիցա, կըջ'արթա*:

Նշանակում է՝ Մշո բարբառում բայերը խոնարհվում են ներգործաձև և կրավորաձև, որը չպետք է շփոթել բայի սեռի հետ:

Բոլոր դեպքերում, Մշո բարբառում կրավորականության իմաստի հիմնական արտահայտիչը *վ*՝ ածանցն է: Եվ ընդհանրապես, այդպես է և՛ գրական արևմտահայերենում, և՛ ՀՀ տարածքում գործառող արևմտահայ բարբառներում: Օրինակ՝ Քարըն ընդուր չակուջով *ջ'ատտըվալ*: Էդուր տուն քու ձ'եռով *ավիրվալ*:

Բայի սեռի քերականական կարգը հետաքրքրական դրսևորումներ ունի նաև Ալաշկերտի խոսվածքում: Այստեղ

երբեմն հարակատար դերբայը կարող է առանց ածանցման էլ կրավորականի նշանակություն ունենալ¹²: Ի դեպ, այս երևույթը հատուկ է նաև այլ բարբառների, միջին հայերենին և արևմտահայ գրական լեզվին : Օրինակ՝ Էդ պաղ *քանդուզ ա*. Ընդուր առդ *քաղուզ ա*. Քու մաղ *ջ'առտուզ ա*: Այս օրինակներում միննույն բայաձևը առանց ածանցման արտահայտում է և՛ ներգործական, և՛ կրավորական իմաստ. *Քանդուզ* պատ=քանդած պատ և քանդված պատ:

Ինչպես հայտնի է, գրաբարում կան բայեր, որոնք միևնույն ձևով արտահայտում են և՛ ներգործական, և՛ կրավորական սեռերի իմաստներ: Այսպիսի բայերը կոչվում են հասարակ բայեր: Հասարակ բայի այս հատկությունը որոշ չափով առկա է Ալաշկերտի խոսվածքում, որտեղ նույնիսկ պատահում է, որ բայը նույն ձևով արտահայտում է և՛ ներգործական, և՛ կրավորական, և՛ չեզոք սեռերի իմաստներ: Օրինակ՝ Տաշտի կատ *թապե* (տաշտի կաթը թափվել է՝ չեզոք). Տաշտի կատ քու մեխկով *ա թապե* (տաշտի կաթը քո մեղքով է թափվել՝ կրավորական). Տաշտի կատ կադուն *ա թապե* (տաշտի կաթը կատուն է թափել՝ ներգործական): Այսպիսի գործածություն ունեն *ե* խոնարհման ներգործական բայերի մի մասը, չնայած կրավորական իմաստի արտահայտման համար գործածվում են նաև սրանց *վ* ածանցով ձևերը. օրինակ՝ տաշտի կատ քու մեխկով *ա թապվե*¹³:

Ալաշկերտի խոսվածքում էլ կան բայեր, որոնք *վ* ածանց են ստանում, սակայն կրավորական իմաստ չեն արտահայտում: Դրանք կրավորակերպ չեզոքներն են, որոնք խոսվածքում շատ չեն՝ *հառձագվել*, *վառժըվել*, *հարմարվել* և այլն:

Հիշյալ խոսվածքում, ըստ Ք.Մադաթյանի, կան նաև *վ* ածանցով միջին- անդրադարձ սեռային առում ունեցող բայեր՝ *սանդրըվել*, *թըրաշվել*, *լըվածվել*, *քումվել*, *բոլուկվել*, *փատըտվել*

¹² Տե՛ս Ք.Մադաթյան, *Ալաշկերտի խոսվածքը*, էջ 106-107:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 107:

(*Քօսմլաձ* հ'իրար գ'ըլօխ. Հագօն ու Վանօն *փատլլաձ* հ'իրար)¹⁴: Իսկ *ցողվել* «ողողել» բայը, թեև ունի *վ* ածանց, սակայն ներգործական սեռի է. շոր *ցողվել*, աման *ցողվել* և այլն:

Ալաշկերտի խոսվածքում կան նաև կրկնասեռ բայեր, օրինակ՝ *փրճել*, *իշկել*, *խաղալ*, *լընալ*, *խանձել*, *օխպալ* և այլն: Կան բայեր, որոնց կրկնասեռությունը անցյալ կատարյալում դրսևորվում է՝ դիմային տարբեր վերջավորություններ ստանալով: Օրինակ՝ *գուլլլել* - Ջ'ուրըն *գուլլլալ* (չեզոք). Շորըն *գուլլլեժի* (ներգործական). *մըրթոդել*- Յես *մըրթոդա* (չեզոք). Ճիժըն պադերըն *մըրթոդեժ* (ներգործական):

Սասունի բարբառում ևս ներգործական սեռի բայերը պահանջում են ուղիղ խնդիր լրացում, որն այստեղ ստանում է *գու՛վ*, *զի՛նչ* հարցերը. առաջինը՝ շնչավորների, երկրորդը՝ առարկաների համար: Օրինակ՝ սիրիլ (գու՛վ, զի՛նչ) *զԲեդիզ, զկիրք*: Այս բարբառում ուշագրավ է նաև, որ ներգործական սեռի բայերի ուղիղ խնդիրը որոշյալ առումով գործածվելիս արտահայտվում է *զ* նախդիր ունեցող հայցական հոլովով, ինչպես գրաբարում է: Օրինակ՝ դեսնիլ *զԳեվօրկ, զսեղան*: Ընդ որում՝ անորոշ առման դեպքում *զ* նախդիրը բացակայում է: Օրինակ՝ *մարտ* դեսա:

Չեզոք սեռի բայերը այս բարբառում պահանջում են *վու՛ր*, *ինչու՛*, *վու՛րինա*, *ինչու՛նա*, *վու՛րինով*, *ինչո՛վ* հարցերին համապատասխան լրացումներ, որոնք դրվում են տրական, բացառական և գործիական հոլովներով: Իսկ կրավորական սեռի բայերը կազմվում են նույն ձևով, ինչ գրական արևմտահայերենում, այսինքն՝ *վ* կրավորական ածանցով: Օրինակ՝ *գրվել-կըրվիլ, սիրվել-սիրվիլ, չափվել-չափվիլ* և այլն:

Կարնո բարբառում էլ չեզոք սեռի բայերը վերածվում են ներգործականների՝ ստանալով *ցըն* պատճառական ածանցը: Օրինակ՝ *վազել-վազեցընել, մեռնել-մեռցընել, լօղնալ-լօղցընել* և այլն: Այստեղ երբեմն *ցըն* պատճառական ածանց ունեցող բայը

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 107:

ևս գործածվում է *տալ* բայի հարադրությամբ, այսինքն՝ ստացվում է կրկնակի պատճառական: Օրինակ՝ *սիրեցրնէլ տալ, վազեցրնէլ տալ* և այլն:

Ի տարբերություն ՀՀ տարածքում գործառող արևմտյան մյուս բարբառների՝ Կարնո բարբառում կրավորական սեռի բոլոր բայերը գրական արևմտահայերենի նման *ի* խոնարհման են: Օրինակ՝ *ըսել>ըսուիլ, կարդալ>կարդացուիլ, բ'երել>բ'երվիլ, խօսիլ>խօսվիլ, թալնել>թալնըվիլ, հասկանալ>հասկըցվիլ* և այլն: Կրավորական սեռի բայերը ևս երբեմն ստանում են *ցրն* ածանցը (*ուզվէլ-ուզվեցրնէլ, գ'ըրվիլ-գ'ըրվեցնէլ*):

Կարնո բարբառում ևս չեզոք սեռի բայերից ձևավորված պատճառականներից *վ* ածանցով կազմվում են կրավորականներ, օրինակ՝ *կայնէլ-կայնըցվիլ, վազել-վազեցվիլ*: Բայց մի քանի չեզոք բայերի կրավորականը կազմվում է ներգործական սեռի բայերի նման, ինչպես՝ *նստիլ-նըստըվիլ, մըրցել-մըրցըվիլ* և այլն:

Այսպիսով, և՛ գրական արևմտահայերենում, և՛ դիտարկվող բարբառներում կրավորական սեռի ցուցիչը հիմնականում *վ* ածանցն է, իսկ ներգործական և չեզոք սեռերը չունեն ձևաբանական տարբերակում:

Բայի անդեմ ձևեր

Գրական արևմտահայերենում ուսումնասիրողները սովորաբար դիտարկում են վեց դերբայներ՝ անորոշ, ապառնի, հարակատար, վաղակատար, ենթակայական և ժխտական¹⁵: Որոշ լեզվաբաններ առաձնացնում են նաև ընթացակցական դերբայը: Վերջինս դրսևորվում է նաև ՀՀ տարածքում գործառող արևմտյան բարբառներում:

¹⁵ Ինչպես հայտնի է, արևմտահայերենում բացակայում են անկատար և համընթացական դերբայները՝ բնորոշ լինելով միայն արևելահայ բարբառներին:

Անորոշ դերբայ

Անորոշ դերբայը գրական արևմտահայերենում պատասխանում է *ի նչ ընեւ, ի նչ ըլլալ* հարցերին: Լծորդություններին անդրադառնալիս փաստել ենք, որ այս դերբայն ունի *ալ, ել, իլ*, սակավ դեպքերում՝ նաև *ուլ* վերջավորություններ: Իբրև գործողության անուն՝ գործածվում է գոյականաբար և հոլովվում Ու հոլովմամբ (իհարկե, բացակայում է ներգոյական հոլովը):

ուղդ.	ընելը	խօսիլը	կարդալը
սեռ-տր.	ընելուն	խօսելուն	կարդալուն
բաց.	ընելէն	խօսելէն	կարդալէն
գործ.	ընելով	խօսելով	կարդալով

Գրական արևմտահայերենում երբեմն գործածվում են անորոշի հոգնակիաձև ստացական կազմություններ, ինչպես՝ «Երթալնիդ բարի ըլլայ»:

Այս դերբայը արևմտահայերենում գործածվում է և՛ անորոշ, և՛ որոշյալ առումներով, հոլովված ձևերով նախադասության մեջ կարող է հանդես գալ գոյականին բնորոշ շարահյուսական պաշտոններով՝ դառնալով ենթակա, խնդիր, որոշիչ, պարագա և այլն:

ՀՀ տարածքում գործառող արևմտյան բարբառներում անորոշ դերբայն ունի կազմության որոշ զանազանություններ: Այսպես, Մշո, Դիաղինի բարբառներում դերբայական վերջավորություններն են *ել, ալ*, Կարնո բարբառում՝ *ել, ալ* (այստեղ *ել* վերջավորություն ունեն նաև *ի* խոնարհման բայերը), Սասունի բարբառում՝ *իլ, ալ*:

Դիտարկվող բարբառներում ևս անորոշ դերբայը իբրև փոխանուն ստանում է հոդ և հոլովվում է՝ ենթարկվելով Ու հոլովման: Օր.՝ *էրթալըդ* էղնի, *գ'ալըդ* չէղնի (Կ.):

ուղղ.	գարտալ
սեռ.	գարտանլու
տր.	գարտանլու
հայց.	զգարտալ
բաց.	գարտանլուց, գարտանլու ինն, գարտանլեն
գործ.	գարտանլօլ (Ս.)

Կարնո բարբառում անորոշ դերբայի բացառական հոլովը նախադասության մեջ հանդես է գալիս որպես ձևի, պատճառի պարագաներ: Օրինակ՝ Ֆըռընջին խըմօրը **դօղդղալեն** շաղվե ու քըցե կը ֆուռը: Շաղ **ուղէլեն** փօրը կըցավի:

Անորոշ դերբայի սեռական հոլովը դիմորոշ հոդով և **պաշտան** բառ-մասնիկի հետ Կարնո բարբառում ցույց է տալիս գործողության կատարման անմիջականություն, օր.՝ **գ'ալուն պաշտան** (գալուն պես):

Մշո բարբառում անորոշ դերբայի սեռական, տրական հոլովներով և **հէղ, խըտ** կապերով ժամանակի պարագայի նշանակությամբ հետաքրքրական կառույցներ են փաստված, որոնք իմաստով համապատասխանում են արևելահայ գրական լեզվի համընթացական դերբային: Օրինակ՝ Ընի կերթեր, **խըտ էրթըլուն** լէ գ'իլեր ու կըմօրմըքեր (Նա գնում էր, գնալիս էլ լալիս ու մորմոքում էր). Ընի հեքյաթ կըսեր, **քսէլու հէղ** անուշ ձ'էնօվ խաղ կըսեր (Նա հեքիաթ էր պատմում, պատմելիս էլ դուրեկան, քաղցր ձայնով երգում էր): Նման կառույցները կարող են նաև ցույց տալ գործողությունների անմիջական հաջորդականություն: Օրինակ՝ **խըտ նըստէլուն** ըսեց (Հենց որ նստեց ասաց, Նստելուն պես ասաց), **խըտ գ'ալուն** հ'ուզեց (Հենց որ եկավ, ուզեց, Գալուն պես ուզեց):

Անորոշ դերբայի բացառական հոլովաձևերից մեկը Մշո բարբառում նման է ընթացակցական դերբային (**էրթըլեն, գ'ըրէլեն**) և նախադասության մեջ հանդես է գալիս որպես ձևի, երբեմն էլ պատճառի պարագա: Օրինակ՝ Էրէխեն **ուղէլեն** կը խա-

դար (Երեխան ուտելով խաղում էր). Էրեխեն շաղ **ուղկէն** հիվընդցավ (Երեխան շատ ուտելուց հիվանդացավ): Այս բարբառում հետաքրքրական է նաև որոշ բայերում **ի** նախահավելվածի առկայությունը, ինչպես՝ **հ'իլալ, իդալ, հ'իքալ**:

Վաղակատար դերբայ

Գրական արևմտահայերենում այս դերբայն ունի **եր** վերջավորություն, որը դրվում է **ե, ի** խոնարհումների պարզ բայերի ներկայի հիմքի վրա, իսկ մյուս բայերի անցյալի հիմքի վրա: Պատասխանում է **ի՞նչ ըրեր, ի՞նչ եղեր** հարցերին (**թոեր, մտեր, մօտեցեր, մօտեցուցեր**): Միանալով օժանդակ բայի ներկա և անցյալ ձևերին՝ կազմում է սահմանական եղանակի ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևերը:

Դիտարկվող բարբառային միավորներում ևս վաղակատար դերբայը հիմնականում ունի **եր** (էր) վերջավորություն, որը դրվում է **ե** և **ի** խոնարհումների պարզ, բազմապատկական և կրավորական ածանց ունեցող բայերի ներկայի հիմքի վրա (Կ. **հարփիմ- հարփեր, սըբանէմ- սըբաներ, բ'աժնըվիմ- բ'աժնըվեր, կօղըռդէմ-կօղըռդեր**. Մ.,Դ. **գըրել- գըրեր, գրեր, ըսել-ըսեր, սիրել-սիրեր, ծագվել-ծագվեր, կօղըռդել-կօղըռդեր**), իսկ սոսկաձանցավոր, պատճառական և **ա** խոնարհման բայերի անցյալի հիմքի վրա (Կ. **տէսնիլ-տէսեր, փախնել-փախեր, հասնիլ-հասեր, քելցընել-քելցըրեր, խաղցընել-խաղցըրեր, աղալ-աղցեր**. Մ.,Դ. **հասնել- հասեր, տեսնել-տեսեր, թըռնել-թըռեր, խաղալ-խաղցեր, կարթալ-կաթթըցեր, մընալ- մանցեր, քելցընել- քելցուցեր, նըստըցընել- նըստըցուցեր, խըմցընել- խըմուցեր, խըմցուցեր**):

ՀՀ տարածքում գործառող բարբառներում վաղակատար դերբայը գործածվում է սահմանական եղանակի վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևերը կազմելու համար: Ընդ որում՝ Կարնո, Մշո, Դիադինի բարբառներում եթե օժանդակ բայը դրվում է դերբայից առաջ, ապա վաղակատար

դերբայի *ք*-ն ընկնում է (օրինակ՝ *ք'երեր էմ*, բայց՝ *յէս էմ ք'երէ, կառթըցեր էմ- յէս էմ կառթըցէ*): Նույն երևույթը նկատվում է նաև ժխտական խոնարհման ժամանակ (*աղեր էմ- չէմ աղէ*):

Մշո բարբառում երբեմն վաղակատարով ձևավորված ժամանակաձևը դրվում է այլ եղանակային ձևերի վրա և ցույց է տալիս հիմնական գործողությանը հարակից մեկ այլ գործողություն, ինչպես՝ *Քոմեր ին կը զըրուցին. Չօբեր ին կաղօթին*:

ՀՀ տարածքում գործառող բարբառներից միայն Մասունի բարբառում է, որ վաղակատարը ունի *իյ, իր* վերջավորությունները՝ *կրիյ, գարտացիյ* (Տավորիկում՝ *կըրիր, գարտացիր*):

Հարակատար դերբայ

Գրական արևմտահայերենում հարակատար դերբայը պատասխանում է *ի՞նչ ըրած, ի՞նչ եղած* հարցերին: Կազմվում է *ած* մասնիկով, որն ավելանում է *ե, ի* խոնարհումների պարզ (նաև կրավորական և բազմապատկական ածանց ունեցող) բայերի ներկայի հիմքին, իսկ *ա* խոնարհման պարզ, սոսկաձանցավոր և պատճառական բայերի՝ անցյալի հիմքին: Օրինակ՝

գրել- գրած	գրուիլ – գրուած
կարդալ-կարդացած	կտրտել- կտրտած
հասցնել- հասցուցած	թռչիլ- թռած
մտնել-մտած	մօտենալ-մօտեցած
մոռնալ-մոռցած	խօսիլ-խօսած

Ինչպես հայտնի է, թե' արևելահայերենում, թե' արևմտահայերենում հարակատար դերբայն ունի ինքնուրույն գործածություն: Բայց ի տարբերություն արևելահայերենի՝ գրական արևմտահայերենում հարակատար դերբայը օժանդակ բայի հետ հարակատար ներկա և հարակատար անցյալ ժամանակաձևեր կազմում է բոլոր բայերի դեպքում՝ անկախ նրանց իմաստից և սեռից: Գրական արևմտահայերենում հարակատար դերբայով կազմվում են նաև բայի երկրորդական ժամա-

նակաձևեր: Օրինակ՝ *նստած* եղեր է, *նստած* ըլլալու է, *նստած* կըլլանք, *սիրած եղած* ըլլայի, *սիրած* գրվամ գոր և այլն:

Հարակատար դերբայը փոխանվանաբար գործածվելիս հոլովվում է, ինչպես՝

ուղղ.	խմածը	խմածները
սեռ.-տր.	խմածին	խմածներուն
բաց.	խմածէն	խմածներէն
գործ.	խմածով	խմածներով

Այս դերբայը արևմտահայերենում ևս հանդես է գալիս նաև ածականական կիրառությամբ, այսինքն՝ որոշի շարահյուսական պաշտոնով:

Կարևոր բարբառում հարակատարն ունի *ած* վերջավորություն, որը դրվում է ներկայի կամ կատարյալի հիմքի վրա, ինչպես գրական արևմտահայերենում: Օրինակ՝ *հարսիէլ-հարսիած, սրբանէլ-սրբանած, աղալ-աղցած, ք'ացվէլ-ք'ացված*: Բացառություն է կազմում *գ'ալ* բայը, որի հարակատարը կազմվում է անորոշ դերբայից՝ *գ'ալած*:

Հարակատար դերբայը, օժանդակ բայի հետ բաղադրվելով, կազմում է հարակատար ժամանակները: Իսկ իբրև փոխանուն՝ *ի* հոլովման է ենթարկվում և նախադասության մեջ դառնում է ենթակա, ստորոգելի, որոշիչ և այլն:

Դերբայական այս ձևը Մասնո բարբառում ունի *ուզ (ուկ)* վերջավորություն՝ *կըրուզ, գարտըցուզ* և այլն: Իսկ Մշո բարբառում այն կազմվում է *ուզ(ուկ)* և *ած (ած)* մասնիկներով, որոնցից ավելի գործածական է *ուզ*-ը: Ընդ որում՝ այս վերջավորությամբ դերբայական ձևը Մշո բարբառում ներգործական նշանակությամբ չի գործածվում. այն կիրառելի է կրավորական և չեզոք իմաստներով: Օրինակ՝ *ջ'առթուզ իմ, պարզուզ իմ*:

Հարակատար դերբայի *ած* վերջավորությամբ (միայն հոգնակի թվով) բարբառը արտահայտում է նաև վաղակատարի

իմաստ: Օրինակ՝ Մըշու **էգսաձ** էն, մըր գ'էղ ախչիգ էն **հավնաձ**։ Ընդոնք **սէխսաձ** ին Մըշու Սուլթան Մըփ Կարաբէդու զօրութէն:

Մշո բարբառում հարակատարի վերջավորություններն ավելանում են *ե* խոնարհման պարզ, կրավորական և բազմապատկական ածանց ունեցող բայերի ներկայի հիմքին (գ'ըրէլ-գ'ըրուգ, գ'ըրաձ, ըսէլ-ըսուգ, ըսաձ, ջ'արթըրդէլ-ջ'արթըրդուգ, ջ'արթըրդաձ) և սոսկածանցավոր, պատճառական ու *ս* խոնարհման բայերի անցյալի հիմքին (մըղնէլ-մըղուգ, մըղաձ, տէսնէլ-տէսուգ, տէսաձ, հեռէնալ-հեռէցուգ, հեռէցաձ, նէղէնալ-նէղէցուգ, նէղէցաձ, խաղալ-խաղցուգ, խաղցաձ, մընալ-մանցուգ, մանցաձ, քէցընէլ-քէցըրուգ, քէցըրաձ):

Անկանոն բայերի հարակատար (նաև՝ վաղակատար) դերբայը ևս կազմվում է անցյալի հիմքից (ուղէլ-կէրաձ-կէրուգ, էրթալ-գ'ացուգ, գ'ացաձ):

Բարբառում հարակատար դերբայի ձևեր ունենում են ներգործական և չեզոք սեռերի բայերը (օրինակ՝ **գ'ըրէլ-գ'ըրուգ, գ'ըրաձ, իըմէլ-իըմուգ, իըմաձ, քընէլ-քընուգ, քընաձ** և այլն), սակայն ներգործական սեռի բայերի հարակատարը առանց **վ** ածանցի արտահայտում է կրավորական իմաստ, և պատահական չէ, որ այստեղ հարակատարը կրավորական **վ** ածանցով գրեթե չի հանդիպում, մի բան, որ Մշո բարբառի հետաքրքրական առանձնահատկություններից է:

Հարակատար դերբայը մասնակցում է բայի եղանակային ձևերի կազմությանը և օժանդակ բայի հետ ձևավորում է սահմանական եղանակի հարակատար և անցյալի հարակատար ժամանակները՝ **քընուգ իմ, քընաձ իմ**:

Ըստ Ք.Մադաթյանի՝ Ալաշկերտի խոսվածքում ևս **աձ** (**աձ**) վերջավորությամբ դերբայը ցույց է տալիս անցյալում կատարված գործողություն, «բայց առանց հետևանքայնության, չունի ինքնուրույն գործածություն, մասնակցում է վաղակատար ժամանակների կազմությանը միայն»¹⁶: Օրինակ՝

¹⁶ Ք.Մադաթյան, նշվ. Աշխ., էջ 109:

տէսաձ ա, տէսաձ էն ձևերը նշանակում են՝ *տեսել են, տեսել էին*: Հարակատար դերբային հատուկ իմաստ (որն իր մեջ ունի գործողության հետևանքային վիճակ) արտահայտվում է **ուզ** վերջավորությամբ, որը և, ըստ Ք.Մադաթյանի, հարակատար է, ինչպես՝ *քընուզ ճիժ, նեղեցուզ մարթ, կողրուզ փեղ* (քնած երեխա, հոգնած մարդ, կոտրած փայտ): Իմաստային և կիրառական հատկանիշները հաշվի առնելով՝ Ք.Մադաթյանը **աձ** վերջավորությամբ դերբայը միացնում է **էր** վերջավորությամբ վաղակատարին և երկուսը միասին անվանում *անցյալ դերբայ*¹⁷:

Հարակատար դերբայը, ըստ Ք.Մադաթյանի, Ալաշկերտի խոսվածքում ժամանակների կազմությանը չի մասնակցում: Այն նախադասության մեջ հանդես է գալիս իբրև որոշիչ (*ջ'առտուզ փեղ, ախժուզ ցորեն*)¹⁸:

Դիադինի բարբառում հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն: Դրանով են ձևավորվում հարակատար ներկա և հարակատար անցյալ ժամանակաձևերը (*քնուկ եմ, քնուկ ես, քնուկ ա . քնուկ ի , քնուկ իր, քնուկ էր*):

Ենթակայական դերբայ

Այս դերբայը գրական արևմտահայերենում պատասխանում է *ի՞նչ ընող, ի՞նչ եղող* հարցերին: Կազմվում է **ող** վերջավորությամբ, որն ավելանում է **ե, ի** խոնարհման բայերի ներկայի և **ա** խոնարհման բայերի անցյալի հիմքի վրա: Օրինակ՝ *գրող, հարցնող, հաւնող, մոռցող, մօտեցող, մօտեցնող* և այլն:

Գոյականաբար գործածվելիս ենթակայական դերբայը եզակիում ենթարկվում է **ի** հոլովման, իսկ հոգնակի թվում՝ **ու** հոլովման: Կարող է նաև հոդ ստանալ: Իբրև անկախ դերբայ՝ գործածվում է փոխանվանաբար և կարող է հանդես գալ գոյա-

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 110:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 111:

կանին բնորոշ շարահյուսական կիրառություններով՝ ենթակա, հատկացուցիչ, որոշիչ, խնդիր, ինչպես նաև **եմ** օժանդակ բայի հետ՝ բաղադրյալ ստորոգյալ:

Բարբառներում ենթակայական դերբայն ունի **օղ** վերջավորություն և ըստ բայահիմքերի՝ կազմության նույն օրինաչափությունները, ինչ գրական արևմտահայերենում (ներկայի հիմքով՝ **բ'երօղ, մըղնօղ, գ'ըղնօղ, հ'ընգնօղ, խօսօղ, գ'ըրօղ, ջ'աղթօղ, ջ'ըրվօղ, ջ'արթըրդօղ**, անցյալի հիմքով՝ **աղցօղ, բ'անցըրցօղ, գ'օղցօղ, խասկըցօղ, տըվօղ, խընդացօղ, դ'աղցօղ, էգօղ, խաղցօղ, կարթըցօղ, հ'իմցօղ, հեռեցօղ, նեղեցօղ, մօղեցօղ**): Ճիշտ է, պատճառական բայերի ենթակայական դերբայը նույնպես կազմվում է ներկայի հիմքից, սակայն Մշո բարբառում երբեմն հանդիպում են ենթակայական դերբայի՝ անցյալի հիմքից կազմված ձևեր, ինչպես **քեղցըրդօղ, խաղցըրդօղ**:

Այս դերբայը Սասունի բարբառում ունի **ուղ** վերջավորություն՝ **կըրուղ, գարտըցուղ, դէսնուղ** և այլն:

Ապառնի դերբայ

Ապառնի դերբայը գրական արևմտահայերենում պատասխանում է *ի՞նչ ընելու, ի՞նչ ըլլալու* հարցերին: Ձևավորվում է անորոշ դերբայից՝ **ու** վերջավորության հավելումով, օրինակ՝ **գրել-գրելու, սորվիլ-սորվելու, թողուլ- թողելու**: Ընդ որում, ինչպես երևում է օրինակներից, *ի* և *ու* խոնարհիչները փոխարինվում են ե-ով: Օժանդակ բայի ներկա և անցյալ ձևերին միանալով՝ այս դերբայը կազմում է հարկադրական եղանակի ապառնի և անցյալ ապառնի ժամանակաձևեր, ինչպես՝ Վաղը առտու կանուխ ընթերցատուն **երթալու է** (պետք է գնա):

Ապառնի դերբայը Կարնո և Մշո բարբառներում ունի **ու**, *իք* վերջավորությունները, որոնք ավելանում են անորոշ դերբայի վրա: Օրինակ՝ Կ. *գ'ըրել- գ'ըրելու, գ'ըրելիք, խօսել-խօսելու, խօսելիք*, Մ. *երթալ-երթըլու, իղալ-իղալու, մըղնալ-մըղնալու, էնել-էնելիք, ըսել-ըսելիք* և այլն:

Սահմանական եղանակի ապառնի ժամանակաձևերը կազմվում են ապառնի դերբայի **ու** վերջավորությամբ ձևից: Ի դեպ, կան արևմտյան այլ բարբառներ (օրինակ՝ Եվդոկիայի), որոնցում ապառնի ժամանակաձևերը կազմվում են **իք** վերջավորությամբ ապառնի դերբայով: Կարնո և Մշո բարբառներում ապառնի դերբայի **իք**-ով ձևը նախադասության մեջ մեծ մասամբ հանդես է գալիս գոյականաբար: Օրինակ՝ Շադ բ'ան մընաց **ըսելիք** . Աշխար մէ գ'որձ ունիմ **էնելիք**. Ընի ընձի **տալիք է. Տալիքսի** տըվի փըրցա. Դու ընձի **տալիք** մանցիր:

Նկատենք նաև, որ Մշո բարբառում ապառնի ներկա և անցյալ ժամանակաձևերը (կազմված **ու** վերջավորությամբ ապառնի դերբայով) մեծ կիրառություն չունեն: Սրանց դիմաց բարբառում հիմնականում գործառում են **բըղի (պիտի)** մասնիկով և ըղձական եղանակի համապատասխան ձևերով կառույցներ, ինչպես նաև սահմանականի ներկան: Ըստ Ս. Բաղդասարյանի՝ ապառնի դերբայը բարբառում լայն կիրառություն ունի որպես որոշիչ, ինչպես՝ **ուղէլու հաց, խըմէլու ջ'ուր, քընէլու տէխ, կարքէլու տըղա** և այլն¹⁹: Սակայն կարծում ենք՝ այս բաձևները ապառնի դերբայի հետ կապ չունեն. դրանք անորոշ դերբայի սեռական հոլովաձևեր են:

Սասունի բարբառում ևս ապառնի դերբայն ունի **ու** վերջավորություն՝ **կըրսւլու, գարտսւլու**: Ըստ Վ.Խաչատրյանի՝ Դիադինի բարբառը ապառնի դերբայ չունի, և ապառնի ժամանակի իմաստն արտահայտում են ենթադրական եղանակի ապառնի կամ անցյալի ապառնի ժամանակաձևերը (Հըմա խասանք՝ տեղ, **կըյերքեմ**)²⁰: Ալաշկերտի խոսվածքում Ք. Մադաթյանը չի արձանագրել ապառնի դերբայի առկայություն²¹:

¹⁹ Ս.Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., էջ 107:

²⁰ Վ.Խաչատրյան, *Դիադինի բարբառը*, էջ 80:

²¹ Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 108:

Ժխտական դերբայ

Թեև Ա.Այտընյանը ժխտականի դերբայական ձևը դերբայների շարքում չի քննում, սակայն բայակազմության մեջ հստակորեն առանձնացնում է «բացասական բայեր» և «բայի բացասական ձև» հասկացությունները²²:

Գրական արևմտահայերենում ժխտական դերբայ կազմելու համար անորոշի *լ*-ն փոխվում է *ք*-ի՝ *վազել-վազեր, կարդալ-կարդար: Ի* խոնարհման բայերը ունենում են զուգահեռ *խօսիր/խօսեր, գրուիր/գրուեր* ձևերը: Ընդ որում՝ *ի*-ով կազմությունները հանդես են գալիս սահմանականի ներկայի ժխտական ձևերի կազմության ժամանակ (*չեմ խօսիր, չես խօսիր, չի խօսիր*), իսկ *ե*-ով ձևերը՝ անցյալ ժամանակի կազմության մեջ՝ *չէի խօսեր, չէիր խօսեր, չեր խօսեր* (փաստենք, որ արևմտահայերենում ժխտական դերբայը գործածվում է սահմանական եղանակի ժխտական ներկան և անցյալը ձևավորելիս):

Ըղձական կամ ժխտական դերբայը Կարնո, Մշո, Դիադինի բարբառներում, նաև Ալաշկերտի խոսվածքում ունի *է, ա, ի* վերջավորություններ, Սասունի բարբառում՝ *ը, ա* վերջավորություններ (/չըմ/ կըրը, /չըմ/ գարդա): Բարբառային այս միավորներում ևս ժխտական դերբայը ձևավորվում է անորոշ դերբայից՝ *լ* մասնիկի անկումով, ինչպես՝ *գ'ըրէլ- (չէմ) գ'ըրէ, մօռնալ- (չէմ) մօռնա, հավնիլ- (չի) հավնի*:

Մշո բարբառում *ա* վերջավորություն ունենում են *ա* խոնարհման բայերի ժխտման դերբայները. *խաղալ-(չըմ)խաղա, էրթալ-(չըմ) էրթա, իդալ (չըմ) իդա* և այլն: *Ի* վերջավորություն ունենում են *ե* խոնարհման բայերը, ինչպես՝ *քէլէլ- (չըմ) քէլի, խըմէլ-(չըմ) խըմի, ըսէլ- (չըմ) ըսի* և այլն: *Ի* դեպ, *ե* խոնարհման ներգործական սեռի բայերի ժխտման դերբայները ունենում են նաև *է* վերջավորությամբ ձևեր. *(չըմ) ջ'արթէ, (չըմ) ըսէ, (չըմ) քէլէ*:

²² Ա.Այտընյան, *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի*, Ե., 1987, էջ 14, 82, 86, 22, 175, 15, 132-133:

Ալաշկերտի խոսվածքում *Ե* խոնարհման բայերը ներկա ժամանակի ժխտական ձևերում հանդես են գալիս *ի* վերջավորությամբ, իսկ անցյալ անկատարի դեպքում՝ *է* վերջավորությամբ:

<i>Ներկա</i>	<i>Անցյալ անկատար</i>
չըմ գ'ըրի	չընկ գ'ըրէ
չըս գ'ըրի	չըր գ'ըրէ
չը գ'ըրա	չըր գ'ըրէ

Ժխտական դերբայը, ինչպես գրական արևմտահայերենում, այնպես էլ Կարնո, Մշո, Սասունի և Դիադինի բարբառներում, նաև Ալաշկերտի խոսվածքում օժանդակ բայի ժխտական ձևերի հետ մասնակցում է սահմանական եղանակի ներկա և անցյալ ժամանակաձևերի կազմությանը²³:

Ընթացակցական դերբայ

Գրական արևմտահայերենում ընթացակցական դերբայը կազմվում է անորոշ դերբայից՝ *էն* վերջավորությամբ, ինչպես՝ աղօթելէն, լալէն, փշրելէն, ճեղքելէն և այլն: Ընդ որում՝ անորոշի *իլ*, *ուլ* վերջավորությունները փոխվում են *էլ*-ի: Այս դերբայը պատասխանում է *ի՞նչ ընելէն*, *ի՞նչ ըլլալէն* հարցերին: Նախադասության մեջ կատարում է ձևի պարագայի պաշտոն: Օրի-

²³ Վ.Խաչատրյանը իր աշխատության մեջ փաստում է, որ Դիադինի բարբառում ժխտական դերբայը հանդես է գալիս պայմանական, հարկադրական, հրամայական եղանակների ժխտական խոնարհման ձևերում և կազմվում է անորոշ դերբայից՝ նրա վերջավորության անկմամբ: Սակայն, մեր կարծիքով, ինչպես արևմտահայերենում ընդհանրապես, այնպես էլ Դիադինի բարբառում ժխտական դերբայը օժանդակ բայի ժխտական ձևերի հետ մասնակցում է սահմանական եղանակի ներկա, անցյալ անկատար եղանակների կազմությանը: Օրինակ՝ *կօկըսիրեմ*, *կօ կըսիրես*, *կօ կըսիրա* - *կօ չեմ սիրե*, *կօ չես սիրե*, *կօ չը սիրա*:

նակ՝ Կը քալէր աղօթելէն. Խօսեցավ լալէն. Երբեմն դժվար է կողմնորոշվել՝ գործ ունենք ընթացակցական դերբայի, թե՛ անորոշի բացառական հոլովի հետ:

Արևմտահայերենում ընդհանրապես ընթացակցական դերբայը գործածության ավելի քիչ հաճախականություն ունի, որի պատճառով էլ որոշ քերականներ այն չեն առանձնացնում իբրև ինքնուրույն դերբայ:

Ընդհանրապես, ընթացակցական դերբայը բնորոշ է արևմտահայ բարբառներին: Ըստ Ս.Բաղդասարյանի՝ Մշո բարբառում այն կազմվում է՝ դերբայական հիմքին *օվ, է, էն* վերջավորություններ ավելացնելով²⁴: Օրինակ՝ *լօրդէլօվ, պադէլօվ, գճրէլէ, գճրէլէն, ուդէլէ, ուդէլէն*: Այս բարբառում դերբայն արտահայտվում է նաև *ման, մանց* մասնիկներով, որոնք դրվում են բայահիմքի վրա, ինչպես՝ *վազել –վազման, վազմանց, քէլէլ –քէլման, քէլմանց, օխպալ–օխպաման, օխպամանց* և այլն:

Ք.Մադաթյանը կարծում է, որ Ալաշկերտի խոսվածում ընթացակցական դերբայը առաջացել է անորոշի բացառական և գործիական հոլովներից և ունի այդ հոլովների *էն, օվ* վերջավորությունները (*վազնէլէն, վազնէլօվ, քէլէլէն, քէլէլօվ, խօսալէն, խօսալօվ* և այլն)²⁵:

Ալաշկերտի խոսվածքում ևս այս դերբայը սակավ դեպքերում կարող է կազմվել *ման, մանծ* մասնիկներով (*կայնըման, կայնըմանծ*):

Դիադինի, Կարնո և Սասունի բարբառներում ընթացակցական դերբայը վկայված չէ:

Բայի դիմավոր ձևեր

Գրական արևմտահայերենում բայն ունի չորս եղանակ՝ *սահմանական, ըդձական, հարկադրական և հրամայական*, ընդ որում՝ սահմանական եղանակի ներկայի ձևերը կազմու-

²⁴ Ս.Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., էջ 115:

²⁵ Ք.Մադաթյան, նշվ. աշխ., էջ 114:

թյամբ համընկնում են արևելահայերենի ենթադրական եղանակի ձևերին, իսկ հարկադրականի ժամանակաձևերը՝ արևելահայերենի սահմանականի ապառնի ձևերին: Ի դեպ, ապառնի դերբայով կազմված ժամանակաձևերի հարցը արևմտահայ քերականագիտության մեջ տարակարծությունների առիթ է տվել: Ավանդաբար դրանք համարվել են սահմանական եղանակի ժամանակաձևեր, բայց միաժամանակ նշվել է դրանց իմաստային նույնությունը արևելահայերենի հարկադրական եղանակի ժամանակաձևերի հետ: Վերջին հետազոտողները դրանք ներկայացնում են որպես հարկադրական եղանակի կազմություններ:

Արևմտահայերենում վերլուծական կազմություն ունեն սահմանականի դրական խոնարհման չորս ժամանակաձևերը՝ **վաղակատար ներկա**, **վաղակատար անցյալ**, **հարակատար ներկա** և **հարակատար անցյալ**, ժխտական խոնարհման սահմանական **ներկայի** և **անցյալի** ձևերը, նաև **հարկադրական** եղանակի ժամանակաձևերը: Համադրական են սահմանականի հինգ ձևեր՝ **սահմանական ներկա** և **անցյալ**, **անցյալ կատարյալ**, **ապառնի**, **անցյալ ապառնի**, նաև **ըղձական** և **հրամայական** եղանակների ձևերը:

Ըղձական եղանակ

Այս եղանակն ունի ապառնի և անցյալ ապառնի ժամանակաձևեր, որոնք կազմվում են ներկայի հիմքից՝ տարբերակվելով ըստ լծորդությունների:

Ըղձական ապառնի

Ե խոնարհում		Ի խոնարհում		Ա խոնարհում	
գրեմ	գրբենք	սորվիմ	սորվինք	կարդամ	կարդանք
գրես	գրեք	սորվիս	սորվինք	կարդաս	կարդաք
գրէ	գրեն	սորվի	սորվին	կարդա	կարդան

Ըղձական անցյալի ապառնի

գրէի	գրէինք	սորվէի	սորվէինք	կարդայի	կարդայինք
գրէիր	գրէիք	սորվէիր	սորվէիք	կարդայիր	կարդայիք
գրէր	գրէին	սորվէր	սորվէին	կարդար	կարդային

ՀՀ տարածքում գործառող արևմտահայ բարբառներից գրական արևմտահայերենին ըղձական եղանակի կազմությունամբ ավելի մոտ է **Կարնո** բարբառը: Այսպես՝

Ըղձական ապառնի

աշէմ	աշէնք	կարէմ	կարէնք
աշէս	աշէք	կարէս	կարէք
աշէ	աշէն	կարէ	կարէն

Ըղձական անցյալ

աշէի	աշէինք	կարէի	կարէինք
աշէիր	աշէիք	կարէիր	կարէիք
աշէր	աշէին	կարէր	կարէին

Այս ժամանակաձևերի կազմությունը գրեթե նույնն է Մշո բարբառում, սակայն Ալաշկերտի խոսվածքում ներգործական սեռի բայերը ըղձական ապառնու եզակի երրորդ դեմքում ունեն **ա** վերջավորություն, իսկ չեզոքները՝ **ի**:

Ապառնի

Մուշ

գ'ըրիմ	գ'ըրինք	կարթամ	կարթանք
գ'ըրիս	գ'ըրիք	կարթաս	կարթաք
գ'ըրէ	գ'ըրին	կարթա	կարթան

Ալաշկերտ

քաղիմ	քաղինկ	աղամ	աղանկ
քաղիմ	քաղիկ	աղաս	աղակ
քաղա	քաղին	աղա	աղան

Անցյալ ապառնի**Մուշ****Ալաշկերտ**

գ'ըրի գ'ըրինք կարթի կարթինք քաղենկ քաղենկ աղենկ աղենկ
 գ'ըրի գ'ըրի կարթի կարթիք քաղեր քաղել աղեր աղել
 գ'ըրեր գ'ըրին կարթեր կարթին քաղեր քաղեն աղեր աղեն

Սյուս բարբառներում այս ժամանակաձևերն ունեն հետևյալ արտահայտությունը.

Դիադինի բարբառ**ըղձական ապառնի****անցյալի ապառնի**

գ'ըրեն

գ'ըրի

գ'ըրեն

գ'ըրիք

գ'ըրա

գ'ըրեր

Սասունի բարբառ**Ապառնի**

ըս կըրըմ

գարտամ

մըք կըրըք

գարտաք

տու կըրըս

գարտաս

տուք կըրըք

գարտաք

անը կըրէ

գարտա

անունք կըրըն

գարտան

Անցյալ ապառնի

ըս կըրըք

ըս գարտէք

մըք կըրէք

մըք գարտէք

տու կըրէք

տու գարտէք

տուք կըրէք

տուք գարտէք

անը կըրէր

անը գարտէր

անունք կըրէն

անունք գարտէն

Սասունի բարբառում, ինչպես խոնարհման հարացույցից երևում է, ըղձական եղանակի անցյալ ապառնի ժամանակաձևում եզակի առաջին դեմքի դիմաց գործառնում է հոգնակի ձև: Այդպես է նաև սահմանական եղանակի անցյալ անկատար, վաղակատար անցյալ ժամանակաձևերում²⁶:

²⁶ Շփոթությունից խուսափելու նպատակով բայի խոնարհման հարացույցը ներկայացրել ենք համապատասխան անձնական դերանուններով:

Մահմանական եղանակ

Գրական արևմտահայերենում այս եղանակի վերլուծական ժամանակաձևեր կազմվում են վաղակատար, հարակատար դերբայներով և օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերով: Համադրական ժամանակաձևերը հինգն են՝ *ներկա, անկատար անցյալ, անցյալ կատարյալ, ապառնի* և *անցյալի ապառնի*:

Ներկա

Գրական արևմտահայերենում ներկա ժամանակաձևը կազմվում է *կը*²⁷ մասնիկով և ըղձական ապառնու ձևերով: Ձայնավորով սկսվող բայերից առաջ *կը*-ի *ը* ձայնավորը սղվում է, որի փոխարեն գրության մեջ ապաթարց է դրվում: Օր.՝ *կ'ուզե, կ'էրթա* և այլն:

կը գրեմ	կը գրենք	կը սորվիմ	կը սորվինք	կը կարդամ	կը կարդանք
կը գրես	կը գրեք	կը սորվիս	կը սորվիք	կը կարդաս	կը կարդաք
կը գրե	կը գրեն	կը սորվի	կը սորվին	կը կարդա	կը կարդան
կերգեմ	կերգենք	կը զգամ	կը զգանք	կու գամ	կու գանք
կերգես	կերգեք	կը զգաս	կը զգաք	կու գաս	կու գաք
կերգե	կերգեն	կը զգա	կը զգան	կու գա	կու գան

Արևմտահայ խոսակցական լեզվում շարունակական ներկայի իմաստ է արտահայտվում *կոր* մասնիկով (*կէրթամ կոր, կը խօսիմ կոր*): Ա.Այտընյանը կարծում է, որ շարունակականի *կոր* մասնիկը թուրքական ծագում ունի, և այն առաջացած է

²⁷ *Կը* մասնիկի առաջացման տարբեր վարկածներ կան: Դրանցից հետաքրքրական են Ա.Այտընյանի և Մ.Աբեղյանի կարծիքները: Ա.Այտընյանը *կու* մասնիկի ծագումը կապում է գրաբարյան *կայ+ու* ձևի հետ (տե՛ս Ա.Այտընյան, *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի*, էջ 75), իսկ Մ.Աբեղյանը *կու* մասնիկը առաջացած է համարում *կոյ*-ից, որը, ի դեպ, այսօր էլ շատ բարբառներում *ահա* նշանակությամբ գործածվում է (տե՛ս Մ.Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 316-317):

համարում թուրքերեն **yor** ձևից²⁸: Սակայն Հ. Աճառյանը **կոր** մասնիկի ծագման մեկ այլ վարկած է առաջ քաշում: Նա նկատում է, որ Ռոդոսթոյի բարբառում **կոր** սովորական ձևի հետ կան նաև **կօ** և **օր** ձևերը, իսկ Համշենի բարբառում էլ կան **ունի** և **գունի**: Եվ քանի որ այս վերջինը կազմված է **կը** և **ունի** մասնիկների գումարից, ուստի պետք է կարծել, որ **կոր**-ը կարող է առաջացած լինել **կը** և **օր** մասնիկների գումարից²⁹:

Անկատար անցյալ

Գրական արևմտահայերենում անկատար անցյալը կազմվում է **կը** եղանակիչով և ըղձական անցյալի համապատասխան ձևերով:

է խոնարհում

կը գրեի	կը գրեինք
կը գրեիր	կը գրեիք
կը գրեր	կը գրեին

ի խոնարհում

կը սորվեի	կը սորվեինք
կը սորվիր	կը սորվեիք
կը սորվեր	կը սորվեին

ա խոնարհում

կաղայի	կաղայինք	կու գայի	կու գայինք
կաղայիր	կաղայիք	կու գայիր	կու գայիք
կաղար	կաղային	կու գար	կու գային

ՀՀ տարածքում գործառող արևմտահայ բարբառներում սահմանական եղանակի ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը, որոշ առանձանահատկություններով հանդերձ, ընդհանուր առմամբ ունեն նույն կառուցվածքը: Այսպես՝

²⁸ Ա.Այտընյան, *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի*, Վիեննա, 1866, էջ 76:

²⁹ Հ.Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 4, մաս Բ-Ե, Ե., 1961, էջ 108:

Մշո բարբառ

Մահմանական ներկա

կըզ'ըրիմ	կըզ'ըրիմք	գիքամ	գիքանք	գիլամ	գիլանք
կըզ'ըրիս	կըզ'ըրիք	գիքաս	գիքաք	գիլաս	գիլաք
կըզ'ըրէ	կըզ'ըրին	գիքա	գիքան	գիլա	գիլան

Մշո բարբառում ձայնավորից առաջ *կ* (*կը*) եղանակիչը, երբեմն ձայնեղանալով, դառնում է *գ* (*գիքամ, գիլամ*), այլ դեպքերում պահպանվում է (*կուղիմ, կիղամ կառնիմ, կըսիմ* և այլն):

Այս բարբառում անցյալ անկատար ժամանակաձևի վերջավորություններն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*, որոնցում առկա է նախնական երկձայնավոր ձևերի (*էի, էիր* և այլն) է-ի անկում: Այսպես՝

կըզ'ըրի կըզ'ըրիմք կըկարթի կըկարթիմք կըքելի կըքելիմք
կըզ'ըրիր կըզ'ըրիք կըկարթիր կըկարթիք կըքելիր կըքելիք
կըզ'ըրէր կըզ'ըրին կըկարթէր կըկարթին կըքելէր կըքելին

Ալաշկերտի խոսվածքում ներգործական սեռի բայերը ներկա ժամանակաձևի եզակի թվի երրորդ դեմքում ունեն *ա* վերջավորություն, իսկ չեզոք և անանգավոր բայերը՝ *ի* վերջավորություն: Այսպես՝

կըքաղիմ կըքաղին կընըստիմ կընըստինկ կըհասնիմ կըհասնինկ
կըքաղիս կըքաղիկ կընըստիս կընըստիկ կը հասնիսկը հասնիկ
կըքաղա կըքաղին կընըստի կընըստին կը հասնի կը հասնին

Հարկ է նշել, որ հ'-ով և ձայնավորով սկսվող որոշ բայերից առաջ Ապարանի և Մարտունու տարածաշրջաններում գործառնող Ալաշկերտի խոսվածքներում *կ* (*կը*) եղանակիչը վերածվում է *գ*-ի, իսկ հ'-ն դուրս է ընկնում (*հ'իճնել>գիճնիմ, հիշել>գիշամ*): *Գ'ալ, լալ, տալ* բայերի հետ ևս գործածվում է *կը* եղանակիչը՝ թերևս Մշո բարբառին հատուկ *ի* նախահավելվածով՝ *գ'իկամ, գ'իկաս, գ'իլամ, գ'իլաս (կ>գ), կիտամ*:

Ի դեպ, Գեղարքունիքի մարզի՝ մշեցիների կամ ալաշկերտցիների սերունդներով բնակեցված համայնքներում մեր կատարած հետազոտությունների ընթացքում բարբառային խոսքում բաղաձայնով սկսվող բայերի դեպքում նկատել ենք ներկայի կազմություններ առանց **կը** եղանակիչի, այսինքն՝ գրաբարատիպ ներկա, ինչպես՝ Դու ի՞նձ ա **խօսաս** - ի՞նչ ես խոսում. Ճիշտ ա **խօսանք** - ճիշտ ենք խոսում. Խոտ ա **քաղենք** - խոտ ենք խաղում և այլն (Ծակքար գ.): Մարտունու տարածաշրջանի որոշ խոսվածքներում հանդիպել ենք նաև **կը** եղանակիչով ներկայի հետ օժանդակ բայի գործածություն: Օրինակ՝ Էնի **ա** կըբերա, դու **յա** կըսես, մենք **ա** կըսենք (Վարդենիկ գ.): Ա.Ղարիբյանը կարծում է, որ այս **ա**-ն ծագում է **ահա**-ից, որով կազմվում է այդ խոսվածքների շարունակականը³⁰: Ռ.Բաղրամյանը Մշո բարբառի խոսվածքներում շարունակականի ժամանականիշներ է համարում **հանդա**//**հենդ** կամ **էդօ**, **կօ** մասնիկները³¹: Նկատենք, որ Մշո բարբառի՝ Սևանի ավազանում գործառոդ խոսվածքներում արձանագրել ենք **հանսա**, **հանդա**, **կօ** մասնիկներով ձևեր (**հանսա** խատուցի, **հանդա** Էկավ, **կօ** յես գուգի), սակայն դրանք ոչ թե շարունակականի ժամանականիշներ են, այլ եղանակավորող բառեր՝ հիմնականում **ահա** իմաստով:

Ալաշկերտի խոսվածքում անցյալ անկատար ժամանակը կազմվում է հետևյալ վերջավորություններով՝ **էնկ**, **էր**, **էր**, **էնկ**, **էկ**, **էն**:

Այսպես՝

կըքաղենկ	կըքաղենկ	կաղենկ	կաղենկ	գուգենկ	գուգենկ
կըքաղեր	կըքաղեկ	կաղեր	կաղեկ	գուգեր	գուգեկ
կըքաղեր	կըքաղեն	կաղեր	կաղեն	գուգեր	գուգեն

³⁰ Ա.Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 187:

³¹ Ռ.Բաղրամյան, *Սևանա լճի ավազանի խոսվածքները*, Ե., 1972, էջ 148:

Մարտունու տարածաշրջանի բարբառային խոսքում արձանագրել ենք առանց *կը* կազմիչի նաև անցյալ անկատար ժամանակաձևի դրսևորումներ (*Տանէր կէրցուցէր*՝ տանում կերցնում էր. Յես *վախէնէնք*, վօր իկէնք- ես վախենում էի, որ գայի): Փաստենք, որ ձայնավորով սկսվող բայերից առաջ *կը* եղանականիշ մասնիկը գործածվում է:

Դիադինի բարբառում սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը դրսևորվում են գրեթե նույն կերպ, պարզապես *կը* եղանակիչից բացի այստեղ գործածվում է *կօ* ժամանականիշ մասնիկը, որը, մեր կարծիքով, աղերսներ ունի արևմտահայերենին բնորոշ *կօր* մասնիկի հետ և շարունակականի իմաստ է արտահայտում³²: Ի դեպ, Ռ.Բաղրամյանը «Սևանա լճի ավազանի խոսվածքները» աշխատության մեջ նկատում է, որ Դիադինի բարբառում բացի սահմանականի ներկայի և անկատարի սովորական ձևերից, կան շարունակական հիշեցնող ձևեր (Դան նըստուկ խաց *ա* կուտեմ: Էտ ի՞նչ կ'ենես, խաց *ա* կուտե՞ս: Դան կայներ ա, խաց *ա* կուտա): Ընդ որում՝ հեղինակը *կօ*-ն որպես շարունակականի ժամանականիշ չի դիտարկել. պարզապես այն համարել է *կը* եղանակիչի կրկնություն (*կօ կ'էթամ, կօ կ'էթաս, կօ կ'էթա*)³³:

Այս բարբառում հիշյալ ժամանակաձևերն ունեն հետևյալ արտահայտությունը.

Ներկա

կօ կըսիրեմ կօ կըմընամ
կօ կըսիրես կօ կըմընաս
կօ կըսիրա կօ կըմընա

Անցյալ անկատար

կօ կըսիրի կօ կըմընի
կօ կըսիրիր կօ կըմընիր
կօ կըսիրեր կօ կըմըներ

³² Գ.Գևորգյանը նշում է, շարունակականի մասնիկավոր կազմությունները բնորոշ են արևմտյան տարածքի բարբառներին, որոնք հիշյալ իմաստը դրսևորելու համար ներկա բայաձևին կցում են զանազան ժամանականիշ մասնիկներ (*կոր, հայէ, դար, գունի*) (տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 3, Ե., 2010, էջ 279):

³³ Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 126:

Դիադինի բարբառի Վարդենիսի խոսվածքում ևս արձանագրել ենք *կը* եղանակիչով ներկայի հետ *օժանդակ բայի* գործածություն: Օրինակ՝ յես *ա* կօ կըսիրեմ, դու *յա* կօ կըսիրես, էնի *յա* կօ կըսիրա և այլն:

Սասունի բարբառում սահմանական եղանակի ներկա ժամանակը կազմվում է նույն կերպ, ինչպես գրական արևմտահայերենում, պարզապես բարբառին բնորոշ հնչյունական համակարգով (որտեղ խուլերը ձայնեղանում են, ձայնեղները՝ խլանում *կը>գը, կ>գ* և այլն):

Այսպես

Ներկա

ըս գրկըրըմ	մըք գրկըրըք	գիկամ	գիկանկ
տու գրկըրըս	տուք գրկըրըք	գիկաս	գիկակ
անը գրկըրէ	անունք գրկըրն	գիկը	գիկան

ըս գրգարտամ	մըք գրգարտաք
տու գրգարտաս	տուք գրգարտաք
անը գրգարտա	անունք գրգարտան

Անցյալ անկատար

ըս գրկըրէք	մըք գրկըրէք	գրգարտէք	գրգարտէք
տու գրկըրէր	տուք գրկըրէք	գրգարտէր	գրգարտէք
անը գրկըրէր	անունք գրկըրէն	գրգարտէր	գրգարտէն

Ինչպես երևում է խոնարհման հարացույցից, անկատար անցյալի վերջավորությունների նախնական երկձայնավոր ձևերի մեջ (*էի, էիր* և այլն), ի տարբերություն Մշո բարբառի, առկա է *ի* տարրի անկում:

Արդեն նշել ենք, որ Սասունի բարբառում եզակի առաջին դեմքերի դիմաց սահմանական եղանակի անցյալ անկատար, անցյալ ապառնի, վաղակատար անցյալ և ըղձական եղանակի անցյալ ապառնի ժամանակաձևերում հանդես են գալիս հոգնակի ձևեր: Այս բարբառի կարևոր առանձնահատկություններ-

րից է նաև այն, որ **ե, ի** խոնարհիչների դիմաց սահմանական եղանակի ներկա, ապառնի և ըղձական եղանակի ապառնի ժամանակաձևերում գործառուում է **ը (սիրքը, սիրքս)**:

Սահմանական եղանակի ներկայի կազմությամբ առանձնանում է Կարնո բարբառը, որտեղ **կը** եղանակիչը հանդես է գալիս հետադաս կիրառությամբ: Այսպես՝

աշեմ գը	աշենք գը	խընդամ գը	խընդանք գը
աշես գը	աշեք գը	խընդաս գը	խընդաք գը
աշե գը	աշեն գը	խընդա գը	խընդան գը

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության՝ Կարնո բարբառը ներկայացնող տարբեր բնակավայրերում **կը** եղանակիչը հանդես է բերում գործառական յուրահատկություններ: Այսպես՝ Գյումրիում այն հանդես է գալիս հիմնականում հետադաս կիրառությամբ (օրինակ՝ **բ'երեմ գը, խըմեմ գը, խօսիմ գը**), սակայն **կուդամ, գուկամ, կերտամ, գուզեմ** ձևերում եղանակիչը նախադաս կիրառություն ունի: Արթիկի շրջանի Մեծ Մանթաշ համայնքում ևս **կը (գը)** եղանակիչը հետադաս կիրառություն ունի, բայց ձայնավորով սկսվող բայերի դեպքում ստանում է կրկնակի եղանակիչ. մեկը՝ բառասկզբում, մյուսը՝ բառավերջում, ինչպես՝ **կուզեմ գը, կերթամ գը, կաշեմ գը**:

Տալ, գալ, լալ միավանկ բայերը սկզբից ստանում են **կը** եղանակիչի **կու** կամ **գու** տարբերակը, իսկ բառավերջում՝ **գը (գ'ուկամ գը, կուդամ գը, կուլայի գը)**:

Անկատար անցյալը Կարնո բարբառում ունի հետևյալ արտահայտությունը.

աշեի գը	աշեինք գը	կառտայի գը	կառտայինք գը
աշեիր գը	աշեիք գը	կառտայիր գը	կառտայիկ գը
աշեր գը	աշեին գը	կառտար գը	կառտային գը

Այստեղ այս ժամանակաձևը ևս կարող է ունենալ կրկնակի եղանակիչով ձև՝ **կաշեի գը**:

Անցյալ կատարյալ

Գրական արևմտահայերենում **է, ա** խոնարհումների պարզ և պատճառական բայերը ստանում են **ի, իր, - , ինք, իք, ին** (պատճառականի դեպքում եզակի երրորդ դեմքում՝ **ուց**) վերջավորություններ, իսկ **ի** խոնարհման պարզ, սուկաձանցավոր և կրավորական բայերը ստանում են **այ, ար, աւ, անք, աք, ան** վերջավորություններ:

Այսպես՝

Եզակի թիվ

գրեցի	մօտեցուցի	մոռցայ	սորվեցայ	գրուեցայ	թռայ
գրեցիր	մօտեցուցիր	մոռցար	սորվեցար	գրուեցար	թռար
գրեց	մօտեցուց	մոռցաւ	սորվեցաւ	գրուեցաւ	թռաւ

Հոգնակի թիվ

գրեցինք	մօտեցուցինք	մոռցանք	սորվեցանք	գրուեցանք	թռանք
գրեցիք	մօտեցուցիք	մոռցաք	սորվեցաք	գրուեցաք	թռաք
գրեցին	մօտեցուցին	մոռցան	սորվեցան	գրուեցան	թռան

Մշո բարբառում այս ժամանակաձևն ունի **ի, իր, - , ինք, իք, ին, ա, ար, ավ, անք, աք, ան** վերջավորությունները.

մացի	մացինք	հ'իմցա	հ'իմցանք	խաղցա	խաղցանք
մացիր	մացիք	հ'իմցար	հ'իմցաք	խաղցար	խաղցաք
մընաց	մացին	հ'իմցավ	հ'իմցան	խաղցավ	խաղցան

Այստեղ **ա** լծորդության բայերը կարող են ունենալ նաև անցյալ կատարյալի **ի, իր, - , ինք, իք, ին** վերջավորություններ.

կարթըցա	կարթըցի	կարթըցանք	կարթըցինք
կարթըցար	կարթըցիր	կարթըցաք	կարթըցիք
կարթըցավ	կարթաց	կարթըցան	կարթըցին

Մշո բարբառում այս ժամանակաձևի եզակի երրորդ դեմքում միավանկ բայաձևերից առաջ գրաբարի նման ավելանում է **է** նախահավելվածը, ինչպես՝ **էբաց, էբէր, էտու, էհան (բացեց, բերեց, տվեց, հանեց)**:

Այլաշկերտի խոսվածքում ուշադրության է արժանի այն, որ **ե** խոնարհման որոշ բայեր անցյալ կատարյալում կարող են ստանալ և՛ ներգործական, և՛ չեզոք բայերին հատուկ վերջավորություններ (ինչպես՝ **ավիրեծի, ավիրա, բրդորեծի, բրդորա, կողրեծի, կողրա, գ'ըլորեծի, գ'ըլորա, մըրոդեծի, մըրոդա**)՝ առաջին դեպքում արտահայտելով ներգործական սեռի, իսկ երկրորդ դեպքում՝ չեզոք (երբեմն նաև անդրադարձ չեզոք) սեռի իմաստ, օրինակ՝ Սակօն մենձ քար **գ'ըլորեց** (Սաքոն մեձ քար գլորեց). Քարըն **գ'ըլորավ** (Քարը գլորվեց): Բացի այդ, եթե նման բայերը ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքում ստանում են **ա** վերջավորություն, ներգործականի իմաստ են արտահայտում, իսկ **ի** ստանալիս՝ չեզոքի իմաստ: Օրինակ՝ **կը գ'ըլորա** գլորում է, **կը գ'ըլորի**՝ գլորվում է:

Դիադինի բարբառում անցյալ կատարյալը բնորոշվում է հոգնակիի ձևերում առկա **ք** հնչյունի քմայնացմամբ՝ **ք'**, ինչպես՝

խըմի	խըմինք	մացի	մացինք՝	ծըծղացի	ծըծղացինք՝
խըմիր	խըմիք	մացիր	մացիք	ծըծղացիր	ծըծղացիք՝
խըմեց	խըմին	մընաց	մացին	ծըծղաց	ծըծղացին

Սասունի բարբառում անցյալ կատարյալը կազմությամբ նման է Մշո բարբառի անցյալ կատարյալին, միայն **ի, իր, ինք, իք, ին** վերջավորությունների **ի** հնչյունի դիմաց ունի **ը**, որը պայմանավորված է այդ բարբառին բնորոշ առանձնահատկությամբ: Այսպես՝

ըս կըրնցը	մըք կըրնցըք	գարտնցը	գարտնցըք
տու կըրնցըր	տուք կըրնցըր	գարտնցըր	գարտնցըք
անը կըրըց	անունք կըրնցըն	գարտաց	գարտնցըն

Կարնո բարբառում *է* լծորդության բայերը ստանում են *ի, իր, էց, ինք, իք, ին* վերջավորություններ (*ամբնճեցի, ամբնճեցիր, ամբնճեց, վազի, վազիր, վազեց*): Սակայն *բերել* և *ասել* բայերը երրորդ դեմքում *էց*-ի փոխարեն *ավ* են ստանում (*բ'երի, բ'երիր, բ'երավ, ըսի, ըսիր, ըսավ*): *Ի* խոնարհման բայերը կանոնավոր կերպով ստանում են *ա, ար ավ, անք աք, ան* վերջավորություններ (*հասա, հասար, հասավ, հասանք, հասաք, հասան*): *Ա* խոնարհման բայերը բացի անցյալ կատարյալի *ի, իր, -, ինք, իք, ին* վերջավորություններով կազմությունից (*խընդացի, խընդացիր, խընդաց, խընդացինք, խընդացիք, խընդացին*), ունեն նաև ցոյական հիմքի վրա *ա, ար ավ, անք, աք, ան* վերջավորություններով կազմություն: Տարբեր լծորդությունների բայերի համար անցյալ կատարյալն ունի խոնարհման հետևյալ պատկերը.

աշեցի	աշեցինք	կարի	կարինք	խաղցա	խաղցանք
աշեցիր	աշեցիք	կարիր	կարիք	խաղցար	խաղցաք
աշեց	աշեցին	կարեց	կարին	խաղցավ	խաղցան

Ապառնի

Գրական արևմտահայերենում ապառնին կազմվում է՝ ներկա ժամանակի *կը* մասնիկի փոխարեն *պիտի* եղանակիչը ավելացնելով: Ներկայում, հավանաբար գրական արևելահայերենի ազդեցությամբ, արևմտահայերենում գործածվում է նաև *պետք է* եղանակիչը: Օրինակ՝ «Պետք է սպաննենք այդ կիները» (Մ.Իշխան), «Մերունդը պետք է զգայ իր ապրած օրերը» (Ա.Ծառուկյան) և այլն:

<i>է խոնարհում</i>	<i>ի խոնարհում</i>	<i>ա խոնարհում</i>
պիտի գրեմ	պիտի սորվիմ	պիտի կարդամ
պիտի գրես	պիտի սորվիս	պիտի կարդաս
պիտի գրե	պիտի սորվի	պիտի կարդա

պիտի գրենք	պիտի սորվինք	պիտի կարդանք
պիտի գրեք	պիտի սորվիք	պիտի կարդաք
պիտի գրեն	պիտի սորվին	պիտի կարդան

Անցյալ ապառնի

Գրական արևմտահայերենում անցյալ ապառնին կազմվում է սահմանական եղանակի անցյալ ժամանակից՝ դարձյալ *կը*-ի փոխարեն *պիտի* եղանակիչը ավելացնելով:

պիտի գրեի	պիտի սորվեի	պիտի կարդայի
պիտի գրեիր	պիտի սորվեիր	պիտի կարդայիր
պիտի գրեր	պիտի սորվեր	պիտի կարդար

Փաստորեն, ի տարբերություն արևելահայերենի, որտեղ *պիտի* եղանակիչով ձևավորվում են հարկադրական եղանակի ժամանակաձևեր, արևմտահայերենում դրանով ձևավորվում է սահմանական եղանակի ապառնի ժամանակաձև, որը ցույց է տալիս խոսելու պահից հետո խոսողի տեսանկյունից ստույգ, հաստատապես կատարվելիք գործողություն: Այդ ժամանակաձևը իմաստով համապատասխանում է արևելահայերենի սահմանական եղանակի ապառնիին:

Հետաքրքրական է, որ Սասունի բարբառից բացի՝ ՀՀ տարածքում գործառող արևմտահայ բարբառներում (Մշո, Կարնո, Դիադինի) *պիտի* եղանակիչով ձևավորվում են հարկադրական եղանակի ժամանակաձևեր՝ հարկադրական ապառնի և հարկադրական անցյալ:

Հարկադրական եղանակ

Մշո բարբառում հարկադրական եղանակն ունի հետևյալ արտահայտությունը.

Ապառնի

բըդի գ'ըրիմ	բըդի գ'ըրինք	բըդի կարթամ	բըդի կարթանք
բըդի գ'ըրիս	բըդի գ'ըրիք	բըդի կարթաս	բըդի կարթաք
բըդի գ'ըրե	բըդի գ'ըրին	բըդի կարթա	բըդի կարթան

Անցյալ ապառնի

բըդի գ'ըրի	բըդի գ'ըրինք	բըդի կարթի	բըդի կարթինք
բըդի գ'ըրիր	բըդի գ'ըրիք	բըդի կարթիր	բըդի կարթիք
բըդի գ'ըրեր	բըդի գ'ըրին	բըդի կարթեր	բըդի կարթին

Նկատենք, որ Մշո բարբառում **ե** լծորդության բայերի հարկադրական եղանակի **ապառնի** և **անցյալ ապառնի** ժամանակաձևերի հոգնակիները ձևով նույնն են: Իմաստային տարբերությունը ի հայտ է գալիս նախադասության մեջ: Այդպես է նաև պայմանական, ըղձական եղանակների ձևերում:

Ալաշկերտի խոսվածքում ևս հարկադրական եղանակը կազմվում է ըղձական եղանակից՝ **բըդի** եղանակիչի օգնությամբ: Այսպես՝

Ապառնի

բըդի քաղիմ	բըդի քաղինկ	բըդի աղամ	բըդի աղանկ
բըդի քաղիս	բըդի քաղիկ	բըդի աղաս	բըդի աղակ
բըդի քաղա	բըդի քաղին	բըդի աղա	բըդի աղան

Անցյալ ապառնի

բըդի քաղենկ	բըդի քաղենկ	բըդի աղենկ	բըդի աղենկ
բըդի քաղեր	բըդի քաղեկ	բըդի աղեր	բըդի աղեկ
բըդի քաղեր	բըդի քաղեն	բըդի աղեր	բըդի աղեն

Ինչպես երևում է խոնարհման հարացույցից, Ալաշկերտի խոսվածքում հարկադրական եղանակը մայր բարբառից դրսևորման որոշակի տարբերություններ ունի. հարկադրական ապառնիում ներգործական սեռի բայերի եզակի երրորդ դեմքը ունի **ա** վերջավորություն, չեզոք և ածանցավոր բայերինը՝ **ի** վերջավորություն, իսկ հարկադրական անցյալում եզակի առաջին դեմքը նույնանում է հոգնակի առաջին դեմքի հետ, եզակի երկրորդ դեմքը՝ եզակի երրորդ դեմքի հետ:

Դիադինի բարբառում հարկադրական եղանակի ժամանակաձևերն ունեն հետևյալ արտահայտությունը.

Ապառնի

պըտի գըրեմ	պըտի գըրենք՝	պըտի մընամ	պըտի մընանք՝
պըտի գըրես	պըտի գըրեք՝	պըտի մընաս	պըտի մընաք՝
պըտի գըրա	պըտի գըրեն	պըտի մընա	պըտի մընան

Անցյալ

պըտի գըրի	պըտի գըրինք	պըտի մընի	պըտի մընինք՝
պըտի գըրիր	պըտի գըրիք	պըտի մընիր	պըտի մընիք՝
պըտի գըրեր	պըտի գըրին	պըտի մըներ	պըտի մընին

Վ.Պետոյանը «Սասունի բարբառ» աշխատության մեջ փաստում է, որ այդ բարբառում բայը երեք եղանակ ունի: Ըստ հեղինակի՝ պայմանական և հարկադրական եղանակների իմաստները բարբառում արտահայտվում են սահմանական եղանակի ձևերով: Ըստ այդմ՝ սահմանական եղանակի ապառնի է դիտարկված *դը* մասնիկով ձևը³⁴: Օրինակ՝ *դը կըրըմ* (պիտի գրեմ), *դը կըրես* (պիտի գրես), *դը կըրե* (պիտի գրե), որոնք, այսպիսով, Սասնո բարբառում արևելահայերենի սահմանական եղանակի ապառնի ժամանակին են համապատասխանում. *դը կըրըմ*, այսինքն՝ *գրելու եմ*:

Հ.Մկրտչյանը, խոսելով Կարնո բարբառի սահմանական ապառնու և անցյալ ապառնու կազմության մասին, գտնում է, որ բարբառում առկա են այդ ժամանակաձևերի երկու կարգի դրսևորումներ: Մի դեպքում դրանք ձևավորվում են ապառնի դերբայի և օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակաձևերի բաղադրությամբ, ինչպես՝

³⁴ Վ.Պետոյան, նշվ. աշխ., էջ 44:

Ապառնի ներկա

աշելու էմ խաղլու էմ
 աշելու էս խաղլու էս
 աշելու է խաղլու է

Ապառնի անցյալ

աշելու էի խաղլու էի
 աշելու էիր խաղլու էիր
 աշելու էր խաղլու էր

Մյուս դեպքում գործ ունենք նկարագրական ապառնիների հետ, որոնք կազմվում են *պիտի* մասնիկով և ըղձականի ժամանակաձևերով³⁵: Բարբառում առանձնացված է նաև հարկադրական եղանակը՝ ապառնի և անցյալ ժամանակաձևերի նույն կազմությամբ: Ի դեպ՝ ըստ բարբառախոսներից քաղված տվյալների՝ Կարնո բարբառում *պիտի* եղանակիչը դրվում է ոչ միայն դիմավոր բայից առաջ, այլև հետո: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ Կարնո բարբառի տարբեր խոսվածքներում հանդես են գալիս *պիտի* եղանակիչի *բըդի, պիդի, դի* փոփոխակները: Օրինակ, Արթիկի Մեծ Մանթաշ գյուղում (որտեղ բնակվում են Բասենից եկածների սերունդներ) գրանցել ենք *էրթամ բըդի* և *բըդի էրթամ* տարբերակները, Արթիկ քաղաքում՝ *դի աշեմ, աշեմ դի*:

Ապառնի**Եզակի**

պիդի աշեմ // աշեմ բըդի // աշեմ դի
 պիդի աշես // աշես բըդի // աշես դի
 պիդի աշե // աշե բըդի // աշե դի

Հոգնակի

պիդի աշենք // աշենք բըդի // աշենք դի
 պիդի աշեք // աշեք բըդի // աշեք դի
 պիդի աշեն // աշեն բըդի // աշեն դի

³⁵ Հ.Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 70-71:

Անցյալ

Եզակի

պիղի աշէի // դի աշէի // աշէի բըղի
 պիղի աշէիր // դի աշէիր // աշէիր բըղի
 պիղի աշէր // դի աշէր // աշէր բըղի

Հոգնակի

պիղի աշէինք // դի աշէինք // աշէինք բըղի
 պիղի աշէիք // դի աշէիք // աշէիք բըղի
 պիղի աշէին // դի աշէին // աշէին բըղի

Վաղակատար ներկա և անցյալ

Հ. Աճառյանը Պոլիսի բարբառի համար անցյալ դերբայի երկու ձև է վկայում՝ *էր* և *աձ* վերջավորություններով: Առաջինը, ըստ նրա, համապատասխանում է գրաբարյան *էալ* ձևին և բարբառում գործածվում է միայն որպես դերբայ (*էալ>էր*): Օրինակ՝ *դէսէր էւ, բէրէր էյի*: Երկրորդը՝ *աձ* վերջավորությամբ բայաձևը, գործածվում է թե՛ իբրև ածական, թե՛ իբրև գոյական, թե՛ իբրև դերբայ³⁶:

Վաղակատար ներկա և անցյալ ժամանակաձևերը գրական արևմտահայերենում ձևավորվում են Հ.Աճառյանի հիշատակած անցյալ դերբայի առաջին ձևով: Այսպես՝

Վաղակատար ներկա

դեսեր եմ	սորվեր եմ	կարդացեր եմ
դեսեր ես	սորվեր ես	կարդացեր ես
դեսեր է	սորվեր է	կարդացեր է
դեսեր ենք	սորվեր ենք	կարդացեր ենք
դեսեր էք	սորվեր էք	կարդացեր ես
դեսեր են	սորվեր են	կարդացեր է

³⁶ Հ.Աճառյան, Քննություն պոլսահայ բարբառի, Ե., 1941, էջ 156:

Վաղակատար անցյալ

դեսեր էի	սորվեր էի	կարդացեր էի
դեսեր էիր	սորվեր էիր	կարդացեր էիր
դեսեր էր	սորվեր էր	կարդացեր էր

դեսեր էինք	սորվեր էինք	կարդացեր էինք
դեսեր էիք	սորվեր էիք	կարդացեր էիք
դեսեր էին	սորվեր էին	կարդացեր էին

Մշո բարբառում սահմանական եղանակի վաղակատար ներկա և անցյալ ժամանակաձևերը կազմվում են ճիշտ գրական արևմտահայերենի նման. այսինքն՝ վաղակատար դերբայի և օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերով: Այսպես՝

Վաղակատար ներկա

գ'ըրեր իմ	գ'ըրեր ինք	կարթըցեր իմ	կարթըցեր ինք
գ'ըրեր իս	գ'ըրեր իք	կարթըցեր իս	կարթըցեր իք
գ'ըրեր է	գ'ըրեր ին	կարթըցեր է	կարթըցեր ին

Վաղակատար անցյալ

գ'ըրեր ի	գ'ըրեր ինք	կարթըցեր ի	կարթըցեր ինք
գ'ըրեր իր	գ'ըրեր իք	կարթըցեր իր	կարթըցեր իք
գ'ըրեր էր	գ'ըրեր ին	կարթըցեր էր	կարթըցեր ին

Ի դեպ, Մշո բարբառում վաղակատար ժամանակաձևերում օժանդակ բայերը կարող են կրկնվել՝ *յես իմ գ'ըրեր իմ, յես ի գ'ըրեր ի* :

Ալաշկերտի խոսվածքում վաղակատար ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում հանդես է գալիս **սաձ** վերջավորությամբ դերբայական տարբերակը, իսկ մյուս դեպքերում՝ **էր** վերջավորությամբ վաղակատարը: Այսպես՝

Վաղակատար ներկա

քաղեր իմ	քաղեր ինկ	ախծեր//ախցեր իմ	ախծեր ինկ
քաղեր իս	քաղեր իկ	ախծեր//ախցեր իս	ախծեր իկ
քաղեր ա	քաղաձ ա	ախծեր//ախցեր ա	ախծաձ ա

Վաղակատար անցյալ

քաղեր էնկ	քաղեր էնկ	ախծեր//ախցեր էնկ	ախծեր էնկ
քաղեր էր	քաղեր էկ	ախծեր//ախցեր էր	ախծեր էկ
քաղեր էր	քաղաձ էն	ախծեր//ախցեր էր	ախծաձ էն

Հետաքրքրական է, որ Ալաշկերտի խոսվածքի որոշ դրսևորումներում (Երանոս, Վարդաձոր գյուղեր) օժանդակ բայի անցյալի ձևերում եզակի թվի երկրորդ և երրորդ դեմքերում գործածվում է նույն **էր** վերջավորությունը, իսկ եզակի թվի առաջին դեմքի համար գործածվում է հոգնակի թվի **էնկ** ձևը:

Ինչպես մի շարք բարբառներում (Մշո, Բայազետի, Դիաղինի, Արարատյան, Կարնո և այլն), այնպես էլ Ալաշկերտի խոսվածքում, եթե խոսքի շղթայում վաղակատար և անցյալ վաղակատար ժամանակաձևերի օժանդակ բայը դերբայից առաջ է դրվում, ապա դերբայի *ը* վերջավորությունն ընկնում է (Մեզ լե գ'ընա հ'ախպուր, վըյտե էնտեղ **իս թօղե**։ Պեդօն մե քանի օր հ'առեձ **էր** բ'անագ **գ'աձե**): Երբեմն էլ խոսքի շղթայում Դիաղինի, Մշո բարբառներում, նաև Ալաշկերտի խոսվածքում եզակի երրորդ դեմքը գործածվում է առանց օժանդակ բայի, օրինակ՝ Կարօն ցօրեն **քաղե, ախծե պըռձե**։ Մացե գ'եղ, **խասե** տեղ և այլն:

Դիաղինի բարբառի վաղակատար ժամանակաձևերը իրենց կառուցվածքով ավելի նման են Բայազետի բարբառի ձևերին: Այսպես՝

Վաղակատար ներկա

սիրեր եմ	սիրեր ենք՝
սիրեր ես	սիրեր էք՝
սիրեր ա	սիրեր են

Վաղակատար անցյալ

սիրեր ի	սիրեր ինք՝
սիրեր իր	սիրեր իք՝
սիրեր էր	սիրեր ին

Քանի որ Սասունի բարբառը չունի *է* լծորդություն, ուստի վաղակատար դերբայը *էր* վերջավորության փոխարեն ստանում է *իր* կամ *իյ* (*կըրիյ*), իսկ Տալվորիկում և Փսանքում՝ *իր* (*կըրիր*): Այս բարբառում վաղակատար ժամանակաձևերն ունեն հետևյալ արտահայտությունը.

Վաղակատար ներկա

ըս կըրիյ ըմ // կըրիր ըմ	մըք կըրիյ ըք // կըրիր ըք
տու կըրիյ ըս // կըրիր ըս	տուք կըրիյ էք // կըրիր էք
անը կըրիյ ան // կըրիր ան	անունք կըրիյ ըն // կըրիր ըն

գարտըցիյ ըմ // գարտըցիր ըմ	գարտըցիյ ըք // գարտըցիր ըք
գարտըցիյ ըս // գարտըցիր ըս	գարտըցիյ էք // գարտըցիր էք
գարտըցիյ ան // գարտըցիր ան	գարտըցիյ ըն // գարտըցիր ըն

Վաղակատար անցյալ

ըս կըրիյ էք//կըրիր էք	մըք կըրիյ էք //կըրիր էք
տու կըրիյ էր//կըրիր էր	տուք կըրիյ էք //կըրիր էք
անը կըրիյ էր//կըրիր էր	անունք կըրիյ էն //կըրիր էն

գարտըցիյ էք//գարտըցիր էք	գարտըցիյ էք// գարտըցիր էք
գարտըցիյ էր/գարտըցիր էր	գարտըցիյ էք// գարտըցիր էք
գարտըցիյ էր//գարտըցիր էր	գարտըցիյ էն// գարտըցիր էն

Ինչպես երևում է, Սասունի բարբառում ևս օժանդակ բայի անցյալի ձևերում եզակի թվի երկրորդ և երրորդ դեմքերում գործածվում է նույն *էր* վերջավորությունը, իսկ եզակի թվի առաջին դեմքի համար գործածվում է հոգնակիի *էք* ձևը:

Կարևոր բարբառում վաղակատար ներկա և անցյալ ժամանակաձևերը դրսևորվում են հետևյալ կերպ.

Վաղակատար ներկա

աշեր եմ	աշեր ենք	խօսեր եմ	խօսեր ենք
աշեր ես	աշեր եք	խօսեր ես	խօսեր եք
աշեր է	աշեր են	խօսեր է	խօսեր են

խընդացեր եմ	խընդացեր ենք
խընդացեր ես	խընդացեր եք
խընդացեր է	խընդացեր են

Վաղակատար անցյալ

աշեր էի	աշեր էինք	խօսեր էի	խօսեր էինք
աշեր էիր	աշեր էիք	խօսեր էիր	խօսեր էիք
աշեր էր	աշեր էին	խօսեր էր	խօսեր

խընդացեր էի	խընդացեր էինք
խընդացեր էիր	խընդացեր էիք
խընդացեր էր	խընդացեր էին

Հարակատար ներկա և անցյալ

Ինչպես Յու.Ավետիսյանն է փաստում, «Հարակատար դերբայը արևմտահայերենում ժամանակաձևեր կազմում է, ի տարբերություն արևելահայերենի, նաև ներգործական սեռի բայերից՝ հարակատար ներկա և հարակատար անցյալ: Երկուսն էլ անցյալ ժամանակի ձևեր են»³⁷:

Հարակատար ներկա

Եզակի

երգած եմ	մոռցած եմ	սորված եմ
երգած ես	մոռցած ես	սորված ես
երգած է	մոռցած է	սորված է

³⁷ Յու.Ավետիսյան, *Արևելահայերենի և արևմտահայերենի գուգադրական քերականություն*, Ե., 2007, էջ 181:

Հոգնակի

երգած ենք	մոռցած ենք	սորված ենք
երգած էք	մոռցած էք	սորված են
երգած են	մոռցած են	սորված են

Հարակատար անցյալ**Եզակի**

երգած էի	մոռցած էի	սորված էի
երգած էիր	մոռցած էիր	սորված էիր
երգած էր	մոռցած էր	սորված էր

Հոգնակի

երգած էինք	մոռցած էինք	սորված էինք
երգած էիք	մոռցած էիք	սորված էիք
երգած էին	մոռցած էին	սորված էին

Ինչպես արդեն նշել ենք, Մշո բարբառի հարակատար դերբայի *ուզ* և *ած* վերջավորություններից ավելի գործածական է *ուզ*-ը, սակայն հանդիպում են ինչպես այդ, այնպես էլ մյուս կազմությամբ հարակատարով դիմավոր ձևեր, ինչպես՝

Հարակատար ներկա

ներստուգ իմ	ներստուգ ինք	ներստած իմ	ներստած ինք
ներստուգ իս	ներստուգ իք	ներստած իս	ներստած իք
ներստուգ է	ներստուգ ին	ներստած է	ներստած ին

Դիադինի բարբառում հարակատար ժամանակաձևերը դրսևորվում են հետևյալ կերպ.

Հարակատար ներկա**Հարակատար անցյալ**

խափվուկ եմ	խափվուկ ենք՝	խափվուկ ի	խափվուկ ինք՝
խափվուկ ես	խափվուկ եք՝	խափվուկ իր	խափվուկ իք՝
խափվուկ ա	խափվուկ են	խափվուկ էր	խափվուկ ին

Սասունի բարբառում **ուգ** վերջավորությամբ հարակատար դերբայը հազվադեպ է մասնակցում սահմանական եղանակի ժամանակաձևերի կազմությանը:

Հրամայական եղանակ

Հրամայական եղանակը գրական արևմտահայերենում եզակի թվում ունի *իր, ա, է, ուր* վերջավորություններ: *Ե* և *ի* խոնարհումների պարզ, կրավորական և բազմապատկական բայերի եզակի հրամայականը կազմվում է ներկայի հիմքից՝ *է* վերջավորությամբ (օրինակ՝ *գրէ՛, կտրէ՛, կտրտէ՛ երգէ՛, սորվէ՛, վազէ՛, գրուէ՛*): *Ա* խորնարիման պարզ բայերի եզակի հրամայականը կազմվում է ներկայի հիմքից՝ *ա* վերջավորությամբ (*խաղա՛, գնա՛, մընա՛*): *Ն, չ, ան, են* սուկաձանց ունեցող բայերի հրամայականը կազմվում է՝ անցյալի հիմքին ավելացնելով *իր* վերջավորությունը (օրինակ՝ *գտի՛ր, փախի՛ր, հասիր, կորի՛ր, մոռցի՛ր, հեռացի՛ր*), իսկ պատճառական և պատճառակերպ բայերի եզակի հրամայականը կազմվում է *ուր* վերջավորությամբ՝ *վերցնել>վերցու՛ր, հարցնել>հարցու՛ր, իջեցնել>իջեցու՛ր* և այլն:

Հոգնակի հրամայականը կազմվում է՝ անցյալի հիմքին ավելացնելով **եք** վերջավորությունը (*մտե՛ք, սորվեցե՛ք, մոռցե՛ք, գրուեցե՛ք*):

Ըստ Ս.Բաղդասարյանի՝ Մշո բարբառն ունի հրամայականի երկու ձև՝ պարզ և բարդ: Հրամայական եղանակի պարզ տեսակը ունի միայն եզակի ու հոգնակի թվերի երկրորդ դեմքի ձևեր: *Ե* լծորդության պարզ բայերի հրամայականը կազմվում է՝ բայահիմքին ավելացնելով եզակիում *ա, ի* կամ *է* վերջավորություններ, իսկ հոգնակիում՝ *եք* (օրինակ՝ *գ՛ըրէ՛//գ՛ըրա՛, նըստի՛ խըմէ՛, խըմա՛ և գ՛ըրէ՛ք, նըստէ՛ք, խըմէ՛ք*): *Ա* խոնարհման պարզ բայերի հրամայականը կազմվում է անորոշի հիմքից՝ *ի, ա* ավելացնելով, երբեմն նաև անցյալի հիմքից, հոգնակին կազմվում է անցյալի հիմքից *եք* վերջավորությամբ (*կար-*

թա՛, կարթըցե՛ք, խաղցի, խաղա՛, խաղցե՛ք, մընա՛, մանցի՛, մանցե՛ք): Ս.Բաղդասարյանը համարում է, որ հրամայականի երկրորդ՝ բարդ ձևը բարբառում ունի ներկա և անցյալ ժամանակներ և երկու դեմք՝ երկրորդ և երրորդ: Ըստ նրա՝ հրամայական եղանակի իմաստը բարբառում արտահայտվում է *թըխ* մասնիկի և ըղձական եղանակի համապատասխան ձևերի գոգորդմամբ³⁸: Այսպես՝

Թըխ գ'ըրիս թըխ գ'ըրիք թըխ գըրիր թըխ գ'ըրիք
 թըխ գ'ըրէ թըխ գ'ըրին թըխ գըրէր թըխ գ'ըրին

Կարծում ենք՝ իրականում սրանք ըղձական եղանակի ձևեր են և կապ չունեն հրամայական եղանակի հետ:

Ալաշկերտի խոսվածքում հրամայականը հոգնակի թվում ունի *էկ* վերջավորություն (*գ'ըրէ՛կ, կայնէ՛կ, ախծէ՛կ, էրէվածէ՛կ*): Եզակի թվում է խոնարհման ներգործական սեռի բայերը ստանում են *ա* (*գ'ըրա՛*), իսկ չեզոք սեռի բայերը՝ *ի* վերջավորություն (*կայնի՛*): Ա խոնարհման ներգործական սեռի բայերը եզակիում ունեն *ի*, իսկ չեզոք սեռի բայերը՝ *ա* վերջավորություն (*ախծի՛, էրէվա՛*):

Դիադինի բարբառում հոգնակի հրամայականն ունի *էք* վերջավորություն (*բ'ըռնէ՛ք, գ'ըրէ՛ք, էփէք, խըմէ՛ք, վննգէ՛ք, նըստէ՛ք, աղցէ՛ք, էրէվացէ՛ք, մացէ՛ք, հիմցէ՛ք, խասկըցէ՛ք, ուրխըցէ՛ք*): Եզակի հրամայականում է խոնարհման ներգործական սեռի պարզ բայերը ստանում են *ա* վերջավորություն (*բ'ըռնա, գ'ըրա՛, էփա՛, խըմա՛*), չեզոք սեռի բայերը՝ *ի* վերջավորություն (*ապրի՛, վննգի՛, նըստի՛*):

Այս բարբառում *ա* խոնարհման պարզ բայերը եզակի հրամայականում ստանում են *ա* վերջավորություն (*աղա՛, էրէվա՛, մընա՛*), ածանցավոր բայերը՝ *ի* վերջավորություն (*հիմցի՛, խասկըցի՛, ուրխըցի՛*):

³⁸ Ս.Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 123-124:

Սասունի բարբառում հրամայական եղանակի բայաձևերը գրեթե ամբողջությամբ նման են Մշո բարբառի ձևերին: Հոգնակի հրամայականի վերջավորությունն է *էկ* (*պըռնէ'կ, բաղմէ'կ, գարտացէ'կ, խաղծէ'կ, մածէ'կ, անծէ'կ, հըսսէ'կ, իճէ'կ, պանցըրցէ'կ, իմծէ'կ, ուրխըծէ'կ, վըլածէ'կ*): Եզակի թվում է լծորդության պարզ բայերի հրամայականն ունի *ի* կամ է վերջավորություն (*պըռնէ', էպէ', աբրի'*), ածանցավոր բայերինը՝ *ի* վերջավորություն (*անծի', կըղի', հըսսի', իճի'*): Ա խոնարհման պարզ բայերի հրամայականը եզակի թվում ունի *ի, ա* վերջավորություններ (*գարտա', խաղծի, խաղա', մընա'*), ածանցավոր բայերինը՝ *ի* վերջավորություն (*տիմացի', պանցըրցի', վէնձըցի', ուրխըծի'*):

Կարնո բարբառում ևս հոգնակի հրամայականն ունի *էկ* վերջավորություն (*բ'ըռնէ'կ, աղացէ'կ, հասկըծէ'կ*): Եզակի թվում հրամայականը ըստ խոնարհումների ունի հետևյալ վերջավորությունները. *է* խոնարհման պարզ բայեր՝ *է* (*բ'ըռնէ', կըղրէ', պաղմէ', պայէ'*), ածանցավոր բայեր՝ *ի* (*անծի', մըղի, իճի', հակի'*), *ա* խոնարհման պարզ բայեր՝ *ա* (*աղա', իընդա', հավաղա'*), ածանցավոր բայեր՝ *ի* (*իմածի', հասկըծի', մէձըծի'*):

Ժխտական խոնարհում

Ուշադրության արժանի որոշ իրողություններ են հանդես գալիս նաև ժխտական խոնարհման մեջ: Նախ նկատենք, որ այստեղ գործառող ժխտական դերբայը ՀՀ տարածքում գործառող արևմտյան բարբառներում ձևավորվում է գրական արևելահայերենին բնորոշ ձևով (ներկայի հիմքից՝ **ի, ա** վերջավորություններով), իսկ գրական արևմտահայերենում՝ անորոշից դերբայից՝ **լ>ը** անցումով:

Ստորև ներկայացնում ենք գրական արևմտահայերենի և հիշյալ բարբառների ժխտական խոնարհման ընդհանուր հարացույցը՝ անհրաժեշտ մեկնաբանություններով.

Ներկա**Եզակի թիվ**

Գա.	Կ.	Մ.
չեմ գրեր	չեմ աշէ	չըխըմիմ // չըմ խըմի, է
չես գրեր	չես աշէ	չըխըմիս // չըս խըմի, է
չի գրեր	չի աշէ	չըխըմէ // չը խըմէ

Ս.	Դ.	Ալ.
չըմ կըրը	կօ չեմ նըստե	չըմ քաղի
չըս կըրը	կօ չես նըստե	չըս քաղի
չը կըրը	կօ չը նըստե	չը քաղա

Հոգնակի թիվ

Գա.	Կ.	Մ.
չենք գրեր	չենք աշէ	չըխըմինք // չընք խըմի, է
չեք գրեր	չեք աշէ	չըխըմիք // չըք խըմի, է
չեն գրեր	չեն աշէ	չըխըմին // չըն խըմի, է

Ս.	Դ.	Ալ.
չըք կըրը	կօ չենք՝ նըստե	չընկ քաղի
չըք կըրը	կօ չեք՝ նըստե	չըկ քաղի
չըն կըրը	կօ չեն նըստե	չըն քաղի

Անցյալ անկատար**Եզակի թիվ**

Գա.	Կ.	Ս.	Մ.	Դ.	Ալ.
չէի գրեր	չէի աշէ	չըխըմի	չըք կըրը	կօ չի նըստե	չընկ քաղէ
չէիր գրեր	չէիր աշէ	չըխըմիր	չըր կըրը	կօ չիր նըստե	չըր քաղէ
չէր գրեր	չէր աշէ	չըխըմէր	չըր կըրը	կօ չէր նըստե	չըր քաղէ

Հոգնակի թիվ

Գա.	Կ.	Մ.
չէինք գրեր	չէինք աշէ	չը խըմինք
չէիք գրեր	չէիք աշէ	չը խըմիք
չէին գրեր	չէին աշէ	չըխըմին
Ս.	Դ.	Ալ.
չըք կըրը	կօ չինք՝ նըստե	չընկ քաղի
չըք կըրը	կօ չիք՝ նըստե	չըկ քաղի
չըն կըրը	կօ չին նըստե	չըն քաղէ

Ինչպես երևում է խոնարհման հարացույցից, Մշո բարբառում ժխտական խոնարհման սահմանական եղանակի ներկա ժամանակը ունի ձևակազմության երկու եղանակ. ա) ժխտական դերբայով և օժանդակ բայի ժխտական ձևերով, բ) *կը* եղանակիչի փոխարեն չ ժխտական մասնիկի գործածությամբ: Իսկ անկատար անցյալում ժխտական ձևերը կազմվում են միայն չ ժխտական մասնիկով: Ք.Մաղաթյանը արձանագրում է, որ Ալաշկերտի խոսվածքը ներկայացնող առանձին բնակավայրերում ևս առկա է չ մասնիկով ժխտականը, «կան տեղեր էլ, որ երկու ձևն էլ գործածվում է»³⁹ :

Ժխտական խոնարհման հարակատար ժամանակաձևերի կազմության մեջ ուշադրության է արժանի դերբայի նկատմամբ օժանդակ բայի դիրքը. եթե գրական արևմտահայերենում ու Կարնո բարբառում օժանդակ բայը նախորդում է դերբային, ապա Մշո և Դիաղիիի բարբառներում հաջորդում է, ինչպես՝

Հարակատար ներկա

Գա.	Կ.	Մ.	Դ.
չեմ գրած	չեմ աշած	խըմուգ չիմ	նըստուկ չեմ
չես գրած	չես աշած	խըմուգ չիս	նըստուկ չես
չէ գրած	չի աշած	խըմուգ չէ	նըստուկ չէ

³⁹ Ք.Մաղաթյան, նշվ. աշխ., էջ 141:

Հարակատար անցյալ

Գա.	Կ.	Մ.	Դ.
չէի գրած	չէի աշած	խըմուզ չի	նըստուկ չի
չէիր գրած	չէիր աշած	խըմուզ չիր	նըստուկ չիր
չէր գրած	չէր աշած	խըմուզ չէր	նըստուկ չէր

Ըստ Յու. Ավետիսյանի՝ գրական արևմտահայերենում վաղակատար ներկա և անցյալ ժամանակաձևերը չունեն ժխտական ձևեր, քանի որ դրանք համանուն կլիներն անկատարի ձևերին: Եվ դրանց փոխարեն գործածվում են հարակատարի ժխտական ձևերը⁴⁰: ՀՀ տարածքում գործառոդ բարբառներում, Մշո բարբառից բացի, ժխտական խոնարհման վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևերում վաղակատար դերբայի *ք* մասնիկը ընկնում է:

Ուշագրավ է, որ Մշո բարբառում, Ալաշկերտի խոսվածքում, մասամբ նաև Դիաղինի բարբառում ժխտական խոնարհման վաղակատար ներկա և անցյալ ժամանակաձևերում օժանդակ բայը կարող է ժխտական ձևով նախորդել դերբային, ապա հաստատական ձևով հաջորդել, ինչպես՝ *չըմ կարէր իմ*, *չըմ քաղէր ի*:

Վաղակատար ներկա

Կ.	Մ.	Ս.
չէմ աշէ	չըմ կարէր (իմ)	չըմ կըրը
չէս աշէ	չըս կարէր (իս)	չըս կըրը
չի աշէ	չը կարէր (է)	չըկըրը

Դ.

Ալ.

չէմ գ'անցէ//չըխախցեր էմ	չըմ քաղէ//չըմ քաղէր ի
չէս գ'անցէ//չըխախցեր էս	չըս քաղէ//չըս քաղէր ի
չի գ'անցէ//չըխախցեր է	չը քաղէ//չը քաղէր ա

⁴⁰Յու. Ավետիսյան, նույն տեղում, էջ 241:

Վաղակատար անցյալ

Վ.	Մ.	Ս.
չէի աշէ	չըկարէր ի	չըք կըրը
չէիր աշէ	չըկարէր իր	չըր կըրը
չէր աշէ	չըկարէր էր	չըր կըրը

Դ.	Ալ.
չի գ'ացէ	չընկ քաղէ//չընկ քաղէր է
չիր գ'ացէ	չըր քաղէ//չըր քաղէր է
չէր գ'ացէ	չըր քաղէ//չըր քաղէր է

Պարզ ժամանակաձևերը ժխտական մասնիկն ընդունում են հաստատական ձևերի վրա, ինչպես

Անցյալ կատարյալ

Գա.	Վ.	Մ.	Ս.	Դ.	Ալ.
չգրեցի	չաշէցի	չըխըմի//էցի	չըկրացը	չըգ'ացի	չախծա
չգրեցիր	չաշէցիր	չըխըմիր//էցիր	չըկրացըր	չըգ'ացիր	չախծար
չգրեց	չաշէց	չըխըմէց	չըկրըց	չըգ'աց //	չախծավ
				չըգ'ընաց	

Ընթացիկ անցյալ

Գա.	Վ.	Մ.	Ս.	Դ.	Ալ.
չգրեմ	չաշէմ	չըխըմիմ	չըկըրըմ	չքաղիմ	չէթամ
չգրես	չաշէս	չըխըմիս	չըկըրըս	չքաղիս	չէթաս
չգրէ	չաշէ	չըխըմէ	չըկըրէ	չքաղա	չէթա

Ընթացիկ անցյալ

Գա.	Վ.	Մ.	Ս.	Դ.	Ալ.
չգրէի	չաշէի	չըխըմի	չըկըրէք	չքաղէնկ	չէթի
չգրէիր	չաշէիր	չըխըմիր	չըկըրէր	չը քաղէր	չէթիր
չգրէր	չաշէր	չըխըմէր	չըկըրէր	չըքաղէր	չէթէր

Եթե գրական արևմտահայերենում ու Սասունի բարբառում *պիտի* եղանակիչով ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայի վրա, ապա մյուս լեզվատարբերակներում այն դրվում է եղանակիչի վրա, ինպես՝

Ապառնի

Գա.	Կ.	Մ.
պիտի չգրեմ	չբերդի աշեմ//չաշեմ դի	չբերդի խըմիմ
պիտի չգրես	չբերդի աշես//չաշես դի	չբերդի խըմիս
պիտի չգրե	չբերդի աշե//չաշե դի	չբերդի խըմե
Ս.	Դ.	Ալ.
չըպըտի նատեմ	բըդ չկըրըմ	չը բըդի քաղիմ
չըպըտի նատես	բըդ չկըրըս	չը բըդի քաղիս
չըպըտի նատի	բըդ չկըրե	չը բըդի քաղա

Անցյալ

Գա.	Կ.	Մ.
պիտի չգրեի	չըպիդի աշեի//չաշեի դի	չբերդի խըմի
պիտի չգրեիր	չըպիդի աշեիր//չաշեիր դի	չբերդի խըմիր
պիտի չգրեր	չըպիդի աշեր//չաշեր դի	չբերդի խըմեր
Ս.	Դ.	Ալ.
չըպըտի նատի	բըդ չկըրեք	չը բըդի քաղենկ
չըպըտի նատիր	բըդ չկըրեր	չը բըդի քաղեր
չըպըտի նատեր	բըդ չկըրեր	չը բըդի քաղեր

Գրական արևմտահայերենում, ինչպես և դիտարկվող բարբառներում արգելական հրամայականը ձևավորվում է *մի* մասնիկով կամ նրա փոփոխականերով (եզակիում՝ *մը*, հոգնակիում՝ *միք*): Պարզապես գրական արևմտահայերենում բոլոր լծորդությունների բայերը եզակիում ունենում են *ը* (*մի՛ կարդար, մի՛ թողուր*): Այսպես՝

Գա.	Կ.	Մ.	Ս.	Դ.	Ալ.
մի' կարդար մի' աշէ	մը' խըմէ,ա	մը' կըրէ	մի' Գընա	մի' ախծի	
մի' կարդաք մի'ք աշէ	մը' խըմէք	մը' կըրէք	մի' Գնցեք	մի' ախծէկ	

Եթե արգելական հրամայականը Սասունի խոսվածքներում *մը* արգելական մասնիկով է ձևավորվում՝ *մը' կըրէ, մը' զարտա, մը' կըրէկ, մը' զարտէ'կ*, ապա Մշո բարբառում կարող է ձևավորվել նաև *մի, մըք* կազմիչներով, ինչպես՝ *մի մնա, մըք մընա*⁴¹:

⁴¹ Տե՛ս Ս.Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 165:

ԳԼՈՒԽ Զ
ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՈՐԾԱՌՈՂ ԿԸ ՃՅՈՒՂԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ
ԶՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ – ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԿՋԲՈՒՆՔԻ

Բարբառային միավորների փոխհարաբերությունները համակողմանիորեն դիտարկելու հնարավորություն ընձեռող այս սկզբունքը, որ առաջ է քաշել Գ.Ջահուկյանը¹, հենվում է հնչյունական և քերականական հատկանիշների վրա: Մեր կողմից դիտարկվող լեզվատարբերակների առնչությունները ներկայացնում ենք ըստ Գ.Ջահուկյանի ընտրած բաղաձայնական, ձայնավորական, անվանական ու բայական հատկանիշների և կազմած աղյուսակների: Դիտարկվող բարբառները, որպես կանոն, Գ.Ջահուկյանի աղյուսակներում ներկայացված են տարածական մեկից ավելի տարբերակներով, սակայն մեր աղյուսակներում ներկայացնում ենք յուրաքանչյուր բարբառի մեկ տարածքի հատկանիշներ՝ խուսափելով տարբեր տարածքների հատկանիշների միջինացումից և աղյուսակները ծանրաբեռնելուց: Պոլսի և Սասունի բարբառների դեպքում նկատի ենք ունեցել բարբառային կենտրոնների՝ Պոլիս քաղաքի և Գելիեգուզանի տվյալները, Կարինի և Մշո բարբառների դեպքում հիմնականում նկատի ենք ունեցել Գյումրիի (Լենինական) և Մուշի հատկանիշները², Դիադինի բարբառի դեպքում՝ Գ.Ջահուկյանի աղյուսակներում Վարդե-

¹ Տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972:

² Տարածական այս տարբերակներն ընտրելիս հաշվի ենք առել դրանց ուսումնասիրվածության աստիճանը, Հայաստանի Հանրապետությունում գործառության յուրահատկությունները, նաև այն հանգամանքը, որ այդ տարբերակները թերևս ներկայացնում են բարբառների առավել կարևոր և ամբողջական հատկանիշները:

նիսին վերաբերող տվյալները: Դիադինի բարբառի հատկանիշները ներկայացնելիս հաշվի ենք առել նաև մեր կողմից առաջարկված որոշ ճշգրտումները³:

Հնչյունական հատկանիշներ (զուգաբանություններ)

Ինչպես նշում է Գ.Ջահուկյանը, հայ բարբառների հնչյունական հատկանիշների ուսումնասիրությունը նպատակահարմար է կատարել նախ ըստ բաղաձայնների, ապա ըստ ձայնավորների⁴: Նախ դիտարկենք գրական արևմտահայերենի և Կարնո, Դիադինի, Մշո, Սասունի ու Պոլսի բարբառների բաղաձայնական իրողությունների փոխհարաբերությունների վիճակագրական պատկերը, որ ներկայացնում է Աղյուսակ 1-ը՝ ըստ Գ.Ջահուկյանի ընտրած բարբառային բաղաձայնական 25 հատկանիշների:

Աղյուսակ 1

h/h	Հատկանիշ	Կ	Դ	Մ	Ս	ԳԱ	Պ
1	Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ-խլություն (բ, դ, գ, ձ, ջ ~ փ, թ, ք, զ, չ). բան ~ փան	-	-	-	-	+	-
2	Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ-ձայնեղություն (բ, դ, գ, ձ, ջ ~ բ', դ', գ', ձ', ջ'). բան ~ բ'ան	+	+	+	-	-	-
3	Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների խլություն (բ, դ, գ, ձ, ջ ~ պ, տ, կ, ծ, ճ). բան ~ պան	-	-	-	+	-	-

³ Տե՛ս Վ.Կատվայան, Բայազետի և Դիադինի բարբառների փոխհարաբերությունները, *Ջահուկյանական ընթերցումներ – 2012, Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ*, Ե., 2012, էջ 115-129:

⁴ Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 45:

4	Բ-ից հետո և միջձայնավորային ու բառավերջի ձայնավորային դիրքերում գտնվող ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ-խուրություն (բ, դ, գ, ձ, ջ ~ փ, թ, ք, ց, չ). բուրդ ~ բուրթ:	+	+	+	-	+	+
5	Բառասկզբի խուլ պայթականների և կիսաշփականների ձայնեղություն (պ, տ, կ, ծ, ճ ~ բ, դ, գ, ձ, ջ). պառավ ~ բառավ:	-	-	-	+	+	+
6	Բ-ից հետո և միջձայնավորային ու բառավերջի ետձայնավորային դիրքերում գտնվող խուլ պայթականների և կիսաշփականների ձայնեղություն (պ, տ, կ, ծ, ճ ~ բ, դ, գ, ձ, ջ).	+	-	+	+	+	+
7	Ոչ բառասկզբի շնչեղ-խուլների ապաշնչեղության առկայություն (փ, թ, ք, ց, չ ~ պ, տ, կ, ծ, ճ). փրփուր ~ փրպուր	+	+	-	-	-	+
8	Քմայնացած ետնալեզվայինների առկայություն ոչ փոխառյալ բառերում (գ', կ', ք'). + ² . գ', կ', ք' ~ ջ', ձ', չ'	-	+	±	-	-	-
9	նգն, նկն հնչյունակապակցությունների դիմաց յն. կանգնել ~ կայնել	+	+	+	-	+	+

10	Ձայնավորահաջորդ ետնալեզվային պայթականների շփականություն նախաբաղաձայնական դիրքում (կ, ք ~ հ, հլ, յ, դ, խ)	-	-	-	-	-	$\square$ +
11	Տ-ի առնմանական փոփոխություն ն, ր, ռ ձայնորդներից առաջ. տն~նն, + ¹ . տր~ռ, + ² . տր~յր	+ ¹	-	-	-	-	-
12	Միջձայնավորային բաղաձայնների ոչ-սաստկական և ոչ-առնմանական կրկնություն. ածել ~ ածծել, ածծել:	-	-	-	-	-	-
13	Կիսաշփականների շփականություն նախաբաղաձայնական դիրքում (ջ, ճ, չ, ձ, ծ, ց ~ ժ, շ, զ, ս). իջնել ~ իշնել	-	$\pm$	-	-	-	+
14	Հ-ի դիմաց որևէ դիրքում յ, յհ, յ-ի առկայություն	+	+	+	-	-	$\pm$
15	Բառասկզբում (ձայնավորից առաջ) գրական լեզուների համեմատությամբ հավելական շնչի (հ, հ > իս, այլև յ) առկայություն. + ¹ . ձայնեղ հ (յ)	+ ¹	+ ¹	+ ¹	-	-	-
16	Բառասկզբի հ-ի դիմաց ոչ առնմանական խ	-	+	$\square$ + ¹	-	-	-
17	Բառասկզբում՝ ո-ից առաջ հ-ի դիմաց շրթնային շփական. հ ~ ֆ:	+	-	-	-	-	-
18	Խ-ի դիմաց տարնմանական հ՝ բառի մեջ հաջորդող դ-ի առկայության դեպքում. խաղ ~ հաղ:	-	-	-	-	-	$\square$ +

19	Բառասկզբի դ-ի (հայերեն և օտար բառերում) դիմաց խ. դարիք ~ խարիք:	-	-	+	-	-	+
20	Հայերենի համար ոչ սովորական կոկորդային բաղաձայնի (դ, կ°) առկայություն. դավուրմա ~դ ավուրմա, կ°ավուրմա	-	+	-	-	-	-
21	Ֆ-ի առկայություն:	+	+	+	+	+	+
22	Բ-ի քմայնացածություն:	-	-	-	+	-	-
23	Ռ-ի և ր-ի շփոթություն ոչ նախաբաղաձայնական դիրքում. բարի ~ բառի:	-	-	-	-	-	-
24	Բաղաձայնահաջորդ ն-ի պահպանվածություն:	-	-	-	-	-	-
25	Նախաձայնավորային ւ (w). վանք (~ւանք), վրա, շվար, չվան	-	-	□+ ⁵	+ ⁵	-	-
		10	10,5	9,5	6	6	9,5

Ինչպես երևում է, գրական արևմտահայերենում բարբառային բաղաձայնական հատկանիշները մեծ քանակություն չեն կազմում: Եղած վեց հատկանիշներից չորսը վերաբերում են հպական և հպաշփական բաղաձայնների՝ տարբեր դիրքերում դրսևորումներին, մեկը՝ ֆ-ի առկայությանը (այս հատկանիշների տարբերակայնությունը ընդհանուր հայերենյան իրողություն է և այս կամ այն կերպ դրսևորվում է նաև գրական տարբերակներում), և միայն մեկ հատկանիշ (նգն, նկն > յն), հատուկ լինելով բարբառային խոսքին, ներթափանցել է նաև գրական լեզու: Միայն մեկ հատկանիշով («Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ-խլություն») գրական արևմտահայերենը տարբերվում է համեմատվող բոլոր (նաև հիմք դարձած Պոլսի) բարբառներից: Մյուս բոլոր դեպքերում գրական արևմտահայե-

րենն ընդհանրություններ ունի առնվազն երկու բարբառների հետ: Ամենից քիչ տարբերություններ գրական արևմտահայերենն ունի Պոլսի բարբառից (5,5 միավոր): Գրական լեզվին չեն անցել Պոլսի բարբառում օրինաչափորեն դրսևորվող հետևյալ հատկանիշները՝ ա) «Ոչ բառասկզբի շնչեղ-խուլերի ապաշնչեղության առկայություն», բ) «Կիսաշփականների շփականություն նախաբաղաձայնական դիրքում», գ) «Բառասկզբի դ-ի (հայերեն և օտար բառերում) դիմաց խ»: Բաղաձայնական դիտարկվող հատկանիշների սահմաններում գրական արևմտահայերենին բավականին մոտ է նաև Սասունի բարբառը (տարբերությունները կազմում են 6 միավոր): Հետաքրքրական է, որ մյուս բոլոր տարբերակներից առանձնացնող ամենաշատ հատկանիշներ ունի Սասունի բարբառը (4): Գրական տարբերակից ունեցած իրենց տարբերությունների քանակով մյուս բարբառները ներկայացնում են հետևյալ հաջորդականությունը՝ Մշո բարբառ (7,5), Կարնո բարբառ (8), Դիադինի բարբառ (10,5): Ի դեպ, Դիադինի և Պոլսի բարբառների տարբերությունների քանակը կազմում է 10 միավոր, Սասնո և Պոլսի բարբառինը՝ 9,5, Կարնո և Պոլսի բարբառինը՝ 8,5, Մշո և Պոլսի բարբառինը՝ 8: Դիտարկվող լեզվատարբերակներում ամենից շատ տարբերություններ ունեն Դիադինի և Սասունի բարբառները՝ 14,5 միավոր:

Աղյուսակ 2-ում ներկայացնում ենք գրական արևմտահայերենի և Կարնո, Դիադինի, Մշո, Սասունի ու Պոլսի բարբառների ձայնավորական իրողությունների փոխհարաբերությունների վիճակագրական պատկերը՝ ըստ Գ.Ջահուկյանի ընտրած բարբառային ձայնավորական 25 հատկանիշների:

Աղյուսակ 2

h/h	Հատկանիշ	Կ	Դ	Մ	Ս	ԳԱ	Պ
26	Շեշտակիր այ-ի դիմաց առաջին շարքի ձայնավոր. այ~է, + ¹ . այ~ւ	□+	+	+	+	-	-
27	ույ-ի (<ոյ) դիմաց ոչ շրթնային ձայնավոր (ույ~ ի, է, ա)	-	-	-	-	-	-

28	յու-ի (<իւ) դիմաց ոչ-շրթնային ձայնավոր (յու~ ի, է, ա)	-	-	-	□+	-	-
29	Երկբարբառների առկայություն. գետ(~գիէտ), գող(~գուող),	□+	+	+	-	-	-
30	Շեշտակիր ե-ի բարձրացող-երկբարբառային արտասանություն (~իէ)	□+	+	+	-	-	-
31	Շեշտակիր ո-ի բարձրացող-երկբարբառային արտասանություն (ո ~ուօ)	□+	+	+	-	-	-
32	Միավանկ բառերի սկզբնային ե-ից առաջ յ-ի հավելում (ե~յէ)	+	+	+	-	+	-
33	Միավանկ բառերի սկզբնային ո-ից առաջ շրթնային տարրի հավելում (ո~վօ, վէ, ուօ, ուէ)	+	+	+	-	+	□+
34	Քմայնացած ձայնավորների (յւ, ու, օ, ու) առկայություն. + ¹ . միայն փոխառյալ բառերում	+ ¹	+	+ ¹	+	-	+
35	Ա-ի դիմաց քմայնացած ձայնավոր (ա~յւ, ու, օ, ու)	-	+	-	+	-	-
36	Ո-ի դիմաց քմայնացած ձայնավոր (ո~յւ, օ, ու)	-	-	-	+	-	□+
37	Ու-ի դիմաց քմայնացած ձայնավոր (ու~յւ, ու, օ)	-	-	-	-	-	-
38	Չայնավորների ներդաշնակության առկայություն	-	-	-	-	-	□+
39	Ը-ի լիաձայնություն (ը~ ի, ու)	-	-	-	-	-	+
40	Շեշտակիր ա-ի դիմաց միջին կամ վերին շարքի (ավելի փակ) շեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ա~ է, է, ի, էի և այլն)	-	-	-	-	-	-

41	Շեշտակիր ե-ի (է-ի) դիմաց վերին շարքի (ավելի փակ) շեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ե, է~ ի, էի և այլն)	-	-	-	+	-	-
42	Շեշտակիր ո-ի (օ-ի) դիմաց վերին շարքի (ավելի փակ) շեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ո,օ ~ ու, ու, ուէ և այլն)	-	-	-	+	-	-
43	Շեշտակիր ի-ի դիմաց միջին կամ ստորին շարքի (ավելի բաց) շեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ի ~ ե, է, ա, այ և այլն)	-	-	-	-	-	-
44	Շեշտակիր ե-ի (է-ի) դիմաց ստորին շարքի (ավելի բաց) շեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ե, է~ ա, ä, այ և այլն)	-	-	-	-	-	-
45	Շեշտակիր ու-ի դիմաց միջին շարքի (ավելի բաց) շեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ու ~ ո, օ, ոէ, օէ և այլն)	-	-	-	-	-	-
46	Ա-ի շրթնայնացածություն (ա ~ ւ, օ, ու)	-	-	-	-	-	-
47	Շեշտակիր ո-ի (օ-ի) ապա-շրթնայնացածություն (ո, օ ~ ա, է, ի, ք)	-	-	-	-	-	-

48	Միջին շարքի («խառը») ը, ը ^h , ա ^h ձայնավորների վերջավանկային շեշտակրություն ոչ բնաձայն բառերում	-	-	-	+	-	-
49	Ը-ով չվերջացող բառերի նախավերջավանկային շեշտակրություն (նախորդ ձայնավորի թուլացմամբ)	-	-	-	+	-	-
50	Ը-ից տարբեր խառն («միջին շարքի») ձայնավորների (ա ^h , ^h ե, ը ^h) առկայություն	-	-	-	-	-	-
		5,0	8,0	7,0	8,5	2,0	3,5

Աղյուսակից երևում է, որ գրական արևմտահայերենում իրենց արտահայտությունն ունեն բարբառային ձայնավորական ընդամենը երկու հատկանիշներ, որոնք ներկայացնում են միավանկ բառերի սկզբում յ-ի և վ-ի հավելում՝ համապատասխանաբար ե-ից և ո-ից առաջ։ Այդ հատկանիշներով գրական լեզվին նմանվում են Կարնո, Մշո և Դիադինի բարբառները, մասամբ՝ Պոլսի բարբառը։ Ամենից քիչ տարբերություններ գրական արևմտահայերենն ունի Կարնո բարբառից (3), ընդ որում՝ դրանք մասնակի տարբերություններ են երկբարբառային հնչյունների դրսևորման առումով, այլ դեպքերում վերաբերում են երկբարբառների զարգացմանն ու քմայինների առկայությանը։ Պոլսի բարբառից գրականի տարբերությունների ցուցիչը կազմում է 4,5 միավոր։ Գրական լեզվին չեն անցել Պոլսի բարբառում այս կամ այն կերպ դրսևորվող այնպիսի հատկանիշները, ինչպիսիք են ձայնավորների քմայնացման⁵, ձայնավորների ներդաշնակության ու ը-ի լիաձայնության առկայությունը։ Ի տարբերություն գրական արևմտահայերենի՝ Պոլսի բարբառում միավանկ բառերի սկզբում

⁵ Այս դեպքում նկատի չունենք գրական արևմտահայերենում իւ-ի դիմաց ու արտասանությունը։

ե-ից առաջ յ-ի հավելում չի դիտարկվում, իսկ ո-ից առաջ վ-ի հավելումը կրում է մասնակի բնույթ: Ձայնավորական դիտարկվող հատկանիշների սահմաններում գրական արևմտահայերենին բավականին մոտ է նաև Մշո բարբառը (տարբերությունները կազմում են 5 միավոր), ընդ որում՝ տարբերություններից երեքը վերաբերում են երկբարբառային հնչյունների առկայությանը: Գրական լեզվից Դիադինի բարբառի տարբերությունների ցուցիչը կազմում է 6 միավոր: Այս դեպքում ևս տարբերությունները պայմանավորված են երկբարբառների զարգացման, երկբարբառային և քմային ձայնավորների առկայության զանազանություններով: Գրական արևմտահայերենից առավել շատ տարբերակիչ հատկանիշներ ունի Սասունի բարբառը՝ 10,5 միավոր: Մյուս բոլոր տարբերակներից առանձնացնող ամենաշատ հատկանիշներ ևս ունի Սասունի բարբառը (5,5): Գրական արևմտահայերենի հիմք դարձած Պոլսի բարբառից ամենաքիչ տարբերություններ ունի Կարնո բարբառը (7 միավոր): Այնուհետև հաջորդում են Մշո և Դիադինի (8,5-ական միավոր), ապա՝ Սասունի (9 միավոր) բարբառները: Դիտարկվող լեզվատարբերակներում ամենից քիչ տարբերություններ ունեն Մշո և Դիադինի (1,5 միավոր), ապա Կարնո և Մշո բարբառները (2 միավոր), իսկ ավելի շատ տարբերություններ ունեն Մշո և Սասունի բարբառները՝ 12 միավոր:

Այսպիսով, դիտարկվող լեզվատարբերակները ըստ հնչյունական բարբառային հատկանիշների հանդես են բերում հետևյալ փոխհարաբերությունները: Գրական արևմտահայերենին ամենամերձավորը Պոլսի բարբառն է՝ տարբերությունների 10 միավոր ցուցիչով: Այնուհետև ըստ այդ ցուցիչի աճման հաջորդում են Կարնո (11 միավոր), Մշո (12,5 միավոր), Դիադինի և Սասունի (16,5-ական միավոր) բարբառները: ՀՀ տարածքում գործառող բարբառները նույն կարգի հերթականությամբ են դասավորվում ըստ Պոլսի բարբառի հետ փոխհարաբերությունների. Կարնո բարբառ՝ 14,5 միավոր տարբերություններ, Մշո բարբառ՝ 16 միավոր, Դիադինի և Սասունի բարբառներ՝ 18,5-ական միավոր: ՀՀ տարածքում գործառող բարբառներից հնչյունական հատկանիշների

առումով իրար ավելի մերձավոր են Մշո, Կարնո և Դիադինի բարբառները, որոնց միջև եղած տարբերությունները ամենափոքր ցուցիչներն ունեն: Այսպես, Մշո բարբառը Կարնո և Դիադինի բարբառներից ունի 7,5-ական միավոր տարբերություններ, իսկ Կարնո և Դիադինի բարբառների տարբերությունների ցուցիչն է 10 միավոր: Մինչդեռ Սասունի բարբառը այս երեք բարբառներից տարբերվում է ամենաշատ հատկանիշներով (Կարնո բարբառից՝ 22 միավոր, Մշո բարբառից՝ 22,5 միավոր, Դիադինի բարբառից՝ 25 միավոր): Ի դեպ, Սասունի բարբառը (Դիադինի բարբառի հետ) գրական արևմտահայերենից և Պոլսի բարբառից նույնպես ամենաշատ տարբերություններ ունեցող լեզվատարբերակն է՝ համապատասխանաբար 16,5 և 18,5 միավորներով:

Քերականական հատկանիշներ (զուգաբանություններ)

Հետևելով Գ.Զահուկյանի օրինակին՝ մեզ հետաքրքրող լեզվատարբերակների փոխհարաբերությունները նախ դիտարկում ենք անվանն ու դերանվանը վերաբերող բարբառային հատկանիշների շրջանակում: Աղյուսակ 3-ում Գ.Զահուկյանի ընտրած բարբառային անվանական 25 հատկանիշների շրջանակում ներկայացնում ենք գրական արևմտահայերենի և Կարնո, Դիադինի, Մշո, Սասունի ու Պոլսի բարբառների փոխհարաբերությունների վիճակագրական պատկերը:

Աղյուսակ 3

h/h	Հատկանիշ	Կ	Դ	Մ	Ս	ԳԱ	Պ
51	վ/հ և նրանով բաղադրված հոգնակերտներ (վի, վնի, վներ, վան, վանք, վդիք)	+	-	+	+	-	+
52	նի և նրանով բաղադրված հոգնակերտներ (նի, նե, նին, նիք). ⁺¹ . ան/ի և նրանով բաղադրված հոգնակերտներ (անի, անիք, էնի, էնե, էնիք)	+	-	-	+	-	-

53	ան[ան-ք, ան – (ն)եր] հոգնակերտ՝ առանց նախորդող բաղադրիչի (անք-ի դեպքում առանց «ազգականներ, կողմ-նակիցներ» լրացական իմաստի). + ¹ . ան-տի (ք) հոգնակերտ	+	+	+	+	-	-
54	<i>ստան, ստար</i> և նրանցով բաղադրված հոգնակերտներ	+	-	+	+	-	-
55	ր, եր, ար +ք, անք, այք (>էք, >իք) տիպի բաղադրյալ հոգնակերտ. + ¹ . նան ք+եր հոգնակերտ	-	+ ¹	+	+	-	-
56	(ն)եր – ով հոգնակիի ի հոլովում. ±. ի-ին զուգահեռ նան ու հոլովում	-	-	-	-	-	-
57	շուն, տուն բառերի վերջավորական (արտաքին թեքման) հոլովում	-	-	-	-	□+	+
58	է(ն) –ով բացառական (է, էն). + ¹ . ան – ով բացառական	+	+	+	+	+	+
59	Ց-ով բացառական (ից, ուց, իծ)	-	+	+	+	-	-
60	Վերլուծական (ետադրությամբ արտահայտվող) բացառական	-	-	-	+	-	-
61	Գործիականի՝ -ով-ից (օվ, ուվ, օվ, ուվ) տարբեր (այդ թվում՝ նրանից ծագող, բայց այլ վերջավորությունների հետ համընկնող) վերջավորություն	-	-	-	-	-	-
62	Վերլուծական (կապով արտահայտվող) գործիական. + ¹ . ետադրությամբ, + ² . Ի նախորդով	-	-	-	+	-	-
63	Բացառականի ձևերում մ-ի առկայություն ազգակցականիչ բառերում և անձնական դերանուններում. + ¹ . նան այլ բառերում	□+	-	-	-	+	+

64	ում-ով ներգոյական	-	-	-	-	-	-
65	Դերանունների թեք հոլովաձևերում ի-ի առկայություն	+	+	+	-	+	+
66	(ի)կ-ով (իկ, իգ, կ, գ) դերանվանական ձևեր	+	+	+	-	+	+
67	Ցուցական դերանունների թեք հոլովաձևերում և հոգնակի ուղղականում հավելյալան տ, դ	-	+	+	-	-	-
68	Ցուցական դերանունների երկադիմություն 1-ին դեմքի բացակայությամբ. ⁺¹ . 2-րդ դեմքի բացակայությամբ. [±] . եռաշարքության ոչ հետևողական խախտում	-	-	+	-	-	-
69	ինջի-ով դասական թվական	-	-	-	+	-	+
70	Հատկացուցչի հոդառություն	+	-	-	-	+	+
71	Անորոշ հոդի ետադասություն	+	-	+	+	+	+
72	Զ նախդրի գործածություն. ^{-+ .} միայն դերանուններում՝ ոչ հետևողաբար	-	-	+	+	-	-
73	Արդի գրական հայերենի ետադաս կապերի նախադաս գործածություն	-	-	+	-	-	-
74	Անձի և իրի առումների տարբերակում	+	+	-	-	-	-
75	⁺² . Ուղղականում որոշյալ հոդի սահմանափակ կիրառ., ⁺³ . ձայնավորահանգ բառերի կրկնակի հոդառություն, ⁺⁴ . ստացական հոդերից հետո ի	-	⁺²³	⁺⁴	-	-	-
		10,5	10	14	12	6,5	9

Աղյուսակից երևում է, որ գրական արևմտահայերենում իրենց արտահայտությունն ունեն բարբառային անվանական յոթ հատկանիշներ (6,5 միավոր), որոնք վերաբերում են հոլովական իրողություններին (*շուն*, *տուն* բառերի արտաքին թեքում, է-ով և

մե-ով բացառական), դերանունների ձևավորմանը (իկ-ով դերանվանական ձևեր, թեք հոլովաձևերում ի-ի առկայություն) և հոդերի կիրառությանը (հատկացուցչի հոդառություն, անորոշ հոդի հետադասություն): Այդ հատկանիշներից միայն մեկը (է-ով բացառական) ընդհանուր է դիտարկվող բոլոր տարբերակների համար: Գրական արևմտահայերենի և Պոլսի բարբառի՝ անվանական հատկանիշներով տարբերությունների ցուցիչը կազմում է 2,5 միավոր: Ի տարբերություն Պոլսի բարբառի՝ գրական արևմտահայերենը ներկայում չունի վի-ով հոգնակի և ինջի-ով դասական թվական, նաև *շուն*, *տուն* բառերի արտաքին թեքումը Պոլսի բարբառում ունի ամբողջական դրսևորում: Այնուհետև ամենից քիչ տարբերություններ գրական արևմտահայերենն ունի Կարնո բարբառից (6 միավոր), ընդ որում՝ դրանցից չորսը վերաբերում են հոգնակիի կազմությանը, մեկը (որ թերևս առավել կարևոր է)՝ անձի և իրի առումների տարբերակմանը (հատկանիշը հատուկ է Կարնո բարբառին): Դիտարկվող միավորներից Կարնո բարբառը նաև ամենամերձավորն է Պոլսի բարբառի նկատմամբ՝ տարբերությունների 6,5 միավոր ցուցիչով:

Անվանական դիտարկվող հատկանիշների շրջանակում գրական արևմտահայերենից 10,5 միավորով է տարբերվում Դիադինի բարբառը, 12,5 միավորով՝ Մշո բարբառը: Գրական արևմտահայերենից առավել շատ տարբերակող հատկանիշներ ունի Սասունի բարբառը՝ 14,5 միավոր: Մյուս բոլոր տարբերակներից առանձնացնող ամենաշատ հատկանիշներ ևս ունի Սասունի բարբառը (4): Պոլսի բարբառից Դիադինի, Մշո և Սասունի բարբառները տարբերակվում են 13-ական միավոր հատկանիշներով: Բարբառների միջև փոխհարաբերությունների տեսանկյունից ավելի շատ տարբերություններ ունեն Սասունի և Դիադինի բարբառները (13,5 միավոր): Մինչդեռ Մուշն ու Սասունը տարբերակվում են 10 միավոր հատկանիշներով: Կարնո, Դիադինի և Մշո բարբառները միմյանցից տարբերվում են 10,5-ական միավոր հատկանիշներով: Այդքան է տարբերությունը նաև Կարնո և Սասունի բարբառների միջև:

Դիտարկվող բոլոր տարբերակներում չեն արտահայտվում անվանական երեք հատկանիշներ՝ ա) հոգնակիի Ի հոլովում (բոլոր տարբերակներում այս դեպքում գործառում է Ու հոլովումը), բ) գործիականի՝ ով-ից տարբեր վերջավորությամբ ձև, գ) ում-ով ներգոյական (ներգոյականի իմաստն արտահայտվում է *մեջ* կապով կամ հայցականով):

Այդուսակ 4-ում գրական արևմտահայերենի և մեզ հետաքրքրող բարբառային միավորների փոխհարաբերությունները ներկայացնում ենք ըստ Գ.Ջահուկյանի ընտրած բարբառային բայական 25 հատկանիշների:

Այդուսակ 4

h/h	Հատկանիշ	Կ	Դ	Մ	Ս	ԳԱ	Պ
76	1-ին և 2-րդ (ել և իլ) լծորդությունների անաժանց բայերի խոնարհման ձևերի տարբերակվածություն	+	±	+	+	+	+
77	4-րդ (ուլ) լծորդության առկայություն. ⁺¹ . միայն պատճառականում	-	⁺¹	+	+	+	-
78	Կու-ով ներկա. ⁺¹ . կու-ի (կը, գը) հետադաս գործածություն	⁺¹	+	+	+	+	+
79	Ներկայի այլ մասնիկների առկայություն. ⁺¹ . կոր (<կա+որ?), ⁺² . կո (կոյ, գո, գոյ)	-	⁺²	-	-	± ¹	⁺¹
80	Ներկայի այլ մասնիկների առկայություն (շարունակականի կամ ծագումով շարունակականի)	-	-	-	-	-	-
81	Շարունակական ներկա	-	+	-	-	±	+
82	Ում-ով ներկա	-	-	-	-	-	-
83	Լիս-ով ներկա. -+. միայն գալ, լալ, տալ բայերի դեպքում. ⁺¹ . ներկայի կազմությանը չմասնակցող լիս-ով մակդերբայ	-	-	-	-	-	-

84	ման-ով դերբայ	-	-	+	+	-	-
85	Ը-ով վաղակատար	+	+	+	+	+	+
86	Ուկ-ով հարակատար դերբայ	-	+	+	+	-	-
87	Առաջին լծորդության անաձանց բայերի ըղձ. եզ. 3-րդ դեմքի՝ է-ից տարբեր վերջավորություն. + ¹ . ի. + ² . ա	-	+ ²	-	-	-	-
88	Օժ. բայի եզ. 3-րդ դեմքի ա-ով ձև	-	+	-	-	-	-
89	Օժ. բայի անց. անկատար երկձայնավոր ձևերի մեջ ձայնավորներից մեկի սղում. է-ի սղում. + ¹ . ի-ի սղում	-	+	+	+ ¹	-	-
90	Անորոշով և -լոց, -լյաց, -լի, -լիք տիպի դերբայներով ապառնի.	-	-	-	-	-	±
91	Այլ տիպի դերբայներով բաղադրյալ ապառնի	-	-	-	-	-	-
92	Պիտի եղանակիչի սղված ձև. + ¹ . առաջին վանկի սղում (տի, տ, դի, դ)	-	-	-	+ ¹	-	-
93	Բաղադրյալ անցյալ ձևերի կազմում՝ անցյալ ցույց տվող բառ-մասնիկի կամ վերջա-մասնիկի օգնությամբ	-	-	-	-	-	-
94	1-ին և 3-րդ լծորդության անցողական անաձանց բայերի կատարյալի հոգն. 1-ին դեմքի՝ ա-ով վերջավորություն	-	-	-	-	-	-
95	1-ին լծորդության անաձանց բայերի ոչ ցույական կատարյալ	-	□+	+	-	-	-
96	Բաղադրյալ կատարյալ	-	-	-	-	-	-
97	Ժխտական մասնիկների ետադաս գործածություն	-	-	-	-	-	-
98	Ժխտական բաղադրյալ ձևերի կրկնադիմություն	-	+	+	-	-	-

99	Ժխտական դերբայի հատուկ ձևերի առկայություն	+	+	+	+	-	-
100	+ ³ . Անց. անկատարի եզ. 1-ին դեմքի փոխարեն հոգնակի ձև. + ⁵ . անց. կատարյալի միավանկ հիմքերի եզ. 3-րդ դեմքի ե-նախահավելված.	-	-	+ ³⁵	+ ³	-	-
		4,0	12	12	10	5,0	5,5

Ինչպես երևում է, գրական արևմտահայերենում իրենց արտահայտությունն ունեն բարբառային բայական վեց հատկանիշներ (5 միավոր), որոնք վերաբերում են ըստ լծորդությունների խոնարհման ձևերի տարբերակվածությանը, *ու* լծորդության առկայությանը, ներկա ժամանակաձևի դրսևորումներին, վաղակատար դերբայի կազմությանը: Այդ հատկանիշներից երեքը (խոնարհման ձևերի տարբերակվածություն, ներկայի կազմություն, վաղակատարի ձևավորում) ընդհանուր են դիտարկվող բոլոր տարբերակների համար: Գրական արևմտահայերենի և Պոլսի բարբառի՝ բայական հատկանիշներով տարբերությունների ցուցիչը, ինչպես անվանականների դեպքում, կազմում է 2,5 միավոր: Ի տարբերություն Պոլսի բարբառի՝ գրական արևմտահայերենում *կոր* մասնիկի գործածությունը և դրանով շարունակականի արտահայտությունը թույլ է արտահայտված (ինչպես վերևում նշել ենք՝ ներկայումս գրեթե չի արտահայտվում), առկա են *ու* լծորդության դրսևորումներ, անորոշով կամ դերբայական այլ ձևերով ապառնի ժամանակ չի ձևավորվում (Պոլսի բարբառում նման իրողության սակավ դրսևորումներ են արձանագրվել):

Այնուհետև ամենից քիչ տարբերություններ գրական արևմտահայերենն ունի Կարնո բարբառից (3,5 միավոր), ընդ որում՝ այդ տարբերությունները վերաբերում են լծորդություններին, ներկայի կազմությանը և ժխտական դերբայի հատուկ ձևերի գործառությանը: Բայական հատկանիշների առումով ևս Կարնո

բարբառը դիտարկվող բարբառներից ամենամերձավորն է Պոլսի բարբառի նկատմամբ՝ տարբերությունների 4 միավոր ցուցիչով:

Բայական հատկանիշներով գրական արևմտահայերենին բավականին մերձավոր է նաև Սասունի բարբառը՝ տարբերությունների 7 միավոր ցուցիչով: Այնուհետև հաջորդում են Դիադինի (8,5 միավոր) և Մշո (9 միավոր) բարբառները: Դիտարկվող լեզվատարբերակները միայն իրենց հատուկ շատ սակավ բայական հատկանիշներ ունեն: ՀՀ տարածքում գործառող արևմտյան բարբառներից Պոլսի բարբառի նկատմամբ ամենից շատ տարբերություններ ունի Մշո բարբառը (11,5 միավոր): Այնուհետև հաջորդում են Սասունի (9,5 միավոր) և Դիադինի (9 միավոր) բարբառները: Բարբառների միջև փոխհարաբերությունների տեսանկյունից ամենաշատ տարբերությունները կազմում են 11,5 միավոր (Մուշ և Պոլիս): ՀՀ տարածքում գործառող արևմտահայ բարբառներից բայական համակարգերով ավելի մոտ են Մուշն ու Սասունը (4,5 միավոր տարբերություններ), Կարինն ու Սասունը (6,5 միավոր տարբերություններ): Իսկ Կարնո և Մշո բարբառների միջև տարբերությունները կազմում են 8,5 միավոր: Դիադինի բարբառը նույնքան միավորով տարբերվում է Մշո բարբառից, ավել շատ՝ Կարնո (9,5) և Սասունի (10) բարբառներից: Ընդհանրապես, նկատելի է, որ դիտարկվող լեզվատարբերակների միջև բայական տարբերություններն ավելի քիչ են, քան անվանականները:

Եթե դիտարկվող բոլոր տարբերակներում չեն արտահայտվում անվանական երեք հատկանիշներ, ապա բայական նման հատկանիշները ութն են:

Այսպիսով, դիտարկվող լեզվատարբերակները ըստ քերականական բարբառային հատկանիշների հանդես են բերում հետևյալ փոխհարաբերությունները: Գրական արևմտահայերենին դարձյալ ամենամերձավորը Պոլսի բարբառն է՝ տարբերությունների 5 միավոր ցուցիչով: Այնուհետև ըստ այդ ցուցիչի աճման հաջորդում են Կարնո (9,5 միավոր), Դիադինի (19 միավոր), Մշո և Սասունի (21,5-ական միավոր) բարբառները: Պոլսի բարբառին

ամենամերձավորը Կարնո բարբառն է՝ 10,5 միավոր տարբերություններով: Այնուհետև հաջորդում են Դիադինի (22 միավոր), Սասունի (22,5 միավոր) և Մշո (24,5) բարբառները: ՀՀ տարածքում գործառնող բարբառներից քերականական հատկանիշների առումով իրար ավելի մերձավոր են Մշո և Սասունի բարբառները, որոնց միջև եղած տարբերությունները կազմում են 14,5 միավոր: Որոշ չափով մոտ են նաև Կարնո և Սասունի բարբառները՝ տարբերությունների 17 միավոր ցուցիչով: Նկատելի է, որ գրական արևմտահայերենը, Պոլսի և Կարնո բարբառները քերականական հատկանիշներով ավելի մերձավոր են (միմյանց միջև եղած տարբերությունները կազմում են 5 – 10,5 միավոր): Մյուս բոլոր դեպքերում տարբերությունները կազմում են 14,5-24,5 միավոր: ՀՀ տարածքում գործառնող բարբառներից քերականական հատկանիշների ամենաշատ տարբերություններն ունեն Դիադինի և Սասունի բարբառները՝ 23,5 միավոր: Կարնո, Դիադինի և Մշո բարբառների միջև տարբերությունները կազմում են 19-20 միավոր:

Գրական արևմտահայերենի և դիտարկվող բարբառային միավորների ընդհանուր փոխհարաբերություններն ունեն վիճակագրական հետևյալ պատկերը.

Աղյուսակ 5⁶

Բարբառախոս վայրեր	Տարբերությունները գրական արևմտահայերենից						
	հնչյունական			քերականական			ընդ.
	բաղաձ.	ձայնավ.	ընդ.	անվ.	բայ	ընդ.	
Պոլիս	5,5	4,5	10,0	2,5	2,5	5,0	15,0
Կարին	8,0	3,0	11,0	6,0	3,5	9,5	20,5
Մուշ	7,5	5,0	12,5	12,5	9,0	21,5	34,0
Դիադին	10,5	6,0	16,5	10,5	8,5	19,0	35,5
Սասուն	6,0	10,5	16,5	14,5	7,0	21,5	38,0

⁶ Աղյուսակը կազմված է Գ.Զահուկյանի օրինակով (տե՛ս Գ.Զահուկյան, նշվ. աշխ., էջ 207):

Ե՛վ վերևում ներկայացված լեզվական փաստերն ու վերլուծությունները, և՛ աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ ՀՀ տարածքում գործառող բարբառներից գրական արևմտահայերենին ամենամերձավորը Կարնո բարբառն է: Ընդ որում՝ այդ մերձավորությունն արտահայտվում է գրեթե բոլոր կարգի հատկանիշներով: Միայն բաղաձայնական հատկանիշների առումով գրական արևմտահայերենից ավելի քիչ տարբերություններ ունեն Սասունի և Մշո բարբառները: Ինչպես երևում է, Կարնո բարբառը գրական արևմտահայերենին ավելի մոտ է ձայնավորական, քան բաղաձայնական հատկանիշներով, քերականական առումով՝ բարբառը գրական լեզվին ավելի մոտ է բայական, քան անվանական հատկանիշներով: Ընդհանուր առմամբ, Կարնո բարբառը գրական արևմտահայերենին ավելի մոտ է քերականական, քան հնչյունական հատկանիշներով:

Մշո բարբառը ևս գրական արևմտահայերենին ավելի մոտ է ձայնավորական, քան բաղաձայնական հատկանիշներով: Կարնո բարբառի պես՝ Մշո բարբառը ևս գրականին ավելի մոտ է բայական, քան անվանական հատկանիշներով: Ի տարբերություն Կարնո բարբառի՝ Մշո բարբառը ընդհանուր առմամբ գրականին ավելի մոտ է հնչյունական, քան քերականական հատկանիշներով:

Կարնո և Մշո բարբառների պես՝ Դիադինի բարբառը գրական արևմտահայերենին ավելի մոտ է ձայնավորական, քան բաղաձայնական հատկանիշներով: Այս բարբառը ևս բայական հատկանիշներով գրականին ավելի մոտ է, քան անվանական հատկանիշներով: Մշո բարբառի պես՝ Դիադինի բարբառը ընդհանուր առմամբ գրականին ավելի մոտ է հնչյունական, քան քերականական հատկանիշներով:

Ի տարբերություն մյուս բոլոր բարբառների՝ Սասունի բարբառը գրական արևմտահայերենին ավելի մոտ է բաղաձայնական, քան ձայնավորական հատկանիշներով: Բայց բոլոր մյուս բարբառների պես՝ գրականին ավելի մոտ է բայական, քան անվանական հատկանիշներով: Մշո և Դիադինի բարբառների պես՝

Սասունի բարբառը գրականին ընդհանուր առմամբ ավելի մոտ է հնչյունական, քան քերականական հատկանիշներով:

Այսպիսով, ՀՀ տարածքում գործառող Կը ճյուղի բարբառները գրական արևմտահայերենին ավելի մոտ են ձայնավորական, քան բաղաձայնական հատկանիշներով (բացի Սասունի բարբառը), դիտարկվող բոլոր բարբառները գրականին ավելի մոտ են բայական, քան անվանական հատկանիշներով: Ընդհանուր առմամբ՝ բարբառները գրականին ավելի մոտ են հնչյունական, քան քերականական հատկանիշներով (բացի Կարնո բարբառը):

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

արևմտ. – արևմտահայերեն

ԳԱ – գրական արևմտահայերեն

Դ – Դիադինի բարբառ

Կ – Կարնո բարբառ

ՀԱԲ – Հայերեն արմատական բառարան

ՀԲԱ – Հայերենի բարբառագիտական ատլաս

ՀԳԲ – Հայերեն գաւառական բառարան

ՀԼԲԲ – Հայոց լեզվի բարբառային բառարան

Մ – Մշո բարբառ

Պ – Պոլսի բարբառ

Ս – Սասունի բարբառ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, 1974.
- Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965.
- Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976.
- Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1953.
- Ազգագրական հանդես, 7-8, Թիֆլիս, 1901.
- Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Ե., 1954, հ.4, մաս Բ-Ե, Ե., 1961.
- Աճառյան Հ., Հայ բարբառագիտություն, Մոսկվա – Նոր-Նախիջևան, 1911.
- Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ.Գ, Ե., 1977.
- Աճառյան Հ., Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913.
- Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Ե., 2013.
- Աճառյան Հ., Քննություն պոլսահայ բարբառի, Ե., 1941.
- Աճառյան Հ., Քննություն Վանի բարբառի, Ե., 1952.
- Ամատունի Ս., Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912.
- Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Ե., 1987.
- Ասատրյան Մ., Ուրմիայի (Խոյի) բարբառը, Ե., 1962.
- Ավետիսյան Յու., Արևելահայերենի և արևմտահայերենի զուգահրժեշկական հնչյունաբանություն, Ե., 2011.
- Ավետիսյան Յու., Արևելահայերենի և արևմտահայերենի զուգահրժեշկական քերականություն, Ե., 2007.
- Բաղդասարյան-Թափալցյան Ս., Մշո բարբառը, Ե., 1958.
- Բաղրամյան Ռ., Հայերեն բարբառներ (Սևանա լճի ավազանի խոսվածքները), Ե., 1972.

- Բառնասյան Ջ., Դերանունների ձևաիմաստային դրսևորումները Կարնո բարբառի Շիրակի տարածքի խոսվածքներում, Գյումրի, 2012.
- Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011.
- Գրիգորյան Ա., Հայ բարբառագիտության դասընթաց, Ե., 1957.
- Էմինեան ազգագրական ժողովածու, հատոր Բ, Մոսկուա-Վաղարշապատ, 1901.
- Խաչատրյան Հ., Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում, Ե., 2009.
- Խաչատրյան Վ., Վարդենիսի (Դիադինի) բարբառը, Ե., 2004.
- Կատվալյան Վ., Բայագետի և Դիադինի բարբառների փոխհարաբերությունները, Ջահուկյանական ընթերցումներ – 2012, Հանրապետական գիտական նստաշրջանի գեկուցումներ, Ե., 2012, էջ 115-129.
- Հակոբյան Թ., Պատմական Հայաստանի քաղաքները, Ե., 1987.
- Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Ե., 2001, հ. Բ, Ե., 2002, հ. Ջ, Ե., 2010.
- Հանեյան Ա., Տիգրանակերտի բարբառը, Ե., 1978.
- Հանեյան Ա., Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում, Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 1, Ե., 1982. Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 3, Ե., 2010.
- Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ.9, Ե., 1978.
- Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Ե., 1953.
- Ղափանցյան Գ., Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Ե., 1939.
- Մաղաթյան Բ., Ալաշկերտի խոսվածքը, Ե., 1985.
- Մելքոնյան Ա., Ցեղասպանություն և հայրենագրկում, Ե., 2015.
- Մելքոնյան Ռ., Պոլսահայ համայնքի արդի խնդիրների մասին, noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4315&sphrase_id=51045
- Մելքոնյան Ռ., Ցեղասպանությունը վերապրած Սասունի հայության արդի խնդիրների շուրջ,

noravank.am/upload/pdf/383_am.pdf

Միքայելյան Ժ., Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները, Ե., 2009.

Մկրտչյան Հ., Կարնո բարբառը, Ե., 1953.

Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն, Ե., 1982.

Զիֆլիկյան Ա., Ընտրանի, Ե., 2009.

Զոլաքեան Յ., Քեսապի բարբառը, Ե., 2009.

Պետոյան Վ., Սասունի բարբառը, Ե., 1954.

Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987.

Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոյան Վ., Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ., Ե., 1980.

Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972.

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացման փուլերը, Ե., 1964.

Սարգսյան Ա., Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Ե., 1985.

Սարգսյան Ա., Արևմտահայերենի բառարան, Ե., 1991.

Սաքապետոյան Ռ., Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Ե., 2004.

Սաքապետոյան Ռ., Արևմտահայերենի դասագիրք, Ե., 2006.

Փշրանք Շիրակի ամբարներից, հաւաքեց Աղ.Մխիթարեանց (= Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա), Մոսկուա-Ալեքսանդրապոլ, 1901.

Гарибян А., Об армянском консонантизме, ВЯ, 1959, N 5.

Мсерианц Л., Этюды по армянской диалектологии, I-II, М., 1897-1901.

Патканов К., Материалы для изучения армянских наречий, вып. II, Мушский диалект, СПб., 1875.

Якобсон Р., Типологические исследования и их вклад в сравнительно-историческое языкознание, Новое в лингвистике, вып. 3, Москва, 1963.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան	3
ԳԼՈՒԽ Ա	
Ընդհանուր տեղեկություններ Պոլսի բարբառի և Հայաստանի Հանրապետությունում գործառող Կը ճյուղի բարբառների վերաբերյալ	14
ԳԼՈՒԽ Բ	
Գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործառող Կը ճյուղի բարբառների հնչյունական համակարգերի առնչությունները	35
ԳԼՈՒԽ Գ	
Գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործառող Կը ճյուղի բարբառների բառապաշարների առնչությունները	60
ԳԼՈՒԽ Դ	
Գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործառող Կը ճյուղի բարբառների անվանական համակարգերի առնչությունները	124
ԳԼՈՒԽ Ե	
Գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործառող Կը ճյուղի բարբառների բայական համակարգերի առնչությունները	156
ԳԼՈՒԽ Զ	
Գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործառող Կը ճյուղի բարբառների առնչությունները ըստ դասակարգման գուգաբանական-վիճակագրական սկզբունքի	215
Համառոտագրություններ	236
Օգտագործված գրականություն.....	237

**Վ.ԿԱՏՎԱԼՅԱՆ, Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Ջ.ԲԱՌՆԱՄՅԱՆ, Հ.ԽԱԶԱՏՐՅԱՆ**

**ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ
ԵՎ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾԱՌՈՂ ԿԸ ՃՅՈՒՂԻ
ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սալյաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am

